ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՇԵՆՈՒԴԱ Գ
ՊԱՏՐԻԱՐՔ ՂՊՏԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՐ Ա

Ծանոթագրությունները՝ թարգմանչի

POPE SHENOUDA III

COMPARATIVE THEOLOGY

VOLUME I

Translated into Eastern Armenian

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Կրթության գծով եպիսկոպոս դառնալուցս ի վեր համեմատական աստվածաբանության դասեր եմ տալիս Աստվածաբանության ֆակուլտետի ուսանողներին:

Այս նյութի շուրջ գրել եմ մի քանի գիրք: Դրանցից երկուսը նվիրված են փրկության թեմային՝ «Փրկությունն ըստ ուղղափառ ընկալման» և «Մեկ վայրկյանում փրկվելու հերետիկոսությունը»: Սրանք երկուսն էլ հերքումներ են տալիս այն բողոքական հայացքներին, որոնք որոշ հոգևոր սպասավորների կողմից սկսել են ներկայացվել նաև ուղղափառությանը:

«Քահանայություն» վերնագրված գրքում քննության եմ առել այն տեսակետները (հատկապես Պլայմաուտյան տեսակետը), որոնք մերժում են այս խորհուրդը, այն ընդհանրացնում կամ նրա սահմանները նեղացնում:

Չորրորդ գիրքը «Քավարանի» մասին է, որը գրեցինք մեր կաթոլիկ եղբայրների հետ աստվածաբանական երկխոսության առիթով:

Հինգերորդ գիրքը՝ «Քրիստոսի բնությունը», բացատրում է մեր դավանությունը՝ Քրիստոսի մեկ թե երկու բնություն ունենալու մասին երկխոսությունների համատեքստում. այս խնդիրն էր, որ երկրորդ դարի կեսին պառակտում մտցրեց Եկեղեցու ներսում:

Ներկա գիրքը վեցերորդն է և վերաբերում է մեր և մեր բողոքական եղբայրների միջև եղած բազմաթիվ տարբերություններին, որոնք ներառում են աստվածաբանական ու վարդապետական այնպիսի խնդիրներ, ինչպիսին են մկրտությունը, Սրբազան Ավանդությունը, բարեխոսությունը, ս. Կույսի մեծարումն ու նրա մշտակուսությունը, պահեցողությունը, Հազարամյա թագավորությունը, ապաշխարությունը, Եկեղեցու միջնորդությունը և այլն: Անդրադարձել ենք նաև խնկարկությանը, սրբապատկերներին, ս. որանին ու ս. Սեղանին, կանթեղներին ու մոմերին, խաչը պատվելուն, խաչակնքմանն ու աղոթելիս դեպի արևելք նայելուն:

Այս բոլոր թեմաների շուրջ դասախոսությունները կարդացել ենք Աստվածաբանության ֆակուլտետում 1984 թվականին:

Դրանք այդ ժամանակ տպվեցին իբրև առանձին գրառումներ, ապա անգլերեն թարգմանվեցին ու տպագրվեցին նախ Ամերիկայում՝ Լոս Անջելեսում, ապա երկրորդ անգամ՝ Լոնդոնում: Ներկա գիրքն անգլերեն երրորդ թարգմանությունն է, որը Եգիպտոսում առաջինն է:

Սակայն դեռևս կան թեմաներ, որ մաս չեն կազմել այս գրքի. դրանք են ժամասացությունները, որոնց մեկ այլ գրքում կանդրադառնանք (եթե Աստված կամենա), և Սուրբ Հոգու բխումը: Վերջինն առնչվում է կաթոլիկների հետ երկխոսության հետ, և հույս ունենք դրա մասին գրել մեր և նրանց միջև մի շարք այլ վարդապետական տարբերություններով հանդերձ:

Որոշ այլ թեմաների էլ անդրադարձել ենք «Քահանայություն» գրքում, ուր խոսել ենք մեր և բողոքականների միջև եղած այն տարբերությունների մասին, որոնք վերաբերում են Հաղորդությանը, խոստովանությանը, հոգևոր հայրությանը և այլն:

Փաստորեն, այժմ աստվածաբանական երկխոսությունը ոչ թե պատերազմաշունչ է, ինչպես անցյալում, այլ վերածվել է սիրով քննարկման՝ հոգևոր ճանապարհով ընդհանուր ըմբռնման հասնելու համար:

Այս գրքում մեր ուղղափառ տեսակետները ներկայացնում և առարկությունները հերքում ենք առարկայական (օբյեկտիվ) ճանապարհով:

Հույս ունենք, որ Աստծո Սուրբ Հոգին բոլորիս կառաջնորդի դեպի մեկ միտք և մեկ հավատք: Ամեն:

ՇԵՆՈՒԴԱ Գ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեկ հավատք և ճշմարիտ վարդապետություն Աստվածաբանությունը գիտության ճյուղ է, որը խոսում է Աստծո մասին (օրհնյալ է Նրա անունը), իսկ ոչ ոք չի կարող խոսել Աստծո մասին, բացի նրանցից, ովքեր գիտեն Նրան կամ սովորում են Նրան ճանաչողներից:

Աստվածաբանությունը պահանջում է ճշգրտություն ձևակերպումների և մեկնաբանության մեջ, այլև ծանոթություն վստահելի և ընդունված աղբյուրներին: Հետևաբար, իբրև ավանդական և պահպանողական Եկեղեցի՝ մենք պահպանում ենք առաքելական հավատքը, որն ավանդվել է մեզ սրբերի կողմից (Հուդա 3), առանց նորամուծությունների կամ մեր հայրերի հաստատած հինավուրց սահմանների փոփոխության (Առակ. ԻԲ 28):

*Եկեղեցու հավատքը **«մե՛կ հավատք»** է (Եփես. Դ 5), և Եկեղեցին ամեն օր մեզ հիշեցնում է այս մեկ հավատքի մասին գրավոր խոսքով (Եփես. Դ 5), որը մենք ընթերցում ենք մեր Առավոտյան աղոթքի ժամանակ[1]:*

Այս մեկ հավատքը Եկեղեցու յուրաքանչյուր անդամի հավատքն է և այն իբրև իր գլխավոր աղբյուր ունի Սուրբ Գիրքը: Մնացած աղբյուրներն են սուրբ հայրերի խոսքերը, սրբազան ժողովների հաստատած կանոնները և այն ամենը, որ գրի է առնվել եկեղեցական, հատկապես ծիսական, գրքերում: Այս ամենը համաձայն է Սուրբ Գրքին և ընդհանուր անվամբ կոչվում է «Եկեղեցական Ավանդություն»:

*Ավանդության ճշմարիտ լինելու երաշխիքը նրա համաձայնությունն է Սուրբ Գրքին: Ս. Պողոս առաքյալն ասում է. **«Եթե մենք կամ հրեշտակ երկնքից ավետարանի ավելին նրանից, ինչ մենք ձեզ ավետարանեցինք, նզովյալ լինի» (Գաղ. Ա 8-9)** [2]:*

---

[1] Խոսքը Ղպտի Եկեղեցու Առավոտյան (Առաջին) ժամի աղոթքի սկզբում ընթերցվող Եփես. Դ 1-5 հատվածի մասին է, որի վերջին բառերն են՝ **«մեկ Տեր, մեկ հավատ, մեկ մկրտություն»**: *(Այս և հետագա ծանոթագրությունները՝ թարգմանչի):*

[2] Սույն գրքում աստվածաշնչյան տեղիները հայերեն են թարգմանվել ըստ գրաբարյան բնագրի (Վիեննա, 1929թ. հրատարակությունից), սակայն հաճախ հարկ է եղել հետևել Հին Կտակարանի եբրայերեն և Նոր Կտակարանի հունարեն տարածված բնագրերի տարբերակներին: Բոլոր այսպիսի դեպքերը ծանոթագրվել են:

*Հետևաբար, Եկեղեցին իր սկզբնական՝ առաքելական ժամանակներից ի վեր պայքարում է ճշմարիտ հավատքի պահպանման համար՝ ճշմարիտ վարդապետության միջոցով: Ահա թե ինչու ս. Պողոս առաքյալն իր աշակերտ Տիտոսին՝ Կրետեի եպիսկոպոսին, ասում է. **«Բայց դու խոսիր այն, ինչ վայել է ողջամիտ վարդապետությանը»** (Տիտ. Բ 1): Այս ճշմարիտ վարդապետությունը առաջին եպիսկոպոսներն ընդունել են անմիջապես առաքյալներից, ապա իրենց հերթին փոխանցել վարդապետությանը հավատարիմ հետագա սերունդներին: Այսպիսով, այն փոխանցվում է սերնդեսերունդ, ինչպես Պողոս առաքյալն է ասում իր աշակերտ Տիմոթեոս եպիսկոպոսին. **«Եվ ինչ որ լսեցիր ինձանից բազում վկաներով, այն ավանդիր հավատարիմ մարդկանց, ովքեր կարողությունն ունեն նաև ուրիշներին սովորեցնելու»** (Բ Տիմ. Բ 2):*

Վարդապետումը (ուսուցանումը) հոգևորականության գործն է

Ուսուցանումը առաքյալների, այնուհետև եպիսկոպոսների, քահանաների և սարկավագների պարտականությունն էր և երբեք չի եղել աշխարհականների գործը:

*Տեր Հիսուսն ուսուցման գործը հանձնեց առաքյալներին, երբ նրանց ասաց. **«Գնացեք այսուհետև... սովորեցրեք նրանց պահել այն ամենը, որ պատվիրեցի ձեզ»** (Մատթ. ԻԸ 19-20), ինչպես նաև՝ **«Գնացեք ամբողջ աշխարհով մեկ և քարոզեք ավետարանը բոլոր արարածներին»** (Մարկ. ԺԶ 15):*

*Առաքյալները քարոզության, ուսուցման, խոսքի սպասավորության և հավատքի ավանդման գործը համարում էին իրենց գլխավոր պարտականությունը, ուստի այս մասին ասում. **«Մենք աղոթքին և խոսքի սպասավորությանը մեզ կնվիրենք»** (Գործք Զ 4): Պողոս առաքյալը նույնպես ասում է. **«Ավետարանի միջոցով, որի համար կարգվեցի քարոզիչ, առաքյալ և հեթանոսների ուսուցիչ»** (Բ Տիմ. Ա 10-11), և՝ **«Քարոզում էր Աստծո արքայությունը և սովորեցնում»** (Գործք ԻԸ 32):*

Ս. Պողոսը ուսուցման և քարոզության պարտականությունը հանձնեց իր աշակերտ եպիսկոպոսներին:

*Նա իր աշակերտ ս. Տիմոթեոսին ասում է. **«Քարոզիր խոսքը....***

մխիթարիր ամենայն երկայնմտությամբ և վարդապետությամբ» *(Բ Տիմ. Դ 2): Եվ իր աշակերտ Տիտոս եպիսկոպոսին ասում է.* ***«Խոսիր այս մասին, մխիթարիր և հանդիմանիր ամեն սաստով»*** *(Տիտ. Բ 15):*

Ուսուցանումը դարձավ հետագայում քահանաների և ընդհանրապես հոգևորականության գործը, ինչպես իր ժամանակին մանրամասնորեն պիտի ցույց տրվի, քանի որ օրենքը պահանջվում է քահանաների բերանից (Մաղ. Բ 7):

Սրբազան ժողովները կազմվում էին եպիսկոպոսներից և ունեին Եկեղեցու օրենքներն ու կանոնները սահմանելու իշխանություն: Նույնիսկ կրոնական խնդիրների վերաբերյալ շատ եպիսկոպոսների պատասխաններ համարվում էին սրբազան օրենք, որը ճանաչվում էր Ընդհանրական Եկեղեցու կողմից:

Հավատքն ու վարդապետությունը Եկեղեցու գործն էին, որոնք ներկայացվում էին նրա ժողովներով ու եպիսկոպոսներով և քահանաների կողմից բացատրվում ու մեկնաբանվում ժողովրդին:

Աշխարհականները միշտ սովորողների դասում էին, մինչ հոգևորականները ոչ միայն ուսուցիչներ էին, որ սովորեցնում էին ժողովրդին եկեղեցական ամբիոնից, այլև հոգևոր առաջնորդներ, ովքեր նրանց ուղղություն էին տալիս խոստովանության և նմանատիպ այլ գործառույթների միջոցով:

Հավատքի և վարդապետության ուսուցիչները չպիտի սովորեցնեն իրենց սեփական տեսակետներն ու մտքերը, այլ միայն Եկեղեցու՝ իրենց փոխանցված և հաստատագրված վարդապետությունը: Եթե յուրաքանչյուր մարդու տրվեր ազատություն՝ տարածելու սեփական տեսակետները, կլինեին բազմաթիվ վարդապետություններ և չէինք կարողանա դրանք կոչել Եկեղեցու վարդապետություն:

Ամեն ոք ազատ է ընտրելու իր հավատքը և իր ազատությամբ կարող է շեղվել, սակայն բոլոր այսպիսի շեղումները կապ չունեն Եկեղեցու մեկ հավատքի հետ:

Եկեղեցին, արթնությամբ հսկելով իր հավատքի վրա, թույլ չի տալիս նման բաներ: Նա ուսուցանելու իրավունք չի տալիս ամեն ցանկացողի և քննում է վարդապետությունները սրբերին ավանդված հավատքի լույսի տակ: Ուստի Պողոս առաքյալի՝ Գաղ. Ա 9-ում գրված խոսքը մնում է օրենք, որին պետք է հետևել:

Երբեմն սխալ հավատքը կամ վարդապետությունը արդյունքն է ուրիշ հարանվանությունների հետ շփման, նրանցից կամ նրանց ուսուցիչներից ազդեցություն կրելու կամ նույնիսկ այդ ուսուցիչներից և նրանց գրքերից սովորելու:

Այլապես, սխալ հավատքը կամ վարդապետությունն արդյունքն է սեփական տեսակետներին հետևելու՝ պատրաստ չլինելով դրանք փոխելու կամ Եկեղեցուն հնազանդվելու: Կարող է լինել մի հպարտ անձնավորություն, ով համոզում է ուրիշին, թե միայն ինքն է իրավացի, իսկ ով չի համաձայնում իրեն՝ սխալ, քանի որ ինքն իբր հասկանում է այն, ինչ ուրիշ ոչ ոք չի հասկանում:

Հետևաբար, Եկեղեցին իր պատմության ընթացքում միշտ արթուն է եղել՝ պահպանելու համար ճշմարիտ վարդապետությունը: Կարելի է օրինակ բերել, թե ինչպես այն սխալ վարդապետությունը, որն ուսուցանում էր Ալեքսանդրիայի մի քահանա՝ Արիոսը, պատճառ դարձավ Պետրոս հայրապետի նահատակության և Ալեքսանդր հայրապետի կողմից միջամտության ու Ալեքսանդրիայում ժողովի գումարման, որին մասնակցեց հարյուր եպիսկոպոս Ալեքսանդրիայից և Լիբիայից, ապա՝ 325 թ.-ին, Նիկիայում մեկ ուրիշ՝ ընդհանրական ժողովի գումարման, որին մասնակցեց 318 եպիսկոպոս քրիստոնյա աշխարհի բոլոր կողմերից:

Այս ամենը պատահեց մի քահանայի սխալ վարդապետության պատճառով, որպեսզի չլինի թե այն տարածվի: Այդ ժամանակ ոչ ոք չասաց. «Ի՞նչ կա որ, թող այդպես լինի, կրոնի ազատություն է»:

Այստեղից էլ ծագում է անհրաժեշտությունը համեմատական աստվածաբանության՝ քննելու վարդապետական տարբերությունները, այլև աստվածաբանական երկխոսության՝ հավատքի միության հասնելու համար:

Աստվածաբանական երկխոսության շրջանակներում մենք ներկայացնում ենք այս գիրքը ամենայն սիրով, առարկայորեն, առանց վիրավորելու որևէ մեկի զգացումները: Մենք հավատում ենք աստվածաբանական երկխոսության հոգևոր լինելուն և առարկայականությանը (օբյեկտիվությանը):

ԳԼՈՒԽ Ա

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵՎ ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՎԱՏՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բազմաթիվ տարբերություններ կան բողոքականության և ուղղափառության միջև: Դրանցից մի քանիսը վերաբերում է դավանանությանը, ուրիշներ՝ ծեսերին, եկեղեցական կարգավորությանը կամ պաշտամունքին: Մենք այս գլխում համառոտաբար կներկայացնենք այդ տարբերություններից գլխավորները, ապա առավել մանրամասնորեն կքննարկենք և կմերժենք դրանք Սուրբ Գրքի լույսի տակ:

Գլխավոր տարբերությունները հետևյալն են՝

ա) Բողոքականները հավատում են, թե Տեր Քրիստոսն ունի երկու բնություն և երկու կամք:

Իսկ Ղպտի Եկեղեցին (ինչպես նաև Հայ, Ասորի, Եթովպական, Հնդիկ Մալանկարա և Էրիթրեայի Եկեղեցիները- թրգմ.) հավատում է, որ Տեր Քրիստոսի աստվածային և մարդկային բնությունները միավորված են մեկ բնության, այսինքն՝ Մարդացյալ Խոսքի բնության մեջ: Մենք հավատում ենք, որ Տեր Քրիստոսն ունի կատարյալ աստվածություն և կատարյալ մարդկություն, և որ Նրա աստվածությունը երբեք՝ ոչ մի վայրկյան կամ ակնթարթ, Նրա մարդկությունից չի բաժանվել: Հետևաբար մենք չենք խոսում երկու բնությունների մասին դրանց միությունից հետո: «Երկու բնություն» արտահայտության պատճառով մենք մերժեցինք Քաղկեդոնի ժողովը 451թ.[3]*:*

բ) Սուրբ Հոգու բխում

Բողոքականները, ինչպես կաթոլիկները, հավատում են, թե Սուրբը Հոգին բխում է թե՛ Հորից, թե՛ Որդուց: Սա հակասում է մեր

[3] Գրքի բնագրում՝ փակագծերում, ավելացված է հետևյալ ծանոթագրությունը. (Տես իմ «Քրիստոսի բնությունը» գիրքը):

Եկեղեցու հավատքին, որովհետև մենք հավատում ենք, որ Սուրբ Հոգին բխում է միայն Հորից, ինչպես գրված է Հովհ. ԺԵ 26-ում:

գ) Բողոքականները չեն ընդունում Եկեղեցու յոթ խորհուրդները:

Ինչ որ նրանք ունեն, խորհուրդներ չեն: Օրինակ՝ ամուսնությունն, ըստ բողոքականների, ոչ թե Եկեղեցու խորհուրդ է, այլ երկու կողմերի միջև ստեղծված հարաբերություն կամ կնքված համաձայնություն: Նրանք ունեն նաև մկրտություն, բայց որը չունի Եկեղեցու խորհրդի ներգործականությունը: Նրանք այն կոչում են պարզապես «կարգ» (այսինքն՝ կրոնական արարողություն):

դ) Բողոքականները չեն հավատում Սրբազան Ավանդությանը:

Նրանք հավատում են միայն Սուրբ Գրքին և չեն ընդունում Եկեղեցու օրենքները կամ եկեղեցական սուրբ ժողովներն ու նրանց որոշումները: Նրանք չեն ընդունում Եկեղեցու հայրերի վարդապետությունները և հետևաբար՝ Ավանդության միջոցով ընդունված եկեղեցական կանոնները:

ե) Բողոքականները չեն ընդունում քահանայությունը:

Նրանք ասում են՝ մենք ամենքս քահանա ենք, չկա տարբերություն մեր միջև: Այն անձը, որ «սպասավոր» է կոչվում բողոքական հարանվանություններում, քահանա չէ, այլ միայն ծառայող, հովիվ կամ ուսուցիչ: Նա քահանա չէ, ով ունի եկեղեցական խորհուրդներ կատարելու իշխանություն:

Քանի որ բողոքականները քահանայությունը չեն ընդունում, ուստի չեն ընդունում նաև քահանայապետությունը: Նրանք ասում են, որ Եկեղեցին մի մարմին է, որի գլուխը մեկն է՝ Հիսուս Քրիստոսը: Չկա մարդ գլուխ. Քրիստոսի՝ Եկեղեցու գլուխ լինելը չի թույլատրում մարդկային քահանայապետության գոյություն: Ուստի բողոքականները չեն ընդունում որևէ եկեղեցական իշխանություն:

Սակայն կան բացառություններ, ինչպես, օրինակ, անգլիկաններ-ը, ովքեր ունեն եկեղեցական նվիրապետություն՝ եպիսկոպոսներ, քահանաներ և սարկավագներ: Ունեն նաև արքեպիսկոպոսներ, ինչպես՝ Քենտրբերիի արքեպիսկոպոսը, Յորքի արքեպիսկոպոսը և այլք: Սակայն նրանք թույլ են տալիս, որ եպիսկոպոսներն ամուսնանան, և նույնիսկ ունեն կին քահանաներ ու եպիսկոպոսներ[4]*:*

զ) Փրկությանը վերաբերող բազմաթիվ տարբերություններ

Սրանցից ամենակարևորը բողոքականների կողմից միայն հավատի վրա շեշտը դնելն է՝ անտեսելով մնացած ամեն ինչ՝ հիմնվելով հետևյալ խոսքի վրա. ***«Հավատա՛ Տեր Հիսուսին, և կփրկվեք դու և քո ընտանիքը»*** *(Գործք ԺԶ 31): Նրանք հավատում են, թե միայն հավատը հենց հավատալու պահին փրկում է: Ուստի նրանք չեն ընդունում փրկության համար անհրաժեշտ եկեղեցական խորհուրդները, ինչպես Մկրտությունն ու ապաշխարությունը, և Եկեղեցու դերը փրկության հարցում, որն, ըստ նրանց, ձեռք է բերվում պարզապես Աստծո հետ ուղղակի հարաբերության արդյունքում:*

Մի ուրիշ տարբերություն է հավատացյալի կործանման հարցը ուրացման պարագայում: Ըստ նրանց՝ հավատացյալը կորստյան երբեք չի մատնվելու, նույնիսկ եթե ուրացման մեղքը գործի:

Փրկությանը վերաբերող մի կարևոր տարբերություն է հավատի և գործերի առնչության հարցը:

Հավատի վրա կենտրոնանալով՝ նրանք անտեսում են գործերը, և շնորհի գործունեությանը մեծ կարևորություն տալով՝ նրանք ուրանում են պայքարի անհրաժեշտությունը:

Սակայն բողոքական խմբավորումներից որոշներ պակաս չեղված են այս հարցում, քանի որ ասում են, որ հավատը պիտի գործի սիրո միջոցով (Գաղ. Ե 6)[5]*:*

[4] Գրքի բնագրում՝ փակագծերում, ավելացված է հետևյալ ծանոթագրությունը. (Տես քահանայության մասին իմ գիրքը):

[5] Գրքի բնագրում՝ փակագծերում, ավելացված է հետևյալ ծանոթագրությունը. (Տես փրկության մասին իմ երկու գրքերը՝ «Փրկությունն ըստ ուղղափառ ընկալման» և «Մեկ վայրկյանում փրկվելու հերետիկոսությունը»):

է) Բողոքականները մերժում են Պատարագը:

Նրանք մերժում են Պատարագը և որևէ ծիսական աղոթք: Նրանք չեն գործածում մեր կողմից գործածվող այնպիսի ծիսական գրքեր, ինչպիսին են Ճաշոցը, Շարակնոցը, Մաշտոցը[6] *և այլն:*

ը) Մկրտությանը վերաբերող տարբերություններ

Սրանցից ամենակարևորը փրկության, ինչպես նաև մանուկների համար մկրտության անհրաժեշտությունն է: Նրանք նաև չեն հավատում մկրտության զորությանը, ոչ էլ նրա առնչությանը վերստին ծննդյանը, արդարացմանը և մեղքերի թողությանը, ինչպես պիտի նշվի հետո: Այսպիսով, մկրտությունը բողոքականության մեջ վերածվում է պարզապես մի անունի, առանց որևէ ներգործության, որովհետև բոլոր այն ներգործությունները, որոնք ըստ մեզ ձեռք են բերվում մկրտությամբ, ըստ նրանց ձեռք են բերվում միայն հավատով: Ուստի մկրտությունը դառնում է պարզապես մի նշան կամ ծես, թեև նրանք ծեսերին նույնպես չեն հավատում:

Սակայն ոչ բոլոր բողոքականներն ունեն նույն տեսակետը մկրտության վերաբերյալ: Նրանցից որոշներ ընդունում են մանկամկրտությունը (մանուկների մկրտություն), ուրիշներ՝ ընկղմամբ մկրտությունը:

թ) Բողոքականները չեն ընդունում մեղքերի խոստովանությունը:

Նկատի ունենք քահանայի առաջ կատարվող մեղքերի խոստովանությունը: Նախ՝ որովհետև նրանք չեն ընդունում մարդկանց քահանայությունը, և երկրորդ՝ որովհետև նրանք հավատում են, որ խոստովանությունը պետք է կատարվի անմիջապես Աստծո առաջ: Հետևաբար, նրանք չեն ընդունում քահանայի կողմից խոստովանողի գլխին կարդացվող արձակման

[6] Թարգմանության մեջ գործածել ենք գրքում նշված ծիսամատյանների՝ Հայ Եկեղեցում գործածվող համապատասխան անունները:

աղոթքը, ոչ էլ ընդհանրապես արձակելու և կապելու իշխանությունը[7]:

ժ) Բողոքականները չեն հավատում Հաղորդության խորհրդին:

Նրանք չունեն ս. Պատարագ՝ աստվածային զոհագործություն, հացի և գինու՝ սուրբ Մարմնի և Արյան փոխարկում: Ուստի նրանք չունեն հաղորդություն ս. Խորհրդին, այլ որոշ առիթներով կատարում են արարողություն, որում, ըստ Տիրոջ հրամանի (Ղուկ. ԻԲ 19), հաց են բեկանում՝ Տիրոջ հիշատակի համար, և ասում, որ դա պարզապես արարողություն է և ոչ թե Եկեղեցու խորհուրդ: Եվ քանի որ նրանք չեն կատարում զոհաբերություն (պատարագ), նրանց եկեղեցիները չունեն ս. Սեղան:

Սակայն կան բացառություններ, ինչպես Անգլիկան Եկեղեցին, որն ունի ս. Սեղան և Պատարագ, և նրանք հավատում են հացի և գինու՝ Մարմնի և Արյան փոխարկմանը[8]:

ժա) Սուրբ Գրքին վերաբերող տարբերություններ

Չնայած այն մեծ հետաքրքրությանը, որ բողոքականները ցուցաբերում են Սուրբ Գրքի հանդեպ, և չնայած «աստվածաշնչյան ճշմարտության» մասին հաճախ խոսելուն՝ մենք նրանց հետ այս հարցում երկու անհամաձայնություն ունենք.

1) Նրանք չեն ընդունում Սուրբ Գրքի որոշ գրքեր, ինչպիսին են Տոբիթի, Հուդիթի, Սիրաքի, Բարուքի, Սողոմոնի Իմաստության, Մակաբեացիների գրքերը և մի քանի այլ գիրք ևս: Նրանք այս գրքերը պարականոն են համարում և Սուրբ Գրքից դուրս են թողնում (կաթոլիկներն այս գրքերն ընդունում են Սուրբ Գրքի իրենց տարբերակում):

2) Նրանք պատշաճ կարևորություն չեն տալիս Հին Կտակարանի ուսմունքին, կարծես Տեր Քրիստոսը վերացրել է Օրենքը կամ Մարգարեներին: Հինկտակարանյան մի շարք կարևոր վկայություններ նրանք համարում են միայն խորհրդանիշներ, որոնք Նոր Կտակարանում այլևս չեն գործում: Ուստի երբ մենք որևէ վարդապետություն ապացուցում ենք հինկտակարանյան խոսքերով, նրանք չեն ընդունում դրանք իբրև վկայություն՝ հայտարարելով, թե դրանք վերաբերում են միայն հին ժամանակներին: Նրանք չեն կարողանում զանազանել խորհրդանիշը հինկտակարանյան հաստատված իրողություններից. համենայն դեպս, մենք այս հարցում չենք համաձայնում նրանց:

ժբ) Բողոքականները չեն ընդունում Եկեղեցու պահքերը:

Նրանք կարող են պահեցողությունն ընդունել իբրև ցանկացած ժամանակ կիրառվող անձնական գործառույթ, սակայն համաձայն չեն ամբողջ ժողովրդի համար որոշակի ժամանակներում պահվող հաստատուն պահքերին: Նրանք պահք չունեն չորեքշաբթի և շաբաթ օրերին, չունեն Ավագ շաբաթվա, Մեծ, Ծննդյան, Աստվածածնի, Առաքյալների[9] կամ որևէ այլ պահք: Նրանք չեն ընդունում նաև բուսական սննդով պահեցողությունը: Նրանք չեն ընդունում ուտելիքի կամ ըմպելիքի հարցում որևէ սահմանափակում:

ժգ) Բողոքականները չունեն կուսակրոնության կարգը:

Կուսակրոնությունը գոյություն ունի միայն Ուղղափառ (Հինարևելյան ու Բյուզանդական օրթոդոքս - թրգմ.) և Կաթոլիկ Եկեղեցիներում, իսկ բողոքականները նման կարգ չունեն, նրանց բոլոր ծառայողներն ամուսնացած են: Նույնիսկ Անգլիկան Եկեղեցին, որ գտնվում է Կաթոլիկ և Բողոքական Եկեղեցիների միջև և ունի որոշ խորհուրդներ, ինչպես հոգևորականների ձեռնադրությունն ու Հաղորդությունը, չունի կուսակրոնություն: Նրանց եպիսկոպոսներն ու արքեպիսկոպոսներն ամուսնացած են:

[7] Գրքի բնագրում՝ փակագծերում, ավելացված է հետևյալ ծանոթագրությունը. (Խոստովանության խորհրդի և քահանաներին Աստծուց տրված թողություն տալու իշխանության մասին բացատրված է մեր «Քահանայություն» գրքում):

[8] Գրքի բնագրում՝ փակագծերում, ավելացված է հետևյալ ծանոթագրությունը. (Հաղորդության խորհրդի մասին բացատրված է մեր «Քահանայություն» գրքում):

[9] Ղպտի Եկեղեցու պահքերից մեկն է, որը սկսվում է Հոգեգալստյան տոնից հետո և ավարտվում Պետրոս և Պողոս առաքյալների տոնով՝ հուլիսի 12-ին:

ժգ) Բողոքականները չեն ընդունում ննջեցյալների համար կատարվող աղոթքները:

Նրանք չեն աղոթում ննջեցյալի հոգու համար, որ ընդունի ողորմություն ու հանգիստ: Նրանք միայն դիակը բերում են եկեղեցի, ուր կարդում են Սուրբ Գրքից հատվածներ և քարոզ ասում՝ միայն ննջեցյալի ընտանիքին մխիթարելու կամ մահվան իրողությունից ինչ-որ բան սովորեցնելու համար: Նրանք երբեք չեն աղոթում ննջեցյալի համար և թողություն կամ հավիտենական կյանք չեն հայցում նրա համար:

ժե) Բողոքականները չեն ընդունում բարեխոսությունը:

Նրանք չեն ընդունում հրեշտակների, ս. Կույսի, սրբերի բարեխոսությունը, ոչ էլ ննջեցյալների բարեխոսությունը ողջերի համար կամ ողջերինը՝ ննջեցյալների: Նրանք համարում են, որ ընդհանրապես չկա բարեխոսություն Աստծո և մարդկանց միջև:

Սրանից բխում է հաջորդ տարբերությունը:

ժզ) Բողոքականները չեն պատվում սրբերին:

Նրանք չեն պատվում հրեշտակներին, ս. Կույսին կամ սրբերին: Նրանք չեն նշում սրբերի տոներն, ինչպես մենք, կամ եկեղեցում չեն կարդում «Հայսմավուրք», ուր ամփոփված են սրբերի վարքերը: Նրանք սրբերին փառաբանող երգեր չեն երգում, սրբերի հիշատակը չեն նշում կամ չեն պատվում նրանց նշխարները:

Սրանից բխում է հաջորդ տարբերությունը:

ժէ) Բողոքականները չունեն սրբապատկերներ:

Սրբապատկերների դեմ պայքարը պատմության ընթացքում կարևոր դեր է խաղացել բողոքականների և կաթոլիկների միջև յարաբերություններում: Նրանք չեն ընդունում եկեղեցում սրբապատկեր դնելը կամ դրա առաջ մոմ վառելը, կամ էլ սրբի անվանը դիմելը: Նրանք համարում են սա բարեխոսության մի տեսակ, որը նրանք մերժում են:

Սրանից էլ բխում է հաջորդ տարբերությունը:

ժը) Բողոքականները սրբի անունով եկեղեցի չեն կառուցում:

Նրանք չեն կառուցում հրեշտակի, մարտիրոսի կամ որևէ այլ սրբի անունով եկեղեցի: Նրանք եկեղեցիները կոչում են քաղաքի, շրջանի կամ թերևս մի ինչ-որ առաքինության անունով, ինչպես օրինակ՝ Հույսի եկեղեցի:

Սակայն անգլիկաններն ունեն սրբերի անուններով եկեղեցիներ, ինչպես Ամենայն սրբոց տաճարը Կահիրեում կամ Ս. Պողոսի տաճարը Լոնդոնում:

ժթ) Եկեղեցին՝ իբրև շինություն

Որոշ մարդիկ մերժում են եկեղեցին ընդունել իբրև շինություն՝ այն պատճառաբանությամբ, թե Աստված լցնում է երկինքն ու երկիրը և չի բնակվում մի վայրում: Սակայն բողոքականներն ունեն եկեղեցիներ, պարզապես առանց ս. Սեղանի, իկոնոստասի, աշտարակի[10], գմբեթի կամ սրբապատկերների:

Նրանք համարում են, որ եկեղեցին պիտի ունենա միայն քարոզելու համար նախատեսված ամբիոն և նստարաններ, ինչպես այն քրիստոնեական համայնքներում, որոնց գործը միայն քարոզությունն է:

ի) Չկա դեպի արևելք ուղղվածություն:

Բողոքական եկեղեցիները չեն նայում դեպի արևելք, ինչպես մեր եկեղեցիները: Նաև բողոքականներն աղոթելիս չեն նայում դեպի արևելք, այլ ցանկացած ուղղությամբ:

---

10 Ղպտի և Բյուզանդական օրթոդոքս (Հույն, Ռուս ևն) Եկեղեցիներում ս. Սեղանը գտնվում է սրբարանում, որը եկեղեցու մնացած մասից բաժանվում է սրբապատկերներով զարդարված մի պատով, որը կոչվում է «իկոնոստաս»: Ղպտական եկեղեցիների մեծ մասին (ինչպես նաև Հույն Եկեղեցուն) հատուկ է նաև աշտարակը (մինարեթ):

ԻԱ) Բողոքականները խունկ կամ մոմ չեն գործածում:

Բողոքական եկեղեցիներում խունկ չի գործածվում: Նրանք չեն խնկարկում, նրանց աղոթքներին խնկարկությունը չի ուղեկցում, և նրանց եկեղեցիներում բուրվառ չկա: Նրանք չեն գործածում նաև մոմեր և Ավետարանի ընթերցանության ժամանակ մոմ չեն վառում:

ԻԲ) Բողոքականները հիվանդների օծում չեն կատարում [11]:

Անկախ նրանից՝ սա եկեղեցական խորհուրդ է, թե ոչ, նրանք այն չունեն: Նրանք չեն ընդունում եկեղեցական խորհուրդները, ոչ էլ ծիսական աղոթքը, նույնիսկ հիվանդների համար կատարված աղոթքը՝ իբրև Եկեղեցու խորհուրդ, որի ժամանակ օրհնված սուրբ ձեթ է գործածվում՝ հիվանդներին օծելու համար:

ԻԳ) Բողոքականները չունեն ժամերգություններ:

Բողոքականները չեն ընդունում ժամերգությունները, դրանց ժամերն ու բովանդակությունը: Նրանք նաև չեն համարում, թե անհրաժեշտ է որոշ աղոթքներ անգիր իմանալ: Նրանք համարում են, որ մարդ կարող է աղոթել երբ կամենում է և ինչ ձևով որ կամենում է: Սրանից բխում է մեկ այլ տարբերություն, որ վերաբերում է Տերունական աղոթքին: Նրանք չեն ասում այն որևէ աղոթքի ո՛չ սկզբում, ո՛չ վերջում: Նրանք այն կարող են նաև բոլորովին չասել, ինչպես նաև սաղմոսները: Սակայն որոշ հավաքների ժամանակ նրանք կարող են Տերունական աղոթքն ասել՝ սրանում սխալ ոչինչ չտեսնելով, բայց սա նույնպես նրանց համար պարտադիր չէ:

[11] Ղպտի Եկեղեցում (ինչպես և այլ ավանդական Եկեղեցիներում) յոթերորդ՝ Հիվանդների օծման խորհրդի ժամանակ գործածվում է օրհնված ձեթ: Հայ Եկեղեցում փաստորեն այս անունով խորհուրդ այժմ չկա՝ այն պատճառով, որ հիվանդներին ձեթով չենք օծում (թեև ավելի վաղ դարերում մեզանում ևս հիվանդների օծում կատարվել է): Հայ Եկեղեցում սրան համապատասխանող խորհուրդն ավելի ճիշտ կոչվում է «Հիվանդաց կարգ», որի ժամանակ հոգևորականը հիվանդների համար հատուկ կարգ է կատարում՝ կազմված աղոթքներից, սուրբգրային ընթերցվածներից և այլն:

ԻԴ) Հազարամյա թագավորություն

Բողոքականները հավատում են, թե Տեր Քրիստոսը ժամանակների վախճանին դարձյալ գալով՝ հազար տարի պիտի թագավորի երկրի վրա՝ կապելով սատանային: Այդ շրջանում խաղաղություն պիտի լինի, և գառն ու գայլը միասին պիտի բնակվեն:

Սակայն նույնիսկ բողոքականների միջև կան տարաձայնություններ՝ կապված հազարամյա թագավորության վարդապետության մանրամասների հետ:

ԻԵ) Բողոքականները չեն հավատում Տիրամոր մշտակուսությանը:

Նրանք հավատում են, որ նա ամուսնացել է Հյուսն Հովսեփի հետ և ծնել նրանից երեխաներ, որոնց Ավետարանը ***«Հիսուսի եղբայրներ»*** *է կոչում (Մատթ. ԺԲ 47): Նրանք նույնիսկ չեն պատվում նրան և հաճախ կոչում են* ***«Հիսուսի մայր»*** *և մերժում կոչել* ***«չնորհընկալ»*** *(Ղուկ. Ա 28՝ ըստ հունարեն տարածված բնագրերի- թրգմ.): Նրանք չեն ընդունում, որ նրա մարմինը երկինք է վերափոխվել, ինչպես հավատում են բոլոր ուղղափառներն ու կաթոլիկները: Նրանք չեն նշում նրան նվիրված որևէ տոն: Նրանցից ոմանք նույնիսկ կոչում են նրան «մեր քույրը»:*

ԻԶ) Բողոքականներն ընդունում են քրիստոնեության մեջ կրոնական ուսմունքների հարցում ազատությունն ու նրանց բազմազանությունը:

Նրանք ասում են, որ ամեն ոք իրավունք ունի ընդունելու ցանկացած ուսմունք և սովորեցնելու ինչ ցանկանում է, առանց որևէ եկեղեցական իշխանության կողմից արգելքի, քանի որ նրանք չեն ընդունում եկեղեցական որևէ իշխանություն: Սա է պատճառը, որ գոյություն ունեն տարբեր ուսմունքների տեր, սակայն միևնույն կաղապարն ունեցող բազմաթիվ բողոքական խմբավորումներ: Նրանք մտածում են, որ սա հոգնակիության մի տեսակ է, որը մտավոր առումով հարստացնում է Եկեղեցին: Նրանք մոռանում են, որ ամենքը պետք է ունենան մե՛կ հավատ՝ ըստ Եփես. Դ 5-ի:

ԻԷ) Սուրբ Հոգու շնորհներ

Որոշ բողոքական խմբավորումներ համարում են, թե լեզուներով խոսելու շնորհը դեռ գոյություն ունի: Նրանք սա համարում են Սուրբ Հոգով լցված լինելու կամ Նրանով լցվելու նշան: Սակայն միայն որոշ խմբավորումներ ունեն այս համոզումը՝ համարելով, թե այն անհրաժեշտություն է և պետք է տարածվի: Սա հատկապես բնորոշ է խարիզմատների հարանվանությանը:

ԻԸ) Բողոքականները չեն ընդունում հոգևոր հայրությունը:

Նրանք ոչ ոքի չեն կոչում ոչ հայր, ոչ քահանա, ոչ եպիսկոպոս, որովհետև սխալ են հասկանում Տեր Քրիստոսի՝ առաքյալներին ուղղած հետևյալ խոսքը. ***«Ոչ ոքի ձեր հայրը մի՛ կոչեք երկրի վրա»*** *(Մատթ. ԻԳ 9)*[12]*:*

ԻԹ) Բողոքականները չեն խաչակնքվում:

Թեև բողոքականները խաչին մեծ կարևորություն են տալիս իբրև միջոցի, որը Տերը գործածեց մարդկության փրկության համար, սակայն նրանք չեն պատվում այն, ինչպես ուղղափառներս: Նրանք չեն նշում խաչի հիշատակը որոշակի օրերի, ինչպես մենք: Նրանք չեն սկսում կամ ավարտում աղոթքները խաչակնքմամբ կամ «Հանուն Հոր և Որդվո և Հոգվույն Սրբո» ասելով, ինչպես մենք: Նրանց հոգևոր հովիվները իրենց ձեռքը խաչ չեն բռնում՝ դրանով խաչակնքելու կամ օրհնելու համար, որովհետև չեն ընդունում խաչն իբրև օրհնություն բաշխելու միջոց, կամ որ օրհնությունը կարող է տրվել քահանաների կամ խաչակնքման միջոցով:

Փառք Աստծո, որ այժմ շատ բողոքականներ խաչ են դնում իրենց եկեղեցիների վրա, մի բան, որն առաջ երբեք չէին անում:

[12] Գրքի բնագրում՝ փակագծերում, ավելացված է հետևյալ ծանոթագրությունը. *(Այս մասին առավել մանրամասնորեն բացատրված է մեր «Քահանայություն» գրքում):*

Լ) Ընտրյալներ

Բողոքականները հավատում են, թե փրկության համար Աստված ի սկզբանե արդեն ընտրել է ոմանց՝ իբրև աստվածային բարձրագույն իշխանության նվեր: Նրանք ասում են, որ Աստված ի սկզբանե որոշ մարդկանց ընտրել է հավիտենական կյանքի համար այնպես, ինչպես հաճել է:

ԳԼՈՒԽ Բ

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

ՄԿՐՏՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵՐ ԵՎ ԲՈՂՈՔԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Մկրտությանը վերաբերող տարբերությունները կարելի է ներկայացնել հինգ գլխավոր կետով.

1) Ո՞րն է մկրտության կարևորությունը, և ո՞րն է նրա ներգործությունը:

Արդյո՞ք, ինչպես մենք՝ ուղղափառներս ենք հավատում, սա մեզ համար փրկության, մաքրագործման, արդարացման, վերածննդի, կյանքի նորոգության և Քրիստոսի Մարմնի անդամ դառնալու միջոց է: Թե՞, ըստ բողոքական հավատքի, մենք այս ամենը ձեռք ենք բերում հավատի միջոցով: Եթե վերջին տեսակետն է ճիշտ, ապա ո՞րն է մկրտության օգուտը: Արդյո՞ք դա պարզապես քրիստոնեության նշան է կամ հնազանդություն Տեր Քրիստոսին, ով պատվիրեց այն (Մատթ. ԻԸ 19):

2) Ո՞ւմ ձեռքով պետք է կատարվի մկրտությունը:

Ուղղափառ Եկեղեցում պարտադիր է, որ մկրտությունը կատարվի հոգևորականի ձեռքով, մինչդեռ բողոքականներն ընդհանրապես չեն հավատում մարդկանց քահանայությանը: Բողոքական Եկեղեցում մկրտությունը կատարվում է ոչ թե հոգևորականի, այլ սպասավորի կողմից, ով կարող է լինել «երեց» կամ «պրեսբիտեր» («քահանա»), տղամարդ կամ կին՝ այն խմբավորումներում, ուր կանանց թույլատրելի է ունենալ նման դիրք: Սակայն, համաձայն բողոքական հավատքի, այսպիսի երեցը կամ քահանան հոգևորական չէ:

3) Ի տարբերություն բողոքականների՝ մենք հավատում ենք, որ մկրտությունը Եկեղեցու խորհուրդներից մեկն է:

4) Մենք մկրտում ենք ջրի մեջ ընկղմամբ, մինչ որոշ բողոքականներ՝ ջրով ցողմամբ:

5) Մենք մկրտում ենք մանուկներին ծնողների հավատքով, մինչ

բողոքականները չեն հավատում մանկամկրտությանը, քանի որ նրանց համար նախապայման է, որ մկրտվելուց առաջ մկրտվողը հավատ ունենա: Սակայն որոշ բողոքականներ ընդունում են ծնողների հավատքով կատարվող մանկամկրտությունը. Եգիպտոսի բողոքականները սրանում համաձայնել են մեզ հետ:

ԲՈՂՈՔԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐՈՒՑԱԾ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՏԵՐԸ

Մինչև ո՞ր աստիճան է միայն հավատը բավարար: Արդյոք հավատն առանց մկրտության բավարար չէ՞:

2) Ինչպե՞ս առանց մկրտության փրկվեց աջակողմյան ավազակը:

Ինչպե՞ս կարող է ջուրն ունենալ ծնունդ և վերանորոգություն տալու հատկություն:

Ինչո՞ւ է անհրաժեշտ, որ մկրտությունը կատարվի հոգևորականի ձեռքով: Իսկ եթե պատահի, որ այդ քահանան վատ վարքի տեր է՞:

Եթե մկրտությունը կյանքի նորոգություն է, ինչո՞ւ ենք մկրտվելուց հետո դարձյալ մեղանչում:

Ինչպե՞ս է մանկանը փոխանցվում արդեն իսկ մկրտված և մեղքերի թողություն ստացած ծնողների մեղքը:

Արդյոք մկրտության ջուրը խոսքի խորհուրդն ունի՞, ինչպես առաքյալն է Քրիստոսի՝ Եկեղեցու հետ հարաբերության մասին ասում. ***«Որպեսզի սրբի նրան՝ խոսքի միջոցով մաքրելով ջրով լվացմամբ»***[13] *(Եփես. Ե 26):*

Այժմ մենք մեկ առ մեկ կանդրադառնանք այս բոլոր կետերին:

---

[13] Դրված է ըստ հունարեն տարածված բնագրերի: Գրաբարյան թարգմանության մեջ բացակայում է «ջուր» բառը. «**Զի զնա սրբեսցէ սրբութեամբ աւազանին՝ բանիւ»**: Այս համարում գործածված հունարեն «լուտրոն» բառը նշանակում է թե՛ լվացման գործողությունը, թե՛ վայրը, որն էլ համապատասխանում է գրաբարյան «աւազան»-ին (իմա Մկրտության ավազանը, ինչ իմաստով էլ վերոբերյալ հունարեն բառը գործածվում է):

ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Փրկությունը ձեռք է բերվում մկրտության միջոցով:

Սա համաձայն է Տեր Հիսուս Քրիստոսի խոսքին. ***«Ով հավատա և մկրտվի, կփրկվի»*** *(Մարկ. ԺԶ 16): Տերը չասաց.* ***«Ով հավատա, կփրկվի»****, այլ հավատի պայմանին կցեց նաև մկրտության պայմանը: Նմանապես ս. Պողոս առաքյալն է ասում.* ***«....այլ ըստ Իր ողորմության՝ փրկեց մեզ վերստին ծննդյան լվացման*** *(ըստ գրաբ.՝ ավազանի - թրգմ.)* ***միջոցով և Սուրբ Հոգու նորոգությամբ»*** *(Տիտ. Գ 5): Իսկ Պետրոս առաքյալը, խոսելով տապանի մասին, ասում է.* ***«....Նոյի օրերին, երբ տապանն էր պատրաստվում, որում քչերը, այսինքն՝ ութ հոգի, փրկվեցին ջրով: Ըստ այս օրինակի ձեզ էլ կփրկի մկրտությունը»*** *(Ա Պետ. Գ 20, 21):*

Մկրտության միջոցով մենք ջրից ու Հոգուց երկրորդ ծնունդն ենք ստանում:

ա) Տեր Հիսուսն ասաց Նիկոդեմոսին. ***«Ճշմարիտ եմ ասում քեզ, եթե մեկը նորից չծնվի, չի կարող տեսնել Աստծո արքայությունը»*** *(Հովհ. Գ 3): Տերը բացատրեց սա նրան՝ ասելով.* ***«Ասում եմ քեզ, եթե մեկը չծնվի ջրից ու Հոգուց, չի կարող մտնել Աստծո արքայություն»*** *(Հովհ. Գ 5): Ապա ավելացրեց.* ***«Մարմնից ծնվածը մարմին է, Հոգուց ծնվածը՝ հոգի...., այսպես է և ամեն ոք, ով ծնված է Հոգուց»*** *(Հովհ. Գ 6, 8): Այսպիսով Տերը համարում է, որ ջրից ու Հոգուց ծնվածը ծնվել է ի վերուստ, այսինքն՝ Սուրբ Հոգուց, և սա երկրորդ ծնունդն է:*

Խիստ զարմանալիորեն որոշ բողոքականներ ցանկանում են խուսափել այս խոսքերից՝ ասելով, թե Տերը չասաց. «Եթե մեկը չմկրտվի ջրից ու Հոգուց», այլ՝ ***«եթե չծնվի՛»****: Անկասկա՛ծ երկուսն էլ նույն միտքն են արտահայտում, քանի որ ի՞նչ է նշանակում «ջրից ծնվել»-ը, եթե ոչ «մկրտվել», երբ մկրտվողը դուրս է գալիս Ավազանի «արգանդից»: Ս. Պողոս առաքյալը հաստատում է նույն միտքը՝ ասելով.*

բ) «....ոչ թե մեր գործած արդարության գործերով, այլ ըստ Իր ողորմության Նա փրկեց մեզ՝ վերստին ծննդյան լվացման ***(Ավազանի) միջոցով»*** *(Տիտ. Գ 5): Եվ Եկեղեցու մասին խոսելով՝ նա ասում է.* ***«Որպեսզի սրբի նրան՝ խոսքով մաքրելով ջրով լվացմամբ»*** *(Եփես. Ե 26): Առաքյալը համարում է, որ ջրով լվացումը (մկրտության ժամանակ) վերանորոգության և մեղքերից մաքրման լվացում է:*

Մկրտությունը մաքրում է մեղքերից:

Սա համաձայն է վերոնշյալ երկու խոսքերին, այլև Անանիա առաքյալի՝ Սավղոս Տարսոնացուն ուղղված խոսքին Տիրոջ կողմից Սավղոսի կանչվելուց հետո. ***«Եվ արդ ինչո՞ւ ես դանդաղում. ելի՛ր, մկրտվի՛ր և լվացվի՛ր մեղքերիցդ»*** *(Գործք ԻԲ 16): Ինչպես այստեղ տեսնում ենք, մկրտության պտուղներից մեկը մեղքերից մաքրվելն է: Սավղոսի հետ կատարվածն իրապես զարմանալի է. նա թեև հենց Տեր Հիսուս Քրիստոսից կանչվեց դառնալու հեթանոսների առաքյալ և ընտրյալ անոթ՝ Նրա անունը կրելու և այդ անվան համար չարչարվելու (Գործք Թ 15-16), այնուհանդերձ, նրա մեղքերը չներվեցին Տիրոջ հետ հանդիպմամբ, կամ հավատքի գալով, կամ էլ առաքյալ դառնալով: Նա դեռևս կարիքն ուներ մկրտվելու՝ մեղքերից մաքրվելու համար: Հավանաբար Պողոս առաքյալը միշտ հիշում էր մկրտության միջոցով մեղքերի այդ լվացումը, ուստի ասում էր կորնթացիներին.* ***«Բայց լվացվեցիք, սրբվեցիք, արդարացաք մեր Տեր Հիսուս Քրիստոսի անվամբ և մեր Աստծո Հոգով»*** *(Ա Կոր. Զ 11): Սա այսպես էր, որովհետև նրանք մկրտվել էին Տեր Հիսուս Քրիստոսի անվամբ և ստացել մեղքերի թողություն, ինչպես ս. Պետրոսն ասաց հրեաներին:*

4) Մկրտությամբ ստանում ենք մեղքերի թողություն:

Հոգեգալստյան օրը, երբ հրեաները հավատացին և նրանց սրտերը շարժվեցին, նրանք ասացին Պետրոսին և մյուս առաքյալնե-րին. ***«Ի՞նչ անենք, եղբայրնե՛ր»****: Պետրոսն ու մյուս առաքյալները պատասխանեցին.* ***«Ապաշխարե՛ք, և թող ձեզանից յուրաքանչյուրը մկրտվի Տեր Հիսուս Քրիստոսի անվամբ, մեղքերի թողության համար»*** *(Գործք Բ 37-38):*

Եթե հրեաների հավատը բավական լիներ նրանց մեղքերի թողության համար, մեծ առաքյալը չէր պահանջի նրանց մկրտվել, հատկապես Եկեղեցու հիմնադրման այդ պատմական օրը, երբ փրկության կարևոր սկզբունքների հիմքն էր դրվում:

Ոմանք կարող են հարցնել. «Ինչպե՞ս են մեղքերը ներվում մկրտությամբ»: Պատասխանում ենք.

Մկրտությունը Տեր Հիսուս Քրիստոսի հետ մեռնել և Նրա հետ հարություն առնել է նշանակում:

Սուրբ Գիրքն ասում է. ***«Քանզի մեղքի վարձը մահն է»*** *(Հռոմ. Զ 23): Փրկության ճանապարհը մահով սկսվեց՝ երբ Տեր Հիսուս Քրիստոսը մեռավ մեզ համար: Անհրաժեշտ է մեռնել Տեր Հիսուս Քրիստոսի հետ կամ գոնե նմանվել Նրան Նրա մահվամբ, ինչպես առաքյալն է ասում.* ***«....ճանաչելու Նրան և Նրա հարության զորությունը, Նրա չարչարանքներին հաղորդությունը՝ կերպարանակից լինելու Նրա մահվանը»*** *(Փիլ. Գ 10): Մենք սա կատարում ենք մկրտությամբ: Իսկ ինչպե՞ս:*

Առաքյալն ասում է. ***«Կամ չգիտե՞ք, որ երբ մկրտվեցինք Քրիստոս Հիսուսով, Նրա մահվամբ մկրտվեցինք: Մկրտությամբ թաղվեցինք Նրա հետ մահվան մեջ»*** *(Հռոմ. Զ 3, 4): Եվ նույնը շեշտելու համար կրկնում է.* ***«Տնկակից եղանք Նրա մահվան նմանությամբ.... մեր հին մարդը խաչակից եղավ Նրան»:*** *Նույն միտքը հաստատելով՝ առաքյալը նաև կողոսացիներին է ասում.* ***«....թաղվելով Նրա հետ մկրտության մեջ»*** *(Կող. Բ 12):*

Սակայն ո՞րն է նպատակն այս ամենի: Առաքյալն ասում է. ***«Եթե մեռանք Քրիստոսի հետ, հավատում ենք, որ նաև կապրենք Նրա հետ»*** *(Հռոմ. Զ 8):*

Հռոմեացիներին ուղղված թղթի Զ գլխում նկատելի է երկու կարևոր կետ.

ա) ***«Մկրտության միջոցով Նրա հետ թաղվել»*** *արտահայտությունը նշանակում է ընկղմում, ինչպես երբ մարմինն իջեցվում է գերեզմանի մեջ:*

բ) Մկրտության պտուղներից մեկը մեր ***«հին մարդու»*** խաչումն է:

Կա նաև մկրտության մեկ այլ պտուղ.

6) Մկրտությունը պարգևում է նորոգություն կամ նոր կյանք:

Առաքյալն ասում է. ***«Մկրտությամբ թաղվեցինք Նրա հետ մահվան մեջ, որպեսզի ինչպես Քրիստոսը հարություն առավ մեռելների միջից Հոր փառքով, մենք նույնպես քայլենք կյանքի նորոգությամբ»*** *(Հռոմ. Զ 4), այսինքն՝ նոր կյանքով, որը մենք ստանում ենք մկրտության միջոցով: Այսպիսով մեր բնությունը նորոգվում է մկրտությամբ: Իսկ ինչպե՞ս:*

7) Մկրտվելիս մենք հագնում ենք Քրիստոսին:

Առաքյալն ասում է. ***«Զեզանից ովքեր մկրտվել են Քրիստոսով, հագել են Քրիստոսին»*** *(Գաղ. Գ 27): Կա՞ սրանից ավելի զորավոր արտահայտություն՝ ցույց տալու համար մկրտության մեծ ներգործությունը: Դուք հագնում եք Քրիստոսին... Հագնում եք ամբողջ արդարությունը Նրա մեջ, որը Նա հեղում է ձեզ վրա մկրտությամբ... Հագնում եք փրկությունը, որը մկրտության ժամանակ տրվում է ձեզ Նրա արյամբ... Հագնում եք Աստծո պատկերը (Ծննդ. Ա 26), որը մենք կորցրինք սկզբնական մեղքի պատճառով:*

Հին Կտակարանում կան մկրտության խորհրդանիշ ծառայող բազմաթիվ օրինակներ, որ նույն գաղափարն են արտահայտում: Դրանցից են՝

ա) Նոյի տապանը, որ մկրտության մի խորհրդանիշ էր, ինչպես ս. Պետրոս առաքյալն է ասում. ***«....Նոյի օրերին, երբ տապանն էր պատրաստվում, որում քչերը, այսինքն՝ ութ հոգի, փրկվեցին ջրով***[14]***: Ըստ այս օրինակի ձեզ էլ կփրկի մկրտությունը»*** *(Ա. Պետ. Գ 20, 21): Հետևաբար փրկությունը ձեռք է բերվում ջրով մկրտության միջոցով, ինչը պատահեց նրանց, ովքեր ջրհեղեղից փրկվեցին մկրտության խորհրդանիշ ծառայող Նոյյան տապանի միջոցով: Սա հաստատում է այն, ինչ արդեն ասացինք մկրտության միջոցով շնորհվող փրկության մասին՝ համաձայն Տիրոջ խոսքի (Մարկ. ԺԶ 16):*

բ) Մկրտության մի ուրիշ խորհրդանիշ էր թլփատությունը:

գ) Մկրտության մի ուրիշ խորհրդանիշ էր նաև Կարմիր ծովով անցումը, ինչպես ս. Պողոս առաքյալն է ասում. ***«Չեմ կամենում, որ անգետ մնաք, եղբայրներ, որ մեր հայրերն ամենքն ամպի տակ էին և ամենքը ծովով անցան: Եվ ամենքը Մովսեսով մկրտվեցին, ամպով և ծովով»*** *(Ա Կոր. Ժ 1, 2): Հայտնի է, որ Կարմիր ծովով անցումը ժողովրդի համար փրկություն էր փարավոնի ծառայությունից: Վերոբերյալ աստվածաշնչյան խոսքից երևում է, որ Կարմիր ծովով անցումը խորհրդանիշն էր մեղքի և մահվան ծառայությունից փրկության, որը մենք ընդունում ենք մկրտության միջոցով: Ջրի առկայությունը պարզորոշ է երկու օրինակներում էլ, և Մովսեսը կատարում է քահանայի դերը, ինչը նախահայրերի ժամանակաշր-*

[14] Այսպես է հունարեն տարածված բնագրերում, իսկ գրաբարում՝ **«փ ջրոյն»**՝ ջրից:

ջանում, տապանի օրինակում, կատարում է Նոյը:

դ) Մկրտության հինկտակարանյան մեկ ուրիշ խորհրդանիշ կա նաև Եզեկ. ԺԶ 8-9-ում, ուր Տերն ասում է մեղավոր Երուսաղեմին, որն այստեղ խորհրդանշում է մեղավոր մարդու անկյալ հոգին. ***«Եկա հասա քեզ վրա և տեսա քեզ, որովհետև հասել էր քո ժամանակը... Ես երդվեցի քեզ, ուխտ կապեցի քեզ հետ,- ասում է Ադոնայի Տերը,- և Իմը դարձար: Եվ լվացի քեզ ջրով, սրբեցի քո արյունը և յուղով օծեցի քեզ»:*** *Այս ջուրն ու լվացումը մկրտության խորհրդանիշներ են, և օծումը՝ Սուրբ Հոգով օծման խորհրդանիշ:* ***«Իմը դարձար»*** *արտահայտությունը նշանակում է, որ Երուսաղեմը (մարդկային հոգին) դարձել է Քրիստոսի Մարմնի (Եկեղեցու) անդամ:*

Հետևաբար, մկրտությունը փրկություն ու մեղքերի թողություն է շնորհում ոչ միայն ըստ նորկտակարանյան վարդապետության, այլև ըստ հինկտակարանյան խորհրդանշային օրինակների՝ թլփատության, տապանի և Կարմիր ծովի: Մկրտության ժամանակ ձեռքբերվող թողությունը հստակորեն խոստովանվում է Հավատո հանգանակի հետևյալ դարձվածում. «Խոստովանում ենք մեկ մկրտություն՝ մեղքերի թողության համար»[15]*:*

8) Մկրտությամբ դառնում ենք Եկեղեցու անդամ:

Անտարակույս, թլփատությունը Հին Կտակարանում խորհրդանիշն էր մկրտության: Պողոս առաքյալը Տեր Հիսուսի մասին ասում է. ***«Որով թլփատվեցիք***[16] ***անձեռագործ թլփատությամբ՝ հեռացնելով մեղքի***[17] ***մարմնի անդամը Քրիստոսի թլփատությամբ, թաղվելով Նրա հետ մկրտության մեջ, որով և Նրա հետ հարություն առաք հավատով, Աստծո ներգործությամբ, ով Նրան հարություն տվեց մեռելների միջից»*** *(Կող. Բ 11-12):*

[15] Այսպես է Ղպտի Եկեղեցու, ինչպես նաև այլ պատմական Եկեղեցիների գործածած հանգանակում: Հայոց Եկեղեցում գործածական հավատո հանգանակի բնագրում համապատասխան հատվածը փոքր-ինչ տարբեր է. հրատարակությունների մեծ մասում այն ներկայացված է հետևյալ կետադրությամբ. «Հաւատամք.... ի մի *մկրտութիւն*, յապաշխարութիւն, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց», և նշանակում է. «Հավատում ենք.... մեկ մկրտության, ապաշխարության, մեղքերի քավության ու թողության»: Սակայն ոմանք այս հատվածը կետադրում են այնպես (ստորակետի փոխարեն բութ դնելով «մկրտութիւն» բառի վրա), որ նրա ընդհանուր իմաստը դառնում է մյուս Եկեղեցիների գործածած հանգանակի համապատասխան հատվածին համաձայն և նշանակում է. «Հավատում ենք.... մեկ մկրտության՝ ապաշխարության, մեղքերի քավության ու թողության համար»: Կարծում ենք՝ այս վերջին կետադրությունն ավելի ճիշտ է:

[16] Ըստ գրաբ. թարգմանության՝ **«թլփատվեցիք հավատով»**:

[17] Այս բառը բացակայում է հունարեն որոշ բնագրերում, ինչպես նաև գրաբարյան թարգմանության մեջ:

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԻ ԳՈՐԾՆ Է

Մկրտությունը պետք է կատարվի իրավասու հոգևորականի կողմից: Սուրբ Գիրքը ցույց է տալիս, որ Տեր Հիսուս Քրիստոսը մկրտելու պարտականությունը հանձնեց ոչ թե հասարակ ժողովրդին, այլ Իր սուրբ առաքյալներին: Նախքան համբարձվելը Նա ասաց նրանց. ***«Գնացեք այսուհետև, աշակերտ դարձրեք բոլոր հեթանոսներին, մկրտեք նրանց Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով»*** *(Մատթ. ԻԸ 19): Սա հաստատվում է նաև Մարկ. ԺԶ 15-16 համարներով:*

«Գործք առաքելոց»-ից հստակ երևում է, որ առաքյալներն էին, որ ստանձնեցին մկրտության գործը վաղ Եկեղեցու տարածման տարիներին: Այնուհետև նրանք այս պարտականությունը հանձնեցին իրենց աշակերտ եպիսկոպոսներին, ովքեր էլ իրենց հերթին այն փոխանցեցին քահանաներին:

Այսիսկ պատճառով մենք չենք ընդունում ոչ հոգևորական անձի կողմից կատարված մկրտությունը:

Մկրտակատար հոգևորականը պետք է լինի օրինական՝ այն իմաստով, որ ձեռնադրելու իշխանություն ունեցողի ձեռքը պետք է դրված լինի նրա վրա: Նա չպիտի լինի նաև կարգալույծ արված քահանա, այլ մեկը, ով ունի սուրբ խորհուրդները կատարելու քահանայական իրավասություն:

Մկրտության բոլոր ներգործությունների մասին խոսելուց հետո, որոնց չեն հավատում մեր բողոքական եղբայրները, այլ դրանք վերագրում միայն հավատին, նաև բացատրելուց հետո, որ մկրտությունը միայն հոգևորականի գործն է, մենք կարող ենք հետևյալ հարցը լսել. «Ինչո՞ւ եք դուք վերամկրտում ուղղափառ Եկեղեցուն միացող բողոքականին»:

Պատասխանում ենք: Մենք նրան տալիս ենք այն բոլոր հոգևոր գանձերը, որ նա չի ստացել, երբ մկրտվել է բողոքական Եկեղեցում: Մենք հարցնում ենք նրան. «Մկրտվելիս արդյոք ընդունե՞լ ես փրկություն: Ընդունե՞լ ես արդարացում, վերածնունդ և մեղքերի թողություն: Մկրտվելիս հագե՞լ ես Քրիստոսին, վերստին ծնվե՞լ ես: Եթե այս շնորհներից որևէ մեկը չես ստացել բողոքական Եկեղեցու մկրտությամբ, քանի որ չէիր հավատում, որ դրանք ընդունվում են մկրտության ժամանակ, հետևաբար մենք քեզ պիտի տանք այս շնորհները այն մկրտության միջոցով, որն ունի այս բոլոր ներգործությունները»:

Մի ուրիշ կարևոր պատճառ է այն, որ, ինչպես արդեն նշել ենք, մենք ընդունում ենք միայն այն մկրտությունը, որը կատարվել է իրավասու հոգևորականի կողմից, իսկ բողոքականները չեն հավատում ոչ խորհրդակատար մարդ քահանային, ոչ էլ մկրտությանը իբրև Եկեղեցու խորհրդի: Հետևաբար այսպիսի մկրտությունն ընդունելի չէ մեզ համար: Ինչ որ մենք անում ենք, ոչ թե վերամկրտություն է, այլ նոր անդամի մկրտություն՝ կատարված հոգևորականի կողմից, և այն ունի փրկությանն անհրաժեշտ բոլոր հոգևոր ներգործությունները, առանց որոնց մկրտվողը չի կարող փրկվել: Թեև նախկին՝ բողոքական մկրտությունը կատարվել է Սուրբ Երրորդության անունով, սակայն այն զուրկ է եղել երեք կարևոր պայմանից.

ա) Այն չի կատարվել իրավասու հոգևորականի կողմից:
բ) Այն Եկեղեցու խորհուրդ չի համարվել:
գ) Այն չի ունեցել հոգևոր ներգործություններ:

ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Մենք տեսնում ենք, որ քրիստոնեության սկզբնավորումից ի վեր մկրտությունն անհրաժեշտություն է եղել անհատի՝ հավատքի գալուց անմիջապես հետո՝ ըստ Տիրոջ հրամանի և գործնական կիրառության:

Տերը պատվիրեց Իր առաքյալներին՝ ասելով. ***«Գնացեք այսուհետև, աշակերտ դարձրեք բոլոր հեթանոսներին, մկրտեք նրանց Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով»*** *(Մատթ. ԻԸ 19): Այլև ասաց.* ***«Ով հավատա և մկրտվի, կփրկվի»*** *(Մարկ. ԺԶ 16): Եթե մկրտությունը միայն մի նշան լիներ, Տերը դրան այս մեծ կարևորությունը չէր տա:*

Իսկ ինչ վերաբերում է մկրտության գործնական կիրառմանը, ապա երբ Հոգեգալստյան օրը հրեաները հավատացին, ս. Պետրոսն անմիջապես նրանց մկրտության հրավիրեց: Նա ասաց. ***«Ապաշխարե՛ք, և թող ձեզանից յուրաքանչյուրը մկրտվի Տեր Հիսուս***

Քրիստոսի անվամբ, մեղքերի թողության համար» *(Գործք Բ 37-38): Այդ օրը 3000 հոգի մկրտվեց, թեև, անկասկած, այդքանին մկրտելը հոգնեցուցիչ ու դժվարին գործ էր և պետք է որ շատ ժամանակ խլեր: Եթե մկրտությունը խիստ կարևոր չլիներ, առաքյալներն այն չէին կատարի: Եթե միայն հավատը բավական էր, ի՞նչ կարիք կար այդ հազարավոր հավատացյալներին մկրտելու: Առաքյալի համար ավելի դյուրին կլիներ ասել.* ***«Քանի որ այժմ հավատում եք, եղբայրներ, փրկություն եք ընդունել: Գնացե՛ք, այսքանը բավական է, Տիրոջ օրհնությունը ձեզ հետ»:***

Նույնը պատահեց նաև եթովպացի ներքինուն, ով հավատքի գալուց անմիջապես հետո ի՛նքը խնդրեց մկրտվել: Նա մկրտվեց Փիլիպպոսի ձեռքով և ***«ուրախությամբ շարունակեց իր ճանապարհը»*** *(Գործք Ը 36-39):*

Տարսոնացի Սավղոսը հավատքի գալուց և կանչվելուց անմիջապես հետո մկրտվեց՝ մեղքերից մաքրվելու համար (Գործք ԻԲ 16):

Փիլիպպուսի բանտապետը հավատալով անմիջապես մկրտվեց իր ողջ ընտանիքով (Գործք ԺԶ 23):

Ծիրանավաճառ («ծիրանի» կերպաս վաճառող) Լիդիան հավատքի գալուց հետո մկրտվեց իր ամբողջ ընտանիքով (Գործք ԺԶ 14-15):

Երբ Կոռնելիոսը հավատաց, Պետրոս առաքյալը մկրտեց նրան բոլոր նրանց հետ, որ լսեցին պատգամը՝ ասելով. ***«Մի՞թե կարող է մեկը արգելել ջուրը, որ չմկրտվեն սրանք, ովքեր Սուրբ Հոգին ստացան, ինչպես մենք»*** *(Գործք Ժ 47):*

Եթե փրկությունը ձեռք է բերվում միայն հավատով, ինչո՞ւ էին այդ բոլոր հավատացողները մկրտվում:

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԿՂՄՄԱՄԲ

ա) Սուրբ Գիրքը հստակորեն ցույց է տալիս, որ մկրտությունն իրականացվում էր ընկղմմամբ և ոչ թե ցողմամբ, նույնիսկ Հովհաննես Մկրտչի ժամանակ, որովհետև Տեր Հիսուսն Ինքը ընկղմմամբ մկրտվեց, ինչպես ասում է Սուրբ Գիրքը. ***«Երբ Հիսուսը մկրտվեց, ջրից անմիջապես դուրս եկավ»*** *(Մատթ. Գ 16, Մարկ. Ա 10)*[18]*:*

[18] Գրքի բնագրում ավելացվում է. *«Մեր Եկեղեցին* (իմա Ղպտի Եկեղեցին – թրգմ.) *Տեր Հիսուսի մկրտության օրը կոչում է «Ընկղմման օր»՝ այս իմաստը մեր մտքում ամրագրելու համար»:*

բ) Նույն արտահայտությունը՝ ***«ջրից դուրս եկավ»****, գործածվում է նաև Փիլիպպոսի կողմից եթովպացի ներքինու մկրտության պարագայում: «Գործք առաքելոց»-ն ասում է.* ***«Երկուսն էլ իջան ջրի մեջ՝ Փիլիպպոսն ու ներքինին, և Փիլիպպոսը մկրտեց նրան: Եվ երբ ջրից դուրս եկան, Սուրբ Հոգին եկավ ներքինու վրա, և Տիրոջ հրեշտակը հափշտակեց Փիլիպպոսին***[19]***»*** *(Գործք Ը 38-39): Սա մի ապացույց է, որ մկրտությունն ընկղմմամբ էր: Որովհետև եթե այն միայն ջրով ցողմամբ լիներ, Փիլիպպոսը կբավարարվեր կառքի մեջ ներքինու վրա ջուր ցողելով, և կարիք չէր լինի, որ երկուսով իջնեին ջրի մեջ:*

գ) Հունարեն ***«բապտոս»*** *բառը նշանակում է ներկված, իսկ ներկումն անհնար է առանց ընկղմման*[20]*:*

դ) Մկրտությունը Քրիստոսի հետ մեռնել և Նրա հետ թաղվել է նշանակում, ինչպես առաքյալն է ասում. ***«Մկրտությամբ թաղվեցինք Նրա հետ մահվան մեջ»*** *(Հռոմ. Զ 4), և՝* ***«....թաղվելով Նրա հետ մկրտության մեջ»*** *(Կող. Բ 12): Թաղման գործողությունը հնարավոր չէ կատարել առանց հողի մեջ «ընկղմման»: Իսկ Մկրտության ավազանից դուրս գալը ցույց է տալիս Քրիստոսի հետ հարություն առնելը՝ Նրա հետ մեռնելուց և թաղվելուց հետո: Մինչդեռ ցողումը չի կարող մահ և հարություն նշանակել:*

ե) Մկրտությունը վերստին ծնունդ է: Ծնունդը մի մարմնի դուրս գալն է մի ուրիշ մարմնից: Սա կարելի է տեսնել մկրտության մեջ, երբ մարդու մարմինը դուրս է գալիս Ավազանից: Իսկ ցողումը ծնվելու գործողությունը բնավ չի արտահայտում:

զ) Մկրտությունը մեղքերից լվացում է, ինչպես ասվեց Պողոս առաքյալին (Գործք ԻԲ 16) և ինչպես ինքը ևս գրում է Տիտոսին ուղղած իր թղթում. ***«Նա փրկեց մեզ վերստին ծննդյան լվացման*** *(ըստ գրաբ.՝* ***ավազանի***-*թրգմ.)* ***միջոցով»*** *(Տիտ. Գ 5): Լվացման գործողությունը պահանջում է ջրի մեջ թաթախում և չի կարող կատարվել պարզապես ցողմամբ:*

[19] Գրքի բնագրում՝ ըստ հունարեն որոշ բնագրերի. «Եվ երբ ջրից դուրս եկան, Տիրոջ Հոգին հափշտակեց Փիլիպպոսին»:

[20] Ճշգրտում մտցրինք գրքի բնագրի՝ *«Բապտիսմա» բառը նշանակում է ներկում, իսկ ներկումն անհնար է առանց ընկղմման»* նախադասության մեջ, ուր, թերևս իբրև շփոթության արդյունք, «բապտոս» բառի փոխարեն դրված է «բապտիսմա» բառը, որը թե՛ հունարեն և թե՛ այլ լեզուներով նշանակում է մկրտություն և ոչ ներկում:

Ավելացնենք, որ հունարեն «բապտիզո» բայը նշանակում է մտցնել ջրի տակ, թաթախել, ընկղմել:

է) Հին եկեղեցիներում կարելի է տեսնել ավազաններ[21]*, որոնք էլ ապացույց են, որ մկրտությունը հնում կատարվում էր ջրի մեջ ընկղմմամբ և ոչ թե ցողմամբ, քանի որ ցողման գործողությունը ավազանի կարիք չունի:*

Մկրտությանը վերաբերող վերջին տարբերությունը բողոքական-ների և մեր միջև՝ մանկամկրտությունն է:

ՄԱՆԿԱՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

Բողոքականները մանուկներին չեն մկրտում՝ պնդելով մկրտվե-լուց առաջ հավատ ունենալու անհրաժեշտության վրա՝ ըստ Տիրոջ հետևյալ խոսքի. ***«Ով հավատա և մկրտվի, կփրկվի»*** *(Մարկ. ԺԶ 16), և հիմնվելով այն փաստի վրա, որ մանուկը չի հասկանում, թե մկրտության ժամանակ ինչ է կատարվում: Ուստի նրանք բացականչում են. «Ինչպե՞ս կարող է մկրտություն կատարվել առանց հավատի կամ ըմբռնման»:*

Սակայն մենք պնդում ենք մանկամկրտության վրա՝ հետևյալ պատճառներով.

ա) Մենք մտահոգ ենք մանուկների հավիտենական կյանքի համար, որովհետև Տերն ասում է. ***«Եթե մեկը չծնվի ջրից ու Հոգուց, չի կարող մտնել Աստծո արքայություն»*** *(Հովհ. Գ 5): Ուրեմն ինչպե՞ս կարող ենք արգելել երեխաներին մկրտվելուց և հանձնել նրանց Աստծո դատաստանին, եթե վերոհիշյալ խոսքն ասելիս Տերը չբացառեց մանուկներին:*

[21] Դպտի Եկեղեցում մկրտության ավազանն այժմ անմիջապես եկեղեցու ներսում չի լինում, այլ մի ուրիշ հարակից շինության մեջ, քանի որ բավականին մեծ լայնաշուրթ «կարաս» է, և նրա մեջ չափահասը նույնպես կարող է «ընկղմվել»՝ մտնել և ջրով լավ թաթախվել: Բյուզանդական Օրթոդոքս Եկեղեցում մկրտության ավազանը հենց բավականին մեծ ավազան է՝ դարձյալ չափահասներին նույնպես մկրտել կարողանալու համար: Հայ առաքելական բոլոր եկեղեցիներն ունեն պատի մեջ տեղադրված փոքրիկ ավազաններ, քանի որ մեր Եկեղեցում դարեր շարունակ, համաձայն կանոնների, մկրտությունը կատարվել է ութօրական (կամ շատ փոքրահասակ) մանուկների վրա, և բնականաբար այսպիսի մանկանը ջրի մեջ ամբողջությամբ ընկղմելու համար այսպիսի ավազանը բավարար է: Չափահասին մկրտելիս ճիշտ է գործածել մեծ տաշտ, որում մկրտվողը, երկար շապիկ հագած, պետք է նստի, և քահանան թասով երեք անգամ ջուր լցնի նրա վրա՝ թրջելով նրա ամբողջ մարմինը: Չափահասը կարող է նաև հոսող ջրում մկրտվել՝ բնականաբար դարձյալ մարմնով թրջվելու պայմանի պահպանմամբ (տե՛ս Դերենիկ եպիսկոպոս, Մկրտություն և դրոշմ, Երևան, 1988թ.):

բ) Մկրտության միջոցով մենք մանուկներին հնարավորություն ենք տալիս ապրելու Եկեղեցու կյանքով և վայելելու եկեղեցական խորհուրդները՝ իրենց բոլոր ներգործություններով հանդերձ, ինչպես նաև աստվածային շնորհի ներգործությունն իրենց կյանքում: Այս կերպ մենք գործնականորեն պատրաստում ենք մա-նուկներին հավատքի կյանքին: Եթե մենք նրանց հանեինք Եկեղեցու անդամակցությունից, զրկած կլինեինք հավատքից և այն միջոցներից, որոնցով շնորհը գործում է:

գ) Տիրոջ խոսքը՝ ***«Ով հավատա և մկրտվի, կփրկվի»****, վերաբերում է մեծահասակներին, ովքեր ընդունակ են ըմբռնելու հավատքի նշանակությունը: Հետևաբար մենք չենք կարող մկրտել մեծահասակներին, քանի դեռ նրանք չեն հավատում՝ ըստ Տիրոջ խոսքի (Մարկ. ԺԶ 16): Իսկ ինչ վերաբերում է մանուկներին, նրանց համար ասված է Տիրոջ հետևյալ խոսքը.* ***«Թույլ տվեք և մի՛ արգելեք մանուկներին ինձ մոտ գալ, քանզի այդպիսիներինն է երկնքի արքայությունը»*** *(Մատթ. ԺԹ 14):*

դ) Ինչ վերաբերում է հավատալու պարագային, ոչինչ չի խան-գարում, որ մանուկները հավատն ընդունեն: Նրանց հատուկ չեն մեծահասակների կասկածները, հարցաքննությունները և պատճա-ռաբանությունները: Ուստի պատճառ չկա, որ Երկնքի արքայու-թյան մաս կազմելուց նրանց զրկենք: Նրանց մկրտելը համաձայն է «Ազատ փրկության» սկզբունքին, որին հավատում և որը մեծապես քարոզում են բողոքականները:

ե) Եթե մենք ծայրահեղորեն ընդունենք հավատն իբրև նախապայման, մկրտությունից պիտի զրկենք նաև շատ մեծահասակների, ովքեր մտավոր այնքան կարողություն կամ հասունություն չունեն ըմբռնելու հավատքին վերաբերող սկզբունքներն ու խորությունները, ինչպես շատ հասարակ գյուղացիներ, բանվորներ, անգրագետներ, թերի կրթություն ունեցողներ և նրանք, ովքեր խիստ սահմանափակ մտավոր կարողություն ունեն՝ մտնելու աստվածաբանական խնդիրների խորքը: Ո՞րը պետք է լինի այսպիսի անձանց հավատի ընդունելի չափը: Մենք պետք է մկրտությունից նրանց զրկենք, ինչպես մանուկների՞ն:

զ) Ոմանք հարցնում են. «Իսկ ի՞նչ կարող է պատահել, եթե մանուկը մեծանալով մերժի հավատքը»:

Նա կլինի ինչպես հավատուրացը: Նա իր ազատ կամքով կարող է մերժել մկրտության ժամանակ իր ընդունած շնորհը: Սակայն մենք պիտի կատարեինք նրա հանդեպ մեր պարտքը: Նա կլինի ինչպես մեկը, ով Սուրբ Հոգով սկսելով՝ այժմ փորձում է ավարտել մարմնով (տես Գաղ. Գ 3):

Սակայն ավելի հավանական է, որ Եկեղեցում մկրտված և նրանում կենցաղավարող մանուկները, որ վայելում են նրա շնորհաբեր միջոցները, խեղման վտանգին նվազ ենթակա լինեն, քան նրանք, որ մինչև չափահաս դառնալը մնացել են առանց մկրտության:

է) Մանկամկրտությունն մերժողները փաստորեն մերժում են փրկության համար մկրտության անհրաժեշտությունը (Մարկ. ԺԶ 16). որովհետև եթե նրանք իրապես հավատում են փրկության համար մկրտության անհրաժեշտությանը, ապա վտանգավոր է մանուկներին փրկությունից զրկելը:

Քանի որ բողոքականները պնդում են, որ հավատը փրկության պայման է, իսկ մանուկները հավատ չունեն, ապա, ըստ նրանց, ի՞նչ է սպասում չմկրտված և անհավատ մանուկներին. արդյոք պիտի փրկվե՞ն առանց մկրտության: Հարցը մնում է անպատասխան:

ը) Մենք մանուկներին մկրտում ենք, որովհետև Սուրբ Գիրքն է այս մասին պարզորոշ վկայություններ բերում, երբ հիշատակում է ամբողջական ընտանիքների մկրտության մասին կամ մեկ անձի՝ իր ողջ ընտանիքով. անմտություն կլիներ մտածել, թե այդ բոլոր ընտանիքներում մանուկներ չկային:

Բազմաթիվ օրինակներից բերենք մի քանիսը:

*1) Փիլիպպուսի բանտապետին մկրտելիս ս. Պողոսն ու ս. Շիղան ասացին նրան. **«Հավատա՛ Տեր Հիսուս Քրիստոսին, և կփրկվեք դու և քո ամբողջ տունը»** (Գործք ԺԶ 31): Սա նշանակում է, որ բանտապետի հավատը պիտի լիներ նրա ամբողջ ընտանիքը դեպի փրկություն տանող առաջին քայլը: Ահա թե ինչու դրանից անմիջապես հետո ասվում է. **«Եվ Աստծո խոսքը պատմեցին նրան և նրա տանը գտնվող բոլոր անձանց»**, և այնուհետև **«գիշերվա նույն ժամին.... անմիջապես մկրտվեցին նա և նրա ամբողջ ընտանիքը»** (Գործք ԺԶ 32, 33): **«Նա և նրա ամբողջ ընտանիքը»** խոսքը, առանց որևէ բացառության նշման, ցույց է տալիս, որ մանուկները նույնպես մկրտվել են:*

*2) Ծիրանավաճառ Լիդիայի մկրտության մասին ասված է. **«Մկրտվեցին նա և նրա ընտանիքը»** (Գործք ԺԶ 15):*

*3) Պողոս առաքյալն ասում է. **«Մկրտեցի նաև Ստեփանոսի ընտանիքին»** (Ա Կոր. Ա 16):*

Կարո՞ղ էին արդյոք այս բոլոր ընտանիքներն առանց մանուկների լինել:

4) Սուրբ Գիրքը չի նշում, թե Հոգեգալստյան օրը մկրտվածների մեջ մանուկներ չկային:

թ) Մանկամկրտությունը կիրառվել է հին ժամանակներից ի վեր, ինչպես հայտնի է Օգոստինոսի և Հերոնիմոսի[22] միջև եղած տարաձայնությունից՝ հոգու ծագման վերաբերյալ, թե այն ծնվո՞ւմ է, թե ստեղծվում: Օգոստինոսն ասում էր, որ այն ծնվում է մարդու հետ, իսկ Հերոնիմոսը՝ թե ստեղծվում է: Օգոստինոսը հարցնում է. «Եթե հոգին ստեղծվում է, ապա չի ժառանգում ադամական մեղքը: Ուրեմն ինչո՞ւ ենք մկրտում մանուկներին»: Հերոնիմոսը չի կարողանում այս հարցին պատասխանել:

ժ) Սուրբ Գրքում չկա որևէ համար, որ արգելի մանկամկրտությունը:

ժա) Ինչ վերաբերում է հավատի պարագային, մանուկը մկրտվում է իր ծնողների հավատով: Սա սկզբունքորեն ունի շատ օրինակներ Սուրբ Գրքում:

1) Ինչպես արդեն նշել ենք, թլփատությունը խորհրդանշում էր մկրտությունը: Թլփատվածը համարվում էր Աստծո ժողովրդի անդամ՝ ըստ Աստծո և Աբրահամի միջև կնքված ուխտի (Ծննդ. ԺԷ 11): Թլփատությունը սովորաբար կատարվում էր ծննդից հետո ութերորդ օրը՝ ըստ Աստծո հրամանի (Ծննդ. ԺԷ 12): Ութօրական

---

[22] Այս երկու հայրերը Արևմտյան Եկեղեցու Դ-Ե դդ. մեծ վարդապետներ են: Հերոնիմոսն է հեղինակը Կաթոլիկ Եկեղեցում ցայսօր գործածվող Աստվածաշնչի լատիներեն թարգմանության («Վուլգատայի»): Չնայած որ երկուսն էլ պատկանում են միաբաղկեդոնական Եկեղեցուն, սակայն չեն մտել ո՛չ Ղպտի և ո՛չ Հայ Եկեղեցիների սրբերի շարքը: Այնուամենայնիվ, լինելով Ընդհանրական Եկեղեցու վաղ շրջանի մեծագույն աստվածաբան հայրերից՝ ընդունելի են և մեզ համար, ինչ պատճառով և Շենուդա պատրիարքը չի խորշում նրանցից (հատկապես Հերոնիմոսից) օրինակներ բերել:

մանուկն ի՞նչ կարող էր հասկանալ Աստծո և Աբրահամի միջև կնքված ուխտի վերաբերյալ: Որքանո՞վ էր նա տեղյակ Աստծո ժողովրդին անդամակցելու իրողությանը: Անկասկած, նա այս մասին բնավ հասկացողություն չուներ, այլ թլփատվում էր այդ ուխտի հանդեպ իր ծնողների հավատով: Իր ծնողների հավատով նա դառնում էր Աստծո ժողովրդի անդամ և կրողն այն խոստումների, որոնք Աստված տվեց մեր հայր Աբրահամին:

2) Կարմիր ծովով անցումը մկրտության մի խորհրդանիշ էր կամ հենց մկրտություն, ինչպես Պողոս առաքյալն է բացատրում (Ա Կոր. Ժ 2): Դա փրկություն էր փարավոնի ծառայությունից՝ որպես խորհրդանիշ մեղքի, սատանայի և մահվան ծառայությունից փրկության: Կարմիր ծովն անցան մեծահասակները, ովքեր գիտեին Աստծո՝ Մովսես մարգարեին տված խոստման մասին. նրանք գիտեին, թե ինչպիսին էր իրենց ստրկությունը փարավոնին և թե ինչպես Աստծո զորեղ ձեռքով փրկվեցին դրանից՝ անցնելով Կարմիր ծովը (մկրտվելով): Սակայն ի՞նչ կարելի է ասել ծովը կտրող մայրերի և հայրերի գրկին գտնվող մանուկների մասին: Անշո՛ւշտ նրանք ծառայությունից փրկվեցին ու մկրտվեցին, սակայն իրենց ծնողների հավատով, քանի որ իրենք չէին հասկանում, թե ինչ էր տեղի ունենում:

3) Մեկ այլ լավ օրինակ է մանուկների փրկությունը զատկական գառան արյամբ, հրեշտակի ձեռքով, ով սպանեց եգիպտացի բոլոր արու անդրանիկներին: Տերը հրամայեց Մովսեսին մորթել մեկ տարեկան և արատ չունեցող արու այծ կամ գառ և դրա արյունը քսել հրեաների դռների սեմերին և բարավորին՝ ասելով. **«Երբ արյունը տեսնեմ, ձեզ կփրկեմ»** (Ելք ԺԲ 13): Զատկական գառան արյունը խորհրդանշում էր Տեր Հիսուս Քրիստոսի արյունը, որով մենք փրկություն ընդունեցինք, ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Քանզի մեր Զատիկը՝ Քրիստոսը, մորթվեց» (Ա Կոր. Ե 7):

Եվ այժմ հարցնում ենք. ո՞րն էր զատկական գառան արյամբ փրկված մանուկների հավատը: Ի՞նչ գիտեին նրանք Աստծո և Մովսեսի միջև եղած ուխտի կամ Զատկի ու զատկական գառան արյան միջոցով փրկվելու մասին: Անտարակույս նրանք ոչինչ էլ չգիտեին, բայց փրկվեցին իրենց ծնողների հավատով, ովքեր հավատացին զատկական գառան արյանը, նրա ազդեցությանն ու

կարևորությանը մահվանից փրկվելու համար:

Թլփատությամբ, զատկական գառան արյամբ և Կարմիր ծովով անցմամբ փրկված այս մանուկները այս բոլորի նշանակությունն իմանում էին ավելի ուշ՝ երբ մեծանում էին: Իրենց մանուկ տարիքում նրանք ազատորեն ընդունել էին փրկություն՝ իրենց ծնողների հավատով, ովքեր հավատացել էին Աստծո խոստումներին և մարդկանց հետ կնքած ուխտերին: Իսկ մեծանալով՝ նրանք այս հավատն ընդունում էին արդեն գործնականապես:

Այժմ պատասխանենք մկրտության վերաբերյալ որոշ հարցերի:

ՀԱՐՑԵՐ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՐՑ 1: Եթե մկրտությունը նորոգություն և վերածնունդ է, ինչո՞ւ ենք մկրտվելուց հետո շարունակում մեղանչել:

Մկրտությունը կյանքի նորոգություն է ըստ Սուրբ Գրքի վարդապետության (Հռոմ. Զ 4), բայց այն չի շնորհում անմեղանչականություն: Մկրտությամբ մենք վերածնվում և նոր կյանք, նոր շնորհներ կամ մանավանդ՝ նոր բնություն ենք ստանում, ինչպես ասում է առաքյալը. **«....ըստ Իր ողորմության Նա փրկեց մեզ՝ վերստին ծննդյան լվացման (Ավազանի) և Սուրբ Հոգու նորոգության միջոցով»** (Տիտ. Գ 5): Այս նոր բնությունն ունի հոգևոր կյանքով ապրելու կարողունակություն և զորություն: Սակայն քանի դեռ մարմնի մեջ ենք, անմեղանչական չենք: Այստեղ մենք փորձվում ենք, դեռևս ունենք բարին կամ չարը գործելու ազատություն, որովհետև մկրտության ժամանակ մեր ընդունած նորոգության շնորհը չի ոչնչացնում ազատության շնորհը, որով օժտվել ենք Աստծո պատկերի համաձայն ստեղծված լինելով: Ահա թե ինչու առաքինի մարդը կարող է օրը յոթ անգամ ընկնել և դարձյալ վեր կենալ: Մենք անմեղանչականություն և արդարության պսակը կընդունենք գալիք կյանքում, ինչպես ասում էր Պողոս առաքյալը, երբ հասել էր իր ժամանակը. **«Այսուհետև սպասում է ինձ արդարության պսակը, որը Տերը՝ արդար Դատավորը, ինձ կտա այն օրը»** (Բ Տիմ. Դ 8):

ՀԱՐՑ 2: Արդյո՞ք մկրտությունը զորություն ունի, եթե խորհրդակատար քահանան վատ վարքի տեր է:

Մկրտության ժամանակ մեր ընդունած շնորհներն Աստծուց են և ոչ թե հոգևորականից, ով Տվիչ Տիրոջ սպասավորն է միայն: Շնորհների աղբյուրն Աստծո ճշմարիտ խոստումներն են և ոչ թե հոգևորականի վարքը:

Հոգևորականը նման է այն փոստատարին, ով ուրախալի նամակ է քեզ հասցնում. նա վայելչատես է, թե տգեղ, չի կարող ազդել ուրախալի նամակի վրա:

Հոգևորականը կարող է համեմատվել նաև պարտիզպանի հետ, ով սերմ է ցանում հողի մեջ, որպեսզի պտուղ տա: Նա մեղավոր մեկն է, թե առաքինի, նշանակություն չունի. կարևորը սերմն է և նրանում եղած կյանքի զորությունը և ոչ թե սերմնացանի ձեռքերը:

Դու կարող ես ջուր խմել ոսկյա կամ պղնձյա գավաթից, սակայն ջուրը կմնա նույնը, անկախ գործածածդ գավաթի տեսակից:

Ինչ վերաբերում է մկրտությանը և նրա ներգործականությանը, մեր դատողություններում մենք պիտի քննարկենք վարդապետությունն առարկայապես՝ չշոշափելով որևէ թեմա, որը կարող է մղել դատելու ուրիշներին և արհամարհելու այն պարգևները, որոնք Աստված մկրտության միջոցով շնորհել է մարդ էակներին ըստ Ավետարանում գրված Իր ճշմարիտ խոսքերի:

ՀԱՐՑ 3: Իսկ ինչպե՞ս փրկվեց ավազակն առանց մկրտված լինելու:

Ավազակն ընդունեց լավագո՛ւյն մկրտությունը, որին ամենքս էլ ձգտում ենք: Որովհետև ի՞նչ է մկրտությունը, եթե ոչ Քրիստոսի հետ մեռնել, ինչպես բացատրում է Պողոս առաքյալը Հռոմեացիներին ուղղված թղթի Զ գլխում: Խաչված ավազակն իրապե՛ս մեռավ Քրիստոսի հետ, և այդպիսով նրա մահը դարձավ մկրտություն: Նմանատիպ մկրտություն է նաև այն մարտիրոսների արյամբ մկրտությունը, ովքեր հալածանքների ժամանակ հավատացին Տեր Հիսուս Քրիստոսին և սպանվեցին՝ չհասցնելով ջրով մկրտության

շնորհն ընդունել: Նրանց մահը եղավ մկրտություն, քանի որ մեռան Քրիստոսի հետ, ինչպես այդ ավազակը[23]*:*

ՀԱՐՑ 4: Եթե մկրտությունն այդքան կարևոր է, ինչո՞ւ Պողոս ու Շիղա առաքյալներն ասացին Փիլիպպուսի բանտապետին. **«Հավատա՛ Տեր Հիսուս Քրիստոսին, և կփրկվեք»** (Գործք ԺԶ 31) և ոչ թե՝ **«Հավատա՛ և մկրտվի՛ր»**: Մի՞թե սա վկայություն չէ, որ հավատը բավական է փրկության համար:

Երկու առաքյալները խոսում էին անհավատի հետ: Ինչ էլ որ նա արած լիներ, չէր կարող փրկվել առանց հավատի: Հետևաբար առաքյալներն առաջին հերթին պետք է նրան մղեին հավատալու, որպեսզի նա կարողանար փրկվել, այնուհետև պիտի բացատրեին անհրաժեշտ պարագաները: Ահա թե ինչու հետևյալ երկու իրողությունները տեղի ունեցան նրան այդ խոսքն ասելուց հետո:

ա) ***«Աստծո խոսքը պատմեցին նրան և նրա տանը գտնվող բոլոր անձանց»*** *(Գործք ԺԶ 32):*

բ) Եվ ***«անմիջապես մկրտվեցին նա և նրա ամբողջ ընտանիքը»*** *(Գործք ԺԶ 33):*

Ուստի պետք չէ վերցնել միայն մեկ համար՝ մոռանալով նույն նյութին վերաբերող մնացած համարները: Փիլիպպուսի բանտապետի հավատալու մասին նշող համարի կողքին պետք է դնենք նաև նրա մկրտությունը նշող համարը. առաքյալների ***«Հավատա.... և կփրկվեք»*** *խոսքի կողքին՝ հենց Տիրոջ խոսքը.* ***«Ով հավատա և մկրտվի, կփրկվի»*** *(Մարկ. ԺԶ 16), այլև այն բոլոր համարները, որոնք վերաբերում են մկրտության միջոցով փրկությանը, ինչպես Ա Պետ. Գ 21-ն ու Տիտ. Գ 5-ը:*

ՀԱՐՑ 5: Եթե մկրտությունն անհրաժեշտ է, արդյո՞ք Հին Կտակարանի մարգարեները մկրտված էին:

Եթե նրանց օրոք մկրտության պատվիրանը գոյություն ունենար, նրանք կմկրտվեին, սակայն այս պատվիրանը հաստատվել է միայն

[23] Գրքի բնագրում՝ փակագծերի մեջ, ավելացվում է. *«Մենք բացատրել ենք այս կետը «Փրկություն» վերնագրված մեր գրքում»:*

քրիստոնեության մեջ: Պատճառն այն է, որ մկրտությունը Քրիստոսի հետ մեռնել է նշանակում, իսկ Քրիստոսը դեռ չէր մեռել հինկտակարանյան ժամանակներում:

Այնուամենայնիվ, Հին Ուխտի մարգարեները իբրև մկրտության խորհուրդ կատարեցին այն, ինչ կարող էին իրենց ժամանակ՝ թլփատությունը և Կարմիր ծովով անցումը: Նրանք նաև նշում էին Զատիկը՝ գառի զոհաբերմամբ, որը խորհուրդն ուներ Քրիստոսի արյան: Մենք չենք կարող սպասել, որ մարդիկ գործադրեին մի պատվիրան, որը գոյություն չուներ իրենց ժամանակ:

ՀԱՐՑ 6: Մի՞թե փրկությունը ձեռք չի բերվում խոսքի և ոչ թե ջրի միջոցով:

Մի՞թե Եկեղեցու մասին առաքյալի խոսքը՝ ***«Որպեսզի սրբի նրան՝ խոսքի միջոցով մաքրելով ջրով լվացմամբ»*** *(Եփես. Ե 26), չի նշանակում, որ մաքրվելը, այսինքն՝ փրկությունը, խոսքի միջոցով է: Իսկ ի՞նչ ասել մյուս համարների մասին, որոնք նշում են փրկության համար խոսքի անհրաժեշտությունը, ինչպես՝* ***«Վերստին ծնված լինելով ոչ թե ապականության սերմից, այլ անապականից՝ Աստծո կենդանի և մշտնջենական խոսքով»*** *(Ա. Պետ. Ա. 23), և՝* ***«Կամենալով ծնեց մեզ ճշմարտության խոսքով»*** *(Հակ. Ա 18), որոնք չեն ասում՝* ***«վերստին ծնված լինելով.... մկրտության միջոցով»*** *կամ* ***«փրկեց մեզ մկրտության միջոցով»****:*

Ուրեմն ո՞րն է փրկության համար ջրի կարևորությունը:

Քանի որ Տերն ասում է. ***«Ով հավատա և մկրտվի, կփրկվի»****, ապա փրկությունը ձեռք է բերվում այս ձևով: Բայց* ***«Ով հավատա»*** *արտահայտությանը պետք է նախորդի ուսուցումը կամ քարոզությունը, որովհետև առաքյալն ասում է.* ***«Ինչպե՞ս կհավատան Նրան, ում մասին չլսեցին, կամ ինչպե՞ս կլսեն առանց մեկի քարոզության»*** *(Հռոմ. Ժ 14): Հետևաբար խոսքը կարևոր է:*

Առաջինը լինում է խոսքը, որը հավատ է ծնում, ապա հավատալուց հետո մկրտությունն է իրականացվում, որն էլ փրկություն ու վերածնունդ է շնորհում: Թեպետ փրկությունն ու կյանքի նորոգությունը մկրտությամբ են տրվում, սակայն խոսքը պետք է նախորդի, քանի որ դա է առաջնորդում դեպի հավատ, և հավատն էլ՝ դեպի

մկրտություն: Ուստի առաքյալն ասում է. ***«....ծնեց մեզ ճշմարտության խոսքով»*** *և՝* ***«վերստին ծնված լինելով.... Աստծո կենդանի և մշտնջենական խոսքով»****, որովհետև* ***«խոսքն»*** *է աղբյուրն այս ամենի:*

Իսկ Եկեղեցու մասին առաքյալի խոսքը՝ ***«Որպեսզի սրբի նրան՝ խոսքի միջոցով մաքրելով ջրով լվացմամբ»*** *(Եփես. Ե 26), նշանակում է, որ մաքրությունն իրականանում է մկրտությամբ (ջրի լվացմամբ), խոսքի միջոցով կամ արդյունքում, այսինքն՝ քարոզության և խոսքի սպասավորության, որոնք ծնում են հավատ, ապա մկրտություն:*

Այստեղ մենք տեսնում ենք, որ առաքյալն ասում է՝ ***«խոսքի միջոցով մաքրելով ջրով լվացմամբ»*** *և ոչ թե՝ «ջրով լվացմամբ, որը խոսքն է»: Եթե ջրով լվացումը խոսքի նշանակությունն ունենար, ապա այս կրկնության կարիքը չէր լինի: Սակայն «խոսքի միջոցով մաքրելը ջրով լվացմամբ» նշանակում է ջրով լվացում, որը տեղի է ունենում խոսքի ներգործության հետևանքով: Առանց խոսքի և նրա ներգործության մարդիկ չէին գա ջրով լվացվելու, այսինքն՝ մկրտվելու:*

Մենք տեսնում ենք նաև, որ հետևյալ արտահայտություններում չի նշվում հավատալու մասին՝ ***«Վերստին ծնված լինելով ոչ թե ապականության սերմից, այլ անապականից՝ Աստծո կենդանի և մշտնջենական խոսքով»*** *(Ա. Պետ. Ա. 23), և՝* ***«Կամենալով ծնեց մեզ ճշմարտության խոսքով»*** *(Հակ. Ա 18), բայց մի՞թե սա նշանակում է, թե խոսքն առանց հավատի բավարար է վերստին ծննդյան համար: Սա անհնար է: Հավատալու մասին չի նշված, քանի որ նրա իմաստը հասկացվում է:*

Կարիք չկա ամեն առիթով կրկնելու այն բառերը, որոնց իմաստները հասկացվում են: Մենք չենք կարող ամեն առիթով կրկնել ***«խոսք»****,* ***«հավատ»****,* ***«մկրտություն»****,* ***«վերածնունդ»*** *բառերը:*

Քարոզությունն իր կարևորությունն ունի. ոչ ոք չի կարող ժխտել խոսքի սպասավորության կարևորությունը: Այնուամենայնիվ, մենք բնավ չենք կարող ասել, թե ինչ-որ անձինք կարող են ***«ծնվել ճշմարտության խոսքով»****՝ անկախ նրանից՝ հավատում են, թե ոչ: Սա վերաբերում է նաև մկրտությանը:*

«Խոսքի միջոցով մաքրել ջրով լվացմամբ» արտահայտությունը երկու բան է ցույց տալիս՝ խոսք և մկրտություն: Եվ «հավատ» բառը չի նշված, քանի որ այն հասկացվում է:

Բողոքականները շարունակ կենտրոնանում են հավատի պարագայի վրա: Արդյո՞ք «հավատ» բառի բացակայությունը Եփես. Ե 26, Հակ. Ա 18 և Ա Պետ. Ա 23 համարներում նշանակում է, որ այն կարևոր կամ անհրաժեշտ չէ: Անշո՛ւշտ ոչ: Հաճախ բառի բացակայությունը ոչ թե դրա անկարևորությունն է ցույց տալիս, այլ որ դրա իմաստն ակնհայտ է, ինչպես «մկրտություն» բառի պարագայում:

ՀԱՐՑ 7: <u>Ո՞րն է ջրի անհրաժեշտությունը փրկության և վերստին ծննդյան համար:</u>

*ա) Թեև «ջուր» բառը չի նշված հետևյալ արտահայտություններում՝ «.... **ծնեց մեզ ճշմարտության խոսքով»** և **«վերստին ծնված լինելով.... Աստծո կենդանի և մշտնջենական խոսքով», սակայն այն հստակ** նշվում է Տիրոջ խոսքում՝ **«Եթե մեկը չծնվի ջրից և Հոգուց, չի կարող մտնել երկնքի արքայություն»** (Հովհ. Գ 5): Ջրից ծնունդը հստակ երևում է այս համարում, և խոսվում է իրակա՛ն ջրի և ոչ թե խորհրդանշականի (սիմվոլիկ) մասին:*

բ) Սա երևում է նաև, երբ Կոռնելիոսն ու նրա հետ եղած հեթանոսներն ընդունում են հավատքն ու միանում Եկեղեցուն: Այդ արդար մարդիկ Աստծուց էին հավատքի կանչվել. հրեշտակը հայտնվում է Կոռնելիոսին, և Պետրոսը տեսիլք է տեսնում ու լսում Աստծո հրամանը: Ապա Պետրոսը քարոզում է նրանց Աստծո խոսքը, Սուրբ Հոգին իջնում է բոլոր նրանց վրա, որ լսում են խոսքը (Գործք ԺԱ 1), և նրանք սկսում են լեզուներով խոսել:

*Արդյո՞ք դա բավական էր նրանց վերստին ծննդյան համար: Կարո՞ղ էր ս. Պետրոսը նրանց ասել. «Օրհնյալ է ձեր այս վերածնունդը»: Ո՛չ, այսպես չեղավ: Պետրոսը նրանց ասաց. **«Մի՞թե կարող է մեկն արգելել ջուրը, որ չմկրտվեն սրանք, ովքեր Սուրբ Հոգին ստացան, ինչպես մենք»: Եվ նա հրամայեց նրանց մկրտվել Հիսուս Քրիստոսի անունով»** (Գործք Ժ 47, 48):*

*«Գործք առաքելոց»-ի հեղինակն անմիջապես հետո բացատրում է՝ ասելով. **«....հեթանոսներն էլ են ընդունել Աստծո խոսքը»** (Գործք ԺԱ 11): Հետևաբար ջուրը պահանջվում է խոսքին զուգընթաց, և ոչ թե «ջուր» բառը «խոսք» է նշանակում, ինչպես որոշներ այն մեկնաբանում են Եփեսացիներին ուղղված թղթի Ե 26 համարում:*

*գ) Ջրի կարևորության մեկ ուրիշ հստակ օրինակ է եթովպացի ներքինու մկրտությունը: Երբ նա հավատաց, Սուրբ Գիրքն ասում է, որ **«նրանք գնում էին ճանապարհով, եկան ինչ-որ ջրի մոտ, և ներքինին ասաց. «Ահա ջուր. ի՞նչն է արգելում ինձ մկրտվել»: Փիլիպպոսն ասաց. «Եթե ամբողջ սրտով հավատում ես, կարող ես»: Պատասխանեց. «Հավատում եմ, որ Հիսուս Քրիստոսն է Աստծո Որդին»: Հրամայեց կառքը կանգնեցնել, և երկուսն էլ իջան ջրի մեջ՝ Փիլիպպոսն ու ներքինին, և Փիլիպպոսը մկրտեց նրան»** (Գործք Ը 36-38):*

Սա ջրով ճիշտ նույնպիսի մկրտություն էր, ինչ Կոռնելիոսինն ու նրա մարդկանցը. իրական ջրով մկրտությունն անհրաժեշտ էր անմիջապես խոսքի քարոզությունից հետո, և այդ ջուրը խոսք չէր: Եթե ներքինին կարողանար ծնվել և մաքրվել խոսքով, այլևս ինչո՞ւ պիտի ջրի կարիք լիներ:

Սրա առնչությամբ կամենում եմ խոսել մի կարևոր նյութի շուրջ՝ ջրի կարևորության և խորհրդանիշների մասին, որպեսզի հասկանալի լինի, թե ինչու Մկրտության խորհրդի մեջ հենց ջուրն ընտրվեց մաքրման և վերածննդի նպատակով:

<u>Ջրի կարևորությունն ու նրա խորհրդանիշները</u>

Հենց սկզբից՝ արարչագործության պատմության մեջ, կարելի է աղերս տեսնել ջրի և կյանքի միջև:

*Սուրբ Գիրքն ասում է. **«Եվ Աստծո Հոգին շրջում էր ջրերի վրա»** (Ծնն. Ա 2): Նաև՝ **«Թող ջրերը բխեցնեն կենդանի շունչ ունեցող զեռուններ և թևավոր թռչուններ երկրի վրա՝ երկնքի հաստատության մեջ»** (Ծնն. Ա 20): Ուրեմն կյանքը բխեց ջրից, և կարող ենք այստեղ կապ տեսնել ջրի, կյանքի և Աստծո Հոգու միջև:*

*Հին Կտակարանում կարդում ենք նաև, որ Աստված Իրեն համեմատում է ջրի հետ: Ժողովրդին հանդիմանելով՝ Նա ասում է. **«Թողեցին Ինձ՝ կենդանի ջրի աղբյուրին, և իրենց համար գուբեր***

փորեցին, ծակ գուբեր, որոնք չեն կարող ջուր պահել» *(Երեմ. Բ 13): Այս միտքն արտահայտվում է նաև Նոր Կտակարանում՝ Տեր Հիսուս Քրիստոսի խոսքում.* ***«Ով հավատում է Ինձ, ինչպես Սուրբ Գիրքն է ասում, նրա որովայնից կենդանի ջրի գետեր կբխեն»****: Սա ասում էր Հոգու մասին, որն ընդունելու էին Իրեն հավատացողները» (Հովհ. է 38-39): Այս խոսքը նման է Տիրոջ այն խոսքին, որը Նա ասաց սամարացի կնոջը կենդանի ջրի մասին. Նա ասաց, որ Ինքն է կենդանի ջուրը տվողը:* ***«Բայց այն ջուրը, որը Ես կտամ նրան, կլինի նրա համար ջրի աղբյուր, որը բխում է հավիտենական կյանքի համար»*** *(Հովհ. Դ 14):*

Հետևաբար, ջուրը կյանքի և երբեմն էլ հենց Սուրբ Հոգու խորհրդանիշ է: Որքա՜ն գեղեցիկ են Աստվածային Ներշնչանքի խոսքերն առաքինի մարդու մասին Առաջին սաղմոսում. ***«Նա կլինի ինչպես ծառ, որ տնկված է հոսող ջրերում, որն իր պտուղը ժամանակին կտա»*** *(Սաղ. Ա 3), այսինքն՝ Սուրբ Հոգո՛ւ պտուղը:*

Ժամանակը չի բավարարի լիովին բացատրելու ջրի, կյանքի և Սուրբ Հոգու միջև կապը Սուրբ Գրքում: Այն սկիզբ է առնում «Ծննդոց» գրքի սկզբից (Ա 2) և շարունակվում մինչև «Հայտնության» գրքի ավարտը. ***«Ես ծարավյալներին ձրի կտամ կյանքի ջրի աղբյուրից»*** *(Հայտ. ԻԱ 6),* ***«Եվ ինձ ցույց տվեց կենդանի ջրի բյուրեղանման մաքուր գետ, որ դուրս էր գալիս Աստծո և Գառի աթոռից»*** *(Հայտ. ԻԲ 1), և՝* ***«Ով ծարավ է, թող գա, և ով կամենում է, թող ձրի վերցնի կյանքի ջուրը»*** *(Հայտ. ԻԲ 17):*

Կարմիր ծովով անցման ժամանակ ջուրը խորհրդանշում էր միաժամանակ կյանքն ու մահը՝ ծառայի մահն ու ջրից դուրս եկող ազատի կյանքը: Ավագ հինգշաբթի օրվա ջուրը մաքրագործում է խորհրդանշում: Ահա թե ինչու առաքյալների ոտքերը լվալուց հետո Տերն ասաց նրանց. ***«....և դուք մաքուր եք»*** *(Հովհ. ԺԳ 10):*

Սաղմոսերգուն ասում է. ***«Մաքրությամբ կլվամ ձեռքերս»*** *(Սաղ. ԻԶ 6):*

Այս մաքրագործումը վերստին ծննդյան լվացումն է խոսքի միջոցով, այն մաքրագործումը, որն ընդունում ենք մկրտության մեջ՝ վերստին ծննդյամբ՝ ըստ առաքյալի խոսքի. ***«....և մկրտելով[24] մեր մարմինը մաքուր ջրով»*** *(Եբր. Ժ 22):*

[24] Պահեցինք սույն համարի գրաբարյան թարգմանության **«մկրտել»** բառը, որի բուն իմաստն է հենց «լվանալ»:

Նախքան մյուս հարցին անցնելը կամենում եմ խոսել այն մեծ հրաշքի մասին, որը տեղի ունեցավ Տիրոջ խաչելության ժամանակ և վերաբերում է ջրին ու արյանը:

<u>Ջուր և արյուն</u>

Խաչի վրա, երբ զինվորներից մեկը նիզակով խոցեց Տեր Հիսուսի կողը, ***«արյուն և ջուր դուրս եկան»*** *(Հովհ. ԺԹ 34): Ո՞րն է սրանից բխող աստվածաբանական խորհուրդը:*

Նրա կողից արյան ելնելը վերաբերում է փրկությանը: Բայց ինչպե՞ս կարող ենք ընդունել այս փրկությունը: Մենք այն ընդունում ենք ջրի (մկրտության) միջոցով: Հետևաբար Քրիստոսի կողից ջրի և արյան բխումը ցույց տվեց մեզ փրկության միջոցները: Մենք ջրի միջոցով ենք ընդունում Տեր Քրիստոսի արյունը, որը մեզ մաքրում է մեղքից[25]:

Սա պարզ երևում է ս. Հովհաննես Ավետարանչի խոսքում, նրա, ով վկան դարձավ խաչելության ժամանակ արյան և ջրի բխման: Նա ասում է. ***«Այս երեքն են վկայում՝ Հոգին, ջուրը և արյունը, և այս երեքը մեկ են»*** *(Ա Հովհ. Ե 8): Այն փրկությունը, որն ընդունում ենք, հստակ տեսանելի է այս համարում:*

Փրկությունը մեզ տրվեց արյամբ (Քրիստոսի արյամբ), և մենք այս արյան պարգևն ընդունում ենք ջրով և Հոգով մկրտությամբ: Հետևաբար այս երեք տարրերն էլ՝ արյունը, ջուրն ու Հոգին, առկա են մկրտության մեջ:

ՀԱՐՑ 8: <u>Արդյո՞ք ջուրն ունի այս բոլոր ներգործությունները:</u>

ա) Այս հարցը հիշեցնում է Նեեման Ասորու վրդովմունքը, երբ

[25] Գրքի բնագրում ավելացվում է. *«Որքան գեղեցիկ է, երբ Հաղորդության խորհրդի մեջ մենք արյանը ջուր ենք խառնում»:* Ղպտի Եկեղեցին, ինչպես այլ պատմական Եկեղեցիները (բացառությամբ Հայ Եկեղեցու), Հաղորդության գինու մեջ ջուր է խառնում: Պետք է ասել, որ թե՛ ջրախառն, թե՛ անապակ (մաքուր, անխառն) գինու գործածությունները գալիս են Ընդհանրական Եկեղեցու սկզբնական շրջանից՝ պարզապես տարբեր ավանդություններ լինելով: Հաղորդության մեջ ջրախառն գինու կիրառության մասին կան վկայություններ քրիստոնեության սկզբնական՝ նախանիկիական շրջանից (ս. Հուստինոս Վկա, ս. Կիպրիանոս): Հայոց Եկեղեցին միակն է, որ դարեր շարունակ և առայսօր անապակ գինի է գործածում՝ հետևելով սեփական վաղեմի ավանդությանը:

Եղիսեն թելադրեց նրան գնալ և Հորդանանում լվացվել՝ բորոտությունից մաքրվելու համար: Նա չկարողացավ հավատալ, որ պահանջվում էր պարզապես գետում լվացվել, մանավանդ որ նրա հայրենիքում՝ Դամասկոսում, ավելի լավ գետեր կային, քան Իսրայելի բոլոր ջրերը (Դ Թագ. Ե 10-12): Բայց երբ նա հնազանդվեց ու հավատով լվացվեց, մաքրվեց:

Մենք այստեղ նկատում ենք, որ Հորդանանը, որում մարգարեն հրամայեց Նեեմանին լվացվել, հետագայում դարձավ այն գետը, որում Հովհաննես Մկրտիչն էր մկրտում (Մատթ. Գ 6): Արդյոք մե՞նք էլ Նեեմանի պես պիտի վարվենք՝ չընդունելով ջրի ներգործականությունը:

Աստված Իր շնորհները տալիս է Իր կամեցած եղանակով: Շնորհն այս դեպքում ոչ թե հենց Հորդանանի ջրի մեջ էր, այլ այդ ջրի վրա Աստծո հեղած մաքրիչ զորության: Նույնը որոշ առումով վերաբերում է նաև մկրտությանը, ինչպես ցույց պիտի տանք ավելի հետո:

բ) Մի ուրիշ օրինակ է ի ծնե կույրի բժշկությունը: Տերը նրա աչքերին կավ դրեց և ասաց. ***«Գնա լվա Սիլոամի (որ թարգմանվում է «առաքված») ավազանում»: Գնաց լվացվեց, եկավ և տեսնում էր»*** *(Հովհ. Թ 6-7): Միայն հավատի շնորհիվ կույրը կարողացավ տեսնել, սակայն Աստված կամեցավ նրան լույս շնորհել ջրի միջոցով (մկրտությունը լուսավորում է): Թող Տիրոջ կամքը կատարվի այն եղանակով, որով Նա կամենում է. մե՛նք չենք Աստծո իրականացնելիք ծրագրերի մշակողը. օրհնյալ լինի Նրա անունը:*

գ) Պատասխանելով այս հարցին՝ ի հավելումն ասենք, որ մկրտության ջուրը հասարակ ջուր չէ, և մկրտվողն էլ միայն ջրից չի ծնվում, այլ ջրից և Հոգուց: Սուրբ Հոգին սրբագործում է մկրտության ջուրը՝ տալով դրան հատուկ բնություն, այնպես, որ ով նրա մեջ թաթախվում է, ծնվում է ջրից և Հոգուց: Այս կերպ մկրտվողն ընդունում է Քրիստոսի փրկարար արյան պարգևը: Նա մկրտության ջրի մեջ թաղվում է Քրիստոսի հետ և հաղորդակից դառնում Նրա մահվանը, որպեսզի կարողանա հաղորդակից լինել նաև Նրա հարությանը: Այդ պատճառով էլ մկրտության ջուրը սրբագործելիս նրա մեջ լցնում ենք սուրբ օծման յուղը՝ սուրբ մեռոն (որը Սուրբ Հոգու յուղն է), որպեսզի ջուրը սրբագործվի Սուրբ Հոգով: Այսպիսով, ով ծնվում է այս ջրից, ծնվում է ջրից և Հոգուց:

Մկրտության ջուրը սրբագործելիս հոգևորականը ջուրը սրբագործող և Սուրբ Հոգին հրավիրող որոշ աղոթքներ է ասում, որպեսզի այն սրբվի: Նա նաև ընթերցում է Սուրբ Գրքից որոշ հատվածներ, որպեսզի մեզ մաքրող մկրտության ջուրը սրբագործվի խոսքով:

ՀԱՐՑ 9: <u>Ավելի լավ չէ՞ր լինի, եթե ասեինք, որ մկրտությունը Քրիստոսի հետ հարություն առնել է նշանակում և ոչ թե Նրա հետ մեռնել, որովհետև մահվանից օգուտ չկա մեզ, այն նույնիսկ վնասակար է, մինչ հարությունն օգտակար է:</u>

Մկրտությունը Քրիստոսի հետ մեռնել և Նրա հետ հարություն առնել է նշանակում, ինչպես առաքյալը բացատրում է հռոմեացիներին ուղղած իր թղթում. ***«Եթե տնկվեցինք միասին Նրա մահվան նմանությամբ, նաև Նրա հարության [նմանությամբ կլինենք]»*** *(Հռոմ. Զ 5) և՝* ***«Եթե մեռանք Քրիստոսի հետ, հավատում ենք, որ նաև կապրենք Նրա հետ»*** *(Հռոմ. Զ 8):*

Այս հարցում ոչ ոք չպետք է հիմնվի սեփական դատողությունների վրա՝ հակառակելով Սուրբ Գրքին և ասելով, թե մահվանից օգուտ չկա մեզ համար, մինչ հարությունն օգտակար է: Սուրբ Գիրքն ասում է մկրտության մասին. ***«Կամ չգիտե՞ք, որ երբ մկրտվեցինք Քրիստոս Հիսուսով, Նրա մահվամբ մկրտվեցինք: Մկրտությամբ թաղվեցինք Նրա հետ մահվան մեջ, որպեսզի ինչպես Քրիստոսը հարություն առավ մեռելների միջից Հոր փառքով, մենք նույնպես քայլենք կյանքի նորոգությամբ»*** *(Հռոմ. Զ 3, 4): Նույն միտքը կրկնվում է կողոսացիներին ուղղված թղթում.* ***«....թաղվելով Նրա հետ մկրտության մեջ, որով Նրա հետ հարություն առաք հավատով, Աստծո ներգործությամբ, ով հարություն տվեց Նրան մեռելների միջից»*** *(Կող. Բ 12): Այս համարները ցույց են տալիս, որ մկրտությունը միաժամանակ և մահ է, և հարություն: Հիրավի՛, ովքեր արհամարհում են Քրիստոսի հետ մեռնելը, չեն ընդունի Նրա հարության օրհնությունը:*

Այստեղ կարելի է հարցնել. ինչո՞ւ մկրտության մեջ մահ կա, և ո՞րն է դրա կարևորությունը:

ա) Սրա նպատակը Տեր Հիսուս Քրիստոսին հաղորդակից լինելն

է: Որովհետև առաքյալը չասաց, թե ինքը միայն Նրա հարության զորությունը պիտի ստանա, այլ ասաց նաև՝ ***«....ճանաչելու Նրան և Նրա հարության զորությունը, Նրա չարչարանքներին հաղորդություն՝ կերպարանակից լինելու Նրա մահվանը» (Փիլ. Գ 10), և՝ «Եվ Քրիստոսի հետ խաչը ելնեմ***[26]***»*** *(Գաղ. Բ 20):* ***«Քրիստոսի հետ մեռնել»*** *արտահայտությունը հաճախ կրկնվում է Հռոմ. Զ գլխում:*

բ) Մարդու ապականված բնությունը պետք է մկրտության մեջ մեռնի, որպեսզի մարդը կարողանա նոր բնություն ստանալ: Ահա այս միտքն է առաքյալն արտահայտում, երբ հռոմեացիներին ուղղված թղթի Զ գլխում խոսում է մկրտության մեջ հին մարդուն խաչելու մասին. «Սա՛ իմացեք, որ մեր հին մարդը Նրան խաչակից եղավ, որպեսզի ***մեղքի մարմինը խափանվի և այլևս չծառայենք մեղքին: Որովհետև մեռնողն արդարացած է մեղքից»*** *(Հռոմ. Զ 6-7): Այստեղ ներկայացված մահվանից օգուտ կա, և այն վնասակար չէ, ինչպես ոմանք կարծում են: Մեզ և մեր ապականված բնության համար լավ է մեռնել, որպեսզի կարողանանք հարություն առնել նոր բնությամբ՝ ըստ Աստծո պատկերի: Ապականված բնությունը չունի Քրիստոսի հետ հարություն առնելու զորություն. այն պետք է մեռնի, որպեսզի կարողանանք ապրել:*

գ) Նրա մահվանը հաղորդակից լինելով մենք խոստովանում ենք, որ ընկած էինք մահվան դատավճռի տակ, այսինքն՝ ***«մեռած էինք մեր մեղքերում»****, և Քրիստոսը մեռավ մեզ համար և թաղվեց: Քանի դեռ մեղքի վարձը մահն է, մենք մկրտվում ենք Քրիստոսի մահվամբ, թաղվում Նրա հետ մկրտության մեջ, որպեսզի արժանանանք Նրա հետ հարություն առնելու օրհնությանը:*

դ) ***«Հարություն»*** *բառի առաջին իմաստը մեռելների միջից հարություն առնելն է: Ով մկրտությամբ պատրաստվում է հարություն առնել Քրիստոսի հետ, նախ պետք է Նրա հետ մեռնի, որ կարողանա հարություն առնել: Եթե չմեռնի, ինչպե՞ս պիտի հարություն առնի:*

[26] Գրքի բնագրում՝ ըստ հունարեն տարածված բնագրերի՝ **«խաչվեցի»**:

ՀԱՐՑ 10: <u>Ինչո՞ւ այն անձը, ում ծնողները մկրտված և աղամական մեղքից ազատված են, պետք է նույնպես մկրտվի՝ այդ մեղքը ջնջելու համար</u>:

Մահվան դատավճիռը չի ժառանգվում անմիջապես ծնողներից, որպեսզի նրանց մկրտությամբ մենք ազատվենք դրանից: Մենք այն ժառանգել ենք ուղղակիորեն Ադամից և Եվայից՝ առաջին մարդկանցից, որովհետև մենք Ադամի երանքում էինք[27]*, երբ նրա բնությունն ապականվեց և նա մահվան դատապարտվեց: Ուստի Ադամի երանքում գտնվող նրա բոլոր ծնունդները մահվան դատապարտվեցին: Ո՛չ միայն Կայենը, Աբելն ու Սեթը, այլ մենք նույնպես, ինչպես Ադամի բոլոր ծնունդները, ենթակա դարձանք մահվան: Այս մասին Սուրբ Գիրքն ասում է.* ***«Ինչպես մեկ մարդով մեղքն աշխարհ մտավ, և մեղքով՝ մահը, այդպես մահը տարածվեց բոլոր մարդկանց վրա, որովհետև բոլորը մեղանչեցին»*** *(Հռոմ. Ե 12), նաև՝* ***«Ինչպես Ադամով ամենքը մեռնում են, այդպես էլ Քրիստոսով ամենքը կկենդանանան»*** *(Ա Կոր. ԺԵ 22): Ուստի մահը դատապարտություն է մարդկային ամբողջ ցեղի համար, քանի որ այն Ադամից է սերվել: Ամեն մարդ էակ ծնվում է մահվան դատապարտությամբ, որովհետև նա Ադամի երանքում էր, երբ այդ դատավճիռը կայացվեց:*

Մահվանից փրկությունը յուրաքանչյուր անձի համար անհատական է, անկախ նրանից՝ նրա ծնողներն այս փրկությունը ձեռք են բերել, թե ոչ: Այս փրկությունը պահանջում է ապաշխարություն և հավատ՝ Քրիստոսի արյան, մկրտության, ինչպես նաև շնորհառիթ բոլոր միջոցների հանդեպ[28]*: Զկան մեղք չունեցող ծնողներ: Ճշմարիտ է սաղմոսերգուի խոսքը.* ***«Անօրենության մեջ հղացավ և մեղքի մեջ ծնեց ինձ իմ մայրը»*** *(Սաղ. Ծ 5):*

Մենք ծնվելու ենք մեղքի մեջ այնքան ժամանակ, քանի դեռ չենք ազատվել ապականության ծառայությունից (Հռոմ. Ը 21): Իսկ ե՞րբ ենք ազատվելու այս ապականությունից: Առաքյալը մեր մարմնի մասին ասում է. ***«Այսպես է նաև մեռելների հարությունը.***

[27] Երանք նշանակում է գոտկատեղի հատվածը, երիկամունք: Սա մարմնի այն մասն է, ուր պտղաբերության՝ որդեծնության զորությունն է գտնվում:

[28] Այսինքն՝ այն միջոցների, որոնցով աստվածային շնորհն է տրվում կամ գործում:

[մարմինը] սերմանվում է ապականությամբ և հարություն առնում առանց ապականության.... Քանզի այս ապականությունը պետք է անապականություն հագնի և այս մահկանացուն՝ անմահություն» *(Ա Կոր. ԺԵ 42, 53): Ե՞րբ տեղի կունենա սա: Երբ փողը հնչի և մեռելները հարություն առնեն:*

Կարո՞ղ է մկրտությունը կրկնվել

ՀԱՐՑ: Կարո՞ղ է մկրտությունը կրկնվել: Արդյոք «Հավատո հանգանակում» չե՞նք ասում. «Հավատում ենք մեկ մկրտության՝ մեղքերի քավության համար»: Եվ արդյոք Սուրբ Գրքում գրված չէ՞ ***«մեկ մկրտություն»*** *(Եփես. Դ 5):*

ՊԱՏԱՍԽԱՆ: Ճիշտ է, որ գրված է «մեկ մկրտություն»: Սակայն կարդանք ամբո՛ղջ համարը, ուր ասվում է. «Մեկ հավա՛տ, մեկ մկրտություն»:

Ուր կա մեկ հավատ, կլինի նաև մեկ մկրտություն:

Մենք բնավ չենք կարող կրկնել մկրտությունն այն անձի, ով մկրտված է մեր ուղղափառ հավատքն ունեցող Եկեղեցում:

Այլև, մկրտությունը պետք է կատարվի իրավասու հոգևորականի կողմից, ով ունի սուրբ ձեռնադրության իշխանությունը՝ կատարելու ս. Մկրտության խորհուրդը, և անհրաժեշտ է հավատ այս խորհրդի բոլոր ներգործությունների հանդեպ:

Ինչպե՞ս կարող ենք ընդունել մկրտությունն այնպիսի եկեղեցիների, որոնք չեն հավատում Ձեռնադրության խորհրդին, չունեն քահանաներ, չեն հավատում ոչ Մկրտությանն իբրև խորհրդի, ոչ էլ նրա ներգործականությանն, ինչպես մենք:

Նույնը վերաբերում է նաև այն եկեղեցիներին, որոնք թեև հավատում են Մկրտության խորհրդին ու նրա ներգործականությանը, այլև Ձեռնադրության խորհրդին, սակայն Եկեղեցու հայրերի նզովքների պատճառով բաց չեն մեզ համար: Նախ պետք է նզովքները վերացվեն, որպեսզի կարողանանք ընդունել նրանց եկեղեցական խորհուրդները:

ԳԼՈՒԽ Գ

ՍՐԲԱԶԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Սրբազան Ավանդության վաղնջականությունը

Սրբազան Ավանդությունն այն բոլոր վարդապետություններն են (ուսմունքները), որոնք մեզ հասել են առաքյալների և Եկեղեցու հայրերի՝ մեզ փոխանցման միջոցով, և որոնք վկայված չեն Սուրբ Գրքում, սակայն որևէ կերպ չեն հակասում նրան:

Բողոքականները չեն հավատում Սրբազան Ավանդությանը:

Նրանք հետևում են միայն Սուրբ Գրքին՝ այսպիսով մերժելով այն ամբողջ ժառանգությունը, որ Եկեղեցին ձեռք է բերել նախորդ սերունդներից՝ առաքյալների և վաղ Եկեղեցու հայրերի գործերը, սուրբ ժողովների որոշումները, Եկեղեցու կանոններն ու սահմանակարգումները, Եկեղեցու ծեսն ու երկար դարերի ընթացքում ձեռք բերված բանավոր վարդապետությունները:

Սրբազան Ավանդությունն ավելի վաղնջական է, քան Սուրբ Գիրքը. այն հասնում է մինչև մեր Հայր Ադամի ժամանակները:

Ամենավաղ գրավոր օրենքը, որ հասել է մեզ, տրվել է Մովսես մարգարեի ձեռքով, ով ապրել է Ք. ա. 15-14-րդ դդ.-ում: Սակայն Ավանդությունն ավելի հին է, որովհետև դրանից հազարավոր տարիներ առաջ մարդկությունն ապրում էր առանց որևէ գրավոր օրենքի: Իսկ ինչպե՞ս էին մարդիկ առաջնորդվում: Մի կողմից՝ իրենց խղճով (այսինքն՝ բարոյական օրենքով), մյուս կողմից՝ սերնդեսերունդ փոխանցվող Ավանդությամբ:

Փորձենք բերել գրավոր օրենքին նախորդած Սրբազան Ավանդության մի քանի օրինակ:

1) Ծննդոց գրքում գրված է, որ արդար Աբելն Աստծուն ընծայեց իր հոտի պարարտ անասուններին (Ծնն. Դ 4): Ս. Պողոս առաքյալը բացատրում է սա՝ ասելով. ***«Հավատով Աբելն Աստծուն մատուցեց ավելի լավ զոհ, քան Կայենը»*** *(Եբր. ԺԱ 4): Այստեղ հարց ենք տալիս.*

Աբելն ինչպե՞ս կարող էր իմանալ Աստծուն զոհ մատուցելու մասին: Որտեղի՞ց էր նա այդ հավատքն ընդունել, երբ նրա ժամանակ ոչ մի գրավոր օրենք չկար:

Անկասկած, նա այս գաղափարն ընդունել էր իբրև ավանդություն իր հայր Ադամից, ով իր հերթին այն ընդունել էր հենց Աստծուց: Սա տեղի է ունեցել 14 դար ավելի շուտ, քան Մովսեսը կգրեր զոհերի և ողջակեզների մասին:

2) Նույնը կարելի է ասել նաև այն բոլոր ողջակեզների մասին, որոնք մատուցվեցին մեր հայրեր Նոյի, Աբրահամի, Իսահակի, Հակոբի և Հոբի կողմից: Նրանք զոհերի մատուցման, ինչպես նաև զոհասեղանների հաստատման գաղափարներն ընդունել էին Ավանդության միջոցով: Ջրհեղեղից հետո մեր հայր Նոյը **«սեղան շինեց Աստծո համար»** (Ծննդ. Ը 20), և մեր հայր Աբրահամը սեղան շինեց Մամբրեի կաղնու մոտ (Ծննդ. ԺԲ 7): Սեղաններ շինելու ավանդությունը դրանից հետո էլ շարունակվեց, թեև այդ ժամանակ դեռևս չկար Սուրբ Գիրք՝ նրանց այդ մասին պատվիրելու համար:

3) Սուրբ Գրքում գրված է, որ ջրհեղեղից հետո մեր հայր Նոյը վերցրեց որոշ սուրբ անասուններ ու սուրբ թռչուններ և սեղանի վրա ողջակեզ մատուցեց, և Տերը հոտոտեց դրանք իբրև անուշաբուրություն (Ծննդ. Ը 20-21):

Նոյն ինչպե՞ս իմացավ ողջակեզի համար սուրբ կենդանիների գործածության մասին:

Նա պիտի որ այն վերցրած լիներ անմիջապես Տիրոջից և ապա իր հերթին փոխանցած իրենից հետո եկող սերունդներին, նախքան Մովսեսը Հին Կտակարանում կբացատրեր սուրբ կենդանիների մասին:

4) Մելքիսեդեկի հետ մեր հայր Աբրահամի հանդիպման պատմության մեջ Մելքիսեդեկը ներկայացվում է իբրև **«Բարձրյալ Աստծո քահանան»** (Ծննդ. ԺԴ 18): Ինչպե՞ս էր հայտնի քահանայությունը, որը Մելքիսեդեկին իրավունք տվեց օրհնելու մեր հայր Աբրահամին և որի պատճառով էլ Աբրահամը Մելքիսեդեկին իր ունեցած ամեն ինչից տասանորդ տվեց (Ծննդ. ԺԴ 20) իբրև առավել բարձր մեկի (Եբր. Է 6, 7):

Այդ ժամանակ չկար գրավոր օրենք, որ բացատրեր քահանայությունը և նրա ազնվականությունը, գործը և ուրիշներին օրհնություն բաշխելը: «Ծննդոց» գրքի նախորդող գլուխներում «քահանա» կամ «քահանայություն» բառը չի հիշատակվում: Ուրեմն ինչպե՞ս էր եկել քահանայության մասին գիտությունը, եթե ոչ Ավանդության միջոցով:

5) Մելքիսեդեկի հետ Աբրահամի հանդիպման միևնույն դրվագում կարդում ենք, որ Աբրահամը նրան **«ամեն ինչից տասանորդ տվեց»** (Ծննդ. ԺԴ 20): Եթե ոչ Ավանդության միջոցով, ապա ուրիշ ինչպե՞ս էր մեր հայր Աբրահամի ժամանակներում հայտնի, որ քահանաներին պետք է տասանորդ տալ: Տասանորդ տալու օրենքը դեռ գրի չէր առնվել:

Նույնը կարելի է ասել նաև մեր հայր Հակոբի առնչությամբ: Ինչպե՞ս նա իմացավ տասանորդ տալու մասին, երբ ասաց Տիրոջը. **«....և այն ամենից, որ տաս ինձ, Քեզ տասանորդ կտամ»** (Ծննդ. ԻԸ 22):

Անկասկած նա տասանորդի օրենքն ընդունել էր Ավանդության միջոցով, իր պապ Աբրահամից, ով տասանորդ տվեց Մելքիսեդեկին, և ոչ թե որևէ գրավոր աղբյուրից: Ակնհայտ է, որ Ավանդությունն էր բոլոր մարդկանց ուսուցիչը նախքան գրավոր օրենքը և այդուհետև ևս մնաց այդպիսին:

6) Հակոբի՝ իր եղբայր Եսավից փախուստը ներկայացնող դրվագում մենք կարդում ենք, որ նա երկրի վրա հաստատված և մինչև երկինք հասնող սանդուղք տեսավ, որով հրեշտակներ էին բարձրանում ու իջնում: Տերը խոստում տվեց նրան, և Հակոբն ասաց. **«Տերն այս վայրում է.... և սա ոչ այլ ինչ է, քան Աստծո տուն, և սա է երկնքի դուռը»** (Ծննդ. ԻԸ 16-18): Եվ նա այդ վայրը կոչեց Բեթել, որը նշանակում է **«Աստծո տուն»**: Նա վերցրեց այն քարը, որը դրել էր գլխի տակ, հաստատեց այն իբրև այուն և յուղ լցրեց նրա վրա:

Ինչպե՞ս մեր հայր Հակոբն իմացավ **«Աստծո տուն»** արտահայտությունը: Ինչպե՞ս իմացավ Աստծո տները նրանց վրա յուղ լցնելով սրբագործելու մասին: Սրանցից և ոչ մեկը գրավոր օրենքով չէր տրվել: Որևէ այլ բացատրություն չի կարող լինել, քան որ նա այս ամենն իմացել է Ավանդության միջոցով:

7) Երբ Աստված գրավոր օրենքը տվեց, պահպանեց նաև Ավանդությունը:

Նա պատվիրեց հայրերին, տարբեր առիթներով, ավանդել ու

փոխանցել իրենց սովորածը զավակներին: Նա նրանց հրամայեց տեղեկացնել իրենց զավակներին ամեն արգանդի անդրանիկ ծնունդի՝ Տիրոջը զոհաբերելու դեպքի և պատճառի մասին (Ելք ԺԳ 14-16): Տերը նաև ասաց ժողովրդին. ***«Նայի՛ր քեզ և խիստ զգո՛ւյշ եղիր քո անձին, չմոռանա՛ս այս բոլորը, որ քո աչքերը տեսան, և սրտիցդ թող չհեռանան քո կյանքի բոլոր օրերին: Եվ սովորեցրու դրանք քո որդիներին և որդիներիդ որդիներին»*** *(Բ Օրենք Դ 9):*

8) Նույնիսկ քրիստոնեության մեջ մենք տեսնում ենք, որ Նոր Կտակարանի որոշ հեղինակներ հինկտակարանյան շրջանում կատարված իրողությունների մասին այնպիսի տեղեկություններ են տալիս, որոնք նրանք ստացել են Ավանդության միջոցով:

Օրինակ՝ Պողոս առաքյալը տալիս է Մովսես մարգարեին հակառակած երկու կախարդների անուն: Ասում է. ***«Ինչպես Հանեսն ու Համբրեսը հակառակեցին Մովսեսին, այդպես էլ սրանք են հակառակում ճշմարտությանը»*** *(Բ Տիմ. Գ 8): Այս երկու կախարդների անունները չեն նշված Հին Կտակարանի որևէ գրքում: Պողոս առաքյալը պիտի որ դրանք իմանար Ավանդության միջոցով:*

9) Ավանդության փոխանցման երևույթը տեղ գտավ, թեև առավել նվազ աստիճանով, նաև Նոր Ուխտի շրջանում: Մինչև որևէ Ավետարանի կամ Թղթի գրությունը բավականին ժամանակ է անցել: Շուրջ քսան տարի մարդիկ Ավանդության միջոցով էին ընդունում հավատքը, Քրիստոսի կյանքի ամբողջ պատմությունը, Նրա վարդապետությունը և փրկության գործի քարոզությունը:

10) Տեր Հիսուս Քրիստոսն Ինքը Ավետարան չի գրել, ոչ էլ գրավոր որևէ քարոզություն թողել. Նա քարոզում և ուսուցանում էր ժողովրդին՝ թողնելով Իր խոսքերն իբրև հոգի և կյանք (Հովհ. Զ 64), և մարդիկ հետո տարածում էին դրանք: Երբ Տերը սկսեց Իր ուսուցումն ու քարոզությունը, ասաց ժողովրդին. ***«Ժամանակը լրացել է, և Աստծո արքայությունը՝ հասել: Ապաշխարեք և հավատացե՛ք ավետարանին»*** *(Մարկ. Ա 15): Չկար որևէ գրավոր ավետարան, բայց կար բարի լուրի քարոզությունը, որն իրենից ներկայացնում էր բանավոր ավետարան կամ աստվածային ուսմունք՝ փոխանցված ավանդման միջոցով: Նույնը վերաբերում է նաև Տիրոջ՝ Իր աշակերտներին ասած հետևյալ խոսքին.* ***«Գնացեք***

ամբողջ աշխարհով մեկ և քարոզեք ավետարանը բոլոր արարածներին» *(Մարկ. ԺԶ 15): Այս ամենը չէր տրվում գրավոր կաղապարով:*

Այստեղ անհրաժեշտ է նշել մի կարևոր իրողություն.

11) Ավետարանն ամեն ինչ չի հիշատակում:

ա) Այն չի հիշատակում այն ամենն, ինչ Տեր Հիսուս Քրիստոսն արել կամ ասել է: Ավետարանիչը միայն ընտրել է Տեր Հիսուսի խոսքերից և գործերից որոշներ, դրանք գրառել ժողովրդի համար և մնացածը բաց թողել: Սա պարզ երևում է գրված վերջին Ավետարանից. ս. Հովհաննես առաքյալն ասում է. ***«Բայց դեռ շատ ուրիշ բաներ էլ կան, որ Հիսուսն արեց, որոնք եթե մեկառմեկ գրվեին, կարծում եմ՝ աշխարհն իսկ բավական չէր լինի տանելու այդ գրքերը, եթե գրվեին»*** *(Հովհ. ԻԱ 25), նաև՝* ***«Հիսուսն Իր աշակերտների առաջ գործեց շատ ուրիշ նշաններ էլ, որոնք այս գրքում չեն գրված: Բայց այսքանը գրվեց, որպեսզի դուք հավատաք, որ Հիսուսն է Քրիստոսը՝ Աստծո Որդին, և որպեսզի հավատալով հավիտենական կյանքն ընդունեք Նրա անունով»*** *(Հովհ. Ի 30-31):*

Մի՛ կարծեք, թե Տեր Հիսուսը գործել է միայն այն հրաշքները, որոնք նշված են Ավետարանում. հազարավորներ չեն գրանցվել: Սա երևում է ս. Ղուկաս ավետարանչի հետևյալ խոսքից. ***«Երբ արևը մայր էր մտնում, բոլոր նրանք, ովքեր տարբեր ցավեր ունեցող հիվանդներ ունեին, բերում էին նրանց Նրա մոտ, և Նա ձեռքերը դնելով նրանցից յուրաքանչյուրի վրա՝ բժշկում էր նրանց»*** *(Ղուկ. Դ 41):*

Այդ հիվանդների թիվը չափազանց մեծ էր, և ո՛չ բոլոր բժշկության հրաշքներն են գրանցվել: Ս. Մատթեոս ավետարանիչն ասում է. ***«Հիսուսը շրջում էր ամբողջ Գալիլեայով, սովորեցնում նրանց ժողովարաններում, քարոզում արքայության ավետարանը և բժշկում ժողովրդի մեջ եղած բոլոր հիվանդություններն ու ցավերը»*** *(Մատթ. Դ 23):*

Որո՞նք են այդ բժշկության դեպքերի մանրամասները: Ոչինչ չի գրանցվել: Ի՞նչ էր Տերը սովորեցնում ու քարոզում ժողովարաններում: Դա նույնպես չի գրանցվել: Ս. Մարկոս ավետարանիչն ասում է, որ երբ Տեր Հիսուսը գնաց Կափառնայում, մտավ ժողովարան և ***«սովորեցնում էր նրանց: Եվ զարմանում էին Նրա վարդապետության վրա, որովհետև սովորեցնում էր իշխանությամբ և ոչ թե***

ինչպես դպիրները» *(Մարկ. Ա 21-22): Ո՞րն է այդ վարդապետությունը, որ զարմացնում էր նրանց: Չի գրանցված:*

Հինգ հացով և երկու ձկով հրաշքի ժամանակ Տեր Հիսուսը սովորեցնում էր ժողովրդին առավոտից մինչև ուշ երեկո: Ի՞նչ էր սովորեցնում նրանց: Ոչինչ չի հիշատակվում Ավետարանում: Որո՞նք էին Տեր Հիսուս Քրիստոսի վարդապետությունները լճափին, գետափին, նավակում և ճանապարհներին: Զգիտենք, ոչինչ չի հիշատակվում Ավետարանում:

բ) Տիրոջ հարությունից հետո նույն իրավիճակին ենք հանդիպում: Գրված է, որ Տերը հանդիպեց Եմմավուսի երկու աշակերտներին և ***«սկսելով Մովսեսից և բոլոր մարգարեներից՝ նրանց բացատրում էր բոլոր գրքերում Իր մասին գրվածները»*** *(Ղուկ. ԻԴ 27):*

Այս ամենը և ուրիշներ նույնպես չգրանցվեցին Ավետարանում: Բայց անտարակույս դրանք, կամ գոնե դրանց մի մասը, հասել են մեզ Սրբազան Ավանդության միջոցով:

գ) Իսկ ի՞նչ ասել հարությունից հետո Տիրոջ՝ Իր աշակերտների հետ անցկացրած 40 օրերի վերաբերյալ, որոնցում խոսում էր Աստծո արքայությանը վերաբերող իրողությունների մասին (Գործք Ա 3):

Որո՞նք են Տիրոջ խոսքերն Աստծո արքայության մասին:

Անտարակույս այս մասին Նրա խոսքերն այնքան մեծ կարևորություն ունեին, որ Տերը պատշաճ նկատեց Իր հարությունից հետո Իր աշակերտների հետ հանդիպումներ ունենալ: Սակայն նույնիսկ սրանք չեն նշված Աստվածաշնչում: Ամենայն հավանականությամբ, դրանք միայն Եկեղեցու առաջնորդներին վերաբերող նյութեր էին, որպեսզի կարողանային հասկանալ և ապա սովորեցնել՝ համաձայն Տիրոջ խոսքի. ***«Սովորեցրեք նրանց պահել այն ամենը, որ պատվիրեցի ձեզ»*** *(Մատթ. ԻԸ 20), ուր հայտնապես չի նշում, թե որոնք էին նրանց ուղղած Իր պատվերները:*

Կորե՞լ են արդյոք Տեր Հիսուս Քրիստոսի վարդապետություններն ու պատվիրանները, թե՞ հասել մեզ:

Անտրամաբանական կլիներ հավատալ, թե դրանք կորել են, երբ դրանք այնքան կարևոր էին: Հապա ինչպե՞ս են մեզ հասել: Բացառությամբ Պողոս առաքյալի, ով տասնմեկ առաքյալներից մեկը չէր և չէր մասնակցում այն հանդիպումներին, որոնք Տերն

ունեցավ Իր հարությունից հետո, տասնմեկ առաքյալները, ում հետ Տերն Իր հարությունից հետո անցկացրեց 40 օր, գրել են խիստ սակավ և նրանց գրածը չի պարունակում քրիստոնեության ամբողջ վարդապետությունը: Այս հարցի միակ պատասխանն այն է, որ Իր աշակերտներին Տիրոջ սովորեցրածը մեզ հասել է առաքյալների կողմից ավանդման միջոցով:

Եկեղեցին ապրե՛լ է այս վարդապետությունները՝ ըստ Տիրոջ խոսքի. ***«Այն խոսքը, որ խոսեցի ձեզ հետ, հոգի է և կյանք»*** *(Հովհ. Զ 64): Առաքյալները հասկացան խոսքերի հոգին և այն դարձրին կյանք, որը մենք ընդունեցինք Եկեղեցու կյանքում:*

Հետևաբար, կարելի է ասել, որ Սրբազան Ավանդությունը Եկեղեցու կյանքն է կամ կենդանի Եկեղեցին:

Սուրբ առաքյալներն այս կյանքը, Տիրոջից իրենց սովորած և ընդունած ամեն ինչով հանդերձ, ավանդեցին Եկեղեցուն: Սակայն նրանք չգրեցին սա Ավետարաններում կամ թղթերում, այլ թողեցին իբրև Եկեղեցու կյանքում ապրող իրականություն: Այս վարդապետությունների շարքում են եկեղեցական կանոնակարգությունը, ծեսերն ու խորհուրդները:

Արդյո՞ք կարծում եք, որ Լեռան քարոզը (Մատթ. Ե-Է) երեք տարուց ավել ժամանակամիջոցում Տիրոջ ունեցած միակ քարոզն է: Անշուշտ սա անհավատալի կլիներ: Սակայն Տիրոջ խոսքերը չանհետացան, աշակերտները դրանք պահեցին իրենց սրտում ու մտքում: Իրենց բարի սրտի դանձից, իրենց սուրբ հիշողությունից նրանք դուրս բերեցին Տիրոջ խոսքերն ու ավանդեցին Եկեղեցուն «Ավանդություն» (Tradition) կամ «Առաքելական ավանդություն» (The Apostolic Entrustment) անվան տակ: Նրանց վրա իջած Սուրբ Հոգին նրանց սովորեցրեց ամեն ինչ և հիշեցրեց այն ամենն, ինչ Տերն ասել էր՝ համաձայն Իր անսուտ խոստման (Հովհ. ԺԴ 26):

<u>Առաքյալների վարդապետությունները նույնպես ընդունվել են Ավանդության միջոցով:</u>

Շատ են այն առաքյալները, որոնք ոչ մի թուղթ (նամակ) չեն գրել: Ի՞նչ ասել նրանց վարդապետությունների մասին: Ի՞նչ ասել նրանցում Աստվածային Ներշնչանքի գործունեության մասին:

Որտե՞ղ է Սուրբ Հոգու գործը, ով խոսում է մարգարեների միջոցով:

Հնարավոր չէ նաև, որ որոշ առաքյալներ գրել են միայն այն, ինչ մենք ստացել ենք նրանցից: Հնարավոր չէ, օրինակ, որ Հակոբոս առաքյալի վարդապետությունը ներառեր միայն այդ մեկ թուղթը, ոչ էլ որ Հուդա առաքյալը գրած լիներ միայն այդ մեկ գլուխը: Իսկ ի՞նչ ասել տասներկու առաքյալներից մնացածի մասին, որոնց վարդապետություններից ոչ մի բառ մեզ չի հասել: Ի՞նչ են նրանք քարոզել, ի՞նչ են թողել Եկեղեցուն: Ամենայն հավանականությամբ, այդ վարդապետությունները, կամ դրանց մի մասը, ընդունվել են Ավանդության միջոցով:

Առաքյալները սովորեցնում էին ժողովարաններում և հակառակորդներին ընդդիմաբանում, սակայն սրանից ոչինչ մեզ չի հասել: Նրանք քարոզում էին Երուսաղեմում, Հուդայում և Սամարիայում, մինչև ամենքը հավատային, բայց նրանց քարոզությունից մեզ հասել է միայն մի քանի բառ: Պողոս առաքյալը Հռոմում երկու տարի անցկացրեց իր վարձած տանը՝ համարձակորեն և անխափան քարոզելով մարդկանց և սովորեցնելով Տեր Հիսուս Քրիստոսի մասին (Գործք ԻԸ 30-32): Այդ քարոզությունից ոչինչ չի հասել մեզ: Ո՞ւր անհետացավ այն:

Անկասկած, առաքյալները կանոններ սահմանեցին Եկեղեցու համար: Որտե՞ղ են դրանք:

Արդյո՞ք տրամաբանական է ընդունել, թե Քրիստոսի առաքյալները, Նրա բոլոր վարդապետություններն ընդունելուց հետո, Եկեղեցին թողեցին առանց Նրա գործունեությունը կարգավորող կանոնների կամ օրենքների: Իհա՛րկե ոչ: Սակայն նրանք չեն գրել դրանց մասին իրենց թղթերում, կա՛մ որովհետև այսպիսի բաները հասարակության համար չէին, կա՛մ որ դրանք բոլորին հայտնի պիտի դառնային գործադրության միջոցով: Անտարակույս այդ կանոնները մեզ հասել են Սրբազան Ավանդության միջոցով:

Լսեք, թե ինչ է ասում ս. Հովհաննես առաքյալն իր երկրորդ թղթի վերջաբանում. **«Շատ բան ունեի ձեզ գրելու, բայց չկամեցա թղթով ու թանաքով գրել, քանզի հույս ունեմ ինքս գալ ձեզ մոտ և երես առ երես խոսել»** (Բ Հովհ. 12): Նա կրկնում է նույն բառերը նաև երրորդ թղթի վերջաբանում (Գ Հովհ. 13-14): Որո՞նք էին այն խոսքերը, որոնք նա ասաց երես առ երես, և որոնք չգրառվեցին:

Ինչպե՞ս են նրանք հասել մեզ:

Վերոբերյալ մեջբերումից մենք նկատում ենք, որ առաքյալները երբեմն, երբ հնարավոր էր, նախընտրում էին խոսել, քան գրել: Նրանց բանավոր վարդապետությունները փոխանցվում էին սերնդեսերունդ և այսօր հասել են մեզ:

Հավանաբար առաքյալներն իրենց թղթերում, որքան հնարավոր էր, կենտրոնանում էին հավատքի գլխավոր սկզբունքների վրա և թողնում էին Եկեղեցու կանոններին ու ծեսերին վերաբերող մանրամասները եկեղեցիներին՝ կարգավորելու դրանք գործնականորեն: Ժողովուրդը դրանք սովորում էր ոչ թե գրավոր աղբյուրներից, այլ կյանքում և գործնականորեն:

Ս. Պողոս առաքյալը կորնթացիներին ուղղած իր առաջին թղթում նույնպես ասում է. **«Իսկ մնացածը կպատվիրեմ, երբ գամ»** (Ա Կոր. ԺԱ 34): Որո՞նք էին այդ պատվերները, որոնք չեն գրառվել: Հավանաբար մենք դրանք ընդունել ենք Ավանդության միջոցով:

Ս. Պողոս առաքյալն ասում է իր աշակերտ Տիտոսին՝ Կրետեի եպիսկոպոսին. **«Այն պատճառով քեզ թողեցի Կրետեում, որ ինչ որ թերի է, կարգի բերես և քաղաքներում երեցներ կարգես, ինչպես և պատվիրեցի քեզ»** (Տիտ. Ա 5): Նա իր թղթում չի բացատրում ինչպես կարգել երեցներ՝ ինչ աղոթքներով, ծեսով և սրան անհրաժեշտ պայմաններով: Տիտոսն ինչպե՞ս կարող էր իմանալ այս մասին, եթե ոչ բանավոր ավանդման միջոցով: Ահա թե ինչու է առաքյալն ասում նրան՝ **«ինչպես և պատվիրեցի քեզ»**: Այս հրահանգի մանրամասները թղթում չեն գրանցվել, սակայն ս. Տիտոս եպիսկոպոսը դրանք ընդունել է բանավոր կերպով, իսկ մենք՝ Սրբազան Ավանդության միջոցով:

Նույնը վերաբերում է նաև իր աշակերտ, Եփեսոսի եպիսկոպոս Տիմոթեոսին Պողոս առաքյալի գրածին. **«Եվ ինչ որ լսեցիր ինձանից բազում վկաներով, այն ավանդիր հավատարիմ մարդկանց, ովքեր կարողություն ունեն նաև ուրիշներին ուսուցանելու»** (Բ Տիմ. Բ 2): Այստեղ առաքյալը խոսում է լսված և ոչ թե գրված բաների մասին, սակայն չի նշում, թե ինչ է ասել: Անկասկած, այդ վարդապետությունը Պողոս առաքյալից ավանդվել է ս. Տիմոթեոսին, ապա հավատարիմ մարդկանց, ովքեր էլ իրենց հերթին այն ավանդել են ուրիշներին, մինչև այն հասել է մեզ:

Նրանք, ովքեր պնդում են ամեն ինչ Սուրբ Գրքի համարներով ապացուցելու վրա, անուշադրության են մատնում առաքյալների գործածած **«երես առ երես»**-ը (Բ Հովհ. 12), եկեղեցիներին վերաբերող նրանց հրահանգները, որոնց մանրամասները չեն գրանցվել (Ա Կոր. ԺԱ 34), առաքյալների պատվերներն իրենց աշակերտներին (Տիտ. Ա 5) և առաքելական այն վարդապետությունը, որը Եկեղեցում վերածվեց գործնական կյանքի, առանց որևէ թղթում կամ Ավետարանում տեղ գտնելու:

Այս կետը լուսաբանելու համար օրինակ բերենք կիրակիի ընդունումը որպես Տիրոջ օրվա: Միայն Սուրբ Գրքին հավատացող և եկեղեցական Ավանդությունը մերժող բոլոր քրիստոնյաներն էլ շաբաթի փոխարեն իբրև տերունական օր են ընդունում կիրակին և չեն կառչում հետևյալ համարների տառացի նշանակություններին. **«Հիշիր շաբաթ օրը՝ այն սուրբ պահելու համար»** (Ելք Ի 8) և «Զգույշ եղիր, որ շաբաթ օրը սուրբ պահես» (Բ Օր. Ե 12): Այդ դեպքում որտեղի՞ց են նրանք սովորել շաբաթ օրվա փոխարեն կիրակին պահել: Դա Սուրբ Գրքի՞ց է, թե Սրբազան Ավանդությունից: Իհա՛րկե, Ավանդությունից. որովհետև չկա նույնիսկ մեկ համար, որն ասի. **«Հիշիր կիրակին՝ այն սուրբ պահելու համար»** կամ **«Զգույշ եղիր՝ կիրակին սուրբ պահելու: Նրանում չպիտի աշխատես»:**

Կիրակին սուրբ պահելը եկեղեցական ավանդություն է՝ կիրառված առաքյալների կողմից և հիմնված Տեր Հիսուս Քրիստոսի մի վարդապետության վրա, որը հստակորեն չի նշված Ավետարանում, այլ «Գործք առաքելոց»-ում կան վկայություններ, որոնք առնչություն ունեն այս աստվածային ավանդության հետ: Այսպիսով այն վերածվեց եկեղեցական ընդունված կիրառույթի առանց գրված պատվիրանի կարիքի: Կիրակին սուրբ պահելու հարցում բոլոր Եկեղեցիների միաձայնությունը Սրբազան Ավանդության ճանաչման մի ապացույց է:

Ա. Պողոս առաքյալի թղթերում կան վկայություններ, որոնք ապացուցում են, որ նա իր վարդապետությունն ընդունել է Տիրոջից:

Հաղորդության խորհրդի մասին առաքյալն ասում է. **«Որովհետև ես ընդունեցի Տիրոջից, ինչը նաև ձեզ ավանդեցի, որ Տեր Հիսուսն**

այն գիշերը, երբ մատնվում էր, հաց վերցրեց» (Ա Կոր. ԺԱ 23): Այստեղ առաքյալը խոսում է այն ավանդության մասին, որը նա ընդունել է հենց Տիրոջից և փոխանցել Կորնթոսի Եկեղեցուն: Սուրբ Գիրքը չի ասում, թե ինչպես և երբ է Պողոս առաքյալն այն ընդունել Տիրոջից: Սակայն սա մեզ գաղափար է տալիս Եկեղեցու մի վարդապետության մասին և թե ինչպես է այն մտել Եկեղեցի ավանդման միջոցով:

Ավետարաններից մենք գիտենք, որ առաքյալները Հաղորդության խորհուրդն ընդունել են Տիրոջից, բայց չի գրված, որ նրանք դա ավանդել են Եկեղեցուն: Կարևոր չի եղել սա գրի առնել. կարևոր է եղել, որ Եկեղեցին ապրի և կիրառի այս խորհուրդը: Այնուամենայնիվ, Պողոս առաքյալը նշում է այսպիսի ավանդման մասին:

Առաքյալներն իրենց թղթերում գրանցել են նաև ուրիշ բաներ, որոնք իրենք վերցրել են Ավանդությունից:

ա) Ի հավելումն նրա, ինչ արդեն նշել ենք, այժմ մեջբերենք այն, ինչ Հուդա առաքյալը գրում է իր թղթում Միքայել հրեշտակապետի և սատանայի միջև եղած վիճաբանության մասին՝ կապված Մովսեսի մարմնի հետ: **«Միքայել հրեշտակապետը, երբ Մովսեսի մարմնի համար բանսարկու սատանան վիճում էր նրա հետ, չհամարձակվեց հայհոյության դատաստան հանդուրժել, այլ ասաց. «Թող Տե՛րը սաստի քեզ»** (Հուդա 9): Նման ոչինչ չի հիշատակված Հին Կտակարանում, ուստի հավանաբար ս. Հուդան սա գիտեր Ավանդության միջոցով:

բ) Երբ Պողոս առաքյալը նկարագրում է, թե ինչպես է ժողովուրդը ստացել Օրենքը կրակով բոցավառվող լեռից, ասում է. **«Եվ տեսարանն այնքան ահավոր էր, որ Մովսեսն էլ էր ասում. «Զարհուրում և դողում եմ»** (Եբր. ԺԲ 21): Մովսեսին վերագրված այս խոսքը չի գրանցված ո՛չ «Ելքի» գրքում, ոչ էլ «Երկրորդ օրենքի»: Ուստի հավանաբար Պողոս առաքյալը սա գիտեր Ավանդության միջոցով:

գ) Նաև ավելացնենք ինչ որ գրված է «Հայտնության» գրքում Բաղաամի պղծագործության մասին, որի մանրամասները չեն գրանցված «Թվերի» գրքում (Թվեր ԻԴ 25):

«Հայտնության» գրքում գրված է. ***«....քանզի պահում ես Բաղաամի ուսմունքը, ով սովորեցրեց Բաղակին դայթակղություն դնել Իսրայելի որդիների առաջ՝ ուտելու [կուռքերին] զոհվածն ու պոռնկանալու»*** *(Հայտ. Բ 14): «Թվերի» գրքում նշվա՛ծ է, որ ժողովուրդն անում էր այս ամենը, սակայն չի նշված, թե դա Բաղաամի ուսմունքն էր: Ուստի հավանաբար ս. Հովհաննես առաքյալը սա գիտեր Ավանդության միջոցով:*

Սա վերաբերում է նաև դարձյալ Բաղաամի վերաբերյալ Պետրոս առաքյալի ասածին. ***«Թողնելով ուղիղ ճանապարհը՝ մոլորվեցին՝ ընթանալով Բեովրի Բաաղամի ճանապարհով, ով սիրեց անիրավության վարձը***[29]***»*** *(Բ Պետ. Բ 15), նաև Հուդա առաքյալի* ***«ըստ Բաղաամի մոլորության զեխ դարձան՝ ընկնելով վարձերի հետևից»*** *(Հուդա 11) խոսքին:*

դ) Ս. Հուդա առաքյալը խոսում է նաև Ենովքի մի մարգարեության մասին, որը չի նշված Հին Կտակարանում: Ասում է. ***«Նրանց մասին մարգարեացավ նաև Ադամից հետո յոթերորդը՝ Ենովքը, և ասաց. «Ահա Տերը եկավ բյուրավոր սուրբ հրեշտակներով՝ ըստ ամենայնի դատաստան անելու և հանդիմանելու բոլոր ամբարիշտներին իրենց գործերի համար, որոնցով ամբարշտացան, և բոլոր խիստ խոսքերի համար, որոնք ասացին Նրա մասին մեղավորներն ու ամբարիշտները»*** *(Հուդա 14-15): Այս մարգարեության աղբյուրը նույնպես պիտի որ Ավանդությունը լիներ*[30]*:*

ե) Մենք տեսնում ենք նաև, որ թլփատության պատվիրանը ավանդվել է մեր հայր Աբրահամին Աստծուց (Ծնն. ԺԷ) և ավանդման միջոցով տարածվել նախքան այն պատվիրող գրավոր օրենքի գոյությունը:

Սրբազան Ավանդության օգուտը

ա) Ավանդության միջոցով մենք ճանաչեցինք հենց Սուրբ Գիրքը: Աստվածային գրքերը մեզ հասել են ավանդման միջոցով, այլապես չէինք կարողանա ճանաչել կամ տարբերակել դրանք: Նոր Կտակարանի գրքերը հաստատվել են եկեղեցական սուրբ Ժողովների կողմից:

բ) Սրբազան Ավանդության միջոցով ենք մենք ընդունել Եկեղեցու ողջ ժառանգությունը, ծեսերն ու օրինակարգությունները:

գ) Ավանդությունը մեզ համար պահպանել է ճշմարիտ հավատքը, որը մի սերնդից մյուսն է փոխանցվել: Եթե Սուրբ Գրքի մեկնությունը թողնված լիներ յուրաքանչյուր անհատի հասկացողությանը, կլինեին մեկ հավատքով չմիաբանված զանազան աղանդներ և ուսմունքներ, որովհետև Սուրբ Գիրքը մի բան է, իսկ նրա մեկնաբանության կերպը՝ մեկ այլ բան:

դ) Ավանդությունը պահպանել է մեզ համար կրոնական որոշակի հավատալիքներ և ուսմունքներ, ինչպես՝ կիրակին պահելը, խաչակնքումը, մենամուսնության օրենքը, ննջեցյալների համար աղոթքը և եկեղեցական նվիրապետության յուրաքանչյուր կարգի գործը:

Ճշմարիտ և կեղծ ավանդություն

Նրանք, ովքեր մերժում են Ավանդությունը, իրենց առարկությունը հիմնում են այն պատճառաբանության վրա, թե Տեր Հիսուս Քրիստոսը մերժում է այն, երբ մեղադրում է օրենսուսույցներին և փարիսեցիներին՝ ասելով. ***«Իսկ դուք ինչո՞ւ եք մեղանչում Աստծո պատվիրանի դեմ ձեր ավանդության պատճառով»*** *(Մատթ. ԺԵ 3), և միաժամանակ դատապարտում նրանց որոշ սխալ ավանդություններ (Մատթ. ԺԵ 4-6): Նրանք իբրև պատճառաբանություն գործածում են նաև առաքյալի հետևյալ խոսքը.* ***«Զգո՛ւյշ եղեք, չլինի թե մեկը մոլորեցնի ձեզ ճարտարամտությամբ և սնոտի խաբեությամբ, ըստ մարդկային ավանդության և այս աշխարհի օրենքների և ոչ թե ըստ Քրիստոսի»*** *(Կող. Բ 8):*

Սրբազան Ավանդության մասին խոսելիս մենք նկատի չունենք մարդկանց կողմից սահմանված կեղծ ավանդությունները, ոչ էլ նրանք, որոնք համաձայն չեն Սուրբ Գրքի ուսմունքին ու հոգուն, կամ որոնց ունայնությունը Տեր Հիսուսը բացահայտեց:

Մեր ընդունած ճշմարիտ Ավանդությունը բովանդակում է՝

ա) Հենց Տիրոջ վարդապետությունը, որը մեզ հասել է Ավանդու-

[29] Վերջին բառերը (**«ով սիրեց անիրավության վարձը»**) դրեցինք ըստ հունարենի, իսկ ըստ գրաբ. թարգմանության՝ **«սիրեցին անիրավության վարձը»**:

[30] Այս խոսքը գտնվում է Աստվածաշնչի մաս չկազմող «Ենովքի գրքում» (Ա 1):

թյան միջոցով:

բ) Առաքելական Ավանդությունը, այսինքն՝ առաքյալների վարդապետությունը, որը մեզ հասել է սերնդեսերունդ ավանդման միջոցով:

գ) Եկեղեցական Ավանդությունը՝ վավերացված եկեղեցական սուրբ ժողովների օրենքներով ու կանոններով, կամ որն ընդունել ենք Եկեղեցու հայրերից և հավատքի առաջամարտիկներից:

Սա մեզ առաջնորդում է դեպի մի կարևոր կետ.

Եկեղեցու՝ օրինակարգելու իշխանությունը

Այս իշխանությունն առաքյալներին տրվել է հենց Տիրոջից, երբ ասաց նրանց. **«Ինչ որ կապեք երկրի վրա, կապված կլինի երկնքում, և ինչ որ արձակեք երկրի վրա, արձակված կլինի երկնքում»** (Մատթ. ԺԸ 18): Եկեղեցին իր այս պարտականությունը սկսել է կատարել 45թ. Երուսաղեմում գումարված առաջին եկեղեցական ժողովով: Այստեղ քննարկվել է հեթանոսներին ընդունելու հարցը, և ժողովը որոշում է կայացրել նրանց ընդունել առանց նրանց վրա ավելորդ բեռներ դնելու. **«Սուրբ Հոգուն և մեզ հաճո թվաց ավելի մեծ բեռ չդնել ձեզ վրա, բացի այս կարևոր բաներից՝ կուռքերին զոհվածից, արյունից, խեղդված բաներից և պոռնկությունից հեռու մնալուց»** (Գործք ԺԵ 28-29):

Այդ ժամանակվանից ի վեր սուրբ ժողովները՝ տեղական և տիեզերական (ընդհանրական), գումարվում էին Եկեղեցու ուսուցման և օրինակարգման իշխանությամբ, որը Տերը շնորհեց քահանայությանը: Այս ժողովները սահմանել են Եկեղեցու վարդապետությունն ու կանոնները, որոնք մասն են դարձել Եկեղեցական Ավանդության:

Ճշմարիտ Ավանդության պայմանները

1. Այն պետք է չհակասի Սուրբ Գրքին (Գաղ. Ա 8):
2. Այն պետք է չհակասի եկեղեցական ուրիշ ավանդությունների:
3. Այն պետք է ընդունվի Եկեղեցիների կողմից:

Պարզ է, որ յուրաքանչյուր նոր սերնդի օրոք նոր խնդիրներ են ծագում, որոնք պահանջում են Եկեղեցու տեսակետը դրանց

վերաբերյալ, որպեսզի մարդիկ չմոլորվեն ու չշփոթվեն ճշտի և սխալի միջև: Քանի որ ոչ բոլոր մարդիկ գիտեն Սուրբ Գրքն ու կրոնական օրենքները, Եկեղեցին ուսուցման և օրինակարգման իր իշխանությամբ ներկայացնում է կրոնի տեսակետը ծագած հարցերի վերաբերյալ, որովհետև ըստ Սուրբ Գրքի՝ օրենքը պահանջվում է քահանայի բերանից (Մաղ. Բ 7):

Իրար հաջորդած սերունդների ընթացքում Եկեղեցու վարդապետությունները վերածվում են Ավանդության և ժառանգվում հետագա սերունդների կողմից:

Առաքյալները պատվիրում են պահպանել Ավանդությունը:

Ս. Պողոս առաքյալն ասում է. **«Այսուհետև, եղբայրներ, հաստատուն եղեք և ամո՛ւր պահեք այն ավանդությունները, որոնք սովորեցիք թե՛ մեր խոսքով, թե՛ նամակով»** (Բ Թես. Բ 15): Նա նաև ասում է. **«Պատվիրում եմ ձեզ, եղբայրներ, մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով, որ խուսափեք ամեն եղբորից, ով ստահակությամբ է ընթանում և ո՛չ ըստ այն ավանդության, որն ընդունեցիք մեզանից»** (Բ Թես. Գ 6): Կորնթացիներին էլ ասում է. **«Գովում եմ ձեզ, որ հիշում եք ինձ ամեն ինչում և պահում եք ավանդությունները, ինչպես ավանդեցի ձեզ»** (Ա Կոր. ԺԱ 2):

Յավալիորեն, մեր եղբայր բողոքականները Սուրբ Գրքի իրենց արաբերեն թարգմանության մեջ[31]՝ այն մասերում, որոնք հաստատում են Ավանդության գաղափարը, **«ավանդության»** փոխարեն գործածում են «ուսուցում» բառը և պահում «ավանդություն» բառն այնտեղ, ուր այն վերաբերում է սուրբ Եկեղեցու կողմից մերժված կեղծ ավանդություններին:

Բողոքականներն ունե՞ն ավանդություններ:

Այս ավանդությունները աստվածպաշտության մեջ նրանց համայնքը միասնականացնող կարգավորումներ են, որոնք կարող են գտնվել երեցներ կարգելու, ամուսնության և այլ արարողություններն ամփոփող մատյաններում: Բողոքականներից ոչ ոք չի

31 Բնագրում՝ փակագծերում, ավելացված է՝ *«Բեյրութի թարգմանություն»:*

ասում կամ անում, ինչ կամենում է. կան կանոններ, որոնց նրանք հետևում են: Անկասկած սրանք ավանդություններ են, ինչպես էլ որ նրանք կոչեն դրանք: Թեև բողոքականները մերժում են Սրբազան Ավանդությունը, սակայն ունեն իրենց ավանդությունները, որոնք հավատարմորեն պահում են, և գործածում են նաև ծեսեր, թեև ծեսը մերժում են: Նրանք ունեն հատուկ աղոթքներ և հաստատագրված ընթերցվածներ ձեռնադրությունների, ամուսնության, մկրտության և թաղումների համար, թեև չեն ընդունում կանոնական աղոթքները:

Նշանակում է՝ նրանք ունե՛ն ավանդություններ, սակայն մերժում են այն ավանդությունները, որոնք հակասում են իրենց հավատքին:

Ավանդությունները թանկագին ժառանգություն են և ոչ մի Եկեղեցի չպիտի կորցնի դրանք, այլապես կմնա առանց անցյալի և առանց յուրաքանչյուր անձի ըմբռնումների ու մեկնաբանության վրա վերահսկման:

Մեր բողոքական եղբայրները պահում են իրենց սեփական հայրերի խոսքերը:

Մենք մեր հայրերի խոսքեր (այսինքն՝ հայրաբանություն) ենք կոչում, օրինակ, ս. Հովհան Ոսկեբերանի մեկնողական գործերը, սուրբեր Աթանասի, Կյուրեղ Մեծի, Գրիգոր Աստվածաբանի աստվածաբանական և վարդապետական գրվածքները և այլն: Բողոքականները նույնպես մեծ կարևորություն են տալիս Լյութերի, Կալվինի, Ցվինգելի, Մոուդիի և այլ նշանավոր անձանց գրվածքներին: Թեև նրանց «հայրեր» չեն կոչում, սակայն իրականում դրանք իբրև հայրաբանական գործեր են դիտվում:

Բողոքականները հարգում են այդ մարդկանց, սակայն չեն հետևում նրանց ուսմունքներին: Նրանց գործերը համարում են կարևոր, սակայն պարզապես կարծիքներ և ո՛չ պարտադիր ուսմունք, ուստի ազատ են դրանք մերժելու կամ ընդունելու:

ԳԼՈՒԽ Դ

ԲԱՐԵԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Բողոքականներն ամենևին չեն ընդունում բարեխոսությունը՝ լինի Կույս Մարիամի, թե հրեշտակների կամ սրբերի՝ հիմնվելով Հովհաննես առաքյալի հետևյալ խոսքի վրա. ***«....Աստծո առաջ բարեխոս ունենք Հիսուս Քրիստոսին՝ Արդարին և Անարատին***[32]***»*** *(Ա Հովհ. Բ 1), այլև Պողոս առաքյալի հետևյալ խոսքի.* ***«Քանզի մեկ Աստված կա և մեկ միջնորդ՝ Աստծո և մարդկանց միջև՝ Հիսուս Քրիստոս Մարդը»*** *(Ա Տիմ. Բ 5):*

Ա. *Իրականում սկզբունքային տարբերություն կա Տեր Հիսուս Քրիստոսի միջնորդության և սրբերի բարեխոսության միջև: Տիրոջ միջնորդությունը քավիչ է:*

Տեր Հիսուսը միջնորդում է մեր մեղքերի թողության համար՝ Ինքը լինելով այն քավիչը, ով մեր փոխարեն վճարեց մեղքի վարձը: Իր միջնորդությամբ Նա ասես ասում է Հորը. ***«Մի՛ հաշվիր նրանց հանցանքները, քանի որ Ես Ինձ վրա վերցրի նրանց մեղքը»*** *(Հմմտ. Եսայի ԾԳ 4):*

Նա է Աստծո և մարդկանց միջև Միջնորդը կամ, ավելի ճիշտ, միա՛կ Միջնորդը: Նա Աստծուն տվեց Իր իրավունքը՝ աստվածային դատաստանն իրականացնելու, իսկ մարդկանց տվեց մեղքերի թողություն՝ մեռնելով նրանց համար իբրև նրանց մեղքերի Քավիչ:

Սա՛ նկատի ունի ս. Հովհաննես առաքյալը՝ ասելով. ***«Իսկ եթե մեկը մեղանչի, Աստծո առաջ բարեխոս ունենք Հիսուս Քրիստոսին՝ Արդարին և Անարատին. և Նա՛ է քավությունը մեր մեղքերի, և ոչ միայն մեր մեղքերի, այլև ամբողջ աշխարհի»*** *(Ա Հովհ. Բ 1-2): Այստեղ քավիչ միջնորդությունը հստակորեն միջնորդություն է մեղավորի համար՝* ***«եթե մեկը մեղանչի»****: Մեղավորը կարիքն ունի քավության, իսկ այն միակը, ով քավություն գործեց, Հիսուս Քրիստոս Արդարն է: Ուստի Նա կարող է մեզ համար միջնորդել մեզ համար թափած Իր արյամբ:*

---

[32] Բնագրում, հունարեն տարածված բնագրերի համաձայն, բացակայում է «Անարատ» բառը:

Նույն միտքն է արտահայտում նաև Պողոս առաքյալի խոսքը, թե Տեր Հիսուս Քրիստոսն է միակ միջնորդն Աստծո և մարդկանց միջև: Նա ասում է. **«Քանզի մեկ Աստված կա և մեկ միջնորդ՝ Աստծո և մարդկանց միջև՝ Հիսուս Քրիստոս Մարդը, ով Իրեն որպես փրկանք տվեց բոլորի համար»** (Ա Տիմ. Բ 5-6): Նա միջնորդում է մեզ համար իբրև Փրկիչ, ով զոհաբերեց Իրեն և մեր մեղքերի վարձը հատուցեց:

Այս տեսակ միջնորդությունն ու բարեխոսությունը բացարձակապես անառարկելի են, որովհետև վերաբերում են միայն Քրիստոսին: Մինչդեռ մարդկանց համար սրբերի բարեխոսությունը քավության կամ փրկության հետ առնչություն չունի: Դա բարեխոսություն է մեզ համար հենց Նրա՝ Տեր Հիսուս Քրիստոսի առաջ:

բ) Մեզ համար սրբերի բարեխոսությունը նշանակում է պարզապես աղոթել մեզ համար: Դա Քրիստոսի քավիչ միջնորդությունից տարբեր՝ խնդրակա՛ն բարեխոսություն է:

Այսպիսի բարեխոսությունը թույլ է տրվում ըստ Սուրբ Գրքի, որն ասում է. **«Աղոթե՛ք միմյանց համար»** (Հակոբ. Ե 16): Նույնիսկ սրբերն իրենք էլ խնդրում էին մարդկանց աղոթել իրենց համար: Ս. Պողոս առաքյալն ասում է թեսաղոնիկեցիներին. **«Աղոթե՛ք մեզ համար»** (Բ Թես. Գ 1) և նույն խնդրանքով դիմում նաև եբրայեցիներին (Եբր. ԺԳ 18): Իսկ եփեսացիներին ասում է. **«Ամենայն աղոթքներով և աղաչանքներով ամեն ժամ աղոթե՛ք Հոգով. և դրանում հսկեք անխոնջ հարատևությամբ և աղաչանքներով բոլոր սրբերի համար, նաև ինձ համար»** (Եփես. Զ 18-19): Միմյանց համար աղոթելու խնդրանքը Սուրբ Գրքում շատ անգամ է հանդիպում: Ուրեմն, եթե սրբերը խնդրում են մեզ աղոթել իրենց համար, չպիտի՞ մանավանդ մենք նրանց խնդրենք աղոթել մեզ համար: Եթե մենք խնդրում ենք ողջ մարդկանց աղոթքները, այսինքն՝ նրանց, ովքեր դեռևս հոգևոր պատերազմ են մղում՝ մեզ նման բնություն ունենալով, չպիտի՞ խնդրենք աղոթքները սրբերի, ովքեր ավարտին հասցրին իրենց պայքարը և գնացին դրախտ (այսինքն՝ արդարների կայանները - թրգմ.)՝ ապրելու Քրիստոսի հետ: Թե՞ երկրից դեպի

դրախտ մեկնելուց հետո նրանց աստիճանը ցածրացել է, ուստի արգելված է նրանց աղոթքները խնդրել, երբ նրանք դրախտում են՝ Աստծուն մոտ, մինչ կարող էինք սա անել, երբ նրանք դեռ երկրի վրա էին:

Նաև՝ եթե խնդրում ենք մարդ էակի աղոթքը, մի՞թե անպատեհ է խնդրել նաև հրեշտակների աղոթքները:

գ) Աստված պատվիրում է մարդկանց խնդրել արդարների բարեխոսությունը:

Աստված Ինքն է պատվիրում սա, ընդունում և թույլ տալիս, որ այն տեղի ունենա: Այստեղ ես կբերեմ Աստծո կողմից ընդունելի դարձած այսպիսի բարեխոսության մի քանի օրինակ:

Աստծո կողմից ընդունված բարեխոսության օրինակներ

1) Մեր հայր Աբրահամի և Աբիմելեք արքայի պատմությունը

Աբիմելեքը մեղանչեց՝ Աբրահամի կին Սառային իր պալատն առնելով, թեև սա արեց մաքուր խղճով, որովհետև Աբրահամն ասել էր, թե Սառան իր քույրն էր: Երազում Տերը եկավ Աբիմելեքի մոտ, մահ սպառնաց և ասաց. **«Արձակի՛ր այդ կնոջն իր մարդու մոտ, որովհետև նա մարգարե է. կաղոթի քեզ համար ու կապրես»** (Ծնն. Ի 7): Աստված կարող էր ներել Աբիմելեքին հենց այն պահին, երբ նա վերադարձներ Սառային իր ամուսնուն: Սակայն Աստված թողություն շնորհելու համար պայման դրեց Աբրահամի աղոթքն Աբիմելեքի համար, որպեսզի վերջինս կենդանի մնար: Այսպիսով Աստված պահանջեց Աբրահամի բարեխոսությունը Աբիմելեքի համար:

Հոբի և նրա երեք բարեկամների պատմությունը

Նույն կերպ Տերը պահանջեց արդար Հոբի բարեխոսությունն ու աղոթքը նրա երեք բարեկամների համար, որ Ինքը ներեր նրանց: Գրված է. **«Տերն ասաց Եղիփազ Թեմնացուն. «Մեղանչեցիք դու և քո երկու բարեկամները. քանզի ճիշտը չխոսեցիք Իմ առաջ և ո՛չ այնպես, ինչպես Իմ ծառա Հոբը: Բայց այժմ վերցրեք յոթ զվարակ և յոթ խոյ, գնացեք Իմ ծառա Հոբի մոտ, և թող ձեզ համար ողջակեզ մատուցի: Եվ թող Իմ ծառա Հոբը աղոթի ձեզ համար»** (Հոբ Բ 7-8):

Նշված երկու դեպքում էլ Աստված Ինքը խոսեց սխալ թույլ տված անձի հետ, սակայն ուղղակիորեն չշնորհեց թողություն, այլ թողության պայման դրեց մեղանչածի համար սուրբի աղոթքը, որպեսզի մեղանչածը թողություն ստանար, իսկ սուրբը մեծարվեր մարդկանց աչքին: Ուրեմն Աստված ոչ միայն ընդունում է այսպիսի միջնորդությունը, այլև նույնիսկ պահանջում այն:

Աբրահամի բարեխոսությունը Սոդոմի համար

Աստված կարող էր պատժել Սոդոմի ժողովրդին առանց Աբրահամին այս մասին տեղեկացնելու: Ոչ թե Աբրահամն Ինքը միջամտեց, այլ Տե՛րը հայտնեց նրան այս մասին, ներգրավեց այս խնդրի մեջ, հնարավորություն տվեց Սոդոմի ժողովրդի համար խնդրելու և ընդունեց նրա բարեխոսությունը: Աստված կամեցավ, որ այս դեպքը գրի առնվի՝ ամբողջ աշխարհի առաջ Աբրահամին բարձրացնելու և մեզ ցույց տալու համար, թե ինչպես է Ինքը մեծարում Իր սրբերին: Սուրբ Գիրքն ասում է. **«Եվ Տերն ասաց. «Միթե կթաքցնե՞մ Իմ Աբրահամ ծառայից՝ ինչ եմ անելու»** (Ծնն. ԺԸ 17): Տերը ներկայացրեց Աբրահամին Սոդոմի խնդիրը և տվեց հնարավորություն բարեխոսելու նրա ժողովրդի համար՝ այն հույսով, թե այնտեղ կգտնվեին հիսուն, կամ քառասուն, կամ երեսուն, կամ քսան, կամ տասը արդար մարդ, ում համար Տերը չէր կործանի ամբողջ քաղաքը:

Արդեն այն փաստը, որ Տերը չէր կործանի քաղաքը հանուն այնտեղ բնակվող արդարների, մեզ ցույց է տալիս ոչ միայն Աբրահամի, այլև այդ արդարների պատվականությունը Տիրոջ առաջ: Տերն ասաց. **«Եթե Սոդոմ քաղաքում գտնեմ հիսուն արդար, ապա հանուն նրանց կխնայեմ ամբողջ վայրին... Եթե գտնեմ քառասունհինգ հոգի, չեմ կործանի... Ես դա չեմ անի հանուն քառասունի... Ես դա չեմ անի, եթե այնտեղ գտնեմ երեսուն արդար... Ես այն չեմ կործանի հանուն քսանի... Ես այն չեմ կործանի հանուն տասի»** (Ծնն. ԺԸ 26-32):

«Հանուն» բառն այստեղ ունի աստվածաբանական նշանակություն. այն ցույց է տալիս, թե ինչպես է Աստված ոմանց փրկում հանուն ուրիշների, և հստակ վկայություն է մեղավորների համար արդարների միջնորդության ու բարեխոսության, նաև թե ինչպես է

Աստված սա ընդունում առանց սրա բարիքը վայելողների խնդրանքի:

Մովսեսի բարեխոսությունը ժողովրդի համար

Աստված կամեցավ ոչնչացնել ժողովրդին, որովհետև վերջինս երկրպագեց ոսկե հորթին, սակայն սա չարեց անմիջապես: Նա այս խնդրի մասին հայտնեց Մովսես մարգարեին, նրան հնարավորություն տվեց ժողովրդի համար բարեխոսելու և նրա բարեխոսությունն ընդունեց:

Ինչպես Աբրահամն ասաց Աստծուն. **«Քա՛վ լիցի, որ այդ բանն անես»** (Ծնն. ԺԸ 25), այդպես էլ Մովսեսն ասաց Նրան. **«Դադարեցրո՛ւ Քո սաստիկ բարկությունը և մեղմացի՛ր՝ չարիք չգործելու Քո ժողովրդին: Հիշի՛ր Քո ծառաներ Աբրահամին, Իսահակին ու Հակոբին, որոնց երդվեցիր Քո անձով»: Ապա Սուրբ Գիրքն ասում է. «Եվ Տերը մեղմացավ և չգործեց այն չարիքը, որն ասաց, թե պիտի հասցներ Իր ժողովրդին»** (Ելք ԼԲ 7-14):

5) Վերոհիշյալ օրինակները ողջերի՝ միմյանց համար արված բարեխոսությունն են ցույց տալիս: Սակայն այս աշխարհից հեռացածներն ավելի մեծ զորություն ունեն: Աստված ողորմում է ժողովրդին հանուն նրանց, նույնիսկ առանց նրանց որևէ աղոթքի: Ուրեմն որքան առավել Տերը կողորմի մեկին, եթե նրանք աղոթեն նրա համար:

Այսպիսի բարեխոսության օրինակներ են Աստծո ողորմած և գթալից գործերը՝ կատարված հանուն Իր ծառա Դավթի, երբ Սողոմոնը մեղանչեց: Աստված որոշեց թագավորությունից զրկել նրան, սակայն գթությամբ ասաց. **«Բայց քո օրոք չեմ անի դա հանուն քո հայր Դավթի, այլ քո որդու ձեռքից այն կառնեմ: Սակայն ամբողջ թագավորությունը չեմ վերցնի. մի ցեղ կտամ քո որդուն հանուն Իմ Դավթի ծառայի և Երուսաղեմ քաղաքի, որն ընտրեցի»** (Գ Թագ. ԺԱ 12-13):

Տերը նույն բառերը կրկնեց նաև Հերոբովամի հետ խոսելիս. **«Ահա թագավորությունը կբաժանեմ ու կվերցնեմ Սողոմոնի ձեռքից և տասը ցեղը կտամ քեզ: Իսկ երկու ցեղը կմնա նրան հանուն Իմ ծառա Դավթի և Երուսաղեմ քաղաքի, որն ընտրեցի Իսրայելի բոլոր ցեղերի միջից.... Ամբողջ թագավորությունը չեմ**

վերցնի նրա ձեռքից.... հանուն Իմ Դավիթ ծառայի, ում ընտրեցի, ով պահեց Իմ պատվիրաններն ու ճշմարտությունները» *(Գ Թագ. ԺԱ 31-32, 34):*

Մեկ գլխում Տերը կրկնում է ***«հանուն Իմ ծառա Դավթի»*** *արտահայտությունը երեք անգամ: Ահա թե ինչու էր սաղմոսերգուն ասում.* ***«Հանուն Քո ծառա Դավթի երեսդ մի՛ շրջիր Քո օծյալից»*** *(Սաղմ. ՃԼԳ 10):*

Եթե Դավիթն այսպիսի շնորհ էր գտել Աստծո առաջ, ապա որքա՜ն առավել Կույս Մարիամը, հրեշտակները, Հովհաննես Մկրտիչը՝ ***«կանանցից ծնվածների մեջ ամենամեծը»****, ինչպես նաև նահատակները, ովքեր չարչարվեցին ու մահ ընդունեցին հանուն Տիրոջ:*

Հետևաբար, քանի որ մենք խնդրում ենք երկրի վրա ապրող մեր ընկերների աղոթքները, ինչո՞ւ չխնդրել աղոթքները նրանց, ովքեր ***«լույսի պես փայլում են հաստատության մեջ.... ինչպես աստղեր՝ հավիտյանս հավիտենից»*** *(Դան. ԺԲ 3): Եվ ինչո՞ւ չխնդրել աղոթքները նրանց, ովքեր բարի պատերազմը մղեցին, ընթացքն ավարտեցին և հավատը պահեցին (Բ Տիմ. Դ 7):*

Եթե բարեխոսությունը, որն աղոթք է, միջնորդություն է համարվում, և եթե ամեն միջնորդություն անընդունելի է, ապա ցանկացած մարդու աղոթք՝ մեկ ուրիշի համար արված, կլինի անընդունելի, այն հիմամբ, որ ունենք միայն մեկ Միջնորդ:

Աղոթքով միջնորդության մերժման դեպքում, այն պատճառաբանությամբ, թե Աստծո և մարդու միջև հարաբերությունն ուղղակի է և աստվածային սիրո պատճառով այն չունի ուրիշների աղոթքների կարիք, առաքյալը սխալվում է (քա՛վ լիցի), երբ ասում է. ***«Աղոթե՛ք միմյանց համար»*** *(Հակ. Ե 16):*

Հետևաբար ուրիշների համար կատարված աղոթքները, որ հիշատակվում են Սուրբ Գրքում, անիմաստ են և հակասում են աստվածային սիրուն:

Ըստ այս տեսակետի՝ քանի որ Աստված սիրում է մարդկանց, Նա կարիք չունի, որ ուրիշներն աղոթեն Իր զավակների համար՝ հիշեցնելու Իրեն Իր հայրական խնամքի և սիրո մասին:

Այսպես մտածողները սխալ են հասկացել Աստծո նպատակը, երբ Նա պատվիրեց Աբիմելեքին, որ Աբրահամն աղոթի նրա համար (Ծննդ. Ի 7), կամ Հոբի բարեկամներին, որ Հոբն աղոթի նրանց համար (Հոբ Բ 8):

Մարդկանց (թե՛ աշխարհից հեռացածների, թե՛ դեռևս մարմնով պայքար մղողների)՝ միմյանց համար կատարվող աղոթքները վկայություն են մարդկանց միջև գոյություն ունեցող փոխադարձ սիրո, այլև մարդու այն հավատի, թե աշխարհից հեռացածները շարունակում են ապրել և նրանց աղոթքներն ընդունվում են Աստծուց՝ իբրև Աստծո կողմից Իր սրբերի մեծարման նշան:

Աստված այսպիսի բարեխոսությունը թույլ է տվել մարդկանց օգտի համար: Բացի դրանից, բարեխոսությունը կամուրջ է դցում երկնքի և երկրի բնակիչների միջև: Երկինքը մարդկանց համար այլևս մի անհայտ և սարսափելի վայր չէ, որովհետև նրանք սկսել են հավատալ սրբերի հոգիների գործունեությանն ու սիրուն:

Ստորև բերվում է մի հարց, որը հաճախ է տրվում բարեխոսությունը մերժողների կողմից:

դ) <u>Հրեշտակներն ու սրբերը գիտե՞ն մեր կացությունը երկրի վրա:</u>

Սրբերի հոգիները գիտե՞ն մեր կացությունը: Մեր աղոթքները հասնո՞ւմ են նրանց: Դրական պատասխան ենք տալիս և բերում հետևյալ ապացույցները:

1) Կասկած չկա, որ երկնքում գիտությունն ավելի է, քան երկրի վրա:

Ուստի զարմանալի է, երբ մեկը հարցնում է, թե սրբերը երկնքում գիտե՞ն երկրի վրա տեղի ունեցող մեր իրադարձություններն ու լսո՞ւմ են մեր աղոթքները: Պատասխանը տալիս է Պողոս առաքյալը. ***«Որովհետև այժմ տեսնում ենք աղոտ, ասես հայելիով, իսկ այն ժամանակ՝ դեմ-հանդիման: Այժմ շատից քիչը գիտեմ, իսկ այն ժամանակ կգիտենամ, ինպես Նա ճանաչեց ինձ»*** *(Ա Կոր. ԺԳ 12):*

Մյուս աշխարհում մեր գիտությունն աճելու է և շատ գաղտնիքներ են բացահայտվելու, երբ մեզանից թոթափենք հոգին կապանքի մեջ պահող այս մարմինը: Այդժամ հոգին պիտի իմանա ավելին և սահմանափակ գիտության ոլորտից պիտի անցնի առավել ընդարձակ ոլորտ: Այդ ընդարձակ գիտությանը պիտի ավելանա նաև Աստծուց հոգիներին հայտնվող գիտությունը, որ պարփակված

է Աստվածային Հայտնության ոլորտում:

2) Որ հրեշտակները գիտեն երկրի վրայի անցուդարձը, պարզորոշ երևում է Տիրոջ հետևյալ խոսքում. ***«Ավելի մեծ ուրախություն կլինի երկնքում մի մեղավորի համար, որ ապաշխարում է....»*** *(Ղուկ. ԺԵ 7):*

Սա նշանակում է, որ երկրի վրա կատարվող իրադարձություններ-ը հասնում են երկնքի բնակիչներին, վերջիններս լինեն հրեշտակ-ներ թե սրբերի հոգիներ: Նրանք գիտեն՝ ով է ապաշխարում և ով կարիքն ունի ապաշխարության, և ուրախանում են մեկ մեղավորի ապաշխարության համար: Այլապես ինչպե՞ս կուրախանային, եթե չիմանային:

3) Հրեշտակները գիտեն մեր աղոթքները, քանի որ դրանք տանում են Աստծո աթոռի առաջ:

Սրա համար կան բազմաթիվ վկայություններ «Հայտնության» գրքում: (Հայտ. Ը 3-4): Այստեղ տեսնում ենք, որ ***«Եվ մի ուրիշ հրեշտակ եկավ ու կանգնեց խորանի մոտ. նա ուներ ոսկե բուրվառ, և նրան շատ խունկ տրվեց, որպեսզի բոլոր սրբերի աղոթքները մատուցի ոսկե խորանի վրա՝ աթոռի առաջ: Եվ սրբերի աղոթքը՝ խնկի ծուխը, հրեշտակների ձեռքերից բարձրացավ Աստծո առաջ»*** *սրբերի աղոթքները բարձրանում են Աստծո առաջ հրեշտակների ձեռքից և բուրվառից: Ուրեմն ինչպե՞ս կարող էին հրեշտակները չիմանալ դրանք:*

Նմանապես և քսանչորս երեցները գիտեն մեր աղոթքներն ու բարձրացնում են Աստծո առաջ:

«Հայտնության» գրքում գրված է նրանց մասին. ***«....քսանչորս երեցներն ընկան Գառի առաջ, և յուրաքանչյուրն ուներ քնար ու ոսկե բուրվառ՝ խնկով լի, որը սրբերի աղոթքն է»*** *(Հայտ. Ե 8): Սա ապացույց է, որ նրանք գիտեն երկրի վրա մատուցվող աղոթքները, որոնք և բարձրացնում են Աստծո առաջ:*

Կարելի է հիշել նաև մանուկների հրեշտակներին, որոնց մասին Տեր Հիսուս Քրիստոսն ասաց. ***«Զգո՛ւյշ եղեք, չլինի թե արհամար-հեք այս փոքրիկներից մեկին. քանզի ասում եմ ձեզ, որ նրանց հրեշտակները երկնքում շարունակ տեսնում են Իմ երկնավոր Հոր երեսը»*** *(Մատթ. ԺԸ 10):*

4) Աբրահամի, Հարուստի և Ղազարոսի պատմությունը (Ղուկ. գլուխ ԺԶ)

Այստեղ մեր հայր Աբրահամն ասում է Հարուստին. ***«Որդյա՛կ, հիշի՛ր, որ դու ստացար քո բարիքներն այն կյանքում, իսկ Ղազարոսն էլ՝ չարչարանքները»*** *(Ղուկ. ԺԶ 25): Ինչպե՞ս իմացավ մեր հայր Աբրահամն աղքատ Ղազարոսի չարչարանքների մասին: Ինչպե՞ս իմացավ Հարուստի վայելած բարիքների մասին: Ինչպե՞ս կարող էր ասել, որ Հարուստի ընտանիքն* ***«ունի Մովսեսին և մարգարեներին»****, երբ ինքը երկրից հեռացել էր Մովսեսից և մնացած մարգարեներից հարյուրավոր տարիներ առաջ: Սակայն նա գիտե՛ր այս ամենը: Ինչպե՞ս կարող էր չիմանալ Աբրահամը, ում մասին Տերն ասաց.* ***«Ձեր հայր Աբրահամը ցանկացավ Իմ օրը տեսնել, տեսավ և ուրախացավ»*** *(Հովհ. Ը 56):*

5) Վկայություն նահատակների հոգիներից

«Հայտնության» գրքում ս. Հովհաննեսն ասում է. ***«Երբ նա բացեց հինգերորդ կնիքը, սեղանի տակ տեսա այն բոլոր մարդկանց հոգիները, ովքեր զոհվել էին Աստծո խոսքի և Նրա վկայության համար, որը պահում էին: Նրանք բարձր ձայնով ասում էին. «Մինչև ե՞րբ, Տեր, սո՛ւրբ և ճշմարիտ, չպիտի դատես և երկրի բնակիչներից չպիտի առնես մեր արյան վրեժը»: Եվ նրանց սպիտակ թիկնոցներ տրվեցին և ասվեց, որ մի կարճ ժամանակ հանգստանան, մինչև լրանա թիվը նրանց ծառայակիցների ու եղբայրների, ովքեր նրանց պես պիտի սպանվեն»*** *(Հայտ. Զ 9-11):*

Նշանակում է՝ նահատակներն իրենց մահվանից հետո գիտեին, որ դեռ Տերը նրանց արյան վրեժը չի առել, և բարձր ձայնով գոչում էին առ Աստված՝ ասելով. «Մինչև ե՞րբ ես թույլ տալու, որ չարը հաղթի երկրի վրա: Մինչև ե՞րբ ես թույլ տալու, որ զորեղները ոչնչացնեն Քո զավակներին: Մինչև ե՞րբ նրանք պիտի շարունակեն այս արյունը հեղել»:

Ինչպե՞ս գիտեին նրանք այս ամենը: Նրանք գիտե՛ն, և երբ նրանց ծառայակիցների թիվը լրանա, դեռ է՛լ ավելին կիմանան:

Եղիա մարգարեի մասին զարմանալի պատմություն (Բ Մն. գլուխ ԻԱ)

Այս պատմության մեջ ասվում է, որ Հովրամ արքան սպանում է իր բոլոր եղբայրներին, քայլում Աքաաբ արքայի ճանապարհներով, Հուդայի բլուրների վրա բարձրություններ կանգնեցնում կուռքե-րին երկրպագելու համար և չարիք գործում Տիրոջ առաջ: Ապա

նամակ է ստանում Եղիա մարգարեից, ով շատ տարիներ առաջ արդեն հեռացել էր երկրից, բարձրացել երկինք: Այս նամակում ասվում է. ***«Այսպես է ասում քո Դավիթ հոր Տեր Աստվածը. քանի որ չգնացիր դու քո հայր Հովսափատի ճանապարհներով, ոչ էլ Հուդայի արքա Ասայի, այլ գնացիր Իսրայելի թագավորի ճանապարհներով.... Տերը մեծ հարվածներ կհասցնի քո ժողովրդին, քո որդիներին, կանանց և քո ողջ ունեցվածքին»*** *(Բ Մն. ԻԱ 12-14): Ինչպե՞ս սա պատահեց: Ինչպե՞ս երկրից հեռանալուց հետո Եղիան իմացավ, թե ինչ է տեղի ունենում, և ինչպե՞ս իր նամակն ուղարկեց Հովրամին՝ զգուշացնելով նրան, որ Տերը սաստիկ հարվածներ պիտի հասցնի նրան, նրա ընտանիքին և ժողովրդին նրա մեղքերի պատճառով:*

Այլևս կարո՞ղ է կասկած լինել, թե սրբերը գիտեն մեր մասին, մինչ երկրի վրա ենք:

ե) <u>Սրբերի մեծությունը, գիտությունը և առաքելությունը</u>

1) Սամվել մարգարեին, երբ դեռևս կենդանի էր, հարցրին կորած էշերի մասին: Դրանք փնտրողները նրա մասին ասացին. ***«Այս քաղաքում Աստծո մարդ կա, մի փառավոր մարդ. այն ամենն, ինչ ասում է, կատարվում է: Ուստի գնանք այնտեղ, որ մեզ պատմի մեր ճանապարհները»*** *(Ա Թագ. Թ 6): Եթե Աստված իր մարդուն բացահայտում է ծածկված իրողությունները, մինչ նա դեռևս երկրի վրա է, ապա Աստծո մարդը որքա՜ն առավել կիմանա, երբ իբրև ազատ հոգի լինի Աստծո հետ երկնքում:*

2) Երբ Եղիսեն երկրի վրա էր, իմացավ Գեեզիի թաքուն արարքը, երբ վերջինս Նեեման Ասորուց նվերներ վերցրեց (Դ Թագ. Ե 25-27):

3) Արամի (ասորիների) թագավորի սպասավորներից մեկն իր տեր թագավորին ասաց Եղիսեի մասին. ***«Եղիսե մարգարեն Իսրայելում պատմում է Իսրայելի արքային այն բոլոր խոսքերը, որ դու ասում ես քո ննջասենյակում»*** *(Դ Թագ. Զ 12):*

4) Սովի ժամանակ Եղիսե մարգարեն իմացավ, որ Իսրայելի թագավորը պատգամավոր է ուղարկել՝ սպանելու իրեն (Դ Թագ. Զ 32):

Ուրեմն, եթե դեռևս երկրի վրա Եղիսեն ուներ գաղտնիքներն իմանալու շնորհ, որքան ավելի կիմանար երկնքում՝ մարմնից

ձերբազատվելուց հետո:

5) Նմանապես, ս. Պետրոս առաքյալը գիտեր Անանիայի և Սափիրայի գաղտնի արարքը: Նա բացահայտեց այն և պատժեց նրանց (Գործք Ե 3, 9):

6) Սուրբ Պողոսը նույնպես գիտեր, որ իր մեկնումից հետո հափշտակող գայլեր պիտի մտնեն եփեսացիների մեջ և չխնայեն հոտին (Գործք Ի 29):

Եթե դեռևս երկրի վրա առաքյալներն այդքան գիտություն ունեին, ապա որքան ավելի Տերը պիտի հայտներ նրանց երկնքում:

Այս սրբերն ունեին գիտություն և առաքելություն մարդկանց համար: Նրանց կյանքը չընդհատվեց երկրից դեպի երկինք մեկնումից հետո: Մենք նրանց բարեխոսությունը խնդրում ենք ավելի, քան նրանցը, ովքեր մեզ նման դեռևս պայքարում են երկրի վրա և չեն հասել երկինք:

զ) <u>Սրբերի մեծության այլ օրինակներ</u>

1) Եթե Եղիսե մարգարեի ոսկորները շնորհակիր էին և մեռած մարդուն կենդանացրին առանց աղոթքի, միայն հպման միջոցով, թեև դրանք պարզապես անկենդան ոսկորներ էին (Դ Թագ. ԺԳ 21), ապա որքա՜ն ավելի զորություն պիտի ունենար Եղիսեի հոգին երկնքում և ավելի մեծ գիտություն, կենդանություն և Տիրոջ առաջ հաճություն: Եվ որքա՜ն մեծ զորություն ունեն նաև Եղիսեի նման ուրիշ սրբերի հոգիները:

2) Եթե Պողոսի մարմնին դիպած թաշկինակներն ու վարշամակները հիվանդներ բժշկելու և դևեր քշելու շնորհն ունեին (Գործք ԺԹ 12), որքան ավելին կարող են անել նրա և նրա նման սրբերի հոգիները:

է) <u>Աշխարհից հեռացած սրբերը շարունակում են ապրել:</u>

Տերը սա բացատրեց սադուկեցիներին՝ ասելով. ***«....չե՞ք կարդացել Աստծուց ձեզ ասվածը. «Ես եմ Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստվածը»: Իսկ Աստված մեռելների Աստված չէ, այլ ողջերի»*** *(Մատթ. ԻԲ 31-32): Եթե այդ սրբերը շարունակում են ապրել, ինչո՞ւ*

պիտի նրանց մեռած համարենք և նրանց աղոթքները չխնդրենք:

Մենք չպետք է մոռանանք նաև Մովսեսի և Եղիայի հայտնվելն ու հանդիպումը Տեր Հիսուսի հետ Պայծառակերպության լեռան վրա: Մովսեսը, ով վախճանվել էր Քրիստոսի ծննդից շուրջ տասնչորս դար առաջ, և Եղիան, ով երկինք էր բարձրացվել, շարունակում են ապրել Տիրոջ հետ: Նրանց հոգիները չմեռան, այլ դրախտում են և տեսնում են ավելին, քան մենք:

ը) Հրեշտակների բարեխոսության օրինակներ

Զաքարիա մարգարեի գրքում երկու օրինակ կա այս մասին.

1) Տիրոջ հրեշտակը բարեխոսեց Երուսաղեմի համար՝ աղոթելով. ***«Տե՛ր ամենակալ, մինչև ե՞րբ չես ողորմելու Երուսաղեմի և Հուդայի քաղաքներին, որոնց անտեսեցիր այս յոթանասուն տարի»*** *(Զաք. Ա. 12): Եթե հրեշտակը բարեխոսեց Երուսաղեմի համար առանց նրա խնդրանքի, որքան առավել կբարեխոսի, եթե խնդրեն իրեն:*

2) Տիրոջ հրեշտակը բարեխոսեց Հեսու քահանայապետի համար: Նա կանգնեց սատանայի առաջ, ով հակառակում էր Հեսուին, և ասաց նրան. ***«Թող Տերը սաստի՛ քեզ, սատանա՛, թող սաստի՛ քեզ Տերը, ով ընտրեց Երուսաղեմը: Մի՞թե սա կրակից հանված մի խանձող չէ»*** *(Զաք. Գ 1-2):*

3) «Ծննդոց» գրքում մենք կարդում ենք, թե ինչպես է հրեշտակը պահպանում և փրկում Հակոբին: Հակոբն այս մասին նշում է, երբ օրհնում է Եփրեմին ու Մանասեին. ***«Հրեշտակը, որ փրկեց ինձ ամեն չարից, թող օրհնի այս մանուկներին»*** *(Ծնն. Ը 16):*

4) Մենք չենք կարող մոռանալ հրեշտակների մասին Սուրբ Գրքի խոսքը. ***«Մի՞թե նրանք ամենքը հարկավոր հոգիներ չեն, որ ուղարկվում են սպասավորելու նրանց, ովքեր ժառանգելու են փրկությունը»*** *(Եբր. Ա. 14):*

Եթե նրանք սա անում են մարդկանց համար երկրի վրա, նույնը չե՞ն անի երկնքում:

թ) Սրբերը հաճելի են Տիրոջ առաջ:

1) Մենք սրբերի բարեխոսությունը խնդրում ենք այն մեծ պատվի պատճառով, որ նրանք ունեն Աստծո առաջ, այն մեծ կարողությունների, որ նրանք ձեռք են բերել մարմնից ազատվելուց հետո, և իրենց ունեցած առավել մեծ հոգևոր զորության պատճառով: Ինչպես նաև՝ նրանց հանդեպ Աստծո սիրո պատճառով, ով հանձնարարում է նրանց ողորմության գործեր կատարել մարդկանց համար, այլև այն պատճառով, որ իրենց մարմիններից ազատվելուց հետո նրանց հոգիներն ավելի մեծ գիտություն ունեն, քան երբ երկրի վրա էին:

2) Տիրոջ առաջ սրբերի պատվի մասին խոսելիս պետք է նշենք, որ Աստված երբեմն Իրեն կոչում էր նրանց անունով, ինչպես օրինակ՝ ***«Ես եմ քո հոր Աստվածը՝ Աբրահամի Աստվածը, Իսահակի Աստվածը և Հակոբի Աստվածը»*** *(Ելք Գ 6):*

3) Այդ է պատճառը, որ նախահայրերն ու մարգարեները սովորություն ունեին հիշեցնելու Տիրոջը Նրա սրբերի մասին, որպեսզի Նրա գթած ու ողորմած սիրտն իսկույն շարժվեր՝ լսելով նրանց անուններն ու հիշելով Իր խոստումները նրանց: Ուստի երբ Իսրայելի ժողովրդին կորստից փրկելու համար Մովսես մարգարեն բարեխոսեց, Տիրոջն ասաց. ***«Հիշի՛ր Քո ծառաներ Աբրահամին, Իսահակին ու Հակոբին, որոնց Դու երդվեցիր Քո անձով, խոսեցիր նրանց հետ և ասացիր. «Կբազմացնեմ ձեր զավակներին, ինչպես երկնքի աստղերը»*** *(Ելք ԼԲ 13):*

4) Եվ հանուն այս սրբերի, երբ ասորիների արքա Ազայելը նեղում էր իսրայելացիներին, ***«Տերը ողորմեց ու գթաց նրանց և նայեց նրանց վրա Աբրահամի, Իսահակի և Հակոբի հետ Իր կնքած ուխտի պատճառով և չկամեցավ Տերն ապականել նրանց, չհեռացրեց նրանց Իր երեսից»*** *(Դ Թագ. ԺԳ 23):*

5) Այս նյութի մասին խոսելիս կարելի է հիշել, թե ինչպես Աստված հանդիմանեց Ահարոնին ու Մարիամին, երբ նրանք քննադատեցին Մովսես մարգարեին: Տերն ամպի սյունով իջավ և Մովսեսի առաջ ասաց Ահարոնին ու Մարիամին. ***«Եթե ձեր մեջ մարգարե լինի Տիրոջ համար, նրան կերևամ տեսիլքով և երազի***

միջոցով կխոսեմ նրա հետ, ո՛չ այնպես, ինչպես Իմ ծառա Մովսեսի հետ, ով Իմ ամբողջ տան մեջ հավատարիմ է: Նրա հետ երես առ երես կխոսեմ, կերպարանքով և ոչ թե նմանությամբ: Եվ նա Տիրոջ փառքը տեսավ: Ուրեմն ինչո՞ւ չվախեցաք և Իմ ծառա Մովսեսին բամբասեցիք» *(Թվեր ԺԲ 6-8):*

6) Տիրոջ առաջ սրբերի պատվի ուրիշ վկայություններ են Տիրոջ հետևյալ խոսքերն Իր առաքյալներին. ***«Ով ձեզ է լսում, Ինձ է լսում, ով ձեզ է անարգում, Ինձ է անարգում»*** *(Ղուկ. Ժ 16), և՝* ***«Եթե մեկը ծառայի Ինձ, Իմ Հայրը կպատվի նրան»*** *(Հովհ. ԺԲ 26):*

ժ) Առարկություններ և պատասխաններ

1) Ասվում է, թե սրբերի բարեխոսությունը խնդրելիս մենք աղոթում ենք նրանց:

Պատասխանում ենք, որ չենք աղոթում սրբերին, այլ միայն խնդրում նրանց աղոթքներն ու օգնությունը: Մեր զրույցը Կույս Մարիամի հետ նրան ուղղված աղոթք չէ, այլ զավակների զրույցն իրենց մոր հետ, մի տեսակ անձնական զրույց և ոչ թե աղոթք: Մենք խնդրում ենք նրա բարեխոսությունը մեզ համար, քանի որ նա Թագավորի աջ կողմում նստող Թագուհին է:

2) Ասվում է, թե բարեխոսությունը միջնորդության մի տեսակ է:

Պատասխանում ենք. իսկ ի՞նչ վատ բան կա սրանում, եթե Աստված Ինքն է ընդունում միջնորդությունը և պահանջում այն: Նա Աբիմելեքից պահանջեց, որ Աբրահամն աղոթի նրա համար, որպեսզի նա չկործանվի (Ծնն. Ի 7), և Հոբի բարեկամներից, որ Հոբն աղոթի նրանց համար, որպեսզի չլինի թե Ինքը նրանց հետ վարվի նրանց թույլ տված անմտությունների համաձայն (Հոբ Բ 8): Նա թույլ տվեց նաև, որ Աբրահամը աղաչի Սոդոմի համար (Ծնն. ԺԸ) և Մովսեսն էլ՝ Իսրայելի ժողովրդի: Նա երկուսին էլ պատասխանեց և նրանց բարեխոսությունն ընդունեց:

ժա) Սրբերի աղոթքները խնդրելու հոգևոր կողմը

1) Սրբերի բարեխոսությունը խնդրելը ենթադրում է գալիք կյանքի հանդեպ հավատ. հավատ, որ աշխարհից հեռացածները

շարունակում են ապրել և ունեն իրենց առաքելությունը: Սա հավատ է երկնքի ու երկրի միջև մշտական հարաբերության հանդեպ և սրբերի մեծարման, որոնց Աստված Ինքն էլ մեծարում է:

2) Բարեխոսությունը սիրո հաղորդություն է Մեկ Մարմնի անդամների միջև:

Եկեղեցին մարմինն է, Քրիստոսը՝ գլուխը, իսկ մենք ամենքս՝ երկրում թե երկնքում՝ այդ Մարմնի անդամները: Սերը, աղոթքներն ու հաղորդակցությունը փոխանակվում են Մեկ Մարմնի անդամների միջև. մենք մեր աղոթքներում խնդրում ենք ննջեցյալների համար, նրանք էլ իրենց աղոթքներով բարեխոսում են մեզ համար: Սա անքակտելի մի հարաբերություն է:

Ինչո՞ւ են կամենում բարեխոսությունը մերժողները վերացնել այս հաղորդությունը: Ինչո՞ւ են դեմ, որ մենք աղոթենք ննջեցյալների համար և նրանք բարեխոսեն մեզ համար: Արդյո՞ք Հայր Աստծո և յուրաքանչյուր հավատացյալի միջև սիրո հարաբերությունը խափանում է Աստծո զավակների միջև որևէ սեր կամ հարաբերություն: Արդյոք Տեր Հիսուս Քրիստոսը չխնդրե՞ց Հորը. ***«....որպեսզի ամենքը մեկ լինեն, ինչպես որ Դու ես, Հայր, Իմ մեջ, և Ես՝ Քո մեջ, որպեսզի նրանք էլ Մեր մեջ լինեն.... որպեսզի մեկ լինեն, ինչպես և Մենք ենք մեկ. Ես՝ նրանց մեջ, և Դու՝ Իմ մեջ, որպեսզի կատարյալ լինեն միության մեջ»*** *(Հովհ. ԺԷ 21-23):*

3) Բարեխոսությունն առավելություն է: Ով մերժում է այն, կորցնում է այն՝ փոխարենը ոչինչ չշահելով: Ովքեր հավատում են բարեխոսությանը, օգուտ են ստանում իրենց և սրբերի միջև սիրո հարաբերությունից: Նրանք օգուտ են ստանում աշխարհից հեռացածների հոգիների հետ հենց միայն հարաբերությունից: Նրանք իրենց աղոթքներին ավելացնում են մյուս աշխարհում բնակվողների առավել զորավոր աղոթքները՝ առանց իրենց կողմից որևէ կորստի:

Իսկ բարեխոսությունը մերժողները կորցնում են այս հարաբերությունն ու այս աղոթքները՝ փոխարենը ոչինչ չշահելով: Նրանք կորցնում են նաև այն պարզ հավատը, որ կարելի է տեսնել նրանց մեջ, ովքեր նշում են սրբերի տոները, այցելում նրանց եկեղեցիները և խնդրում նրանց աղոթքները: Ուրեմն ինչպե՞ս պիտի համարձակվեն հանդիպել սրբերին մյուս աշխարհում՝ այն

բանից հետո, որ մերժեցին մեծարել նրանց կամ խնդրել նրանց աղոթքներն ու բարեխոսությունը:

4) Բարեխոսությունը ենթադրում է սրտի խոնարհություն:

Բարեխոսություն խնդրող անձը խոնարհ է. նա չի հպարտանում Աստծո հետ ունեցած իր անձնական հարաբերությամբ, այլ իբրև մեղավոր ու տկար մարդ խնդրում է իր համար ուրիշների բարեխոսությունը:

Իսկ բարեխոսությունը մերժող անձը սրա հակառակն է: Նա կարող է բարձրամտաբար ասել. «Ի՞նչ տարբերություն իմ և այդ սրբերի միջև: Իմ և Աստծո միջև հարաբերությունն այնքան զորավոր է, որ բարեխոսության կարիքը չունի» (նա իրեն դասում է սրբերի, նահատակների ու հրեշտակների կարգում):

Այսպիսի մարդիկ հանդիմանվում են առաքյալի հետևյալ խոսքերով. ***«Աղոթեք մեզ համար»*** *(Եբր. ԺԳ 18), և՝* ***«բոլոր սրբերի համար»*** *(Եփես. Զ 18):*

5) Բարեխոսությունն Աստծո արդարության վկայություն է հավասար հնարավորություններ տալու առումով:

Եթե Աստված թույլ է տալիս սատանային պայքարել Աստծո զավակների դեմ, նրանց փորձել կեղծ տեսիլքներով ու երազներով և չարչարել նրանց, ապա, համաձայն Իր արդարության և հավասարության սկզբունքի, որքան առավել թույլ պիտի տա հրեշտակներին ու արդարների հոգիներին օգնել երկրի վրա գտնվող Իր զավակներին: Այսպիսով մյուս աշխարհում բնակվողների հոգիների միջնորդության շնորհիվ Աստծո արդարությունն է իրականանում մարդկանց կյանքում:

Եթե Աստված սատանային թույլ տվեց հարվածելու Հոբին, թույլ է տալիս նաև, որ հրեշտակները փաթաթեն մարդկանց վերքերն ու սպասավորեն Իր զավակներին առանց նույնիսկ նրանց խնդրանքի: Իսկ որքա՜ն առավել թույլ կտա սա, եթե նրանք աղոթեն սրա համար: ***«Մի՞թե նրանք ամենքը հարկավոր հոգիներ չեն, որ ուղարկվում են սպասավորելու նրանց, ովքեր ժառանգելու են փրկությունը»*** *(Եբր. Ա 14):*

Քանի որ հրեշտակներն ուղարկվում են այս առաքելությամբ, պատշաճ է խնդրել նրանց միջնորդությունը՝ օգնելու մեզ, քանի որ մոտ են մեզ:

ժբ) <u>Բարեխոսությունը կենդանի իրականություն է:</u>

Սրբերի բարեխոսությունը մեզ համար պարզապես մի գիտական ուսումնասիրություն չէ՝ Սուրբ Գրքից վերցված վկայությունների փաստերով, այլ կենդանի իրականություն, որն ապրում ենք: Սա սերունդների միջով անցնող կենդանի պատմություն է, որ պատմում է աշխարհից հեռացածների և դեռևս երկրի վրա ապրողների սքանչելի հարաբերության մասին: Սա կենդանի կապ է սրբերի հետ, ովքեր ավելի մեծ ու ճշմարիտ գութ ունեն մեր վիճակի հանդեպ, քան մենք ինքներս, այնքան, որ երբեմն մեր խնդիրները լուծվում են նրանց՝ մեզ համար արված բարեխոսությունների շնորհիվ առանց նույնիսկ մեր խնդրանքի կամ աղոթքների:

Սրբերն ավելի լավ են հասկանում և մեզանից ավելի՛ գործադրում ***«Ուրախացեք ուրախացողների հետ և լաց եղեք լացողների հետ»*** *(Հռոմ. ԺԲ 15) պատվերը:*

Բարեխոսությունը վկայություն է երկրային Եկեղեցու և երկնքում գտնվող Եկեղեցու անդամների միջև շաղկապի: Որովհետև դա մե՛կ Եկեղեցի է, որի մի մասը երկրի վրա է (Զինվորյալ Եկեղեցի), իսկ մյուսը՝ երկնքում (Հաղթանակած Եկեղեցի), և նրանք աղոթում են միմյանց համար:

Սրբերի բարեխոսությունը մերժողներն անտեսում են մարդկանց կողմից վկայվող այն զարմանալի հրաշքները, որ գործվում են սրբերի աղոթքներով և նրանց տոներին՝ նրանց եկեղեցիներում ու վանքերում: Այսպիսի մերժումը փորձ է ժխտելու իրականությունն ու պատմությունը և ոչ թե պարզապես աստվածաբանական ուսմունքի մեջ շեղում:

Բավական է հիշատակել այն հրաշքները, որ տեղի ունեցան Զեյթունի՝ Աստվածածնի անունը կրող եկեղեցում Կույս Մարիամի երևումներով՝ թե՛ քրիստոնյաներին, թե՛ մահմեդականներին, որոնք գրանցված են մարդկանց բանավոր կամ գրավոր վկայու-

---

33 Խոսքը 1968թ. ապրիլի 2-ին սկսված և հաջորդ մի քանի օրերին շարունակված երևումների մասին է, որոնք տեղի են ունեցել Ղպտի Եկեղեցու նախկին սրբակենցաղ պատրիարք Կյուրեղ Զ-ի պատրիարքության օրոք, Կահիրեի Զեյթուն արվարձանի ղպտի եկեղեցու (Ս. Աստվածածին) գմբեթին կամ նրա շուրջ: Տիրամոր այս երևումներին ականատես են եղել հավաքված բազմահազար մարդիկ՝

թյուններով[33], այլև այն հրաշքները, որ տեղի են ունենում ս. Գևորգի, Միքայել հրեշտակապետի և այլ սրբերի անուններով:

Այնուամենայնիվ, այս ամենը բավարար չէ բողոքականների համար, և նրանք առանց պատճառի մերժում են սրբերի աղոթքները, բարեխոսությունն ու հրաշքները:

Կարդա նաև սրբերի կյանքի պատմությունները և կիմանաս մարդկանց կյանքում հրեշտակների ու սրբերի միջնորդության մասին:

Դու կտեսնես՝ ինչպես են նրանք հայտնվում, նախագուշակում, խոստանում, տալիս ավետիսը ամուլ կնոջից տվյալ սրբի ծննդյան, կամ հայտնում Աստծուն ծառայելու համար Նրա կողմից սրբի ընտրության մասին, և կամ ուղղություն ցույց տալիս որևէ սրբի:

Սրբերի հետ մարդկանց հարաբերությունը մի օրվա հասարակ ծանոթություն չէ, այլ երկարատև մտերմություն ու անքակտելի հարաբերություն: Դա մարդկանց, հրեշտակների և սրբերի միջև բարեկամություն է:

Հետևաբար, սրբերի դեմ բողոքականների պնդումների համար տեղ լինել չի կարող, քանի որ այդպիսի պնդումները ուրիշ բան չեն, քան պարզապես արհամարհանք այն հավատի և զգացումների հանդեպ, որոնք հոսում են մարդկանց արյան միջով:

տարբեր ազգությունների և կրոնների պատկանող, և դրանք ուղեկցվել են բազմաթիվ զարմանալի երևույթներով ու հրաշքներով: Այս երևումներն արձանագրվել են մամուլում, պահպանվել են լուսանկարներ, այս մասին գրվել են գրքեր, կատարվել ուսումնասիրություններ: Երևումներն այնքան նշանակալից են եղել, որ այս իրադարձությունը մտել է Ղպտի Եկեղեցու պաշտոնական տոնացույցի մեջ և հիշատակվում է ամեն տարի:

ԳԼՈՒԽ Ե

ՍՈՒՐԲ ԿՈՒՅՍ ՄԱՐԻԱՄ

1. Բողոքականները չեն մեծարում սուրբ Կույսին, ոչ էլ նրա բարեխոսությանը դիմում: Սա հավանաբար մի հակազդեցություն է կաթոլիկների կողմից Կույսի չափազանցված մեծարմանը: Բողոքականների որոշ խմբավորումներ նույնիսկ հասնում են նրան, որ նմանեցնում են Կույս Մարիամին ձվի կճեպի, որը ճուտիկի դուրս գալուց հետո անպիտան է դառնում: Եվ բնականաբար, նրանք չեն նշում սուրբ Կույսի տոներից և ոչ մեկը:

2. Որոշ բողոքականներ այնքան համարձակ են, որ կոչում են Կույս Մարիամին «մեր քույրը»:

*3. Ավելին, նրանք ասում են, թե Տեր Հիսուսին ծնելուց հետո Կույս Մարիամն ապրեց Հովսեփի հետ իբրև նրա կինը և ծնեց զավակներ, ովքեր հայտնի են իբրև **«Հիսուսի եղբայրներ»** կամ **«Տիրոջ եղբայրներ»**:*

4. Բողոքականները մերժում են նաև Եկեղեցու կողմից Կույսին տրվող որոշ անվանումներ:

*5. Բողոքականների կողմից Կույս Մարիամին չմեծարելը երևում է նրանից, որ Սուրբ Գրքի իրենց թարգմանության մեջ հրեշտակի կողմից նրան տրված **«շնորհով լի»** անունը[34] նրանք փոխարինել են «մեծապես հաճություն գտած» (highly favoured) արտահայտությամբ:*

*6. Նրանք հաճախ Աստծո Մոր, այսինքն՝ Աստվածածնի փոխարեն Կույսին կոչում են **«Հիսուսի մայր»**:*

Սուրբ Կույսի մեծարումը

*Նրան մեծարելու համար մեզ բավական է հիշել նրա հետևյալ խոսքը՝ գրանցված Սուրբ Գրքում. **«Ահա այսուհետև երանի կտան ինձ բոլոր սերունդները»** (Ղուկ. Ա 48): **«Բոլոր սերունդները»** արտահայտությունը նշանակում է, որ Կույսի մեծարումը հավատքի*

[34] Այսպես է հունարեն հայտնի բնագրերում: Գրաբարյան թարգմանության մեջ սրա փոխարեն գործածված է **«գերկրեալդ»** բառը (Ղուկ. Ա 28):

կարևոր մաս է, որը սկսվել է սուրբ Ծննդյան ժամանակից և շարունակվելու է մինչև ժամանակների վախճանը:

Մենք պետք է հիշենք նաև ս. Եղիսաբեթի (ով մոտավորապես ս. Կույսի մոր տարիքին էր) խոսքը՝ ուղղված ս. Կույսին. ***«Որտեղի՞ց ինձ սա, որ իմ Տիրոջ մայրն ինձ մոտ գա: Քանզի ահա երբ ողջույնիդ ձայնն ականջներիս հասավ, ցնծալով խաղաց մանուկս իմ որովայնում»*** *(Ղուկ. Ա 43-44): Որքա՜ն զարմանալի է ս. Կույսի մեծությունը: Ս. Եղիսաբեթը, ս. Մարիամի ողջույնի ձայնը հազիվ լսած, լցվեց Սուրբ Հոգով (Ղուկ. Ա 41). սուրբ Կույսի միայն ձայնը լսելը Եղիսաբեթին Սուրբ Հոգով լցվել տվեց:*

Սուրբ Կույսը պատվվում է ոչ միայն մարդկանց, այլև հրեշտակների կողմից: Սա երևում է Գաբրիել հրեշտակի խոսքից. ***«Ուրախացի՛ր, բերկրյալ, Տերը քեզ հետ է: Օրհնյալ ես դու կանանց մեջ»*** *(Ղուկ. Ա 28):* ***«Օրհնյալ ես դու կանանց մեջ»*** *արտահայտությունը կրկնվում է նաև Եղիսաբեթի ողջույնում: Մենք նկատում ենք նաև, որ հրեշտակը Կույսի հետ խոսում է շատ ավելի մեծարանքով, քան Զաքարիա քահանայի (Ղուկ. Ա 13):*

Սուրբ Գրքի շատ մարգարեություններ են վերաբերում սուրբ Կույսին, ինչպես՝ ***«Թագուհին կկանգնի Քո աջ կողմում»*** *(Սաղմ. Դ 10): Նույն սաղմոսում Աստվածային Ներշնչանքն ասում է նրա մասին.* ***«Թագավորի դստեր ամբողջ փառքը ներսում է»*** *(հմմտ. 14): Ուրեմն նա թագուհի է և թագավորի դուստր: Ուստի Ղպտի Եկեղեցին*[35] *սրբանկարներում պատկերում է նրան իբրև թագակիր թագուհի, Տեր Քրիստոսի (փա՛ռք Նրան) աջ կողմում:*

Եկեղեցին իր երգերում գովաբանում է ս. Կույսին. «Շատ կանայք պատիվ գտան, բայց նրանցից ոչ ոք քո պատիվը չունեցավ»: Այս գովեստը վերցված է Առակաց գրքի ԼԱ գլխի 29-րդ համարից:

Սուրբ Կույսը ներշնչանքի աղբյուր է բոլոր սերունդների համար: Որովհետև նա մեկն է, ում Զավակը կարողացավ ***«փշրել Օձի գլուխը»՝*** *այսպիսով իրականացնելով Աստծո՝ դեպի փրկություն տանող առաջին խոստումը (Ծնն. Գ 15):*

Քանի որ նա Քրիստոսի մայրն է, նրա մայրությունը կրում է նաև Քրիստոսին տրվող բոլոր անունները:

Քանի որ Տեր Քրիստոսը ճշմարիտ լույսն է (Հովհ. Ա 9), ինչպես

[35] Ինչպես նաև երբեմն մնացած բոլոր արևելյան Եկեղեցիները, որոնց թվում և՝ Հայոց Եկեղեցին:

ասաց Ինքն Իր մասին՝ ***«Ես եմ աշխարհի լույսը»*** *(Հովհ. Ը 12), Նրա Մայրը Լույսի կամ ճշմարի՛տ Լույսի մայրն է:*

Քանի որ Տեր Քրիստոսը սուրբ է (Ղուկ. Ա 35), սուրբ Կույսը մայրն է Սուրբի:

Քանի որ Տերը Փրկիչն է, ինչպես ավետվեց հովիվներին. ***«Քանի որ այսօր Դավթի քաղաքում ձեզ համար Փրկիչ ծնվեց, ով օծյալ Տերն է»*** *(Ղուկ. Բ 1), և ինչպես ցույց է տալիս Նրա անունը՝* ***«Հիսուս»****, որ նշանակում է փրկիչ, որովհետև* ***«Նա պիտի փրկի Իր ժողովրդին իրենց մեղքերից»*** *(Մատթ. Ա 21), ուստի սուրբ Կույսը Փրկչի մայրն է:*

Քանի որ Տեր Քրիստոսն Աստված է (Հովհ. Ա 1, Հռոմ. Թ 5, Հովհ. Ի 28), ուստի սուրբ Կույսն Աստվածամայր է:

Քանի որ Քրիստոսը Տերն է, ինչպես ասաց Եղիսաբեթը սուրբ Կույսին. ***«Իմ Տիրոջ մայրը»*** *(Ղուկ. Ա 43), ուստի սուրբ Կույսը Տիրամայր է:*

Այսպես նա կոչվում է նաև Էմմանուելի (Մատթ. Ա 23) և մարմնացյալ Աստծո (Հովհ. Ա 14) մայր:

Ուրեմն, եթե սուրբ Կույսը Քրիստոսի մայրն է, է՛լ առավել հոգևոր մայրն է բոլոր քրիստոնյաների. բավական է հիշել, թե խաչի վրա Տերն ինչ ասաց Տիրամոր մասին ս. Հովհաննեսին. ***«Ահա քո մայրը»*** *(Հովհ. ԺԹ 27): Ուրեմն, եթե նա մայրն է այս առաքյալի, ով մեզ դիմում է* ***«Որդյակնե՛ր իմ»*** *(Ա Հովհ. Բ 1) խոսքով, ապա է՛լ առավել պատշաճում է նրան լինել մայրը մեր բոլորի: Ահա այդ պատճառով էլ «մեր քույրը» տիտղոսն անընդունելի է. որովհետև անտրամաբանական և անարդարացի է, որ սուրբ Կույսը, ով Քրիստոսի մայրն է, լինի Քրիստոսի անվանը հավատացող Նրա զավակներից որևէ մեկի քույրը:*

Ով պատվում է Տեր Քրիստոսի Մորը, պատվում է հենց Իրեն՝ Քրիստոսին: Իմանալով, որ մորը պատվելը ավետիսով (խոստմամբ) պատվիրաններից առաջինն է (Եփես. Զ 2, Ելք Ի 12, Բ Օր. Ե 16), չպիտի՞ պատվենք մեր մայր Կույս Մարիամին՝ Տեր Քրիստոսի և մեր հայր առաքյալների Մորը: Չպիտի՞ պատվենք նրան, ում հրեշտակն ասաց. ***«Սուրբ Հոգին կգա քեզ վրա, և Բարձրյալի զորությունը հովանի կլինի քեզ, քանզի Ով ծնվելու է քեզանից, սուրբ է և Աստծո Որդի կկոչվի»*** *(Ղուկ. Ա 35), և ում ս. Եղիսաբեթը գովաբա-*

*նեց՝ ասելով. **«Երանի՜ նրան, որ հավատում է, որովհետև կատարվելու են Տիրոջից նրան ասվածները»** (Ղուկ. Ա 45)[36], նրան, ում բոլոր սերունդներն **«օրհնյալ»** են կոչում:*

Գաբրիել հրեշտակի և Եղիսաբեթի կողմից սուրբ Կույսին ուղղված «Օրհնյալ ես դու կանանց մեջ» խոսքը նշանակում է, որ եթե սուրբ Մարիամին համեմատելու լինենք աշխարհի բոլոր կանանց հետ, նա կլինի միակ օրհնյալը, որովհետև նրանցից ոչ ոք չընդունեց այնպիսի փառք, ինչպիսին ընդունեց նա Աստծո մարդացմամբ: Կասկած չկա, որ Աստված նրան ընտրեց աշխարհի բոլոր կանանց միջից նրա այն հատկությունների համար, որոնք նրանցից և ոչ ոք չուներ:

*Այս ամենը ցույց է տալիս սուրբ Կույսի մեծությունն ու անհամեմատելի պատիվը, ուստիև Եսայի մարգարեն, Եգիպտոս նրա գալստյան մասին մարգարեանալիս, նրան կոչում է **«թեթև ամպ»** (Ես. ԺԹ 1):*

<u>Սուրբ Կույսին տրվող անունները</u>

*Քանի որ մարդանալիս Աստված բնակվեց նրանում, Եկեղեցին նրան կոչում է «Երկրորդ երկինք», «Տապանակ» կամ «Մովսեսի խորան»: Այլև նույն պատճառով Եկեղեցին նրան կոչում է «Աստծո քաղաք» կամ «Սիոն», ինչպես սաղմոսն է ասում. **«Փառավորյալը խոսեց քո մասին, ո՛վ դու քաղաք Աստծո: ....Սիոնը մայր է կոչվում, և նրանում Մարդ ծնվեց, և Բարձրյալն Ինքը նրանում հիմքեր դրեց»** (Սաղմ. ՁՁ 3, 5):*

Քանի որ Տեր Քրիստոսն Իրեն կոչեց Մանանա՝ լինելով կենդանի Հացը, որ իջավ երկնքից (Հովհ. Զ 58), Եկեղեցին սուրբ Կույսին կոչում է «Մանանայի սափոր»:

*Նրա կուսությունը ցույց տալու համար Եկեղեցին նրան կոչում է **«Ահարոնի գավազան», որը ծաղկեց»** (Թվեր ԺԷ 18):*

*Քանի որ նա կրեց Տեր Հիսուս Քրիստոսին՝ ճշմարիտ Լույսին, կոչվում է **«Ոսկյա աշտանակ»** (Ելք Իե 31-40):*

Ցույց տալու համար Կույսի մաքրությունն ու մեծությունը՝

[36] Այսպես է հունարեն հայտնի բնագրերում, իսկ ըստ գրաբարյան թարգմանության՝ այս խոսքը փոքր-ինչ այլ իմաստ ունի. **«Երանի՜ նրան, ով հավատում է, թե կատարվելու են Տիրոջից նրան ասվածները»**:

*Եկեղեցին նրան կոչում է **«Ուխտի տապանակ»** (Ելք Իե 10-22), որը դրսից ու ներսից ոսկով էր պատված: Այլև՝ տապանակը պատրաստված էր ակացիայի փայտից, որն անփուտ է, և սա խորհրդանշում է նրա ողջախոհությունը: Տապանակում էին պահվում մանանան՝ խորհրդանիշը Տեր Քրիստոսի՝ կենդանի Հացի, որն իջավ երկնքից, և Օրենքի երկու տախտակները, որ դարձյալ խորհրդանշում են Տիրոջը՝ Աստծո Խոսքին (Հովհ. Ա 1):*

Սուրբ Կույսը համեմատվում է Հակոբի սանդուղքի հետ, որը Հակոբը տեսավ երկրից դեպի երկինք ձգված (Ծննդ. ԻԸ 12), որովհետև երբ սուրբ Կույսը ծնեց Տիրոջը, նրա մեջ երկիրն ու երկինքը միացան: Նա երկիրն էր, ուր երկինքը բնակվեց, կամ ավելի ճիշտ՝ նա երկրի վրա իր մեջ կրում էր երկինքը:

Կրակով բռնված, սակայն չայրվող մորենին, որը Մովսեսը տեսավ, նույնպես սուրբ Կույսի խորհրդանիշներից է (Ելք Գ), քանի որ Սուրբ Հոգին աստվածության կրակով իջավ նրա վրա, սակայն նա չայրվեց:

Քանի որ Տեր Քրիստոսի մեջ աստվածության և մարդկության միությունը նմանեցվում է քարածխի և կրակի միությանը, ապա սուրբ Կույս Մարիամը, ով կրեց իր մեջ այս միությունը, համեմատվում է բուրվառի հետ: Իր վեհության պատճառով Նա կոչվում է «Ոսկյա բուրվառ» կամ «Ահարոնի բուրվառ»:

Եկեղեցին սուրբ Կույսին կոչում է «Բարի աղավնի», որովհետև իր պարզությամբ նա նման է աղավնու, այլև որովհետև նրա վրա իջավ Սուրբ Հոգին, ով հայտնվեց աղավնու տեսքով (Մատթ. Գ 16):

Նա նմանեցվում է նաև Նոյի աղավնուն, ով բերեց Նոյին փրկության և երկրի վրա կյանքի վերադարձի ավետիսը:

Նրան նույնիսկ «Եկեղեցի» անունն է տրվում, և որոշ մարգարեություններ վերաբերում են թե՛ Եկեղեցուն, թե՛ նրան:

Սուրբ Գրքում և Եկեղեցու պաշտամունքային գրվածքներում անչափ շատ են սուրբ Կույսին վերաբերող համեմատություններն ու խորհրդանիշները, սակայն ժամանակը թույլ չի տալիս, որ բոլորը նշենք:

Մենք կարող ենք եզրակացնել, որ Եկեղեցին սուրբ Կույսին մեծարում է, որովհետև Սուրբ Հոգին իջավ նրա վրա, որովհետև նա Աստծո մայրն է, որովհետև միշտ կույս մնաց և սուրբ է, որովհետև Սուրբ Գիրքը վկայում է նրա մասին և Տերն Ինքը պատվեց նրան,

այլև որովհետև նրա միջոցով հրաշքներ և տեսիլքներ են տեղի ունենում:

Այս մեծարումը ներկայացվում է Եկեղեցու պաշտամունքում, սուրբ Կույսին նվիրված երգերում, նրան ուղղված բարեխոսությամբ, մեր աղոթքներով, նրան նվիրված տոների նշմամբ և նրա անունը կրող պահքով:

Սուրբ Կույսի տոները (Ղպտի Եկեղեցում)[37]

ա) Նրա ննջումը (Տուբա[38] ամսի 21-րդ օրը և ղպտական յուրաքանչյուր ամսվա 21-րդ օրը).
բ) Նրա ծնունդը (Բաշանսի 1).
գ) Նրա ծննդյան ավետումը (Միսրայի 7).
դ) Տաճարին նրա ընծայումը (Քիահկի 3).
ե) Նրա գալուստը Եգիպտոս (Բաշանսի 24).
զ) Նրա վերափոխումը (Միսրայի 16).
է) Փիլիպպեում նրա անունով եկեղեցու օծումը (Բաոնայի 21)
ը) Կահիրեի Զեյթուն արվարձանի եկեղեցում Տիրամոր երևումների հիշատակությունը (Բարամհաթի 24, ապրիլի 2): Այս տոնը վերջին տարիներին է ավելացել Ղպտի տոնացույցում[39]:

37 ՍՈՒՐԲ ԿՈՒՅՍԻ ՏՈՆԵՐԸ Հայոց Եկեղեցում
ա) Ավետում (ապրիլի 7)
բ) Աստվածածնի տուփի հայտնաբերումը (Հոգեգալստյան տոնին հաջորդող հինգերորդ կիրակին)
գ) Վերափոխում (օգոստոսի 15-ի մերձակա կիրակին)
դ) Աստվածածնի գոտու հայտնաբերումը (Վերափոխման տոնին հաջորդող չորրորդ կիրակին)
ե) Ս. Կույսի ծնունդը (սեպտեմբերի 8)
զ) Աստվածածնի ընծայումը (նոյեմբերի 21)
է) Աննայից ս. Աստվածածնի հղացվելը (դեկտեմբերի 9)

38 Ղպտի Եկեղեցին առայսօր առաջնորդվում է ղպտական Մարտիրոսաց օրացույցով: Այստեղ ներկայացված ամիսները համապատասխանում են գրիգորյան տոմարի հետևյալ ժամանակահատվածներին. տուբա՝ հունվ. 9/10 -փետ. 7/8, բաշանս՝ մայ. 9 - հունիս 7, միսրա՝ օգոստ. 7 - սեպտ. 5, քիահկ՝ դեկտ. 10/11 - հունվ. 8/9, բաոնա՝ հունիս 8 - հուլ. 7, բարամհաթ՝ մարտ 10/11 - ապր. 8:

39 Այս մասին տես գլուխ Դ, վերջին ծանոթագրությունը:

ՀԱՐՑԵՐ[40]

ա) Ինչպե՞ս կարող ենք սուրբ Կույսին կոչել «որթատունկ» երրորդ ժամի աղոթքում[41]՝ ասելով. «Աստվածածի՛ն, դու ես ճշմարիտ որթատունկը, որ ծնեցիր Կյանքի Պտղին», եթե Տեր Քրիստոսն Ինքն է որթատունկը, ինչպես և ասաց հայտնապես. ***«Ես ճշմարիտ Որթատունկ եմ, և Իմ Հայրը մշակ է: ...Ես որթատունկ եմ, իսկ դուք՝ ճյուղերը»*** *(Հովհ. ԺԵ 1, 5):*
բ) Ինչպե՞ս կարող ենք Գիշերային աղոթքի երրորդ պահի[42] աղոթքում սուրբ Կույսին կոչել «Կյանքի դուռ», եթե Տեր Քրիստոսն Ինքն է դուռը, ինչպես ասաց Իր մասին. ***«Ես եմ ոչխարների դուռը»*** *(Հովհ. Ժ 7):*

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Սուրբ Կույսը «որթատունկ» է:

Հակասություն չկա նրանում, որ «որթատունկ» ենք կոչում թե՛ ս. Կույսին, թե՛ Տեր Քրիստոսին: Տերը որթատունկ է մի իմաստով, իսկ սուրբ Կույսը՝ մեկ ուրիշ: Քրիստոսը որթատունկ է մե՛զ համար, որ Նրա ճյուղերն ենք, որովհետև Նա Սկիզբն է, և մենք Նրանից ենք սկզբնավորվում, Նա Գլուխն է, իսկ մենք՝ անդամները: Իսկ սուրբ Կույսը, ըստ եկեղեցական երգերի, «Նա է, ով ծնեց Կյանքի Պտղին՝ Աստծո ճշմարիտ Որդուն», «այն որթատունկն է, որ երբեք չծերացավ և ոչ ոքի կողմից չմշակվեց»:
Այստեղ կամենում ենք մի կարևոր նշում կատարել:
Տեր Հիսուս Քրիստոսն Իր որոշ անուններ տվել է մեզ:

40 Թեև բերվող հարցերի օրինակներն ու դրանց հետևող պատասխաններն առնչվում են Ղպտի Եկեղեցու ծեսի հետ, սակայն ուսանելի են նաև հայ ընթերցողի համար, քանի որ Տիրամորը տրվող շատ անուններ, որ ներկայացված են այստեղ, կարելի է հանդիպել նաև հայոց շարականներում (օրինակ՝ Անկիզելի մորենի, Լույսի խորան, Կենդանի տապանակ, Հովանավոր ամպ, Թեթև ամպ, Վայելուչ այգի, Կյանքի ծառ, Ոսկեղեն սափոր, Մաքուր աղավնի, Բանական երկիր, Վիմածին լեռ, Աստվածային դուռ և այլն):

41 Խոսքը Ղպտի Եկեղեցու ժամագրքի երրորդ ժամի աղոթքի մասին է:

42 Ղպտի Եկեղեցում Գիշերային ժամերգությունը բաղկացած է երեք առանձին ժամերգություններից՝ «պահերից»:

*ա) Տերն Իր մասին ասում է. **«Ես եմ ճշմարիտ Հովիվը»** (Հովհ. Ժ 11, 14), Դավիթն էլ է Տիրոջը նույն անունով կոչում իր սաղմոսում. **«Տերն իմ Հովիվն է»** (Սաղմ. ԻԲ 1): Եզեկիելի գրքում նույնպես Տերն իբրև հովիվ է ներկայացվում (Եզեկ. ԼԴ 11-16): Բայցևայնպես, Տերն Իր որդիներից ոմանց կարգում է հովիվներ և կամենում, որ ամբողջ Եկեղեցին լինի իբրև **«մեկ հոտ և մեկ հովիվ»** (Հովհ. Ժ 16): Նա Պետրոս առաքյալին ասում է. **«Արածեցրո՛ւ Իմ գառներին: ....Արածեցրո՛ւ Իմ ոչխարներին»** (Հովհ. ԻԱ 15, 16): Հին Կտակարանում Տերն ասում է. **«Ես ձեզ կտամ Իմ սրտի համաձայն հովիվներ»** (Երեմ. Գ 15): «Հովիվ»-ը դարձավ առաքյալներին հաջորդած եպիսկոպոսների անունը՝ «հովվելու համար Տիրոջ ժողովրդին, որին Նա գնեց Իր արյամբ» (Գործք Ի 28), ինչպես ս. Պետրոսն է ասում. **«Արածեցրե՛ք Աստծո՝ ձեր մեջ եղած հոտը՝ իբրև վերակացուներ»** (Ա Պետ. Ե 2):*

*բ) Տեր Հիսուս Քրիստոսն Իրեն **«Լույս»** է կոչում՝ ասելով. **«Ես եմ աշխարհի Լույսը»** (Հովհ. Ը 12), սակայն Նա ասում է նաև Իր աշակերտներին. **«Դուք եք աշխարհի լույսը»** և՝ **«Թող ձեր լույսն այնպես փայլի մարդկանց առաջ....»** (Մատթ. Ե 14, 16):*

Կասկած չկա, Տերն է անսահման Լույսը: Նա է Լույսը, որովհետև Նրա աշակերտներն իրենց լույսը Նրանից են վերցնում և Նրա լույսով փայլում ուրիշների առաջ: Այդպես էլ, Նա է Հովիվը դրա լիակատար իմաստով, իսկ Նրա աշակերտները հովիվներ են, որովհետև Աստծո սպասավորներն են, ովքեր Նրանից իշխանություն են ստացել հովվելու Նրա հոտը:

*գ) Տեր Հիսուս Քրիստոսը կոչվում է **«Եպիսկոպոս»**[43], այսինքն՝ Տեսուչ. **«Ձեր հոգիների Հովիվն ու Տեսուչը»** (Ա Պետ. Բ 25): Այնուամենայնիվ, առաքյալների հաջորդները Սուրբ Հոգով կարգվեցին եպիսկոպոս (Գործք Ի 28, Փիլ. Ա 1, Ա Տիմ. Գ 2, Տիտ. Ա 7):*

*դ) Տեր Հիսուս Քրիստոսը կոչվում է **«Քահանա»**. **«Հավիտյան Քահանա՝ ըստ Մելքիսեդեկի կարգի»** (Սաղմ. ՃԹ 4, Եբր. Ե 6): Սակայն Սուրբ Գրքում բազմաթիվ համարներ կան քահանայապետի և քահանաների մասին, ովքեր իրենց սերունդների մեջ Աստծուց հավիտենական քահանայություն են ստացել (Ելք Խ 15): Հին Կտակարանում նրանց մասին ասվում է. **«Թող Քո քահանաներն արդարություն հագնեն»** (Սաղմ. ՃԼԱ 9,16): Նրանք սրբագործված էին*

[43] Սա հունարեն բառ է, որը նշանակում է «տեսուչ»:

*(Ղևտ. Ը 12), և նրանց տրվել էին սուրբ պատմուճաններ փառքի և վայելչության համար (Ելք ԻԸ 2): Նոր Կտակարանում էլ ս. Պողոսն իրեն **«քահանա»** է կոչում (Հռոմ. ԺԵ 16)[44]:*

Տեր Հիսուսը քահանա է այն իմաստով, որ Իրեն զոհ մատուցեց մեր փոխարեն, մինչդեռ մարդկանց մեջ եղած քահանաներն Աստծո խորհուրդների սպասավորներ են. նրանք մատուցում են Տեր Քրիստոսի զոհը (պատարագը) Նոր Ուխտում և դրա խորհրդանիշ-օրինակները՝ Հնում:

*ե) Տեր Հիսուս Քրիստոսն Աստծո Որդին է (Ա Հովհ. Դ 14), և մենք նույնպես **«Աստծո որդիներ»** ենք կոչվում (Ա Հովհ. Գ 1): Սակայն Տեր Քրիստոսն Աստծո Որդին է էությամբ, բնությամբ և աստվածությամբ, իսկ մենք՝ սիրո և որդեգրության շնորհիվ: Այդ պատճառով էլ Տեր Հիսուս Քրիստոսը կոչվում է **«Միածին Որդի»** (Հովհ. Գ 16):*

*Նույնը վերաբերում է **«Որթատունկ»** անվանը:*

*Տեր Քրիստոսն է Որթատունկը, սակայն ամբողջ Եկեղեցին նույնպես կոչվում է **«որթատունկ»** կամ **«այգի»**, ինչպես Եսայու գրքում Տերը Եկեղեցու մասին ասում է. **«....դա՛տ արեք Իմ և Իմ այգու միջև: Ի՞նչ էր պետք անել Իմ այգու համար և չարեցի. սպասեցի, որ խաղող բերի, և փուշ բերեց: ....Որովհետև Զորությունների Տիրոջ այգին Իսրայելի տունն է»** (Ես. Ե 1-7):*

Նույն կերպ է մեկնվում նաև այգու և նրա մշակների առակը՝ պատմված Տիրոջ կողմից (Մատթ. ԻԱ 33-41): Այս առակում այգին Եկեղեցին է, մշակները՝ հոգևոր հովիվները, իսկ Աստված այգու տերն է:

*Մենք Եկեղեցին կոչում ենք **«այգի»** նաև համաձայն սաղմոսներում արտահայտված աստվածային ներշնչանքի. որովհետև Տիրոջն ասում ենք. **«Աստվա՛ծ զորությունների, դարձի՛ր, երկնքից նայիր և տե՛ս, Այցելի՛ր այս այգին, որ տնկվեց Քո աջով»** (Սաղմ. ՀԹ 15-16):*

*Ուրեմն, ի՞նչ է՝ մենք գողանում ենք Աստծո փա՞ռքը, երբ Եկեղեցին ներկայացնում ենք իբրև որթատունկ, եթե Տեր Քրիստոսն Ինքն Իրեն է այդպես կոչում: Նրա փա՞ռքն ենք գողանում, երբ ժողովրդին **«այգի»** ենք կոչում, թեև Սուրբ Գիրքն ինքն է այդպես սովորեցնում: Թե՞ սա պարզապես փափագ է գրոհելու*

[44] Այս համարում ս. Պողոսն ուղղակիորեն իրեն չի կոչում քահանա, սակայն այս թղթի հունարեն բնագրում և որոշ այլալեզու թարգմանություններում (օրինակ՝ ռուսերեն) նախադասությունն այնպիսին է, որ տալիս է դրա իմաստը: Գրաբարյան թարգմանության մեջ այս իմաստը բացակայում է:

Եկեղեցու վրա, ում մասին Սուրբ Գիրքն ասում է. **«Երգե՛ք նրան՝ գինու այգուն: Ես՝ Տերս եմ պահում այն: Ես ջրում եմ այն ամեն վայրկյան»** (Ես. ԻԷ 2-3)[45]:

«Որթատունկ» անունը նույնիսկ տրվում է ամեն օրհնված կնոջ, ինչպես սաղմոսն է ասում. **«Քո կինը կլինի որպես պտղաբեր որթատունկ[46] քո տան անկյունում»** (Սաղմ. ՃԻԷ 3):

Հետևաբար, տարօրինակ չպիտի լինի սուրբ Կույսին **«որթատունկ»** կոչելը:

Սուրբ Կույսը Կյանքի դուռն է:

Սուրբ Գրքում սուրբ Կույսը կոչվում է **«դուռ»**: Եզեկիելի գրքում գրված է, որ նա դեպի արևելք նայող այն դուռն է, որով Փառքի Տերը մտավ և դուրս եկավ (Եզեկ. ԽԴ 2):

Քանի որ Տերը կյանքն է, ինչպես Ինքն ասաց. **«Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը»** (Հովհ. ԺԴ 6), և՝ **«Եմ եմ հարությունը և կյանքը»** (Հովհ. ԺԱ 25), իսկ սուրբ Կույսն էլ այն դուռն է, որով Տերը եկավ, հետևաբար սուրբ Կույսը Կյանքի դուռն է:

Նույնը կարելի է ասել նաև նրա մեկ ուրիշ՝ **«Փրկության դուռ»** անվան մասին, որովհետև Տերը փրկությունն է, Նա եկավ իբրև աշխարհի փրկություն՝ **«փրկելու կորածին»** (Ղուկ. ԺԹ 10):

Տարօրինակ չէ սուրբ Կույսին **«դուռ»** կոչելը: Որովհետև Եկեղեցին նույնպես հին ժամանակներից ի վեր կոչվում է **«դուռ»**: Մեր հայր Հակոբն իր օծած սուրբ տեղը եկեղեցի կոչեց՝ նրան տալով **«Բեթել»** անունը, այսինքն՝ **«Աստծո տուն»**: Ասաց. **«Ահարկու է այս վայրը. սա ուրիշ բան չէ, քան Աստծո տուն, և սա երկնքի դուռն է»** (Ծննդ. ԻԸ 17):

ՀԱՐՑ: <u>Արդյոք աղոթո՞ւմ ենք սուրբ Կույսին:</u>

ՊԱՏԱՍԽԱՆ: Մենք չենք աղոթում նրան, այլ աղոթելիս խոսում ենք նրա հետ. մենք աղաչում ենք նրան բարեխոսել մեզ համար: Մենք միայն սուրբ Կույսին չենք դիմում, այլև հրեշտակներին, բնությանը, մարդկանց, ինքներս մեզ և նույնիսկ դևերին: Այս ամենը մենք անում ենք Աստվածային Ներշնչանքով գրված Սուրբ

[45] Դրված է ըստ եբրայական բնագրի:

[46] Ըստ գրաբարյան թարգմանության՝ **«վայելուչ այգի»**:

Գրքի համաձայն, և սա աղոթք չի համարվում: Ուստի ինչո՞ւ պիտի բացառենք մասնավորապես մեր մայր սուրբ Կույսի հետ նման խոսակցումը:

ա) Մեր աղոթքներում մենք դիմում ենք հրեշտակներին.

«Օրհնե՛ք Տիրոջը, Նրա բոլո՛ր հրեշտակներ, զորությամբ հզոր, որ կատարում եք Նրա խոսքը, երբ լսում եք Նրա պատգամի ձայնը» (Սաղմ. ՃԲ 20):

«Օրհնե՛ք Տիրոջը երկնքից, օրհնե՛ք Նրան բարձունքներից: Օրհնե՛ք Նրան, նրա բոլո՛ր հրեշտակներ, օրհնե՛ք Նրան, Նրա բոլո՛ր զորություններ» (Սաղմ. ՃԸ 1-2):

բ) Մեր աղոթքներում մենք դիմում ենք նաև բնությանը.

«Օրհնե՛ք Նրան, արեգա՛կ և լուսին, օրհնե՛ք Նրան, բոլոր աստղե՛ր և լույս: Օրհնե՛ք Նրան, երկինքների երկինքներ և երկնքից վեր գտնվող ջրե՛ր: Օրհնե՛ք Տիրոջ անունը, որովհետև Նա ասաց, և եղան, հրամայեց, և ստեղծվեցին.... Օրհնե՛ք Տիրոջը երկրից, վիշապնե՛ր և բոլոր խորքեր, կրակ ու կարկուտ, ձյուն և սառույց, քամի և մրրիկ, որ կատարում եք Նրա խոսքը: Լեռներ և բոլո՛ր բլուրներ, պտղաբեր ծառեր և բոլոր մայրիներ....» (Սաղմ. ՃԸ 3-9):

գ) Մենք դիմում ենք Աստծո սուրբ Քաղաքին՝ խնդրելով գովել Տիրոջը. **«Գովի՛ր Տիրոջը, Երուսաղե՛մ, և օրհնի՛ր քո Աստծուն, Սիո՛ն: Որովհետև զորացրեց քո դռների նիգերը և օրհնեց որդիներիդ քո մեջ»** (Սաղմ. ՃԷ 12-13): Մեկ ուրիշ սաղմոսում մենք ասում ենք. **«Փառավորյալը խոսեց քո մասին, ո՛վ դու քաղաք Աստծո»** (Սաղմ. ՁՁ 3):

դ) Մեր աղոթքներում մենք դիմում ենք մարդկանց՝ ասելով.

«Ծափահարե՛ք, բոլո՛ր ժողովուրդներ, աղաղակե՛ք առ Աստված ցնծալից ձայնով» (Սաղմ. ԽՁ 1):

«Եկեք տեսե՛ք Աստծո գործերը, որ նշաններ ու հրաշքներ գործեց երկրում» (Սաղմ. Ե 8):

«Ձեր հույսը մի՛ դրեք իշխանների՝ մարդկանց որդիների վրա, որովհետև փրկություն չկա նրանց ձեռքով» (ՃԽՁ 3):

«Օրհնե՛ք Տիրոջը, Նրա բոլո՛ր գործեր, Նրա տերության բոլոր վայրերում» (Սաղմ. ՃԲ 22):

«Օրհնե՛ք Տիրոջը, մանուկնե՛ր, և օրհնե՛ք Տիրոջ անունը» (Սաղմ. ՃԺԲ 1):

«Մատուցեք Տիրոջը, Աստծո՛ որդիներ, մատուցեք Տիրոջը խոյի որդիներ, մատուցեք Տիրոջը փառք և պատիվ: Փա՛ռք տվեք Տիրոջ անվանը և երկրպագե՛ք Տիրոջը Նրա սուրբ սրահում» *(Սաղմ. ԻԸ 1-2):*

ե) Մարդ կարող է և ինքն իրեն դիմել իր աղոթքում.

«Օրհնի՛ր Տիրոջը, հոգի՛ իմ, և իմ բոլո՛ր ոսկրեր, Նրա սուրբ անունը: Օրհնի՛ր Տիրոջը, հոգի՛ իմ, և մի՛ մոռացիր Նրա բոլոր պարգևները: Ով քավում է քո մեղքերը, բուժում քո բոլոր հիվանդությունները: Ով քո կյանքը փրկում է ապականությունից....» *(Սաղմ. ՃԲ 1-5):*

«Արդ ինչո՞ւ ես տրտում, հոգի՛ իմ, կամ ինչո՞ւ ես ինձ խռովեցնում: Հուսա՛ առ Աստված» *(Սաղմ. Ա 5):*

Ղպտի Եկեղեցու Գիշերային աղոթքի ժամանակ էլ աղոթողը դիմում է իրեն՝ ասելով. «Ապաշխարի՛ր, հոգի՛ իմ, քանի դեռ ապրում ես երկրի վրա»:

զ) Մեր աղոթքներում մենք դիմում ենք նույնիսկ դևերին և նրանց զորություններին.

«Հեռացե՛ք ինձանից ամենքդ, որ անօրենություն եք գործում: Տերը լսեց իմ լացի ձայնը, Տերը լսեց իմ աղոթքը և Տերն ընդունեց իմ խնդրանքները: Թող ամաչեն և հույժ խռովվեն իմ բոլոր թշնամիները, թող հետ դառնան, ամաչեն արագապես և խռովվեն» *(Սաղմ. Զ 8-10):*

Ուրեմն այսպես վարվելով՝ մենք աղոթո՞ւմ ենք սրանց բոլորին՝ հրեշտակներին, բնությանը, մարդկանց, ինքներս մեզ և դևերին: Քա՛վ լիցի: Մենք միայն խոսում ենք նրանց հետ մեր աղոթքներում, և սա ընդունելի է:

Սա Աստվածաշունչն է մեզ սովորեցնում՝ սաղմոսների հոգին: Այս մասին ս. Պողոս առաքյալն ասում է. ***«Երբ մի վայրում հավաքվում եք, ձեզանից յուրաքանչյուրը, թե սաղմոս ունի....»*** *(Ա Կոր. ԺԴ 26): «Ձեր սրտում խոսելու սաղմոսներով, օրհնություններով և հոգևոր երգերով, ձեր սրտում երգելու և սաղմոսելու Տիրոջը» (Եփես. Ե 19):* ***«....միմյանց սովորեցնելու և խրատելու՝ սաղմոսներով, օրհնություններով և հոգևոր երգերով»*** *(Կող. Գ 16): Քանի որ համաձայն Աստվածային Ներշնչանքի վարդապետության՝ մենք մեր աղոթքներում դիմում ենք բոլոր սրանց, նշանակում է՝ սխալ չէ, երբ մեր աղոթքներում խոսակցում ենք մեր մայր Կույսի հետ, և սա չպիտի համարվի նրան ուղղված աղոթք:*

ՍՈՒՐԲ ԿՈՒՅՍԻ ՄՇՏՆՋԵՆԱԿԱՆ ԿՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

Սուրբ Կույսի մշտնջենական կուսությունը (մշտակուսությունը) մի շատ հին հարց է, որը Եկեղեցու հայրերը քննարկում էին երկրորդ և երրորդ, ինչպես նաև չորրորդ և հինգերորդ դարերում:

Հիշում եմ, 1962-ին թարգմանեցի Հերոնիմոսի մի գործը՝ գրված 383-ին, ուր նա ընդդեմ Հելվիդիոս կոչվող մեկի սխալ տեսության պաշտպանում է ս. Կույսի մշտակուսությունը: Արդի բողոքական բոլոր հայացքներն այս նյութի մասին հիմնված են Հելվիդիոսի տեսության վրա:

Սուրբգրային այն խոսքերը, որոնց վրա են հիմնվում սուրբ Կույսի մշտակուսությունը մերժողները

ա) ***«Նրա անդրանիկ որդին»*** *խոսքը (Ղուկ. Բ 7, Մատթ. Ա 25), որի* ***«անդրանիկ»-ը*** *բողոքականները հասկանում են իբրև առաջին՝ ուրիշ զավակների մեջ:*

բ) Ս. Կույսի մասին Հովսեփին ասված ***«քո կինը»*** *արտահայտությունը (Մատթ. Ա 20) և ընդհանրապես «կին» բառի գործածությունը, երբ խոսվում է սուրբ Կույսի մասին:*

գ) ***«Զգիտեր նրան, մինչև նա ծնեց իր անդրանիկ Որդուն»*** *(Մատթ. Ա 25) և* ***«Նախքան նրանց՝ իրար մերձենալը պարզվեց, որ հղի է Սուրբ Հոգով»*** *(Մատթ. Ա 18) խոսքերը:*

դ) Այն համարները, որոնք նշում են ***«Նրա եղբայրներին»****, այսինքն՝ Տեր Քրիստոսի եղբայրներին, ինչպես՝ Մատթ. ԺԲ 46, ԺԳ 54-56, Մարկ. Զ 1-3, Հովհ. Բ 12, Գործք Ա 14, Գաղ. Ա 19:*

Այժմ Աստծո օգնությամբ կպատասխանենք այս բոլորին:

«Նրա անդրանիկ Որդին»

«Սուրբ Գիրքը» հստակորեն ցույց է տալիս ***«անդրանիկ»*** *բառի նշանակությունը: Նախքան ահարոնյան քահանայության հաստատումը Աստվածային Ներշնչանքն ասում է.* ***«Սրբագործիր դու Ինձ համար ամեն անդրանիկ ծնունդ, որ բացում է ամեն արգանդ Իսրայելի որդիների մեջ, մարդուց մինչև անասուն, քանզի այն Իմն է»*** *(Ելք ԺԳ 2):*

Արգանդ բացող ամեն արու զավակ նվիրվում էր Աստծուն, անկախ նրանից, թե ուրիշը ծնվում էր նրանից հետո, թե ոչ: Անշուշտ, ծնողները չպիտի սպասեին, մինչև ծնեին եղբայր նրա

համար (որով և նա անդրանիկ էր դառնում), որպեսզի նրան նվիրեին Աստծուն, ոչ էլ անասուն պահողներն անդրանիկ արու կենդանու ծնվելուց հետո պիտի սպասեին, որ նրանից հետո մի ուրիշն էլ ծնվեր, որ առաջինին նվիրեին Աստծուն:

Ընդհակառակը՝ անդրանկի ծնվելու պահից իսկ նա նվիրվում էր Տիրոջը, ոչ թե որ նա եղբայրների մեջ առաջինն էր, այլ որ բացել էր մոր արգանդը: Հետևաբար, հնարավոր էր նաև, որ անդրանիկը լիներ ծնողների միակ զավակը:

Ուստի Տեր Քրիստոսն անդրանիկ և միածին Որդին էր: Եվ Հերոնիմոսն իրավացի է, երբ ասում է, որ ամեն միակ որդի անդրանիկ որդին է, սակայն ոչ ամեն անդրանիկ միակ որդին է: **«Անդրանիկ»** բառը վերաբերում է ոչ թե այն անձին, ով իրենից հետո ծնված եղբայրներ ունի, այլ ով իրենից առաջ ծնված ոչ ոքի չունի:

Անմաքուր կենդանիների առաջին ծնունդներին կարող էին փրկել, երբ մեկամսական էին, իսկ սուրբ կենդանիների առաջին ծնունդներն իբրև զոհ էին մատուցում Տիրոջը (Թվեր ԺԸ 16-17), առանց սպասելու ուրիշ ձագերի ծնվելուն: Նրանք անդրանիկ էին, եթե նույնիսկ նրանցից հետո ուրիշը չէր ծնվում:

Այդպես և Տեր Քրիստոսն էր սուրբ Կույսի անդրանիկը, և Նրա ծննդից քառասուն օր հետո (ծննդաբերությունից հետո Կույսի մաքրման օրը) զոհ մատուցվեց Նրա համար, ինչպես Սուրբ Գիրքն է վկայում. **«Երբ նրա**[47] **սրբագործման օրերը լրացան Մովսեսի Օրենքի համաձայն, Նրան Երուսաղեմ տարան՝ Տիրոջը ներկայացնելու համար, ինչպես գրված էր Տիրոջ Օրենքում. «Ամեն արու զավակ, որ արգանդ է բացում, Տիրոջ համար սուրբ պիտի կոչվի»: Եվ Տիրոջ Օրենքում ասվածի համաձայն՝ ընծա պետք է տալ մի զույգ տատրակ կամ աղավնու երկու ձագ»** (Ղուկ. Բ 22-24):

Այստեղից երևում է, որ անդրանկի այս օրենքը Տեր Քրիստոսի համար գործադրվել է Նրա ծննդից հետո քառասներորդ օրը, և իհարկե այստեղ ոչ մի կապ չկա անդրանիկ ծնունդի և նրանից հետո այլ եղբայրների ծննդյան միջև:

Այս առնչությամբ Հերոնիմոսը հարցնում է. երբ Տերը հարվածեց եգիպտացիների բոլոր անդրանիկներին, Նա հարվածեց միայն նրանց, ովքեր եղբայրնե՞ր ունեին, թե՞ ամեն անդրանկի, որ բացել

47 Ըստ գրաբարյան թարգմանության՝ «նրանց» («նոցա»)՝ «նրա»-ի փոխարեն:

էր իր մոր արգանդը, անկախ նրանից՝ եղբայրներ ուներ, թե ոչ:

«Քո կինը»

«Կին» բառով կոչում էին ցանկացած նշանված կնոջ՝ անմիջապես նշանադրությունից հետո: Հովսեփին հրեշտակի ասած **«Մի՛ վախեցիր քեզ մոտ վերցնելու քո կին Մարիամին, որովհետև նրանում հղացվածը Սուրբ Հոգուց է»** (Մատթ. Ա 20) խոսքը մեկնելիս ս. Հովհան Ոսկեբերանն[48] ասում է. «Այստեղ հրեշտակը նշանվածին կոչում է **«կին»**, ինչպես Սուրբ Գիրքը նշանված զույգին նախքան ամուսնությունը կոչում էր «այր և կին»»: Ս. Հովհանը նաև ասում է. «Ի՞նչ է նշանակում **«վերցրու նրան քեզ մոտ»** արտահայտությունը: Նշանակում է՝ պահիր նրան քո տանը.... իբրև Աստծուց և ոչ թե նրա ծնողներից քեզ հանձնվածի: Նա քեզ է հանձնվել ոչ թե նրա հետ ամուսնության համար, այլ թույլ տալու, որ նա ապրի քեզ հետ, ինչպես Տեր Քրիստոսն Ինքը հետագայում հանձնեց նրան Իր աշակերտ Հովհաննեսին» (Մատթեոսի Ավետարանի մեկնություն, Ճառ Դ, հատված 11): Հերոնիմոսը նույնպես ասում է, որ **«կին»** էին կոչվում նաև նշանված օրիորդները:

Սա հստակ երևում է հետևյալ խոսքերից. **«Եթե մի կույս աղջիկ նշանված լինի տղամարդու հետ և նրան քաղաքում գտնի մի մարդ ու ննջի նրա հետ, երկուսին էլ հանեք նրանց քաղաքի դուռը, քարկոծեք նրանց, և թող մեռնեն: Աղջկան՝ որովհետև քաղաքում չաղաղակեց, իսկ տղամարդուն՝ որ լկեց իր ընկերոջ կնոջը»** (Բ Օր. ԻԲ 23-24): Եվ՝ **«Այն մարդը, ով նշանվել է կնոջ հետ և դեռ չի ամուսնացել....»** (Բ Օր. Ի 7):

Այսպիսով, Սուրբ Գիրքը նշանված աղջկան **«կին»** է կոչում իբրև կին արարածի և ոչ թե իբրև ամուսնացած մեկի:

Մեր մայր Եվան առաջինը կոչվեց **«կին»**, որովհետև ստեղծվելիս վերցվել էր Մարդուց (Ծնն. Բ 23): Այնուհետև կոչվեց **«Եվա»**, որովհետև մայրն է բոլոր ողջերի (Ծնն. Գ 20): Հետևաբար **«կին»** բառը ցույց է տալիս նրա ստեղծումը և իգությունը, մինչ **«Եվա»** անունը՝ նրա մայրությունը:

Որ սուրբ Կույսի համար գործածված **«կին»** բառը նրա նշանված և ոչ թե ամուսնացած լինելն է ցույց տալիս, հստակ երևում է մեկ

48 Դ դարի նշանավոր աստվածաբան հայր, տիեզերական (Ընդհանրական Եկեղեցու) վարդապետներից մեկը, ում հիշատակը նշվում է թե՛ Դպտի, թե՛ Հայ Առաքելական Եկեղեցիներում:

այլ վկայությամբ՝ ս. Ղուկաս ավետարանչի հետևյալ խոսքում. **«Գնաց նաև Հովսեփը Գալիլեայի Նազարեթ քաղաքից.... մարդահամարի մեջ արձանագրվելու Մարիամի՝ իր նշանած կնոջ**[49] **հետ, ով հղի էր»** (Ղուկ. Բ 4-5): Նշանակում է **«Մի վախեցիր քեզ մոտ վերցնել քո կնոջը»** խոսքում **«քո կնոջը» արտահայտությունը նշանակում է «քո նշանածին»:**

Ուրեմն, ս. Մարիամը **«կին»** էր կոչվում ո՛չ որովհետև կորցրել էր կուսությունը, քա՛վ լիցի, Սուրբ Գիրքը վկայում է, որ Հովսեփը **«չգիտեր նրան»,** այլ որովհետև սա էր հրեաների մեջ տարածված սովորական ձևը նշանված կույսի համար: Եվ իդեական սեռի ցանկացած ներկայացուցիչ նույնպես սովորաբար կոչվում էր **«կին»**, ինչպես Եվան, ով այսպես կոչվեց անմիջապես իր ստեղծումից հետո և նախքան դրախտից վտարումն ու զավակներ ծնելը:

Նկատելի է, որ հրեշտակը **«քո կինը»** արտահայտությունը չի գործածում Տեր Քրիստոսի ծնունդից հետո: Նա ասում է Հովսեփին. **«Վե՛ր կաց, վերցրու Մանկանն ու Նրա Մորը, փախիր Եգիպտոս»** (Մատթ. Բ 13): Եվ Եգիպտոսից նրանց վերադարձի համար հրեշտակը Հովսեփին ասում է. **«Վե՛ր կաց, վերցրու Մանկանն ու Նրա Մորը և գնա Իսրայելի երկիրը»** (Մատթ. Բ 20): Եվ Հովսեփն էլ վարվում է թելադրվածի համաձայն թե՛ Եգիպտոս գնալիս, թե՛ այնտեղից վերադառնալիս, երբ **«վեր կացավ, վերցրեց Մանկանն ու Նրա Մորը»** (Մատթ. Բ 14, 21): Այսպիսով, Սուրբ Գիրքը **«քո կինը»** արտահայտությունն այլևս չի գործածում:

Այս բառերը գործածվում են միայն ս. Մարիամի հղիությունից առաջ և հետո՝ նրան պաշպանելու համար, որպեսզի հրեաները չքարկոծեին նրան նախքան ամուսնությունը հղիացած լինելու համար: Տեր Հիսուսի ծնունդից հետո Աստվածային Ներշնչանքը չի գործածել այս բառերը ո՛չ հրեշտակի՝ Հովսեփին ուղղած խոսքում, ո՛չ երբ պատմում է, թե Հովսեփն ինչ արեց, ո՛չ արևելքի իմաստունների մասին խոսելիս, ուր ասվում է, թե նրանք տեսան Մանկանն Իր Մայր Մարիամի հետ (Մատթ. Բ 11), ոչ էլ հովիվների մասին խոսելիս, երբ ասվում է, թե նրանք գտան Մարիամին ու

[49] Ըստ գրաբարյան թարգմանության՝ **«մարդահամարի մեջ արձանագրվելու Մարիամի հետ, ով նրա հետ նշանված էր և հղի էր»**, այսինքն՝ այստեղ ընդհանրապես չկա «կին» բառը, ուստի և ամուսնացած կնոջ իմաստը լիովին բացառվում է:

Հովսեփին և մսուրում պառկած Մանկանը (Ղուկ. Բ 16):

«Նախքան նրանց՝ միմյանց մերձենալը» արտահայտությունը

Ավետարանիչը կամենում էր ցույց տալ, որ Տեր Քրիստոսը հղացվել է կույսից, ով տղամարդ չգիտեր՝ երկու պատճառով.

ա) Նախ՝ ապացուցելու համար, որ Տեր Քրիստոսը բնական ծննդյամբ չի ծնվել՝ հորից ու մորից, ինչպես մնացած մարդիկ, այլ կույսից՝ իբրև վկայություն Նրա Աստվածության: Նա ծնվել է Սուրբ Հոգուց, ինչպես հրեշտակն ասաց. **«....որովհետև նրանում հղացվածը Սուրբ Հոգուց է»** (Մատթ. Ա 20):

բ) Երկրորդ՝ որպեսզի տղամարդ չգիտեցած կույսից Նրա ծնունդով հավատայինք, որ Նա չի ժառանգել սկզբնական մեղքը և հետևաբար կարող է փրկել մեզ. որովհետև մեղք չունենալու դեպքում է, որ Նա կարող էր մեռնել մեղավորների համար:

Նշանակում է՝ առաքյալի համար կարևոր էր պարզապես նշել այն փաստը, որ Կույսը Տեր Քրիստոսին ծնելուց առաջ ոչ մի տղամարդ չգիտեր, այսինքն՝ որ Քրիստոսը կույսից է ծնվել: Իսկ որ նա տղամարդ չգիտեր նաև ծնելուց հետո, սա ինքնըստինքյան ակնհայտ է:

«Չգիտեր նրան, մինչև....» արտահայտությունը

«Մինչև» բառը վերաբերում է նախորդող պնդմանը և չի տարածվում որևէ հետևող պնդման վրա:

Սա լուսաբանելու համար կարելի է բերել շատ օրինակներ:

ա) Սուրբ Գիրքը Սավուղ արքայի դուստր Մեղքողի մասին ասում է, թե նա մինչև իր մահը զավակներ չունեցավ (Բ Թագ. Զ 23): Անշուշտ իր մահվանից հետո նույնպես նա զավակներ չծնեց:

բ) Տեր Քրիստոսն ասում է. **«Ես ձեզ հետ եմ մինչև աշխարհի վերջը»** (Մատթ. ԻԸ 19): Անշուշտ աշխարհի վերջից հետո նույնպես Նա մեզ հետ է լինելու:

գ) Հայր Աստված ասում է Տեր Քրիստոսին. **«Նստիր Իմ աջ կողմում, մինչև թշնամիներիդ քո ոտքերի համար պատվանդան դնեմ»** (Սաղմ. ՃԹ 1): Անշուշտ Տեր Քրիստոսը սրանից հետո էլ պիտի շարունակի մնալ Իր Հոր աջ կողմում:

Հետևաբար, պարտադիր չէ, որ **«մինչև»** բառին հաջորդող և նախորդող պնդումները հակառակ իմաստն արտահայտեն:

Հովսեփը չգիտեր Մարիամին, մինչև նա ծնեց իր անդրանիկ

Որդուն, ոչ էլ գիտեցավ դրանից հետո: Որովհետև եթե նա հրաժարվել էր Մարիամին դիպչելուց նախքան Տեր Քրիստոսի ծնունդը, առավել տրամաբանական էր, որ նրան չպիտի դիպչեր նաև Տիրոջ ծնունդից և այն բանից հետո, որ դարձավ վկա հրաշքներին, հրեշտակներին, Արևելքից եկած մոգերին ու մարգարեությունների իրականացմանը և համոզվեց, որ Տերը ծնվել է Սուրբ Հոգուց և Բարձրյալի Որդին է, Սուրբը, Էմմանուելը և Փրկիչը, ում վրա իրականացավ Եսայի մարգարեի կանխատեսությունը. **«Ահա Կույսը կհղիանա և Որդի կծնի, և Նրան կկոչեն Էմմանուել»** (Ես. Է 14): Եվ՝ **«Որովհետև մեզ համար Մանուկ ծնվեց, մեզ Որդի տրվեց, ում իշխանությունն Իր ուսերին է: Եվ Նրա անունը կոչվեց Մեծ խորհրդի հրեշտակ, Սքանչելի, որհրդակից, Հզոր Աստված, Իշխան, Հայր գալիք աշխարհի: Եվ Ես խաղաղություն կբերեմ Նրա իշխաններին և առողջություն՝ Նրան: Մեծ է Նրա իշխանությունը, և Նրա խաղաղությանը չկա սահման: Դավթի աթոռին կնստի, Նրա արքայությունը կհաջողեցնի, այն կզորացնի իրավունքով ու արդարությամբ՝ այսուհետև և հավիտյան»** (Ես. Թ 6-7): Հավանաբար հրեշտակն այս մարգարեության վերջին տողերն է մեջբերել ս. Կույսին Տիրոջ ծննդյան ավետիսը տալիս:

«Նրա եղբայրները» արտահայտությունը

«Եղբայր» բառը եբրայերենում կարող է նշանակել նաև խորթ եղբայր, ինչպես նաև մերձավոր ազգական: Սուրբ Գրքում կան այս մասին վկայող շատ օրինակներ:

ա) Հակոբն ու նրա քեռի Լաբանը:

Սուրբ Գիրքը Հակոբի և Ռաքելի հանդիպման մասին պատմելիս ասում է. **«Եվ երբ Հակոբը տեսավ իր մորեղբայր Լաբանի դուստր Ռաքելին և իր մորեղբայր Լաբանի ոչխարները, մոտեցավ, տապալեց քարը ջրհորի բերանից և իր մորեղբայր Լաբանի ոչխարներին ջուր խմեցրեց: Եվ Հակոբը համբուրեց Ռաքելին և բարձրաձայն լաց եղավ: Եվ Հակոբը պատմեց Ռաքելին, որ ինքը նրա հոր եղբայրն է»** (Ծննդ. ԻԹ 10-12):

Հակոբը Ռաքելի հորը կոչում է իր եղբայրը, թեև իր մորեղբայրն էր, ինչի մասին մի քանի անգամ նշվեց այս հատվածում: Լաբանը նույնպես նույն բառն է գործածում, երբ հարցնում է Հակոբին վերջինիս վարձատրության մասին. **«Քանի որ դու իմ եղբայրն ես, ձրի չպիտի ծառայես ինձ: Ասա՛ ինձ՝ ո՞րն է վարձդ»** (Ծննդ. ԻԹ 15): Լաբանը Հակոբին եղբայր է կոչում, թեև իր քրոջ որդին էր:

Նշանակում է՝ վերաբերյալ օրինակում **«եղբայր»** բառը գործածվում է մերձավոր ազգականի իմաստով:

բ) Աբրահամ և Ղովտ:

Ղովտն Աբրահամի զարմիկն էր (նրա եղբայր Առանի որդին- Ծննդ. ԺԱ 31): Սակայն երբ Սուրբ Գիրքը խոսում է Սոդոմի ժողովրդի հետ Ղովտի գերի վերցվելու մասին, ասում է. **«Երբ Աբրահամը լսեց, որ իր եղբայրը գերեվարվել է, զինեց իր երեք հարյուր տասնութ ընդոծին ծառաներին»** (Ծննդ. ԺԴ 14)[50]: Այստեղ Ղովտն Աբրահամի եղբայրն է կոչվում, թեև նրա եղբորորդին է, և պատճառը մերձավոր ազգականությունն է: Այս նույն կերպ նաև Տեր Քրիստոսի զարմիկներն էին կոչվում **«Հիսուսի եղբայրներ»**, ինչպես կբացատրվի ստորև:

Ովքե՞ր են Տիրոջ եղբայրները:

Երբ Տերը եկավ Իր հայրենի գավառ, մարդիկ ասացին. **«Սա հյուսնի որդին չէ՞: Սրա մոր անունը Մարիամ չէ՞: Եվ Սրա եղբայրները Հակոբոսը, Հովսեսը, Սիմոնն ու Հուդան չե՞ն: Եվ Սրա քույրերը՝ բոլորը մեզ մոտ չե՞ն» (Մատթ. ԺԳ 55-56, Մարկ. Զ 1-3)**: Եվ Պողոս առաքյալն ասում է, որ տեսել է Տիրոջ եղբայր Հակոբոսին (Գաղ. Ա 19): Այս Հակոբոսը կոչվում է **«Փոքրիկ»** (Մարկ. ԺԵ 40)՝ տարբերվելու համար Զեբեդեոսի որդի Հակոբոսից: Նա կոչվում է նաև **«Ալփեոսի որդի»** (Մատթ. Ժ 3) և մեկն էր առաքյալներից, ինչպես երևում է Գաղ. Ա 19 համարից[51]:

Ս. Մատթեոս առաքյալն ասում է, որ Տիրոջ խաչի մոտ շատ կանայք կային, որոնց թվում էին **«Մարիամ Մագդաղենացին, Հակոբոսի և Հովսեսի մայր Մարիամը և Զեբեդեոսի որդիների մայրը»** (Մատթ. ԻԷ 56): Ո՞վ էր ուրեմն Հակոբոսի և Հովսեսի մայր

50 Դրված է ըստ եբրայերեն բնագրի. գրաբարյան թարգմանության մեջ «եղբայր» բառը փոխարինված է «եղբորորդի»-ով: Սակայն նաև Ծննդ. ԺԳ 8-ում է Ղովտն Աբրահամի եղբայրը կոչվում, և այսպես է նաև ըստ գրաբարյան թարգմանության (Աբրահամն ասում է Ղովտին. «Թող կռիվ չլինի իմ և քո միջև և իմ հովիվների և քո հովիվների. քանզի *եղբայրներ* ենք մենք»):

51 Կան տարբեր տեսակետներ Ավետարանում հիշատակվող տարբեր Հակոբոսների ինքնության մասին: Շեռուդա պատրիարքն իր գրքում ներկայացնում է վարկածներից մեկը միայն (Հերոնիմոսինը), որը համաձայն է Կաթոլիկ Եկեղեցու ավանդությանը, որով Հակոբոս Ալփյանին ու Հակոբոս Փոքրիկին (ով նույն Հակոբոս Տյառնեղբայրն է) նույնացնում է (ուստի նաև նույնացնում նրանց հայրեր Ալփեոսին և Կղեովպասին, ինչպես երևում է փոքր-ինչ հետո նրա գրած *«Այդ Մարիամը Ալփեոսի կամ Կղեովպասի կին*

Մարիամը: Ս. Կույս Մարիա՞մը: Արդյո՞ք տրամաբանական է ասել, թե ս. Կույսը ծնեց այս բոլոր երեխաներին: Իհա՛րկե ոչ:

Այդ Մարիամը Ալփեոսի կամ Կղեովպասի կին Մարիամն էր[52]*, ում ս. Հովհաննես առաքյալը հիշատակում է Հովհ. ԺԹ 25 համարում.* ***«Հիսուսի խաչի մոտ կանգնել էին Նրա Մայրը, Նրա մորաքույրը՝ Կղեովպասի կին Մարիամը, և Մարիամ Մագդաղենացին»*** *(համեմատիր Մատթ. ԻԷ 55-56-ի հետ):*

Հակոբոսի և Հովսեսի մայր Մարիամը Մարիամ Մագդաղենացու հետ Տիրոջ խաչի մոտ էր: Նրանք երկուսն էլ ներկա էին նաև Տիրոջ թաղմանը և ***«տեսան, թե Նրան ուր դրեցին»*** *(Մարկ. ԺԵ 47): Նրանք էին նաև, որ շաբաթի անցնելուց հետո բերեցին խունկեր՝ օծելու Նրա մարմինը (Մարկ. ԺԶ 1), և խաչի մոտ էին Տիրոջ Մոր հետ, ինչպես ս. Հովհաննես ավետարանիչն է ասում.* ***«Հիսուսի խաչի մոտ կանգնել էին Նրա Մայրը, Նրա մորաքույրը՝ Կղեովպասի կին Մարիամը, և Մարիամ Մագդաղենացին»*** *(Հովհ. ԺԹ 25):*

Հետևաբար, պարզ է, որ ***«Տիրոջ եղբայրները»*** *Նրա մորաքույր Մարիամի՝ Կղեովպասի կնոջ՝ Հակոբոսի, Հովսեսի և նրանց եղբայրների մոր որդիներն են:*

Իսկ ինչ վերաբերում է Կղեովպաս և Ալփեոս անունների տարբերությանը[53]*, դա կարող է արտասանության տարբերություն լինել, կամ ինչպես Հերոնիմոսն է ասում,* ***«սովորաբար Սուրբ Գիրքը մեկից ավել անուններ է տալիս մեկ անձի: Օրինակ՝ Մովսեսի անները՝ Հռագուելը, կոչվում է նաև Հոթոր*** *(Ելք Բ 18, Դ 18):* ***Գեդեոնը կոչվեց Հերոբաաղ*** *(Դատ. Զ 32),* ***Պետրոսը՝ Սիմոն և Կեփաս (Մատթ. Ժ 2), և Հուդա Նախանձահույզը՝ Թադեոս*** *(Մատթ. Ժ 3)»:*

Ուրեմն հայտնապես հստակ է, որ Հակոբոսի և Հովսեսի մայր

Մարիամն էր» նախադասությունից կամ երբ ավելի հետո բացատրում է Ալփեոս և Կղեովպաս անունների տարբերության խնդիրն ըստ Հերոնիմոսի): Սակայն ըստ Արևելյան Եկեղեցիների (նաև Հայ Եկեղեցու) ավանդության՝ Մարկոսի Ավետարանում (ԺԵ 40) հիշված Հակոբոս Փոքրիկը, ով Հակոբոս Տյառնեղբայրն է (Տիրոջ եղբայրը), *Հակոբոս Ալփյանը չէ,* սրանք տարբեր անձնավորություններ են, ուստի տարբեր անձնավորություններ են նաև Ալփեոսը (Հակոբոս Ալփյանի հայրը) և Կղեովպասը (Տիրոջ եղբայրների՝ Տյառնեղբայրների հայրը) (տես Մ. Օրմանյան, Համապատում, Ս. Էջմիածին, 1997, էջ 152-155): Ըստ այմ՝ «Հակոբոսի և Հովսեսի մայր Մարիամը» Կղեովպասի (ոչ թե Ալփեոսի) կին Մարիամն է և ոչ թե ս. Կույս Մարիամը:

52 Տես նախորդ ծնթ.-ը:

53 Տես նախորդ ծնթ.-ը:

Մարիամը ս. Կույս Մարիամը չէ, և Սուրբ Գիրքը նրան երբեք այդ անվամբ չի կոչել:

Որոշ լուսաբանություններ

ա) Անտրամաբանական է, որ Տեր Քրիստոսը խաչի վրա Իր Մայր Մարիամին հանձներ Իր աշակերտ ս. Հովհաննեսին, եթե ս. Մարիամն ուներ վերոնշյալ բոլոր որդիներին: Եթե նրանք լինեին, ապա ս. Մարիամը նրանց խնամքին կհանձնվեր:

բ) Նկատելի է, որ Սուրբ Գիրքը Հովսեփի և Մարիամի՝ Եգիպտոս գնալու և այնտեղից վերադառնալու մասին պատմելիս, Հիսուսից բացի, Մարիամի ուրիշ զավակների մասին չի նշում (Մատթ. Բ 14, 20, 21): Նույնը վերաբերում է նրանց ուղևորությանը Երուսաղեմ, երբ Տեր Քրիստոսն արդեն տասներկու տարեկան էր (Ղուկ. Բ 43):

գ) Ճիշտ չէ որոշ մարդկանց այն պնդումը, թե ***«Հիսուսի եղբայրները»*** *Հովսեփի զավակներն են ուրիշ կնոջից, ով արդեն մահացել էր: Որովհետև Սուրբ Գիրքն ասում է, որ Հակոբոսի և Հովսեսի մայր Մարիամը Տիրոջ խաչելության և թաղման ժամանակ ներկա էր, ինչպես արդեն նշել ենք (Մարկ. ԺԵ 47):*

դ) Կա մի հստակ աստվածաշնչյան համար Եզեկիելի մարգարեության մեջ, որ ցույց է տալիս ս. Մարիամի մշտակուսությունը: Եզեկիել մարգարեն տեսնում է մի դուռ, որը նայում է դեպի արևելք, և նրան ասվում է. ***«Այս դուռը փակ պիտի մնա և չբացվի: Դրանով ոչ ոք պիտի չանցնի, որովհետև Իսրայելի Տեր Աստվածը դրանով մտավ, և պիտի փակվի»*** *(Եզեկ. Դ 2): Այս դուռը ս. Կույսի որովայնն է, որով Տերը մտավ, ուստի այն մնաց փակված, և ոչ մի այլ զավակ այնտեղ չմտավ:*

ԳԼՈՒԽ Զ

ՊԱՀԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ

Ակնհայտ է, որ պահեցողությունը Հին և Նոր Կտակարաններում ոչ թե խորհրդանիշ էր (սիմվոլ), այլ պատվիրան: Բողոքականները կտրականապես չեն մերժում պահքը, բայց գործնականորեն այն համարյա վերացրել են: Այստեղ չպիտի քննարկեմ պահեցողությունն ընդհանրապես՝ իր կարևորությամբ, օգուտներով և հոգևոր արժեքով, որովհետև այս ամենի մասին կարելի է կարդալ մեր մի ուրիշ գրքում՝ «Պահքի հոգևոր արժեքը»: Ես միայն կամենում եմ անդրադառնալ այս նյութի վերաբերյալ ուղղափառության և բողոքականության միջև եղած տարբերություններին:

Պահեցողությանը վերաբերող տարբերություններ

1. Բողոքականներն ասում են, որ պահեցողությունը պետք է կատարվի գաղտնաբար՝ մարդու և Աստծո միջև՝ համաձայն ***«Լեռան քարոզում»*** *Տիրոջ տված պատվիրանի (Մատթ. Զ 17-18):*

2. Բողոքականները չունեն բոլոր հավատացյալների համար հաստատված պահեցողության շրջաններ՝ որոշակի ժամանակահատվածներում և որոշակի առիթներով, այլ նրանց համար պահքն ավելի անհատական բնույթի գործառույթ է: Անհատը կարող է պահք պահել երբ ուզում է, ինչպես ուզում է, և Եկեղեցին իշխանություն չունի նրա վրա ու չի միջամտում նրա պահեցողությանը:

3. Բողոքականները սխալ են մեկնաբանում հետևյալ խոսքը. ***«Ուրեմն թող ոչ ոք ձեզ չդատի ուտելու կամ խմելու, տոնական օրերի, նորալուսնի կամ շաբաթի հարցում, որոնք գալիք բաների ստվերներն են, իսկ բուն մարմինը Քրիստոսն է»*** *(Կող. Բ 16-17):*

4. Բողոքականները դեմ են կենդանական ծագման կերակուրներից հրաժարմամբ և բուսական կերակուրներով պահքին: Նրանք մեզ մեղադրում են սրա համար՝ համարելով, որ հետևյալ նախադասության երկրորդ մասը մեզ է վերաբերում. ***«...վերջին ժամանակներում ոմանք պիտի հեռանան հավատից և իրենց ուշադրությունը պիտի դարձնեն մոլորեցնող ոգիների և դևերի վարդապետությունների վրա.... որոնք արգելում են ամուսնանալ և հեռու են պահում այն կերակուրներից, որ Աստված ստեղծեց, որպեսզի հավատացյալները և ճշմարտության վերահասու եղողները գոհությամբ վայելեն»*** *(Ա Տիմ. Դ 1-3):*

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Գաղտնի պահեցողության վերաբերյալ

Գաղտնի պահեցողությունը մասն է կազմում անհատական աստվածպաշտության և ոչ թե ընդհանրական:

1. Օրինակ՝ կա անհատական աղոթք, որը դու անում ես քո սենյակում, քո Հորը, ով ծածուկ տեսնում է, սակայն կա նաև ընդհանրական աղոթք, որը հավատացյալների ամբողջ համայնքն է անում միասին՝ մեկ հոգով, միաշունչ և միաձայն: Այսպիսի աղոթքի օրինակներ շատ կան Նոր Կտակարանում: Այսպիսի օրինակներից է հավատացյալների աղոթքը Պետրոսի և Հովհաննեսի՝ բանտից ազատվելուց հետո. ***«Երբ նրանք լսեցին այս մասին, իրենց ձայնը բարձրացրին առ Աստված և ասացին....»*** *(Գործք Դ 24): Անշուշտ ծածուկ աղոթելու Տիրոջ պատվիրանն այսպիսի աղոթքին չի վերաբերում:*

2. Նմանապես և կա գաղտնաբար կատարված ողորմության գործ, որն անհատական արարք է՝ համաձայն հետևյալ խոսքի. ***«Թող ալ ձեռքդ չիմանա, թե ձախդ ինչ է անում»*** *(Մատթ. Զ 3): Սակայն կա նաև ընդհանրական ողորմություն՝ հավաքված բոլորից, ինչպես, օրինակ, երբ Դավիթ մարգարեն նվիրատվություններ հավաքեց տաճարի կառուցման համար: Նա մանրամասնորեն նշում է, թե որքան է նվիրել ինքը, որքան՝ տոհմերի և Իսրայելի ցեղերի առաջնորդները, հազարապետերն ու հարյուրապետերը, ինչպես նաև թագավորի վերակացուները (Ա Մն. ԻԹ 3-9): Մի ուրիշ օրինակ է ժողովրդի նվիրատվությունը տաճարի գանձանակին, ինչպես երբ այրին միայն երկու լումա նվիրաբերեց (Ղուկ. ԻԱ 1-2):*

3. Այդպես էլ կա գաղտնի կատարվող անհատական պահեցողություն, և կա բոլոր հավատացյալների կողմից պահվող ընդհանրական պահք:

Պատասխան ընդհանրական պահքի վերաբերյալ

Սուրբ Գրքում ընդհանրական պահքի բազմաթիվ օրինակներ կան, ինչպես՝

1. Եսթերի ժամանակ տեղի ունեցած ընդհանրական պահքը: Բոլոր մարդիկ միևնույն ժամանակահատվածում, միևնույն նպատակով, պահք պահեցին՝ աղոթելով Տիրոջը միևնույն խնդրանքով, և Տերն ընդունեց նրանց պահեցողությունը և պատասխանեց նրանց խնդրանքին (Եսթ. Դ գլուխ):

2. Նինվեի ժողովրդի պահքը: Ամբողջ ժողովուրդը պահք պահեց և ո՛չ գաղտնաբար: Եվ Տերն ընդունեց նրանց պահքն ու ներեց նրանց մեղքերը:

3. Նեեմիայի և Եզրասի ժամանակ տեղի ունեցած ընդհանրական պահքը: Նեեմիան ասում է. **«Եվ ամսի 24-ին հավաքվեցին Իսրայելի որդիներն ու սկսեցին պահք պահել՝ քուրձ հագնելով և իրենց գլխին մոխիր լցնելով»** (Նեեմ. Թ 1): Եզրասն էլ ասում է. **«Եվ այնտեղ՝ Առիս գետի ափին, պահք քարոզեցինք և մեր Տեր Աստծո առաջ աղոթք մատուցեցինք՝ Նրանից խնդրելով ուղիղ ճանապարհը մեզ, մեր որդիների և մեր ունեցած ամեն ինչի համար»** (Եզր. Ը 21):

4. Հովելի ժամանակ տեղի ունեցած պահեցողությունը: Աստվածաշունչն ասում է այս մասին. **«Եվ արդ, ասում է ձեր Տեր Աստվածը, դեպի Ի՛նձ դարձեք ձեր ամբողջ սրտով, պահքով, լալով և կոծելով: ....պա՛հք սրբագործեք, պաղատե՛լ քարոզեք, հավաքեք ժողովրդին, սրբագործեք եկեղեցին, ընտրեք ծերերին, հավաքեք ծծկեր մանուկներին, թող փեսան ելնի իր սենյակից և հարսը՝ առագաստից»** (Հովել Բ 12-17):

5. Առաքյալների պահեցողությունը Նոր Ուխտում: Երբ Տեր Հիսուս Քրիստոսին հարցրին, թե ինչու Իր աշակերտները պահք չեն պահում, պատասխանեց. **«Սակայն օրեր կգան, երբ Փեսան նրանցից կվերցվի, և այնժամ պահք կպահեն»** (Մատթ. Թ 15): Առաքյալները միասին էին պահք պահում և ո՛չ գաղտնաբար, և Տերն ընդունում էր նրանց պահքը:

Առաքյալների պահած պահքերից որոշ օրինակներ նշված են Սուրբ Գրքում, ինչպես՝ **«Մինչ պաշտամունք էին կատարում և պահք պահում, Սուրբ Հոգին ասաց. «Զատեք Ինձ համար Բառնաբասին և Սավղոսին այն գործի համար, որի համար կանչել եմ նրանց»: Այդ ժամանակ պահք պահելով և աղոթելով ձեռքերը դրեցին նրանց վրա և ուղարկեցին»** (Գործք ԺԳ 2-3):

Պողոս առաքյալը նույնպես երկար ժամանակ պահք էր պահում նավի վրա գտնվող բոլոր մարդկանց հետ (Գործք ԻԷ 21):

Այս ամենից հետևում է, որ ընդհանրական պահքն ընդունելի է և աստվածաշնչյան վարդապետություն: Այն ցույց է տալիս աստվածպաշտության և Աստծուն մերձենալու մեջ մարդկանց ունեցած մեկ հոգին, հատկապես եթե պահքի նպատակը վերաբերում է ամբողջ համայնքին, կամ եթե ամբողջ համայնքն է մեկ հոգով աղոթում և մեկ հոգով պահք պահում:

Ընդհանրական պահքի մեջ չկա կեղծավորություն:

Ընդհանրական պահքի մեջ չկա կեղծավորություն, քանի որ ոչ ոք մյուսից չի զանազանվում: Յուրաքանչյուր անձի պահեցողության մակարդակն ու խորությունը մնում է «գաղտնի»: Այլև, Նոր Կտակարանում նույնիսկ մեկ խոսք չկա, որ արգելի ընդհանրական պահքը:

Պատասխան սահմանված ժամանակահատվածներում եղած պահքի վերաբերյալ

Սահմանված ժամանակահատվածում պահեցողությունը նույնպես աստվածաշնչյան վարդապետություն է, ինչպես Տերը հաստատում է Զաքարիա մարգարեի գրքում. **«Չորրորդ ամսի պահքը, հինգերորդ ամսի պահքը, յոթերորդ և տասներորդ ամիսների պահքերը»** (Զաք. Ը 19): Պահեցողության համար ժամանակամիջոցներ սահմանելու պատճառը հավանաբար ընդհանրական աստվածպաշտության կարգավորումն է: Քրիստոնեության մեջ պահքն ունի քրիստոնեական ներիմաստ. պահքերի առիթներն այնպիսին են, որ յուրաքանչյուր պահք ստանում է սեփական հոգևոր պատճառը, ներգործությունն ու նպատակը:

Պատասխան **«Թող ոչ ոք ձեզ չդատի»** արտահայտության մեկնաբանությանը

Առաքյալը չի ասում. «Թող ոչ ոք ձեզ չդատի պահքի համար», այլ՝ **«Թող ոչ ոք ձեզ չդատի ուտելու կամ խմելու հարցում»**: Սրանով նա նկատի ունի այն արգելված կերակուրները, որոնք անմաքուր էին համարվում հրեաների կողմից: Սա մեզ հիշեցնում է այն տեսիլքը, որը Պետրոս առաքյալը տեսավ Կոռնելիոսի դարձի առնչությամբ: Առաքյալը տեսավ մի մեծ կտավ, որի վրա կային ամեն տեսակ կենդանիներ, և լսեց ձայն, որը նրան հրամայում էր մորթել դրանք և ուտել: Եվ երբ Պետրոսն ասաց. **«Քա՛վ լիցի, Տեր. որովհետև երբեք չկերա խառնակ կամ անսուրբ որևէ բան»**, ձայնն ասաց նրան. **«Ինչ որ Աստված սրբեց, դու պիղծ մի՛ համարիր»** (Գործք Ժ 14-15): Ահա անմաքուր ու պիղծ համարվող այս կերակուրների մասին է խոսում Պողոսը, երբ ասում է. **«Թող ոչ ոք ձեզ չդատի ուտելու կամ խմելու հարցում»**: Սրա պատճառն այն է, որ քրիստոնեության սկզբնական տարիներին առաջին քրիստոնեաները հրեաներ էին, ովքեր փորձում էին քրիստոնեությունը հուդայականացնել, այսինքն՝ քրիստոնեություն ներմուծել հրեական բոլոր սովորույթները, ինչպես՝ անմաքուր կերակուրների արգելք, լվացումներ, շաբաթապահություն, լուսնային տոներ, ամսամուտի տոնակատարություն և հրեական տոներ (օրինակ՝ հրեական Զատիկը, Բաղարջակերաց, Փողահարության, Տաղավարահարաց տոներն ու Քավության օրը): Ս. Պողոսը կամենում էր քրիստոնեությունը զերծ պահել հրեացումից, այդ պատճառով էլ ասաց. **«Ուրեմն թող ոչ ոք ձեզ չդատի ուտելու կամ խմելու, տոնական օրերի, նորալուսնի կամ շաբաթի հարցում, որոնք գալիք բաների ստվերներն են»** (Կող. Բ 16-17):

Հետևաբար սա ասելու առիթը պահքը չէր, այլ հրեական սովորույթները, որոնք նորադարձ հրեաները կամենում էին ներմուծել քրիստոնեություն:

Պատասխան բուսական կերակրի վերաբերյալ

1. Նախ՝ պետք է ասենք, որ պահեցողությունը մեր Եկեղեցում պարզապես բուսական սննդի գործածում չէ, այլ որոշ ժամանակ

անսվաղ մնալը (այսինքն՝ ոչինչ չուտել ու չխմել), որից հետո պահեցողն ուտում է միայն բուսական, այսինքն՝ կենդանական յուղից զերծ կերակուր:

2. Բուսական էր այն սնունդը, որն Աստված տվեց Ադամին ու Եվային դրախտում (Ծննդ. Ա. 29), դա էր նրանց սնունդը նույնիսկ նրանց մեղանչումից հետո (Ծննդ. Գ 18): Այդ ժամանակ նաև բոլոր կենդանիներն էին սնվում բուսական կերակրով, որը խոտն էր (Ծննդ. Ա. 30):

3. Միս թույլ տրվեց ուտել միայն ջրհեղեղից հետո, երբ Նոյն իր ընտանիքով տապանից դուրս եկավ (Ծննդ. Թ 3). մինչ այդ երկիրն արդեն այնքան էր այլասերվել, որ ստիպեց Աստծուն ջրհեղեղ ուղարկել:

4. Երբ Աստված Իր ժողովրդին առաջնորդում էր Սինայի անապատում, նրանց բուսական կերակուր տվեց՝ մանանան (Թվեր ԺԱ 7-8): Նա նրանց թույլ տվեց միս (լորամարգի) ուտել, միայն երբ տրտնջացին, բողոքեցին, տրտմեցին: Սակայն երբ Աստված նրանց միս տվեց, նաև սաստիկ հարված հասցրեց, և նրանցից շատերը մեռան (Թվեր ԺԱ 33): Այն տեղը, ուր նրանք մեռան, կոչվեց **«Կիբրոթ հատտավա»**, որ նշանակում է **«Ցանկության գերեզմաններ»**, որովհետև նրանք ցանկացան միս ուտել:

5. Մենք տեսնում ենք, որ բուսական էր Դանիելի և նրա երեք ընկերների կերակուրը: Տերն օրհնեց այն, և նրանք ավելի առողջ էին, քան թագավորի մնացած բոլոր ծառաները (Դան. Ա. 12, 15):

Բուսական կերակրի գործածության պատճառները հավանաբար դրա թեթև լինելն ու մարմնական ցանկություններ չգրգռելն է, այլև որ դա է այն նախնական սնունդը, որ Աստված տվեց մարդուն:

Պատասխան որոշ կերակուրներ չգործածելու վերաբերյալ

Աստվածաշնչյան այն համարը, որի վրա բողոքականները հիմնվում են, չի վերաբերում Եկեղեցու ինչ-որ կարգի, այլ ասում է. **«....ոմանք պիտի հեռանան հավատից և իրենց ուշադրությունը պիտի դարձնեն մոլորեցնող ոգիների և դևերի վարդապետությունների վրա.... որոնք արգելում են ամուսնանալ և հեռու են պահում այն կերակուրներից, որ Աստված ստեղծեց, որպեսզի հավատաց-**

յալները և ճշմարտության վերահասու եղողները գոհությամբ վայելեն» *(Ա. Տիմ. Դ 1-3): Այն մարդիկ, որոնց մասին ս. Պողոսը խոսում է, հավանաբար մանիքեականները և մանդեականներն*[54] *են, ովքեր արգելում էին ամուսնությունը, միսն ու գինին: Եկեղեցին նրանց նզովեց և նրանց հերետիկոսությունները դատապարտեց:*

Եկեղեցին չի արգելում մսեղեն գործածել իբրև անմաքուր կերակուր, այլ պահեցողության շրջանում դրանք ուտելուց իրեն պահում է որպես ճգնողական կիրառույթ, որովհետև պահքից դուրս գալուց հետո մարդիկ այդ կերակուրներն ուտում են:

Դանիելը միայն ընդեղեն էր ուտում և իրեն պահում մնացած բոլոր կերակուրներից, սակայն չդատապարտվեց համաձայն աստվածաշնչյան վերոհիշյալ համարների: Նմանապես Հովհաննես Մկրտիչն ու բոլոր ճգնավորներն ամենուր և բոլոր ժամանակներում իրենց պահում էին որոշակի կերակուրներ ուտելուց:

Միառժամանակ կիրառված ճգնակեցությունը (ասկետիզմ) մի բան է, իսկ կերակրի արգելքը՝ ուրիշ:

Վերջին կարևոր կետն է՝

Եկեղեցու իշխանությունը պահեցողության կազմակերպման մեջ

Եկեղեցին կարգավորել է պահքերն ու դրանց համար սահմանել հոգևոր կանոններ և հաստատուն ժամանակամիջոցներ՝ հիմնված հոգևոր հողի վրա: Այսպիսով պահքը շարունակում է մնալ իբրև հոգևոր գործառույթ, առանց որի ոչ ոք չի կարող Եկեղեցու ներսում կենցաղավարել:

Եկեղեցին իրավունքն ունի կազմակերպելու, ավելին՝ նրա պարտականությո՛ւնն է կազմակերպել ընդհանրական աստվածպաշտությունը հավատացյալների համայնքի օգտի համար, որպեսզի նրանք

[54] *Մանիքեականներ*- Գ---ից Ե դարերի կրոնական շարժման՝ մանիքեականության հետևորդներ: Այս աղանդի վարդապետության առանցքը կազմում էր չարի և բարու, սատանայի և Աստծո մշտնջենական պայքարը: Շենուդա պատրիարքը հավանաբար նկատի ունի ոչ թե հենց մանիքեականներին, այլ նրանց ուսմունքին հատուկ հայացքներ ունեցող այն հերետիկոսներին, ովքեր ապրում էին ս. Պողոսի ժամանակ:

Մանդեականներ- ամենաուշը Բ դարում ստեղծված գնոստիկական կրոնական հոսանքի հետևորդներ: Հատուկ պաշտամունք են ունեցել ս. Հովհաննես Մկրտչի հանդեպ, ինչ պատճառով և կոչվել են նաև «Ս. Հովհաննեսի քրիստոնյաներ»: Սա միակ գնոստիկական աղանդն է, որը գոյատևում է առ այսօր. Միջին Արևելքում դեռևս ապրում է թվով մի քանի հազար մանդեական:

ծառայեն Աստծուն մեկ հոգով: Սրանում Եկեղեցին հիմնվում է Տիրոջ հետևյալ խոսքի վրա՝ ուղղված Եկեղեցու առաջնորդներին. ***«Ինչ որ կապեք երկրի վրա, կապված կլինի երկնքում, և ինչ որ արձակեք երկրի վրա, արձակված կլինի երկնքում»*** *(Մատթ. ԺԸ 18): Եկեղեցու կարգուկանոնը հիմնված է Աստվածաշնչի վրա:*

Մեր բողոքական եղբայրները, հանուն անհատի ազատության, անտեսել են իրենց ամբողջ համայնքի օգուտը, և պահքն այժմ համարյա վերացել է նրանց Եկեղեցում՝ չնայած իր անառարկելի հոգևոր շահեկանությանը:



ԳԼՈՒԽ Է

ՀԱԶԱՐԱՄՅԱ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԵՏՆ ԱՅՍ ՄԱՍԻՆ

Մեր բողոքական եղբայրները հավատում են, թե երբ Տեր Հիսուս Քրիստոսը գա, հազար տարի թագավորելու է երկրի վրա:

Իրենց այս տեսակետի համար նրանք հիմք են ընդունում «Հայտնության» հետևյալ հատվածները.

«Եվ տեսա մի ուրիշ հրեշտակ, որ իջնում էր երկնքից և ձեռքին ուներ դժոխքի փականքներն ու մեծ շղթա: Եվ բռնեց վիշապին՝ առաջին օձին, որ բանսարկուն և սատանան է, և հազար տարով կապեց նրան: Նրան գցեց դժոխքի անդունդների մեջ և փակեց ու կնիք դրեց նրա վրա, որպեսզի այլևս երբեք չմոլորեցնի ազգերին, մինչև լրանա հազար տարին: Եվ այնուհետև պետք է, որ նա արձակվի մի փոքր ժամանակով» *(Հայտ. Ի 1-3):*

«Հազար տարի հետո հրեշտակը կարձակի սատանային և կհանի բանտից. և սա կելնի ու կմոլորեցնի բոլոր ազգերին երկրի չորս կողմերում: Գոգը և Մագոգը ձեռքը կառնի՝ դրանցով հավաքելու համար բոլոր զորքերը, որ պատերազմեն, և նրանց թիվը՝ ինչպես ծովի ավազը: Նրանք դուրս կգան երկրի ամբողջ լայնքով և կշրջապատեն սրբերի բանակներն ու սիրելի քաղաքը: Եվ երկնքից՝ Աստծուց, կրակ կիջնի և կլափի նրանց ու նրանց զորագլխին՝ սատանային, որը մոլորեցրեց նրանց: Նա նրանց կգցի կրակի և ծծմբի ծովի մեջ, ուր գտնվում էին գազանը և սուտ մարգարեն. և նրանք կչարչարվեն օրուգիշեր» *(Հայտ. Ի 7-10):*

Բողոքականները հավատում են, որ այս հազար տարին պիտի լինի խաղաղության շրջան՝ ըստ Եսայի մարգարեի մարգարեության. ***«Եվ գայլը կճարակի գառան հետ, ինձն ուլի կողքին կմակաղի: Եզն ու արջը միասին կմակաղեն, նրանց ձագերը միասին կշրջեն, և առյուծը եզի պես հարդ կուտի: Փոքր մանուկը ձեռքը կմտցնի իժերի և իժերի ձագերի բույնը, և չեն վնասի: Եվ չեն կարողանա հարված հասցնել Իմ սուրբ լեռում, քանզի երկիրը լցվեց Տիրոջ գիտությամբ»*** *(Ես. ԺԱ 6-9):* ***«....Եվ իրենց սուսերներից խոփեր կձուլեն և սվիններից՝ մանգաղներ: Ազգ ազգի վրա սուր չի բարձրացնի, և այլևս չեն սովորի պատերազմել»*** *(Ես. Բ 4):*

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Մեր կողմից ներկայացվող առաջին փաստարկն այն է, որ՝

Տեր Հիսուս Քրիստոսը գալու է դատաստանի համար:

Սա հստակ երևում է հավատո հանգանակից. որովհետև ասում ենք. ***«Գալու է Իր[55] փառքով՝ դատելու ողջերին և մեռյալներին, և Նրա թագավորությանը չկա վախճան»:***

Սա աստվածաշնչյան ուսմունք է, որովհետև այս մասին վկայում է Սուրբ Գիրքը. ***«Որովհետև Մարդու Որդին գալու է Իր Հոր փառքով, Իր հրեշտակներով և այնժամ կհատուցի յուրաքանչյուրին ըստ նրա գործերի»*** *(Մատթ. ԺԶ 27): Եվ՝* ***«Նրանք կտեսնեն Մարդու Որդուն երկնքի ամպերով գալիս՝ զորությամբ և մեծ փառքով: Եվ Նա կուղարկի Իր հրեշտակներին մեծաձայն փողով, և նրանք կհավաքեն Նրա ընտրյալներին չորս ծագերից՝ երկնքի մի ծայրից մյուսը»*** *(Մատթ. ԻԴ 30-31):* ***«Եվ երբ Մարդու Որդին Իր փառքով գա, և բոլոր հրեշտակները՝ Նրա հետ, այնժամ կնստի Իր փառքի աթոռին: Եվ Նրա առաջ կհավաքվեն բոլոր ազգերը, և նրանց կբաժանի միմյանցից, ինչպես հովիվ, ով բաժանում է ոչխարներն այծերից: Ոչխարներին կկանգնեցնի Իր աջ կողմում, իսկ այծերին՝ ձախում: ....Եվ կգնան նրանք դեպի հավիտենական տանջանք, իսկ արդարները՝ դեպի հավիտենական կյանք»*** *(Մատթ. ԻԵ 31-33, 46):* ***«....այդպես կլինի նաև այս աշխարհի վախճանին: Մարդու Որդին կուղարկի Իր հրեշտակներին, և կժողովեն Նրա արքայությունից բոլոր գայթակղություններն ու անօրենությունը գործողներին: Եվ նրանց կգցեն կրակի հնոցը. այնտեղ կլինի լաց և ատամների կրճտում: Այդ ժամանակ արդարները երկնքի արքայության մեջ կծագեն ինչպես արեգակը»*** *(Մատթ. ԺԳ 40-43):*

Նույնը կրկնվում է նաև Տասը կույսերի և Քանքարների

[55] Հայ Եկեղեցում գործածվող հավատո հանգանակում՝ «Հոր»՝ «Իր»-ի փոխարեն:

առակներում: Տերը գալիս է դատելու: Տերն ասում է հինգ քանքար ունեցող ծառային. **«Ապրե՛ս, բարի և հավատարի՛մ ծառա. քանի որ քչի մեջ հավատարիմ ես, շատի վրա կկարգեմ քեզ: Մտի՛ր քո տիրոջ ուրախության մեջ»** (Մատթ. Իե 21): Իսկ անպիտան ծառայի մասին տերն ասում է. **«Եվ գցեք անպիտան ծառային արտաքին խավարը: Այնտեղ կլինի լաց և ատամների կրճտում»** (Մատթ. Իե 30):

Նույն կերպ Տերը դատեց հիմար կույսերին, իսկ իմաստուն կույսերը Նրա հետ ներս մտան (Մատթ. Իե 10-11):

Դատելու նպատակով Տիրոջ գալստյան մասին Սուրբ Գիրքը նաև ասում է. **«Ժամանակ կգա, երբ գերեզմաններում բոլոր գտնվողները կլսեն Նրա ձայնն ու դուրս կգան. բարիք գործածները՝ կյանքի հարության համար, իսկ չարիք գործածները՝ դատաստանի հարության»** (Հովհ. Ե 28-29):

Տեր Քրիստոսը հաստատում է այս փաստը՝ ասելով. **«Ահա գալիս եմ շուտով, և Իմ վարձն Ինձ հետ է՝ հատուցելու յուրաքանչյուրին ըստ նրա գործերի»** (Հայտ. ԻԲ 12).

Ուրեմն, եթե Տեր Քրիստոսը գալիս է դատաստանի համար, այլևս ի՞նչ կարող է նշանակել հազար տարի թագավորելու նպատակով Նրա գալուստը: Այս դեպքում կլինի Տիրոջ երեք գալուստ՝ մեկը՝ Նրա մարդանալու և փրկության համար, մյուսը՝ հազար տարի թագավորելու, և երրորդը՝ դատելու համար: Երեք անգամ Նրա գալու մասին հավատքն անընդունելի է և քրիստոնեական ուսմունքին դեմ, որովհետև մենք սպասում ենք Տիրոջ երկրորդ գալստյանը դատաստանի և այս աշխարհի վախճանի համար (Մատթ. ԺԳ 40):

Ինչպե՞ս կարող է պատահել, որ Տերը թագավորի երկրի վրա հազար տարի, որոնցում խաղաղությունն է գերիշխում, և ապա սրան հետևի կործանում:

Ինչպե՞ս կարող է պատահել, որ Տերը երկիր գա և թագավորի հազար տարի մարդկանց և նույնիսկ մարդու և անասունի միջև խաղաղության պայմաններում, և սրա վերջն ամբողջ աշխարհի կործանումը լինի, և **«երկինքն ու երկիրն անցնեն»** (Մատթ. ե 18): Ս. Հովհաննես ավետարանիչն էլ է ասում. **«Եվ ես տեսա նոր երկինք և նոր երկիր, քանզի առաջին երկինքն ու երկիրն անցան, և ծով չկար»** (Հայտ. ԻԱ 1): Ս. Պետրոս առաքյալը նույնպես, Տիրոջ գալստյան մասին խոսելիս, ասում է. **«Սակայն Տիրոջ օրը պիտի գա գողի պես, գիշերը, որում երկինքները պիտի անցնեն տագնապով, և բնությունը կրակով այրվելով պիտի հալչի, թե՛ երկիրը, թե՛ նրանում գտնվող գործերը»** (Բ Պետ. Գ 10):

Այլև ինչպե՞ս կարող է պատահել, որ խաղաղության հազարամյակին հետևի հոգևո՛ր կործանում:

Սատանան պիտի ազատ արձակվի և պիտի գնա ազգերին մոլորեցնելու (Հայտ. Ի 7-8): Այնուհետև պիտի գա ապստամբությունը (ընդհանուր ուրացումը), և պիտի հայտնվի անօրենության մարդը, ով հակառակում և հպարտանում է «աստված» կոչվող ամեն ինչի հանդեպ: Այս անօրենի գալուստն ըստ սատանայի ներգործության պիտի լինի, ամեն զորությամբ, նշաններով և սուտ հրաշքներով (Բ Թես. Բ 3-9): Այլև **«սուտ քրիստոսներ ու սուտ մարգարեներ պիտի հայտնվեն և մեծ նշաններ ու հրաշքներ ցույց տան, որպեսզի, եթե հնար է, մոլորեցնեն նույնիսկ ընտրյալներին»** (Մատթ. ԻԴ 24): Դրանք ծանր օրեր պիտի լինեն, ուստի Տերն ասում է. **«Եվ եթե այդ օրերը չկրճատվեին, ոչ մի մարմին չէր փրկվի, սակայն ընտրյալների համար այդ օրերը կկրճատվեն»** (Մատթ. ԻԴ 22):

Ո՞րն է իմաստն այնպիսի հազարամյակի, որին պիտի հետևի այս հոգևոր ու բարոյական անկումը:

Կարո՞ղ է պատահել, որ խաղաղության տարիները, որոնցում Տեր Քրիստոսը թագավորում է, վերջանան այսպիսի սարսափելի աղետով, որի ժամանակը եթե չկարճվի, ոչ մի մարմին չի փրկվի: Այդ դեպքում ո՞րն է օգուտը Տիրոջ հազարամյա թագավորության: Կարո՞ղ է պատահել, որ այն մարդիկ, որոնց Տերը հազար տարի առաջնորդում է Իր հոգևոր ամբողջ ներգործությամբ, այնպես մոլորվեն, որ ընդհանուր ուրացում տեղի ունենա և Տիրոջ առաջնորդության ամեն ներգործություն ի չիք դառնա: Հնարավո՞ր է սա:

Մենք գիտենք նաև, որ Տեր Քրիստոսը մերժեց երկրային թագավորությունը:

Երբ Զատկից վեց օր առաջ Տերը Երուսաղեմ եկավ, բազմությունները Նրան թագավոր հռչակեցին՝ աղաղակելով. **«Օվսաննա Դավթի Որդուն: Օրհնյալ է Տիրոջ անունով եկողը»** (Մատթ. ԻԱ 9), **«Օրհնյալ է մեր հայր Դավթի եկած թագավորությունը»** (Մարկ. ԺԱ 10): Նաև հինգ հացով կերակրման հրաշքից հետո բազմություններն ասացին. **«Սա է ճշմարիտ մարգարեն, ով գալու էր աշխարհ»: Սակայն երբ**

Տերը հասկացավ, որ նրանք պատրաստվում են գալ և Իրեն թագավոր դարձնել, «դարձյալ մենակ գնաց լեռը» *(Հովհ. Զ 14-15):*

Տերը մերժեց թագավորելու փորձությունը. Նա մերժեց աշխարհի բոլոր թագավորություններն ու նրանց փառքը: Դա սատանայի փորձությունն էր (Մատթ. Դ 8-9):

Նա կամենում էր հոգևորապես թագավորել՝ սրտերի վրա, և ոչ թե ունենալ երկրային իշխանություն:

*Երկրային թագավորության մերժումը մեզ հիշեցնում է Հովաթամի պատմությունը «Դատավորների» գրքից: **«Եվ լուր տվեցին Հովաթամին, ելավ գնաց ու կանգնեց Գարիզին լեռան գլխին, բարձրաձայն լաց եղավ և ասաց նրանց. «Լսե՛ք ինձ, սիկիմացինե՛ր, և թող Աստված լսի ձեզ: Ծառերը գնացին իրենց համար թագավոր օծելու և ասացին ձիթենուն. «Թագավորի՛ր մեզ վրա»:***

Ձիթենին պատասխանեց նրանց. «Թողնեմ իմ պարարտությունը, որով Աստված և մարդիկ փառավորեցին ինձ, և գնամ ծառերի՞ն իշխեմ»: Ծառերն ասացին թզենուն. «Եկ թագավորի՛ր մեզ վրա»: Թզենին պատասխանեց. «Իմ քաղցրությունն ու բարի պտուղները թողած՝ գնամ ծառերի՞ն իշխան լինեմ»: Ծառերն ասացին որթատունկին. «Եկ թագավորի՛ր մեզ վրա»: Որթատունկը պատասխանեց. «Թողած իմ գինին և Աստծո ու մարդկանց ուրախությունը՝ գնամ ծառերի՞ն իշխան դառնամ»: Ծառերն ասացին փշին. «Եկ թագավորի՛ր մեզ վրա» *(Դատ. Թ 7-15):* ***Եվ փուշը համաձայնեց»:***

Երկրային թագավորության ցանկությունը հաղթում է ոչ թե ձիթենուն կամ որթատունկին, այլ փշերին:

*Կարո՞ղ է այն ընդունվել Տիրոջ կողմից, ով եկել էր հոգևոր թագավորություն հաստատելու և խոսելու մարդկանց հետ Երկնքի արքայության մասին (Մատթ. Ե): Սկզբից ևեթ Նա քարոզում էր Աստծո արքայության ավետարանը՝ ասելով. **«Ժամանակը հասել է, և մոտեցել է Երկնքի արքայությունը: Ապաշխարե՛ք և հավատացե՛ք ավետարանին»*** *(Մարկ. Ա 14-15): Սա նշանակում էր, որ մոտ էր փրկությունը, որով Աստված պիտի թագավորեր փրկվածների վրա, ովքեր մինչ այդ մահվան իշխանության ներքո էին գտնվում:*

*Երբ մենք ասում ենք. **«Թող Քո արքայությունը գա»**, նկատի ունենք հոգևոր արքայությունը:*

Մենք նկատի ունենք, որ Աստված հոգևորապես իշխում է ամբողջ սրտի, մտքի և կամքի վրա, որպեսզի դրանք չդառնան սատանայի սեփականությունը, այլ Նրանը, ով փրկեց դրանք և գնեց Իր իսկ արյամբ:

*Տեր Քրիստոսի խոսքը՝ **«Իմ թագավորությունն այս աշխարհից չէ»*** *(Հովհ. ԺԸ 36), բավական է՝ մերժելու բողոքականների Հազարամյա թագավորության տեսությունը:*

Բողոքականների Հազարամյա թագավորության տեսության մերժման մեկ ուրիշ փաստարկ է այն, որ՝

<u>«Նրա թագավորությանը չի լինի վախճան»</u>:

*Տեր Քրիստոսը չի թագավորելու մի սահմանափակ ժամանակաշրջանում՝ միայն հազար տարի, որից հետո այդ թագավորությունը վախճան պիտի գտնի (Հայտ. Ի 7): Հավատո հանգանակում մենք ասում ենք. **«Պիտի գա Իր փառքով**[56]**՝ դատելու կենդանիներին և մեռյալներին, և Նրա թագավորությանը չի լինի վախճան**[57]**»:** Այս բառերը կրկնվում են նաև Տիրոջ ծննդյան ավետիսի մեջ՝ տրված հրեշտակի կողմից. **«Եվ Նա կթագավորի Հակոբի տան վրա հավիտյան, և Նրա թագավորությանը վախճան չի լինի»*** *(Ղուկ. Ա 33):*

*Նույնը հաստատվում է նաև Դանիել մարգարեի մարգարեության մեջ. **«Եվ Նրան տրվեցին իշխանություն, պատիվ և արքայություն, և բոլոր ազգերը, ցեղերն ու լեզուները Նրան կծառայեն. Նրա իշխանությունը հավիտենական իշխանություն է, որ չի անցնում, և Նրա թագավորությունը չի կործանվելու»*** *(Դան. Է 14):*

Ուրեմն, պարզ է, որ Տիրոջ թագավորությունը հազար կամ մեկ այլ քանակի տարիներով չի սահմանափակվում. այն մշտնջենական թագավորություն է:

Իսկ ո՞րն է այդ մշտնջենական թագավորությունը: Ինչպե՞ս և ե՞րբ է այն սկսվել:

Այս թագավորությունը սկսվել է խաչով, երբ Տերը մեզ գնեց Իր

---

56 Հայ Եկեղեցում գործածվող հավատո հանգանակում՝ «Պիտի գա նույն մարմնով և Հոր փառքով»:

57 Հայ Եկեղեցում գործածվող հավատո հանգանակում՝ «չկա վախճան», որն առավել լավ է արտահայտում ուղղափառ Եկեղեցու վարդապետությունը Քրիստոսի թագավորության մասին, այսինքն՝ որ այն արդե՛ն սկսվել է և չունի վախճան:

արյամբ: Երբ Ադամը մեղանչեց, մեղքն աշխարհ մտավ, և մեղքի հետ միասին մտավ մահը և թագավորեց (Հռոմ. Ե 14): Այդ ժամանակվանից ի վեր սատանան կոչվում է **«այս աշխարհի իշխան»** (Հովհ. ԺԲ 31): Մենք ամենքս ծախված էինք մեղքին և մահվան իշխանությանը, մինչև Տերը եկավ Իր փրկությամբ, մեր մեղքերի պարտքը մարեց և մեզ գնեց Իր արյամբ: Ահա թե ինչու է ասվում. «Տերը թագավորեց փայտի վրա»:

Հետևաբար, ս. Պողոս առաքյալն ասում է. **«Քանզի գնով գնվեցիք»** (Ա Կոր. Զ 20). այդ գինն արյունն է: Ս. Պետրոս առաքյալն ասում է. **«Իմացեք, որ ապականացու արծաթեղենով ու ոսկեղենով չէ, որ փրկվեցիք...., այլ Քրիստոսի՝ իբրև անբիծ ու անարատ գառի պատվական արյամբ»** (Ա. Պետ. Ա 18-19):

Այդ ժամանակվանից՝ փրկագործության ժամանակվանից ի վեր մենք բոլոր փրկվածների հետ դարձել ենք Տիրոջ սեփականությունը: Այդ ժամանակվանից է սկսվել Քրիստոսի թագավորությունը և սկսել են իրականանալ մարգարեություններն այն սաղմոսների, որոնք սկսվում են **«Տերը թագավորեց»** բառերով (սաղմոսներ ՂԲ, ՂԶ, ՂԸ ևն):

Ղպտի Եկեղեցին այս սաղմոսները դրել է Վեցերորդ և Իններորդ ժամերի աղոթքներում, այսինքն՝ Տիրոջ խաչելությունից մինչև Նրա մահը[58], որովհետև Տեր Քրիստոսի հազարամյա թագավորությունը սկսվել է խաչի վրա:

«Հազար տարի» արտահայտությունը խորհրդանշական է:

Այն բառացիորեն չպիտի հասկացվի: Տասը կատարելության խորհուրդն ունի[59], իսկ հազարը տասն անգամ տասն անգամ տասն է, այսինքն՝ տասի բազմապատիկը: Ս. Պետրոս առաքյալը մեկ այլ բացատրություն է տալիս. **«Թող ծածուկ չմնա ձեզանից, սիրելինե՛ր, որ Տիրոջ համար մեկ օրն իբրև հազար տարի է, և հազար տարին՝ իբրև մեկ օր»** (Բ Պետ. Գ 8):

Այսպիսով, «հազարամյա» շրջանն անսահմանափակ է, ինչպես

58 Վեցերորդ և իններորդ ժամերը համապատասխանում են կեսօրին և ցերեկվա ժամը 3-ին: Կեսօրին Տերը խաչվեց և ժամը 3-ին հոգին Հորն ավանդեց, այսիսկ պատճառով այս ժամերին կատարվող ժամասացությունները կրում են այս երկու խորհուրդները (Հայ Եկեղեցում երրորդ, վեցերորդ և իններորդ ժամերի ընդհանրական աղոթքները կոչվում են Ճաշու ժամերգություններ):

59 Գրքի բնագրում՝ փակագծերում, իբրև ծանոթագրություն ավելացվում է. *«Տես իմ «Տասը պատվիրանները» գիրքը»:*

արարչության վեց օրը: Այդ ժամանակաշրջանը տարածվում է Տիրոջ խաչելությունից մինչև սատանայի՝ բանտից արձակումը (Հայտ. Ի 7): Այստեղ կարևոր հարցը սատանայի բանտարկումն է:

Սատանայի բանտարկումը

«Հայտնությունը» նշում է, որ հրեշտակը սատանային հազար տարով կապում է (Հայտ. Ի 2): Ոմանք կարող են հարցնել, թե ինչպե՞ս կարող է սատանան կապված լինել, եթե նա անթիվ մարդկանց դեպի մեղք է առաջնորդում: Ինչպե՞ս կարող է սա պատահել, եթե նա կապանքների մեջ է:

Իրականում, սատանային կապելը չի նշանակում նրան ոչնչացնել կամ նրա գործին վերջ դնել: Սա նշանակում է միայն, որ նա այլևս չունի իր սկզբնական ազատությունը:

Երբ մենք ասում ենք, որ մի բանվոր իր գործում կապանքների մեջ է, նկատի ունենք, որ նա իր գործն անում է, սակայն ո՛չ կատարյալ ազատությամբ: Նա կապված է: Այսպիսի կապանքի իմաստն ունի «բանտ» բառը սատանայի պարագայում: Անտարակույս, սատանան չունի այն ազատությունը, որն ուներ Տեր Քրիստոսով իրագործված փրկությունից առաջ, այսինքն՝ երբ նա կոչվում էր **«այս աշխարհի իշխան»** (Հովհ. ԺԶ 11):

Ի՞նչ վկայություն կարող ենք բերել սրա համար: Առնվազն երկու վկայություն.

ա) Երբ սատանան ազատ էր, նա ամբողջ աշխարհին առաջնորդում էր դեպի ապականություն և կռապաշտություն:

Իր ազատության մեջ նա մոլորեցրեց ամբողջ աշխարհը և պատճառ դարձավ, որ Աստված ջրհեղեղով կործաներ այն. **«Եվ Աստված զղջաց, որ ստեղծեց մարդուն երկրի վրա»** (Ծննդ. Զ 6): Այնուհետև Աստված ընտրեց Նոյի ընտանիքին, որը նույնպես մոլորվեց, հետո՝ Աբրահամին, ապա Հակոբին ու նրա որդիներին: Այնուամենայնիվ, կռապաշտությունը տարածվում էր ամբողջ աշխարհով, և Աստված արգելեց Իսրայելի որդիներին ճշմարիտ Աստծուն չպաշտող այլազգիների հետ ամուսնանալ:

Նույնիսկ ժամանակ է եղել, երբ Աստված պաշտվել է միայն երկու կամ երեք անձի կողմից:

Ամբողջ աշխարհը, բացառությամբ Իսրայելի որդիների, կուռքերին էր պաշտում: Սակայն երբ Մովսեսը բարձրացավ լեռը՝ Աստծուց Օրենքն ընդունելու, և այնտեղ երկար մնաց, իսրայելացիներն իրենց ոսկին Ահարոնին տվեցին և ստիպեցին, որ իրենց համար ոսկե հորթ ձուլի՝ երկրպագության համար: Եվ ասացին. ***«Սա է քո աստվածը, Իսրայել, որ քեզ հանեց եգիպտացիների երկրից»*** *(Ելք ԼԲ 4): Հավանաբար միայն Նավեի որդի Հեսուն և Հեփոնիայի որդի Քաղեբն էին, որ սրան մասնակից չեղան:*

Եղել է ժամանակ, երբ Աստված նույնիսկ մեկ արդար մարդու չի գտել:

Երեմիա մարգարեի օրոք Աստված ասաց. ***«Ընթացեք այս կողմ, այն կողմ Երուսաղեմի ճանապարհներին և փնտրեք նրա փողոցներում. եթե գտնեք մի մարդ, որ արդարություն է գործում և ճշմարտություն փնտրում, նրանց քավիչ կլինեմ»*** *(Երեմ. Ե 1): Որովհետև* ***«չկա մեկը, որ բարիք գործի, նույնիսկ մե՛կը չկա»*** *(Սաղմ. ԺԳ 3):*

Նույնիսկ Սողոմոն Իմաստունը կամ, ավելի ճիշտ, երկրի վրա եղած մարդկանցից ամենաիմաստունը, մեծ մեղք գործեց:

«Թագավորների» Առաջին գրքի ԺԱ գլխից իմանում ենք, որ նա կառուցել է բարձրավանդակներ (բարձր տեղեր)՝ տարբեր ազգերի չաստվածների երկրպագության համար, նրա օտարազգի կանայք խունկ են ծխել և զոհ մատուցել իրենց չաստվածներին, և նրա սիրտը հավատարիմ չի եղել Աստծուն: Այդ պատճառով էլ Աստված պատժում է նրան և նրա թագավորության մի մասը նրա տան ձեռքից վերցնում:

Նույնիսկ Քրիստոսի աշակերտները՝ նախքան խաչելությունը...

Տեր Հիսուսն ասաց ս. Պետրոսին. ***«Ահա սատանան կամեցավ խարբալել ձեզ ինչպես ցորենը: Սակայն Ես աղաչեցի քեզ համար, որ քո հավատը չպակասի»*** *(Ղուկ. ԻԲ 31-32): Եվ սա պատահեց. ս. Պետրոսը երեք անգամ ուրացավ Տիրոջը, իսկ մյուս աշակերտները դավաճանեցին Նրան Նրա ձերբակալման ժամանակ: Միայն ս. Հովհաննեսը հետևեց Նրան մինչև խաչը: Իսկ Հուդան էլ, իբրև արդյունք իր սրտում սատանայի ներգործության, մատնեց Տիրոջը:*

բ) Մյուս վկայությունն այն է, որ երբ սատանան բանտից ազատ արձակվի, մոլորեցնելու է ժողովուրդներին և առաջ բերելու ընդհանուր ուրացում:

Սատանան մոլորեցնելու է նույնիսկ, եթե հնար է, ընտրյալներին, և եթե այդ օրերը չկրճատվեն, ոչ մի մարմին չի փրկվի (Մատթ. ԻԴ 22-23): Սատանան նաև մեծ նշաններ և հրաշքներ է գործելու (Մատթ. ԻԴ 24): Նա սատարելու է Անօրենին, ով պատճառն է դառնալու ուրացման՝ ***«ամեն զորությամբ, նշաններով, սուտ հրաշքներով և անիրավ ամեն խաբեությամբ՝ կորստյան մատնվածների վրա»*** *(Բ Թես. Բ 9-10):*

Մենք չնորհակալ ենք Տիրոջից, որ սատանան այժմ կապված է:

Սատանայի կապված լինելու մի վկայություն են աղոթքի համար հավաքված հավատացյալներով լի եկեղեցիները և այն միլիոնավոր մարդիկ, ովքեր գոնե ամեն կիրակի Հաղորդություն են ընդունում:

Մեր օրերում շատ սոցիալիստական աթեիստ երկրների վերադարձը դեպի Աստված և հավատք, նրանց հարյուր միլիոնավոր բնակիչներով, նույնպես վկայություն է, որ սատանան կապված է:

Իր ազատության մեջ սատանան հավատացյալներին տանում է դեպի ուրացում, իսկ այժմ միլիոնավոր հավատուրացներ վերադառնում են դեպի հավատք: Սակայն սրանով մենք չենք ժխտում, որ բազմաթիվ մեղքեր սատանայի փորձությամբ են կատարվում: Ուստի ասում ենք, որ նա դեռևս գործում է, սակայն ո՛չ իր լիակատար ազատությամբ. ոչ այն ազատությամբ, որն ուներ փրկագործությունից առաջ, ոչ էլ այն ազատությամբ, որն ունենալու է հազարամյակից հետո:

ԳԼՈՒԽ Ը

ՇՆՈՐՀՆԵՐ. ԼԵԶՈՒՆԵՐԻ ՊԱՐԳԵՎ

Մեր բողոքական եղբայրներից շատերը ձգտում են շնորհներ ձեռք բերել և կառչում են դրանցից՝ կարծելով, թե դրանք որդիներ և ժառանգներ լինելու արտոնությունն են տալիս իրենց: Նրանք հիմնվում են հետևյալ խոսքի միայն մի մասի վրա՝ ***«Բայց նախանձավոր եղեք լավագույն շնորհներին»****՝ անտեսելով խոսքի շարունակությունը՝* ***«սակայն ես ձեզ ավելի բարձր ճանապարհ եմ ցույց տալիս»*** *(Ա Կոր. ԺԲ 31): Եվ շեշտը լեզուների շնորհի (պարգևի) վրա դնելով՝ մոռանում են, որ վերոբերյալ խոսքից անմիջապես հետո առաքյալն ասում է.* ***«Եթե մարդկանց և հրեշտակների լեզուներով խոսեմ, սակայն սեր չունենամ, կլինեմ իբրև հնչող պղինձ կամ ղողանջող ծնծղա»*** *(Ա Կոր. ԺԳ 1)՝ բացատրելով, որ սերն է բոլոր շնորհներից ամենամեծը:*

Հոգու պտուղն առավել կարևոր է քո փրկության համար, քան Հոգու շնորհները:

Ս. Պողոս առաքյալը Գաղ. Ե 22-ում գրում է Հոգու պտուղների մասին. ***«Իսկ Հոգու պտուղը սա է. սեր, խնդություն, խաղաղություն, համբերատարություն, քաղցրություն, բարություն, հավատ, հեզություն, ժուժկալություն»:*** *Առաքյալն առաջին պտղի՝ սիրո մասին ասում է, որ այն հավատից և հույսից առավել է (Ա Կոր. ԺԳ 2, 13), նույնիսկ լեռները շարժող հավատից, իսկ Տերն ասում է, որ սիրուց են կախված ամբողջ Օրենքն ու Մարգարեները (Մատթ. ԻԲ 40):*

Երբ առաքյալներն ուրախացել էին իրենց տրված շնորհների համար, Տերն ասաց նրանց. ***«Մի՛ ուրախացեք..., այլ առավել ուրախ եղեք, որ ձեր անունները գրված են երկնքում»*** *(Ղուկ. Ժ 20):*

Շատ մարդիկ են շնորհներ ունեցել, սակայն կորցրել են իրենց փրկությունն ու կորստյան մատնվել:

Նրանց տրված շնորհները չեն նպաստել նրանց փրկությանը, ինչպես Տերն ասաց. ***«Շատերն ինձ այդ օրը կասեն. «Տե՛ր, Տե՛ր, մի՞թե Քո անունով չմարգարեացանք, Քո անունով դևեր չհանեցինք և Քո անունով բազում հրաշքներ չգործեցինք»: Սակայն Ես այդ ժամանակ կասեմ նրանց. «Ես ձեզ երբեք չեմ ճանաչել. հեռացե՛ք ինձանից բոլորդ, որ անօրենություն էիք գործում»*** *(Մատթ. Է 22-23):*

Շնորհները քո արժանիքի համար չեն տրված. հետևաբար դու նրանց համար վարձատրության արժանի չես:

Շնորհները չեն կարող քո փրկությունն ապահովել. ուրեմն ինչո՞ւ ես ձգտում ունենալ դրանք: Շնորհները փորձում են այնպիսիներին, ովքեր կամենում են փառավորել իրենց: Իսկ մեծ սրբերը, ովքեր խոնարհ են, խուսափում են շնորհներից: Ճշմարիտ է սուրբ հայրերից մեկի հետևյալ խոսքը.

«Եթե Տերը քեզ որևէ շնորհ է տվել, խնդրիր Նրան տալ քեզ նաև խոնարհություն՝ պաշտպանվելու համար, և կամ խնդրիր Նրան, որ շնորհը վերցնի քեզանից»:

Ս. Պողոս առաքյալը, օրինակ, Տիրոջից բազմաթիվ շնորհներ էր ստացել, սակայն ասում է. ***«Եվ որպեսզի հայտնությունների առավելությամբ չհպարտանամ, ինձ տրվեց մարմնի խայթ՝ սատանայի հրեշտակ՝ հարվածելու ինձ, որպեսզի չհպարտանամ»*** *(Բ Կոր. ԺԲ 7): Նույնիսկ այսպիսի մեծ առաքյալը, ով շնորհի աջակցությունն ուներ և հափշտակվել էր մինչև երրորդ երկինք (Բ Կոր. ԺԲ 2), Հոգու՝ իրեն տրված շնորհների պատճառով վտանգի էր ենթարկված: Հետևաբար, եթե այնպիսի մեծ մի առաքյալի, ինչպիսին ս. Պողոսն էր, շնորհների պատճառով վտանգ էր սպառնում, ապա ներկա ժամանակների երիտասարդները երկյուղ չպիտի՞ ունենան, երբ շնորհներ են փնտրում՝ կարծելով, թե դրանք ունենալն իրենց իրավունքն է և նրանց հոգևոր առաջնորդներն էլ իրենց ձեռքերը նրանց վրա են դնում՝ այդ շնորհների ընդունման համար:*

Հակոբ նահապետը շնորհներ էր ստացել. նա օրհնությունն ընդունեց, տեսավ երկրից երկինք ձգվող սանդուղքն ու նրանով բարձրացող և իջնող հրեշտակներին, տեսավ հենց Աստծուն և խոսեց Նրա հետ, կռվի մեջ մտավ Նրա ու մարդկանց հետ և հաղթեց (Ծննդ. ԼԲ 28): Սակայն շնորհների դեմ պաշտպանելու համար Աստված դիպավ նրա զստին, այն վնասվեց, և Հակոբը կաղաց: Դա մարմնի տկարության մի տեսակ էր, որ Աստված Հակոբին տվեց՝ պաշտպանելու նրան շնորհների պատճառով եղած հպարտությունից:

Իսկ ինչ վերաբերում է ***«նախանձավոր եղեք լավագույն շնորհներին»*** *խոսքին, այն չի նշանակում, թե պետք է ձգտենք ունենալ դրանք, այլ թե պետք է մեր սիրտը սրբությամբ և խոնարհությամբ*

պատրաստենք, որ այն կարողանա նման շնորհներ ընդունել: Սակայն բոլոր շնորհները նշաններ ու հրաշքներ գործելու պարգևներ չեն. իմաստությունը, գիտությունն ու հավատը նույնպես շնորհներ են՝ ըստ առաքյալի վարդապետության (Ա Կոր. ԺԲ 8-9):

Եթե կամենում ես Աստծուն աղոթել որևէ լավ շնորհ ստանալու համար, նայիր, թե Տերն ինչ է սովորեցնում մեզ խնդրել: Լեռան քարոզում Տերն ասում է. ***«Նախ փնտրեք Աստծո արքայությունն ու Նրա արդարությունը, և մնացած ամեն ինչ նույնպես կտրվի ձեզ»*** *(Մատթ. Զ 33):*

Այլև Տերունական աղոթքում, որը Տերը սովորեցրեց մեզ և որն օրինակ ծառայող աղոթք է, մենք նկատում ենք, որ ոչ մի շնորհ չի խնդրվում:

Շատ ավելի վտանգավոր է, քան շնորհն ինքը, երբ գտնում ենք մեկին, ով ասում է մի ուրիշին. «Ես քեզ շնորհ եմ տալիս» կամ «Ես քեզ իմ փորձառությունը կփոխանցեմ», և ձեռքերը դնում է այդ անձի վրա և աղոթում, որ Սուրբ Հոգին կամ «լիությունը» տրվի նրան: Առավել զարմանալին այն է, որ նույնիսկ կանայք են ձեռքերը մարդկանց վրա դնում, որպեսզի վերջիններս Սուրբ Հոգին ստանան: Կինը կարող է բժշկության շնորհ ունենալ, սակայն՝

Սուրբ Հոգին տալը քահանաների գործն է: Առաքյալները սա անում էին ձեռքերը դնելով, այնուհետև նրանց հաջորդող քահանաները սա անում էին Ս. Դրոշմի խորհրդի կատարման ժամանակ:

Մենք ընդունում ենք Սուրբ Հոգին մկրտությունից հետո՝ Դրոշմի (Կնունքի) խորհրդի կատարման ժամանակ: Այս օծման մասին նշված է Ա Հովհ. Բ 20 և 27 համարներում, իսկ առաքյալների կողմից ձեռքերը դնելու մասին՝ Գործք Ը 14-17-ում:

Այսօր շատ մարդիկ պնդում են, թե ունեն առաքյալներին և նրանց հաջորդներին տրված նույն իշխանությունը: Նրանք ուրիշներին տալիս են Սուրբ Հոգին, որպեսզի լցվեն Նրանով և կարողանան լեզուներով խոսել: Ուղղափառության մեջ շնորհ ստացած անձինք ջանում են թաքցնել այն, ինչպես, օրինակ, ս. Սերապիոնն[60]*, ով բժշկության շնորհն ուներ, և ուրիշ սրբեր ևս:*

[60] Դ. դարի եգիպտացի անապատական:

<u>Շնորհները ձե՞ռք են բերվում, թե տրվում:</u>

Աստված տալիս է ինչ շնորհ որ կամենում է, ում որ կամենում է և երբ Իր աստվածային իմաստությունը որոշում է. որովհետև՝ ***«Աստծո արքայությունը չի գալիս խտրանքով»*** *(Ղուկ. ԺԷ 20): Շնորհը նման է քամու, որը փչում է ուր և կամենում է, և* ***«ինչպես Աստված բաժանեց յուրաքանչյուրին հավատքի չափը»*** *(Հռոմ. ԺԲ 3): Ինչո՞ւ ենք ուրեմն շնորհներ խնդրում, հատկապես՝ լեզուների շնորհը:*

Շնորհները չեն կարող տրվել մեկ անձից մյուսին, նրանք տրվում են Աստծո կամքով և Նրա Սուրբ Հոգու ներգործությամբ:

Լեզուներ խոսելու շնորհը, որը ստանալու համար ոմանք կարող են աղոթել, թերևս բավարարում է սնափառություն փնտրողների ամբարտավանությունը: Սնափառությունը փորձում է միայն հին և ո՛չ թե հոգևոր մարդուն[61]*: Ավելի վատթար է այն, որ երբեմն այս շնորհն ունեցողներն արհամարհում են այն չունեցողներին՝ համարելով նրանց մակարդակով ավելի ցածր, մինչ Սուրբ Գիրքը հայտնապես նշում է, որ լեզուների շնորհն ամենքի համար չէ (Ա Կոր. ԺԴ): Արդյոք սա մեզ կասկածելու իրավունք չի՞ տալիս նրանց վրա, ովքեր համարում են, թե ունեն այդ շնորհը:*

Եթե մեկը քեզ ասում է. «Եկ քեզ այս փորձառությունը տամ», ասա նրան. «Ես դրան արժանի չեմ: Ես բավականաչափ խոնարհություն չունեմ՝ դա տանելու համար: Սակայն եթե Աստված կամենա ինձ որևէ շնորհ պարգևել, Նա այն կտա ինձ առանց իմ այդ մասին խնդրելու: Այդ դեպքում ես պիտի աղոթեմ, որ Նա ինձ նաև խոնարհություն տա, որն ինձ կպաշտպանի բարձրամտությունից, և ես չեմ խոսի այդ շնորհի մասին կամ այն չեմ ցուցադրի ուրիշների առաջ, որպեսզի չլինի թե իմ կարողությունից վեր հոգևոր պատերազմների մեջ ընկնեմ»:

<u>Հոգեգալստական շարժումը և լեզուներով խոսելը</u>

Ամենաաչքի ընկնող երևույթը, որ առանձնացնում է այս շարժումը, այն է, որ նրա հետևորդները հավատում են Սուրբ Հոգով

[61] Տես Հռոմ. Զ 6, Եփես. Դ 22, Կող. Գ 9: **«Հին մարդը»** դեռևս անկատար, մարմնավոր ու մեղավոր կյանքով ապրող մարդն է, ով չի **«նորացել»** Քրիստոսով:

մկրտությանը (որը տարբերվում է ջրով և Հոգով մկրտությունից): Սա է այն, ինչի մասին իրենց գրքերում գրում են հոգեգալստականներն ու նրանց հետևող խարիզմատները Եգիպտոսում և այն կոչում Սուրբ Հոգու «էջք» կամ Սուրբ Հոգով «լցվել»:

Նրանք հավատում են, թե լեզուներով խոսելն ամենակարևոր հատկանիշն է, որ բնորոշում է Սուրբ Հոգով մկրտությունը կամ, ինչպես ասում են, Սուրբ Հոգու «իջնելը», «լցնելը» կամ «լիությունը»: Լեզուներով խոսելն, ըստ նրանց, առաջին նշանն է, թե Սուրբ Հոգին իջել է անձի վրա: Հետևաբար, երբ մեկը միանում է նրանց, ջանում են նրան լեզուներով խոսել տալ, որպեսզի նմանվի Հոգեգալստյան օրը Սուրբ Հոգին ստացած առաքյալներին: Նրանք շեշտը դնում են լեզուներով խոսելու վրա, ասես այն ամեն ինչ է, ինչպես և սովորեցնում են նրանց առաջնորդները, անկախ նրանից՝ այդ լեզուները հասկանալի են, թե ոչ: Հաճախ, եթե ոչ՝ միշտ, նրանց խոսած լեզուները պարզապես ոչինչ չարտահայտող ձայնարձակումներ են:

Իսկ ի՞նչ է Սուրբ Գիրքը մեզ սովորեցնում լեզուների վերաբերյալ:

Լեզուներով խոսելը

Երբ ուսումնասիրում ենք Սուրբ Գիրքը, հատկապես կորնթացիներին ուղղված առաջին թղթի տասնչորսերորդ (ԺԴ) գլուխը, որը կարող ենք կոչել «Լեզուների գլուխ», տեսնում ենք հետևյալը.

ա) Լեզուների շնորհն ամենավերջում հիշված շնորհն է:

Երբ ս. Պողոս առաքյալը կորնթացիներին ուղղված այս թղթում ներկայացնում է Հոգու շնորհները, նշում է լեզուներով խոսելու և թարգմանելու շնորհի մասին բոլոր շնորհների վերջում: **«Թեև տարբեր շնորհներ կան, սակայն Հոգին նույնն է.... Մեկին Հոգուց տրված է իմաստության խոսք, ուրիշին՝ գիտության խոսք՝ ըստ նույն Հոգու, մյուսին՝ հավատ՝ նույն Հոգով, մյուսին՝ հրաշագործության զորություններ, մյուսին՝ մարգարեություն, մյուսին՝ հոգիների ընտրություն, մյուսին՝ լեզուների տեսակներ, մի ուրիշին էլ՝ լեզուների թարգմանություն: Սակայն միևնույն Հոգին է հաջողում այս**

ամենը և բաժանում յուրաքանչյուրին, ինչպես կամենում է» (Ա Կոր. ԺԲ 4-11):

Այսպիսով, առաքյալը լեզուներով խոսելու և դրանք թարգմանելու շնորհների մասին խոսում է ամենավերջում՝ իմաստությունից, գիտությունից, հավատից, բժշկությունից, զորություններից, մարգարեությունից, հոգիների ընտրության շնորհից հետո: Նա ասում է նաև. **«Եվ որոնց Աստված կարգեց Եկեղեցում, սրանք են. նախ՝ առաքյալները, երկրորդ՝ մարգարեները, երրորդ՝ ուսուցիչները, ապա՝ զորություններ, հետո բժշկության շնորհներ, օգնություններ, առաջնորդներ, լեզուների տեսակներ, լեզուների թարգմանություններ»** (Ա Կոր. ԺԲ 28): Այստեղ նույնպես լեզուների մասին խոսվում է վերջում:

Ինչ վերաբերում է հետևյալ նախադասությանը. **«Նախանձավոր եղեք լավագույն շնորհներին: Սակայն ես ձեզ ավելի բարձր ճանապարհ եմ ցույց տալիս»** (Ա Կոր. ԺԲ 31), առաքյալը բացատրում է, որ այդ ճանապարհը սերն է (Ա Կոր. ԺԳ): Ապա բացատրում է, որ սերն ավելի մեծ ու կարևոր է, քան մարգարեությունը, գիտությունը և ամբողջ հավատը, որ կարող է լեռներ տեղաշարժել, և քան ողորմությունն ու ճգնակեցությունը: Նա ցույց է տալիս, որ սերն ավելի կարևոր է, քան մարդկանց և նույնիսկ հրեշտակների լեզուներով խոսելը: Նա ասում է. **«Եթե մարդկանց և հրեշտակների լեզուներով խոսեմ, սակայն սեր չունենամ, կլինեմ իբրև հնչող պղինձ կամ ղողանջող ծնծղա»** (Ա Կոր. ԺԳ 1):

բ) Լեզուներով խոսելը բոլոր մարդկանց համար չէ:

Ինչպես վերը նշվեց, Աստված յուրաքանչյուրին անհատապես բաշխում է, ինչպես և կամենում է (Ա Կոր. ԺԲ 11), և «մենք ունենք շնորհներ ըստ մեզ տրված զանազան շնորհների» (Հռոմ. ԺԲ 6), **«ինչպես Աստված բաժանեց յուրաքանչյուրին հավատքի չափը»** (Հռոմ. ԺԲ 3): Իսկ ինչ վերաբերում է լեզուներով խոսելուն, առաքյալը հայտնապես ասում է. **«Մի՞թե ամենքն առաքյալ են: Մի՞թե ամենքը մարգարե են: Մի՞թե ամենքն ուսուցիչ են: Մի՞թե ամենքը զորություններ ունեն: Մի՞թե ամենքը բժշկության շնորհ ունեն: Մի՞թե ամենքը լեզուներով են խոսում: Մի՞թե ամենքը թարգմանում են»** (Ա Կոր. ԺԲ 29-30): Այստեղից պարզ է դառնում, որ այս շնորհը բոլոր մարդկանց համար չէ:

Նույնիսկ առաքելական շրջանում պարտադիր չէր, որ բոլոր հավատացյալները լեզուներով խոսելու շնորհն ունենային: Դա անհրաժեշտ նշան չէր Սուրբ Հոգու՝ մարդու վրա իջման: Մեկը կարող է սուրբ լինել, սակայն լեզուներով չխոսել:

Միայն Աստված գիտի, թե որևէ շնորհ երբ և ինչու պետք է տրվի: Նա լեզուներով խոսելու շնորհն առատապես տվեց առաքյալների ժամանակ՝ ավետարանական քարոզության սկզբնական շրջանում՝ Աստծո խոսքի տարածման համար: Դա այդ ժամանակ շատ կարևոր էր: Սակայն լեզուներով խոսելը բոլոր ժամանակներում անհրաժեշտություն չէ, որովհետև գրված է. **«Եթե լեզուներ են, կլռեն»** (Ա Կոր. ԺԳ 8): Նույնիսկ առաքելական շրջանում լեզուներով խոսելու համար հատուկ պայմաններ կային, որոնցից մի քանիսը նշված են Ա Կոր. ԺԴ գլխում:

գ) Լեզուները պետք է ծառայեն Եկեղեցու հոգևոր շինությանը:

Ա Կոր. ԺԴ գլխում ամենակարևոր բառը «շինությունն» է: Առաքյալն այն կրկնում է մի քանի անգամ՝ հատուկ շեշտ դնելով դրա վրա:

Նա հայտնապես ասում է. **«Թող ամեն ինչ շինության համար լինի»** (Ա Կոր. ԺԴ 26), և՝ **«Նույնպես և դուք, քանի որ նախանձախնդիր եք հոգևոր բաներին, Եկեղեցու շինության համար ձգտում եք ավելին լինել»** (հմմտ 12): Առաքյալն ասում է, որ Եկեղեցու շինության համար **«ով մարգարեանում է, ավելին է, քան նա, ով լեզուներով է խոսում»** (հմմտ 5), և բացատրում է սրա պատճառը. **«Լեզուներով խոսողն իր անձն է շինում, իսկ մարգարեացողը շինում է Եկեղեցին»** (հմմտ 4): «Մարգարեություն» ասելով նա նկատի ունի ուսուցումը: Ուրեմն առաքյալը նախընտրում է մարգարեությունը, քանի որ, ըստ նրա խոսքի, **«Ով մարգարեանում է, խոսում է մարդկանց շինության, մխիթարության և սփոփանքի համար»** (հմմտ 3):

դ) Լեզուներով խոսելուն պիտի հետևի խոսվածի թարգմանությունը:

Առաքյալն ասում է. **«Ուրեմն, ով լեզուներով է խոսում, թող աղոթի, որ նաև թարգմանի»** (Ա Կոր. ԺԴ 13): **«Սակայն եթե թարգմանիչ չկա, թող լռի եկեղեցում»** (հմմտ 28): Պատճառն, ըստ առաքյալի, պարզ է. դա Եկեղեցու շինությունն է, ինչպես և

բացատրում է. **«Բայց թող թարգմանի, որպեսզի Եկեղեցին շինվի»** (հմմտ 5): Իսկ եթե թարգմանության պայմանը չի ապահովվում, պետք է լռի: Սա առաքելական հրաման է: Ուրեմն այլընտրանք չկա. կամ լեզուների թարգմանությամբ շինել Եկեղեցին, կամ լռել:

Թարգմանչի առկայությունը վկայությունն է նրա, որ լեզուներով խոսվածն իմաստ էր արտահայտում: Այսպիսով, լեզուներով խոսելու շնորհն իրականանում էր երկու անձով՝ խոսողի և թարգմանչի: Սրանով իրականանում է նաև հետևյալ խոսքը. **«Երկու և երեք վկաների բերանով ամեն խոսք պիտի հաստատվի»** (Բ Կոր. ԺԳ 1): Որովհետև եթե լեզուները չեն թարգմանվում, ո՞րն է դրանց օգուտը: Կամ եթե բոլոր լսողները հասկանում են խոսված լեզուն, ապա ո՞րն է լեզուներով խոսելու իմաստը:

ե) Ո՞րն է **«շինում է իր անձը»** խոսքի իմաստը:

Դա նշանակում է, որ սա անող մարդը հայտնվում է որոշակի հոգևոր վիճակում՝ իր մեջ կրելով Սուրբ Հոգին, և այս վիճակն օգտակար է նրա իսկ շինության համար: Պողոս առաքյալը երկու բան է նշում այս վիճակի մասին:

- Անձը լռություն է պահպանում, ինչպես իր և Աստծո միջև կատարվող ցանկացած այլ առանձնական հոգևոր գործառության ժամանակ. **«Թող լռի եկեղեցում և խոսի ինքն իր և Աստծո հետ»** (Ա Կոր. ԺԴ 28): Սա մի բան է, որ պիտի կատարվի նրա և Աստծո միջև՝ նրա սենյակում՝ փակ դռնով, և ոչ թե եկեղեցում՝ ժողովրդի առաջ՝ այնպես, որ լեզուներով խոսելը դառնա աղոթքի տեսակ: Սակայն նույնիսկ այս դեպքում՝

- Միտքն անպտուղ կլինի, և միայն հոգին կգործի, ինչպես առաքյալն է ասում. **«Որովհետև եթե խոսում եմ լեզվով, հոգիս աղոթում է, սակայն միտքս անպտուղ է»** (Ա Կոր. ԺԴ 14): Հետևաբար, առաքյալը եզրակացնում է, որ այսպիսի վիճակում խոսքի հասկանալիության կարիքը կա, որպեսզի անձը ոչ միայն հոգով աղոթի, այլև մտքով, նաև ոչ միայն հոգով երգի, այլև մտքով (հմմտ 15), որպեսզի նրա հոգևոր վիճակն առավել հաստատուն և զորավոր լինի:

Սակայն, չնայած այն զգուշավորությանը, որով առաքյալը գործածում է **«շինում է իր անձը»** խոսքը, և այն նկատողություններին, որ անում է այս կապակցությամբ՝ ցույց տալով, որ

հակառակ դեպքում արդյունքն անկատար հոգևոր շինություն պիտի լինի, հենց այս շինության համար էլ ասում է նաև. ***«Գոհանում եմ Աստծուց. բոլորիցդ էլ ավելի եմ լեզուներով խոսում: Սակայն եկեղեցում կամենում եմ հինգ բառ մտածելով ասել, որպեսզի ուրիշներին էլ խրատեմ, քան շատ խոսքեր՝ լեզվով»*** *(Ա Կոր. ԺԴ 18-19):*

Ուրեմն, կարիք չկա, որ մարդիկ ամբողջ զորությամբ ձգտեն լեզուներով խոսելու՝ սրանում մեծ հաղթանակ տեսնելով, և սա՝ եթե դա իսկապես Սուրբ Հոգու շնորհն է: Սակայն ի՞նչ ասել այն դեպքում, եթե լեզուներով խոսելը պարզապես ոմանց հայտարարությունն է և իրական չէ:

զ) Լեզուներով խոսելը նշան է անհավատների համար:

Առաքյալն ասում է. ***«Ուրեմն՝ լեզուները նշանի համար են, ո՛չ թե հավատացյալների, այլ անհավատների համար»*** *(Ա Կոր. ԺԴ 22): Նշանակում է՝ Աստված այս նշանը Եկեղեցուն տվել է առաքելական շրջանի սկզբում՝ օգնելու խոսքի տարածմանը առաքյալների լեզուն (արամեերենը) չհասկացող ժողովուրդների և ազգերի մեջ, որպեսզի ընդունեին հավատը, երբ առաքյալները քարոզում էին նրանց լեզուներով, ինչպես պատահեց, օրինակ, Հոգեգալստյան օրը:* ***«Բոլորը հիանում ու զարմանում էին», «որովհետև լսում էին, որ իրենցից յուրաքանչյուրի լեզվով էին խոսում»*** *(Գործք Բ 7, 6):*

Բայց ի՞նչ իմաստ կունենա, եթե մեկը կանգնի եկեղեցում՝ իր լեզվով խոսող մարդկանց մեջ, և նրանց հետ խոսի մի օտար լեզվով: Այդ պատճառով էլ առաքյալն ասում է, որ այսպիսի դեպքում թարգմանություն է անհրաժեշտ, այլապես՝ ***«Եթե թարգմանիչ չկա, թող լռի եկեղեցում»*** *(Ա Կոր. ԺԴ 28):*

է) Առաքյալը լեզուներով խոսելը խառնաշփոթ է համարում, եթե դա հոգևոր շինության համար չէ:

Նա ասում է. ***«Եթե ամբողջ եկեղեցին մի վայրում հավաքվի, և բոլորը լեզուներով խոսեն, այնտեղ մտնեն տգետներ կամ անհավատներ, չե՞ն ասի, թե՝ մոլագարում եք»*** *(Ա Կոր. ԺԴ 23): «Եթե լեզուներով հասկանալի խոսք չեք ասում, խոսքն ինչպե՞ս կիմացվի. կտացվի, որ օդի մեջ եք խոսում» (Համար 9):* ***«Իսկ արդ՝ եթե չգիտեմ խոսքի իմաստը, ես խոսողի համար օտար կլինեմ, խոսողն էլ՝ ինձ համար»*** *(Համար 11): Ամբողջ ԺԴ գլուխը այս միևնույն գաղափարն է հաստատում:*

ԳԼՈՒԽ Թ

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ

Ապաշխարության կարևորությունն անառարկելի է, սակայն ուղղափառներն ու այլ հարանվանություններն այն հասկանում են բոլորովին տարբեր կերպով՝ կապված նրա սահմանման, ներգործականության, կիրառության, փրկության համար անհրաժեշտության և այլ երեսների հետ: Ստորև մեկ առ մեկ կքննարկենք այս տարբերությունները:

ա) Ապաշխարությունը Եկեղեցու խորհուրդ է:

Ուղղափառության մեջ ապաշխարությունը Եկեղեցու յոթ խորհուրդներից մեկն է, որը կոչվում է Ապաշխարության խորհուրդ: Իսկ բողոքականների համար ապաշխարությունը խորհուրդ չէ, քանի որ նրանք չեն հավատում Եկեղեցու խորհուրդներին: Ուստի տարբերություն կա «ապաշխարություն» բառի և «Ապաշխարության խորհուրդ» արտահայտության միջև: Այս տարբերությունն ունի իր նշանակությունը և աստվածաբանական հետևանքները, որոնք պատրաստվում ենք բացատրել այստեղ:

բ) Ապաշխարություն և խոստովանություն

Ուղղափառության մեջ մեղքերի խոստովանությունն Ապաշխարության խորհրդի էական մասն է: Դրանով մենք նկատի ունենք հոգևորականի առաջ կատարված խոստովանությունը. ***«Ով ծածկում է իր ամբարշտությունը, հաջողություն չի ունենա, իսկ ով խոստովանում և հանդիմանում է այն, կլինի սիրելի»*** *(Առակ. ԻԸ 13):*

Հին Կտակարանում կարդում ենք, որ մարդիկ այդ ժամանակ էլ խոստովանում էին իրենց մեղքերը: ***«Եթե դրանցից որևէ մեկով մեղանչի և խոստովանի, թող Տիրոջ առաջ գործած մեղքի համար ընծա մատուցի»*** *(Ղևտ. Ե 5-6): Սուրբ Գիրքը լի է խոստովանությունների օրինակներով, և խոստովանության կիրառությունը շարունակվում է մինչև հինկտակարանյան վերջին մարգարեն և դրան հետևող ու Նոր Ուխտին նախորդող ժամանակաշրջանը, երբ մարդիկ բոլոր վայրերից գալիս էին Հովհաննես Մկրտչի մոտ, ինչպես պատմում է Սուրբ Գիրքը, և* ***«մկրտվում նրանից Հորդանանում՝ խոստովանելով իրենց մեղքերը»*** *(Մատթ. Գ 6):*

Նոր Ուխտում նույնպես կարդում ենք այս մասին. **«Եվ հավատացյալներից շատերը գալիս էին և խոստովանում ու պատմում իրենց գործերը»** (Գործք ԺԹ 18): Իսկ առաքյալն ասում է. **«Խոստովանեք միմյանց ձեր մեղքերը»** (Հակ. Ե 16):

Սակայն բողոքականները չեն հավատում խոստովանությանը և այն չեն համարում ապաշխարության մաս:

գ) Ապաշխարությունը և Եկեղեցին

Ճիշտ է, որ ապաշխարությունը սրտում տեղի ունեցող գործողություն է, որը ներառում է ցավ և զղջում, մեղքն ուրանալու նպատակ և գործնականապես էլ ամբողջ սրտով ուրացում, սակայն դա պիտի իր լրումը գտնի Եկեղեցում խոստովանության և մեղքերի արձակման միջոցով: Մեղավորը պետք է խոստովանի իր մեղքերը, իսկ քահանան տա արձակում ու թողություն՝ ըստ այն իշխանության, որը նրան տրված է Տիրոջ հետևյալ խոսքով. **«Առե՛ք Սուրբ Հոգին: Ում մեղքերը որ ներեք, ներված կլինեն, և ում մեղքերը որ կապեք, կապված կլինեն»** (Հովհ. Ի 22-23): Այնուհետև ապաշխարողն ուղղություն է ստանում իր հոգևոր հորից, որպեսզի ապաշխարության մեջ հաստատուն մնա:

Ըստ բողոքականների՝ ապաշխարությունը Եկեղեցու հետ բոլորովին կապ չունեցող գործողություն է, միայն անհատական, որը գործ չունի քահանայության հետ, որովհետև բողոքականները քահանայության չեն հավատում, այլ հավատում են Աստծո հետ ուղղակի հարաբերությանը:

Այս առումով, բողոքականները երկու հոսանքի են բաժանված:

ա) Նրանցից ոմանք բացեիբաց գրոհում են խոստովանության և քահանայության վրա: Սրանք ավելի թույլ մասն են, քանի որ իրենց տեսակետն արտահայտում են առանց քողարկման, և հավատքի մեջ ամուր մարդիկ զգուշանում են նրանցից: Նրանց տեսակետներն ավելի հստակ են, ուստի և դյուրավ հերքելի:

բ) Ուրիշներ չեն գրոհում խոստովանության, քահանայության կամ Հաղորդության վրա, սակայն ջանում են մարդկանց մոռանալ տալ խորհուրդները՝ դրանց անտեսմամբ և դրանց փոխարինող միջոցներ կիրառելով: Նրանք կարող են ասել. «Դու կարիքն ունես ապաշխարության և առ Աստված դարձի: Գնա քեզ գցիր Նրա ոտքերի առաջ, մեղքերդ հանձնիր Նրան, որ ների Իր արյամբ և դու

արդարանաս, ասես երբեք էլ չես մեղանչել: Նա կլվա քեզ, և դու ձյունից էլ սպիտակ կդառնաս»: Նրանք չեն խոսի քեզ հետ խոստովանության, արձակման և Հաղորդության անհրաժեշտության մասին: Նրանք անտեսում են դրանք, որպեսզի մարդիկ դրանք մոռանան և նրանց հոգևոր խոսքերով խաբվեն, որովհետև մարդկանց մեջ շատ են պարզամիտները: Այս ճանապարհը բացահայտ չէ, և մեր պարտքն է այն բացահայտել ժողովրդի առաջ:

դ) Ապաշխարությունն ու փրկությունը

Շատ բողոքականներ, Քրիստոսի արյան վրա շեշտը դնելով, ջանում են ապաշխարությունը վերացնել փրկության գործընթացից: Նրանք ասում են ժողովրդին. «Դու փրկված ես Քրիստոսի արյամբ և ոչ թե ապաշխարությամբ: Ապաշխարությունը գործ է, իսկ դու գործերով չես փրկված»:

Մենք չենք ժխտում, որ փրկությունն իրականանում է Քրիստոսի արյամբ: Բայց Տեր Քրիստոսն Ինքն է սովորեցնում, որ փրկությունն իրագործվել չի կարող առանց ապաշխարության: Նա ասում է. **«Եթե չապաշխարեք, բոլորդ էլ նույն կերպ կորստյան կմատնվեք»** (Ղուկ. ԺԳ 3):

Այսպիսով, ապաշխարությունն անհրաժեշտ է փրկության համար, որովհետև անմեղ մարդ չկա: Քանի կա մեղք, կա նաև պատիժ, և գիտենք, որ **«մեղքի վարձը մահն է»** (Հռոմ. Զ 23), և միայն ապաշխարությամբ կարող ենք մահվանից փրկվել: Ապաշխարությունն է մեզ արժանի դարձնում Քրիստոսի արյանը, այլապես ամենքս կորստյան կմատնվենք, ինչպես Ինքն իսկ ասաց:

ե) Ապաշխարությունը և շնորհի ներգործությունը

Շատ բողոքականներ հավատում են, որ ապաշխարությունը շնորհի գործն է, ուստի մարդու ամեն ջանք անարժեք է: Բավական է, որ մարդ իրեն գցի Քրիստոսի ոտքերի առաջ, որպեսզի փրկվի որևէ մեղքից:

Ի հակադրություն սրա՝ ուղղափառությունը սովորեցնում է, որ մարդու հոգևոր կյանքը գործակցություն է Սուրբ Հոգու հետ: Սուրբ Հոգին օգնում է, իսկ մարդը պետք է ջանք թափի: Զջանալու դեպքում կհանդիմանվենք առաքյալի հետևյալ խոսքով. **«Դեռևս արյան չափ չեք հակառակել մեղքին»** (Եբր. ԺԲ 4): Հոգևոր կյանքը Սուրբ Գրքում ներկայացվում է իբրև պատերազմ, որը կարիքն ունի

Աստծո ամբողջական սպառազինության, որովհետև ***«մենք ոչ թե մարմնի և արյան դեմ ենք պատերազմում, այլ իշխանություններ-ի.... չար ոգիների....»*** *(Եփես. Զ 12): Այսպիսի պատերազմում անկասկած յուրաքանչյուրը կարիքն ունի պայքարելու և հաղթելու:*

Այս պատերազմի մասին է Տեր Քրիստոսը խոսում յոթ Եկեղեցիների հրեշտակներին ուղղած Իր պատգամում. ***«Նրան, ով հաղթի, կտամ....»*** *(Հայտ. Բ 7): Ամեն ինչ շնորհը չէ, որ պիտի անի, այլապես Աստված չէր ասի.* ***«Դարձե՛ք դեպի Ինձ, և Ես կդառնամ դեպի ձեզ»*** *(Զաք. Ա 3):*

գ) Ապաշխարությունը և փորձառությունը

Ապաշխարությունը բողոքականների կողմից դիտվում է իբրև փորձառություն: Նրանք մարդկանց թելադրում են պատմել իրենց փորձառությունները, որպեսզի դու լսես նրանցից. «Ես այսպիսին և այսպիսին էի և ահա դարձա այսպիսին և այսպիսին»: Ապաշխարողն առանց ամաչելու կարող է պատմել իր բոլոր մեղքերն ամենքի առաջ և ասել, որ իր մեղքերը ծածկված են շնորհով: Եթե ապաշխարողը լռում է, մարդիկ նրան քաջալերում են, որ խոսի և պատմի իր «փորձառությունները»:

Մինչդեռ ուղղափառները, ընդհակառակը, չեն թույլատրում սա, որովհետև սրանում կա սնապարծություն՝ կապված ապաշխարողի հետ իրականացած փոփոխության հետ:

դ) Ապաշխարությունը և ուրախությունն ու սրտի փշրվածությունը

Ուղղափառությունը սովորեցնում է, որ ապաշխարողը պետք է փշրված սիրտ ունենա և միշտ հիշի Աստծո դեմ գործած իր մեղքերը՝ թրջելով անկողինն արտասուքով, ինչպես Դավիթ մարգարեն (Սաղմ. Զ 7):

Մինչդեռ բողոքականները մարդկանց հրավիրում են ուրախության՝ առանց սրտի փշրվածության զգացումի: Նրանք հաճախ ապաշխարողին, անմիջապես նրա ապաշխարությունից հետո, որևէ հոգևոր պաշտոն են տալիս՝ առանց նրան իր մեղքերի համար ցավելու առիթն ընծայելու, այն մտքով, թե նա պետք է ուրախանա իր փրկության համար:

Այս կապակցությամբ մենք կամենում ենք բացատրել, որ երբ Հին Ուխտում մարդիկ ուտում էին Զատկի գառը, չնայած նրանց ուրախությանը, որ փրկվել են հրեշտակի սրից՝ նրանց հրամայված էր այն ուտել դառն բույսերով (Ելք ԺԲ 8): Դառն բույսերը հիշեցնում էին նրանց իրենց մեղքերը, որոնց պատճառով և դարձան փարավոնի ստրուկները: Հետևաբար, թեև Զատիկը հիշեցնում էր նրանց իրենց փրկության համար եղած ուրախությունը, սակայն զատկական գառը պիտի ուտվեր դառն բույսերով:

Ինչպես են բողոքականներն ընդունում ապաշխարության համար ճաշակված «դառն բույսերը»:

Նրանց գրքերից մեկը քննադատում է սրտի փշրվածությունն արտահայտող ցանկացած խոսք, նույնիսկ «Տեր, ողորմի՛ր» (Տեր ողորմյա) խոսքը, որը մենք կրկնում ենք մեր աղոթքներում: Նրանք գտնում են, որ այսպիսի խոսքերը հակասում են փրկության ուրախությանը:

ը) Ապաշխարությունն ու հոգևոր նորոգությունը

Ինչ որ մենք՝ ուղղափառներս, կոչում ենք «ապաշխարություն», բողոքականների կողմից անվանվում է «նորոգություն», «վերածնունդ» կամ «փրկություն»: Ուստի նրանք հարցնում են միմյանց. «Դու նորոգվե՞լ ես: Դու փրկվե՞լ ես: Դու վերածնվե՞լ ես»: Այս ամենով նրանք նկատի ունեն այդ անձի կողմից ապրված ապաշխարության վիճակը:

Ուղղափառության մեջ բոլոր սրանք՝ «նորոգությունը», «վերածնունդը», «փրկությունը», ձեռք են բերվում Մկրտության խորհրդի կատարմամբ, մինչդեռ ապաշխարությունը նշանակում է մարդու ապրելակերպում որոշակի փոփոխություն:

թ) Ապաշխարությունը նախորդում է մնացած բոլոր խորհուրդներին:

Ապաշխարությունը նախորդում է Մկրտության խորհրդին, ինչպես ս. Պետրոս առաքյալն է ասում. ***«Ապաշխարե՛ք, և թող ձեզանից յուրաքանչյուրը մկրտվի»*** *(Գործք Բ 38): Այն նախորդում է նաև Հաղորդության խորհրդին՝ ըստ Պողոս առաքյալի (Ա Կոր. ԺԱ 27-29), այլև Հիվանդների օծման խորհրդին*[62] *(Հակ. Ե 14-15): Այն նախորդում է նաև մնացած խորհուրդներին, քանի որ եթե խորհուրդները Սուրբ Հոգու շնորհներն են, ապա պետք է դրանց նախորդի ապաշխարությունը, որը մաքրում է մարդու սիրտը: Քանի որ բողոքականները խորհուրդներին չեն հավատում և*

[62] Այսպես է Դպտի Եկեղեցում:

ապաշխարությունը խորհուրդ չեն դիտում, այս սկզբունքը նրանց չի հետաքրքրում:

ժ) Ապաշխարություն, վարք և գործեր

Բողոքականները քրիստոնեական կյանքը դիտում են իբրև շնորհի և հավատի կյանք և ոչ թե կյանք, որ հիմնված է վարքի և գործերի վրա: Ուղղափառները համաձայն են, որ շնորհն ու հավատը կարևոր են, սակայն Հովհաննես Մկրտչի հետ միասին մարդկանց կոչ են անում բերելու ***«ապաշխարությանն արժանի պտուղներ»*** *(Մատթ. Գ 8)՝ հավատալով, որ վարքը կարևոր և էական է փրկության համար:*

Բողոքականներն ամբողջ շեշտը դնում են մաքրագործման համար Քրիստոսի արյան անհրաժեշտության վրա: Ուստի մենք նրանց առաջ դնում ենք Հովհաննես առաքյալի խոսքը, որը ցույց է տալիս Տիրոջ արյան և վարքի միջև առնչությունը. ***«Իսկ եթե լույսի միջով ենք քայլում, ինչպես որ Նա է լույս, հաղորդություն ունենք միմյանց հետ, և Նրա Որդի Հիսուսի արյունը մեզ մաքրում է ամեն մեղքից»*** *(Ա. Հովհ. Ա 7): Այստեղ առաքյալը վարքը ներկայացնում է իբրև նախապայման: Ոչ մի մաքրագործում չի կարող տեղի ունենալ Արյամբ, եթե չի արդյունավորվել ապաշխարությունից, որն էական պայման է:*

ԳԼՈՒԽ Ժ

ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Ս. Պողոս առաքյալը, խոսելով Տեր Քրիստոսի փրկչական քավության մասին, ասում է. ***«Որովհետև կա.... մեկ Միջնորդ Աստծո և մարդկանց միջև՝ Հիսուս Քրիստոս Մարդը, ով Իրեն իբրև փրկանք տվեց բոլորի համար»*** *(Ա Տիմ. Բ 5): Ս. Հովհաննես առաքյալը նույնպես նման միտք է արտահայտում քավության և դրա հետ կապված միջնորդության մասին: Նա ասում է.* ***«Եթե մեկը մեղանչի, Աստծո առաջ բարեխոս ունենք Հիսուս Քրիստոսին՝ արդարին և անարատին: Նա է մեր մեղքերի քավությունը, և ոչ միայն մեր, այլև ամբողջ աշխարհի»*** *(Ա Հովհ. Բ 1-2):*

Հետևաբար, այն միջնորդությունը, որի մասին ս. Պողոս առաքյալը խոսում է, վերաբերում է փրկագործությանը: Իսկ այն բարեխոսությունը, որի մասին ս. Հովհաննես առաքյալն է խոսում, վերաբերում է քավությանը:

Սակայն մեր բողոքական եղբայրները գործածում են այս երկու համարներն ավելի լայն իմաստով՝ փրկագործությունից ու քավությունից հասցնելով Աստծո և մարդու միջև ցանկացած միջնորդության մերժմանը: Նրանք հավատում են Աստծո և մարդու միջև ուղղակի հարաբերությանը, ինչ պատճառով և կարիք չունեն քահանայության կամ Եկեղեցու միջնորդության:

Նրանք քահանայությունը դիտում են իբրև միջնորդություն, ուստիև չեն հավատում դրան: Սրբերի բարեխոսությունը նույնպես համարում են միջնորդություն, ուստի չեն հավատում և սրան: Եվ քանի որ մեղքերի խոստովանությունն ու արձակումն իրագործվում են քահանայի միջոցով, նրանք դրանց կարիքը չունեն: Նրանք հավատում են, որ իրենք ուղղակի Աստծուց են թողություն ստանում՝ անմիջապես Նրան խոստովանելու միջոցով:

Նրանք կարևորություն չեն տալիս նաև հանգուցյալների համար աղոթքին՝ համարելով, որ սա նույնպես Եկեղեցու բարեխոսությունն է նրանց համար, ուստիև միջնորդության մի տեսակ:

Վերցնենք Մկրտությունն իբրև մեկ այլ օրինակ:

Մկրտությամբ վերածնունդը (Հովհ. Գ 5, Տիտ. Գ 5), մկրտության

միջոցով արդարացումն ու մեղքերի թողությունը (Գործք Բ 38, ԻԲ 16), ըստ բողոքականների, ձեռք են բերվում պարզապես հավատով՝ այն ուղղակի հարաբերությամբ, որ նրանք կարծում են, թե ունեն Աստծո հետ, և որը նրանց համար ավելորդ է դարձնում քահանայությունն ու Եկեղեցին:

Միայն հավատը, ըստ նրանց, բավական է փրկության հասնելու համար:

Կարծեք Մկրտությունը փրկության համար ոչ մի արժեք չունի, կամ Տեր Հիսուսը չէ, որ ասում է. **«Ով հավատա և մկրտվի, կփրկվի»** (Մարկ. ԺԶ 16): Տես նաև աստվածաշնչյան մյուս համարները, որ ցույց են տալիս Մկրտության և փրկության միջև եղած առնչությունը (Ա Պետ. Գ 20-21, Տիտ. Գ 5):

Նշանակում է՝ նրանք հավատում են, որ մարդ փրկվում է մեկ վայրկյանում:

Նրանք հավատում են, որ փրկությունը Մկրտության կարիքը չունի, քանի որ այն կատարվում է Եկեղեցու միջոցով, մինչ փրկությունը կախված է միայն Աստծո և մարդու միջև ուղղակի հարաբերությունից, անձնական հավատի միջոցով, առանց Եկեղեցու միջնորդության:

Հավատ

Այստեղ կամենում եմ հարց տալ հավատի մասին, այն հավատի, որով է բողոքականը կարծում, թե կարող է միանգամից ձեռք բերել արդարացում, վերածնունդ, որդեգրություն, մեղքերի թողություն և փրկություն, կամ ինչպես նրանցից ոմանք են ասում՝ «Ամեն ինչ կարելի է ձեռք բերել հավատով»: Հարցս հետևյալն է.

Ինչպե՞ս մարդ կարող է այսպիսի հավատ ձեռք բերել: Մի՞թե դա Եկեղեցու միջոցով չի կատարվում:

Պետք է քարոզիչ լինի, ում միջոցով մարդիկ հավատան, և այսպիսի քարոզիչը պիտի ուղարկվի Եկեղեցու կողմից, ինչպես ս. Պողոս առաքյալն է բացատրում. **«Ով Տիրոջ անունը կանչի, կփրկվի: Իսկ ինչպե՞ս կկանչեն նրան, ում չհավատացին. կամ ինչպե՞ս կհավատան նրան, ում մասին չլսեցին**[63]**. կամ ինչպե՞ս կլսեն առանց մեկի քարոզելու. կամ ինչպե՞ս կքարոզեն, եթե չուղարկվեն»** (Հռոմ. Ժ 13, 14-15): Նշանակում է՝ Եկեղեցին այն միջնորդն է, որի միջոցով մարդիկ հասնում են առ Աստված հավատին:

Ս. Պողոս առաքյալն այս մասին բացատրում է կորնթացիներին՝ կապված իր և Ապողոսի սպասավորության հետ՝ ասելով. **«Իսկ արդ՝ ո՞վ է Պողոսը կամ ո՞վ է Ապողոսը. սպասավորներ, ում միջոցով հավատացիք»** (Ա Կոր. Գ 4-5): Նրանց ծառայության միջոցով էր, որ կորնթացիները հավատացին:

Նույնը նշված է նաև Հովհաննես Մկրտչի վերաբերյալ. **«Նա եկավ վկայելու համար, որպեսզի վկայի Լույսի մասին, որպեսզի ամենքը հավատան նրա միջոցով»** (Հովհ. Ա 7):

Ուրեմն՝ առաջին միջնորդությունն Աստծո և մարդկանց միջև սա է՝ մարդկանց մղել Աստծուն հավատալու:

Եթե Աստծո և մարդկանց միջև միջնորդ չի կարող լինել, ապա ո՞րն էր գործը մարգարեների, առաքյալների և ուսուցիչների (վարդապետներ):

Գրված է, որ Տերը **«տվեց ոմանց լինելու առաքյալներ, ոմանց՝ մարգարեներ, ոմանց՝ ավետարանիչներ, ոմանց՝ հովիվներ և ուսուցիչներ»** (Եփես. Դ 11): Իսկ ինչո՞ւ: Ո՞րն է նրանց բոլորի գործը, եթե ոչ՝ լինել Աստծո և մարդկանց միջև միջնորդ: Ուստիև առաքյալն ասում է, որ նրանց գործը **«սրբերին հաստատելու, ծառայության գործի և Քրիստոսի մարմնի շինության համար է»** (Եփես. Դ 12):

Նրանք հավատքն են բերում մարդկանց:

Եվ երբ մարդիկ հավատում են, նրանց թողնում են այս հանգրվանո՞ւմ: Ո՛չ, նրանց մկրտում են:

Տեր Հիսուսն ասաց Իր սուրբ առաքյալներին. **«Գնացեք ամբողջ աշխարհով մեկ և քարոզեք Ավետարանը բոլոր արարածներին: Ով հավատա և մկրտվի, կփրկվի»** (Մարկ. ԺԶ 15-16): Նաև՝ **«Գնացեք այսուհետև, աշակերտ դարձրեք բոլոր հեթանոսներին, մկրտեք նրանց Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով: Սովորեցրեք նրանց պահել այն ամենն, ինչ պատվիրեցի ձեզ»** (Մատթ. ԻԸ 19-20):

Եկեղեցու քարոզության և ուսուցանության այս գործի միջոցով էր, որ հավատը տարածվեց:

63 Ըստ գրաբ. թարգմանության՝ **«ում չլսեցին»**:

Մկրտություն

Եկեղեցին մկրտում էր բոլոր հավատացողներին:

Առաքյալները մկրտեցին երեք հազար հրեաների, ովքեր հավատացին Հոգեգալստյան օրը (Գործք Բ 37-41): Նրանք մկրտեցին Սամարիայի բնակիչներին, երբ սրանք հավատացին (Գործք Ը 12-16): Եթիոպացի ներքինին մկրտվեց հավատալուց հետո (Գործք Ը 37-38), մկրտվեց նաև Փիլիպպուսի բանտապետը, ում Պողոս առաքյալն ասաց. **«Հավատա՛ Տեր Հիսուս Քրիստոսին, և կփրկվեք դու և քո ընտանիքը»** (Գործք ԺԶ 31), և **«անմիջապես մկրտվեցին նա և նրա ամբողջ ընտանիքը»** (Գործք ԺԶ 33): Ծիրանավաճառ Լիդիան նույնպես մկրտվեց իր ողջ ընտանիքով (Գործք ԺԶ 15):

Ուրեմն, ինչպես տեսանք, Եկեղեցին դարձավ միջնորդ՝ հավատը տարածելու և հավատացողներին ու սրանց ընտանիքները մկրտելու գործում:

Հետևաբար կարո՞ղ է մեկը համարձակվել ասելու, թե քավությունից ու փրկագործությունից բացի չկա այլ միջնորդություն Աստծո և մարդկանց միջև: Եկեղեցու գործն էր քարոզելն ու հավատը սփռելը, և նրա քահանաները մկրտում էին հավատացյալներին: Այս քահանաները Սուրբ Գրքում հաճախ կոչվում են **«պատգամավորներ»** (Բ Կոր. Ե 20), **«Աստծո տնտես»** (Տիտ. Ա 7), կամ՝ **«Աստծո խորհուրդների տնտեսներ» (Ա. Կոր. Դ 1)**: Ուրիշ ի՞նչ:

Տերը նրանց և մի՛այն նրանց է հանձնել ուսուցման գործը:

Ուսուցանում

Երբ Տերն առաքյալներին հանձնեց քարոզելու և մկրտելու գործը, ասաց նրանց. **«Սովորեցրեք նրանց պահել այն ամենն, ինչ պատվիրեցի ձեզ»** (Մատթ. ԻԸ 20): Այսպիսով, առաքյալները սկսեցին **«խոսքի սպասավորությունը»** (Գործք Զ 4)՝ այն խոսքի, որի մասին Հակոբոս առաքյալն ասում է. **«Կամենալով ծնեց մեզ ճշմարտության խոսքով»** (Հակ. Ա 18):

Խոսքը տանում է դեպի հավատ, և հավատը՝ դեպի մկրտություն, որի միջոցով երկրորդ ծնունդն է տեղի ունենում: Իսկ ուսուցանումը

խոսքի աղբյուրն է:

Ս. Պողոս առաքյալը Քրիստոսի և Եկեղեցու միջև հարաբերության մասին ասում է. **«Որպեսզի սրբի նրան՝ խոսքի միջոցով մաքրելով ջրով լվացմամբ»** (Եփես. Ե 26): Այստեղ խոսքն առաջնորդում է դեպի հավատ, հավատը՝ դեպի մկրտություն ու ջրով լվացում, որը լվանում է մեղքերից, և դեպի մաքրություն ու սրբագործում:

Ինչպես որ մկրտությունն ու հավատն են կապված փրկության հետ (Մարկ. ԺԶ 16), այդպես էլ ուսուցանման (վարդապետության) խոսքը:

Ուսուցանման խոսքն առաջնորդում է դեպի հավատ ու մկրտություն, որտեղից էլ՝ դեպի փրկություն, և կամ՝ առաջնորդում է դեպի ապաշխարություն, ապա՝ փրկություն: Ս. Պողոս առաքյալն ասում է իր աշակերտ ս. Տիմոթեոս եպիսկոպոսին. **«Զգո՛ւյշ եղիր անձիդ և վարդապետությանը և մնա՛ դրա մեջ: Եթե դա անես, կփրկես թե՛ քեզ, թե՛ քեզ լսողներին»** (Ա. Տիմ. Դ 16):

Ծնունդ Աստծուց

Անձը խոսքով, հավատով ու մկրտությամբ երկրորդ ծնունդն է առնում: Եկեղեցին մարդկանց ծնում է հավատով և մկրտությամբ:

Եկեղեցին մարդկանց ծնում է Սուրբ Հոգով՝ **«Ջրից և Հոգուց»** (Հովհ. Գ 5): Նա նրանց ծնում է Աստծո համար, որպեսզի դառնան Աստծո զավակները: Նույն մտքով է, որ ս. Պողոս առաքյալն ասում է Փիլիմոնին. **«Աղաչում եմ քեզ իմ որդի Ոնեսիմոսի համար, ում ծնեցի իմ շղթաներում»** (Փիլիմ. 10): Պողոս առաքյալը նկատի ունի հոգևոր ծնունդը, քանի որ ամուսնացած չէր: Նա նույնն ասում է կորնթացիներին. **«Թեկուզ բյուրավոր դաստիարակներ ունենաք ի Քրիստոս, սակայն ո՛չ՝ բազում հայրեր, որովհետև ի Քրիստոս Հիսուս ե՛ս ծնեցի ձեզ ավետարանի միջոցով»** (Ա. Կոր. Դ 15):

Աստծո համար զավակներ ծնելուց բացի, Եկեղեցու մի ուրիշ գործն է՝

Սուրբ Հոգին տալը

Եկեղեցին այն միջնորդն է, որով մկրտվողներին տրվում է Սուրբ Հոգին:

Արդյոք կարո՞ղ է մեկն ապրել հոգևոր կյանքով առանց իր մեջ Սուրբ Հոգու գործունեության: Եթե սա յուրաքանչյուր հավատացյալի համար կենսական անհրաժեշտություն է, ինչպե՞ս կարող է նա Սուրբ Հոգին ձեռք բերել:

Սուրբ Գիրքն ասում է, որ երբ առաքյալներն իմանում են, որ Սամարիայի բնակիչները դարձի են եկել, նրանց մոտ ուղարկում են Պետրոսին ու Հովհաննեսին՝ Սուրբ Հոգին տալու նրանց. **«Այդ ժամանակ ձեռքերը նրանց վրա դրեցին, և նրանք Սուրբ Հոգին ստացան»** (Գործք Ը 17): Նույնը պատահեց Եփեսոսի այն բնակիչներին, ովքեր մկրտվեցին. **«Եվ երբ Պողոսը ձեռքը դրեց նրանց վրա, Սուրբ Հոգին իջավ նրանց վրա»** (Գործք ԺԹ 6):

Այնուհետև Սուրբ Հոգին տրվում էր սուրբ օծման միջոցով (Ա Հովհ. Բ 20, 27):

Ինչպե՞ս կարող է հավատացյալն այս օծումը ստանալ: Իհա՛րկե Եկեղեցու միջոցով, որովհետև ոչ ոք չի կարող ինքն իրեն օծել: Ուրեմն իրավունք ունե՞նք ասելու, թե չկա միջնորդություն: Չէ՞ որ դու Սուրբ Հոգին ընդունել ես այս միջնորդության արդյունքում:

Օծման սովորությունը հասնում է մինչև հինկտակարանյան վաղ ժամանակները, երբ Աստված Մովսեսին պատվիրեց պատրաստել **«սուրբ օծման յուղ»** (Ելք Լ 25) և դրանով օծել Վկայության խորանն ու տապանակը, սեղանն ու անոթները. **«Սրբագործիր դրանք, որպեսզի լինեն սրբությունների սրբություն»** (Ելք Լ 25-30, 9-16):

Սուրբ օծմամբ Սամվել մարգարեն օծում էր թագավորներին, և Սուրբ Հոգին իջնում էր նրանց վրա (Ա Թագ. Ժ 10, ԺԶ 13):

Եկեղեցու մի ուրիշ միջնորդություն է՝

Տիրոջ համար սպասավորներ կարգելը

Աստծո թագավորությունը չի կարող շինվել առանց Տիրոջ սպասավորների: Այս գործը հանձնվել էր Եկեղեցուն, ինչպես երբ ծառայության համար ընտրում էին Բառնաբասին և Սավղոսին: **«Մինչ Տիրոջ պաշտամունքի մեջ էին և պահք էին պահում, Սուրբ Հոգին ասում է. «Առանձնացրեք Ինձ համար Բառնաբասին ու Սավղոսին այն գործի համար, որի համար կանչել եմ նրանց»** (Գործք ԺԳ 2):

Չնայած այս աստվածային կոչմանը՝ իբրև սպասավոր կարգվելը պիտի կատարվեր օրինական միջոցներով, այսինքն՝ Եկեղեցու և ձեռնադրության:

Ուստի, ինչպես Սուրբ Գիրքն է ասում, **«Այդ ժամանակ պահք պահելով և աղոթք անելով՝ ձեռքերը նրանց վրա դրեցին և ուղարկեցին: Եվ նրանք, Սուրբ Հոգուց ուղարկվելով, իջան Սելևկիա և այնտեղից նավեցին Կիպրոս»** (Գործք ԺԳ 3-4): Այսպիսով, նրանք Սուրբ Հոգու կողմից առաքված նկատվեցին միայն Եկեղեցու կողմից ձեռնադրությունից հետո:

Նույնը պատահեց նաև ս. Տիմոթեոս եպիսկոպոսին: Ս. Պողոս առաքյալն ասում է նրան. **«Ուստի հիշեցնում եմ քեզ արծարծել Աստծո շնորհը, որ քո մեջ է իմ կողմից ձեռնադրվելուդ միջոցով»** (Բ Տիմ. Ա 6): Շնորհն Աստծուց է, սակայն ձեռք է բերվում Եկեղեցում, քահանաների ձեռք դնելու միջոցով:

Բողոքականներն ընդունում են սպասավորներ կարգելու համար ձեռնադրությունը (ձեռքեր դնելը), սակայն չեն ընդունում Եկեղեցու միջնորդությունն Աստծո և մարդկանց միջև... **«Ով լսելու համար ականջ ունի, թող լսի»** (Մատթ. ԺԳ 43):

Հովվական գործն ու ապաշխարությունը

Արդյոք Աստված Իր հոտն առանց հովիվների՞ թողեց: Ո՛չ: Առաքյալն ասում է. **«Զգո՛ւյշ եղեք ձեր անձերին և այդ ամբողջ հոտին, որի վրա Սուրբ Հոգին ձեզ տեսուչներ կարգեց՝ հովվելու Տիրոջ ժողովրդին, որին փրկեց Իր արյամբ»** (Գործք Ի 28):

Աստված նրանց կարգեց՝ Իր անունից հոգալու Իր զավակների մասին:

Այս հովիվների գլխավոր գործը Աստծո զավակներին դեպի ապաշխարություն առաջնորդելն է, ինչպես Պողոս առաքյալն է ասում. **«....և տվեց մեզ հաշտության սպասավորությունը.... Ուստի պատգամավորում ենք հանուն Քրիստոսի, իբրև թե Աստված է բարեխոսում մեր միջոցով. աղաչում ենք հանուն Քրիստոսի՝ հաշտվե՛ք Աստծո հետ»** (Բ Կոր. Ե 18, 20):

Մի՞թե սա միջնորդություն չէ՝ Աստծո և մարդկանց միջև հաշտության համար:

Վերադառնանք այս գլխի սկզբին՝ տեսնելու Եկեղեցու միջնորդության տարրերը:

Ամեն միջնորդություն փրկության համար է:

Մարդկանց դեպի ապաշխարություն առաջնորդելու մասին առաքյալն ասում է. ***«....ով մեղավորին դարձնում է մոլորության ճանապարհից, մի հոգի***[64] ***փրկում է մահվանից և ծածկում մեղքերի մի ողջ բազմություն»*** *(Հակ. Ե 20): Ս. Հուդա առաքյալը նույնպես ասում է.* ***«Եվ ոմանց փրկեք կրակից խլելով»*** *(Հուդա 23):*

Մարդկանց դեպի հավատ ու մկրտություն առաջնորդելը նույնպես նրանց փրկության համար է (Մարկ. ԺԶ 16): Վարդապետությունը (ուսուցանումը) նույնպես իբրև նպատակ ունի փրկությունը (Ա Տիմ. Դ 16): Նույն նպատակին են ծառայում նաև Եկեղեցու կողմից կատարվող մնացած բոլոր կարգավորությունները:



[64] Ըստ գրաբ. թարգմանության՝ «իր հոգին»՝ «մի հոգի»-ի փոխարեն:

ԳԼՈՒԽ ԺԱ

ԾԻՍԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴԵՊԻ ԱՐԵՎԵԼՔ ՆԱՅԵԼԸ

Մենք եկեղեցիները կառուցում ենք այնպես, որ դրանք դեպի արևելք նայեն, և աղոթում ենք նույնպես նայելով դեպի արևելք: Արևելքը դարձել է մեզ համար խորհրդանիշ, որովհետև այն մեր սրտում առաջ է բերում խորին խորհրդածություններ: Այն նույնիսկ Աստծո մտքում տեղ ունի, ուստի է՛լ առավել կարևոր է դառնում այս նյութն ուշադրության արժանացնելը:

ա) Նախքան մարդուն ստեղծելը Աստված ստեղծեց արևելքը նրա համար իբրև լույսի աղբյուր, և Աստված տեսավ, որ լույսը բարի է: Լույսն արևելքից է գալիս՝ արևի ծագմամբ, որն Աստված ստեղծեց չորրորդ օրը՝ նախքան վեցերորդ օրը մարդուն ստեղծելը (Ծնն. Ա):

Արևածագը նմանեցվում է Տեր Հիսուս Քրիստոսի լույսի ծագմանը, և Տերն Ինքն էլ կոչվում է ***«Արդարության Արեգակ». «Եվ կծագի.... Արդարության Արեգակը, և բժշկություն կա Նրա թևերում»*** *(Մաղ. Դ 2):*

բ) Նախքան մարդու ստեղծումն Աստված նրա համար արևելքում Եդեմի պարտեզը տնկեց և նրան այնտեղ դրեց (Ծնն. Բ 8): Այնտեղ էր նաև Կյանքի ծառը: Եդեմի այս պարտեզը խորհրդանիշն է այն դրախտի, որին սպասում ենք: Այսպիսով, արևելք նայելը դարձել է մի նշան մարդու այն փափագի, որն ունի դրախտի (որից մեղքով զրկվեց) և Կյանքի ծառի հանդեպ:

գ) Արևելքում է ծնվել նաև Տեր Քրիստոսը, և իմաստուն մոգերը Նրա աստղն արևելքում տեսան (Մատթ. Բ 2): Աստղն Աստծո առաջնորդության խորհրդանիշն էր, որովհետև մոգերը հետևեցին նրան, և այն հասցրեց նրանց Տիրոջ մոտ... Ինչպիսի՜ գեղեցիկ խորհրդածություն...

դ) Ինչպես Տեր Քրիստոսն է ծնվել արևելքում և Նրա աստղը երևացել արևելքում, այդպես էլ Նրա Մայրն է ներկայացվում իբրև դեպի արևելք նայող դուռ (Եզեկ. Դ 1-2):

ե) Նմանապես և փրկությունն իրագործվեց արևելքում. որով-

հետև Տեր Քրիստոսը խաչվեց արևելքում, ուր Նրա արյունը թափվեց ամբողջ աշխարհի մեղքերի քավության համար:

զ) Քրիստոնեությունն ու Եկեղեցին սկիզբ առան Արևելքում: Աշխարհում առաջին եկեղեցին հիմնվեց Երուսաղեմում՝ Մեծ Արքայի քաղաքում: Այնտեղից էլ ավետարանը սփռվեց ամբողջ աշխարհում: Արևելքում թափվեց նաև առաջին քրիստոնյա նահատակի արյունը:

է) Աստվածաշնչյան բազում տեղիներում է ասվում, թե Աստծո փառքն արևելքում է, ինչպես՝

«Փառավորե՛ք Տիրոջն արևելքում» *(Ես. ԻԴ 15)*[65]*:*

«Եվ ահա Իսրայելի Աստծո փառքը եկավ արևելքի ճանապարհով» *(Եզ. ԽԳ 2):*

ը) Ըստ այսմ՝ շատ աստվածաբաններ ասում են, որ Տիրոջ երկրորդ գալուստը պիտի արևելքից լինի: Ինչպես Նա գնաց երկինք, այդպես էլ պիտի գա (Գործք Ա 11): Եվ Զաքարիա մարգարեի գրքում գրված է. ***«Եվ այդ օրը Նրա ոտքերը կկանգնեն Ձիթենյաց լեռան վրա՝ Երուսաղեմի դիմաց՝ արևելքից»*** *(Զաք. ԺԴ 4):*

թ) Արևելքի մասին խորհրդածությունը քաղցր է և բերում է շնորհառատ հիշատակներ, ինչպես՝

Եզեկ. է 1-9 համարները խոսում են արևելքում եղած կյանքի գետերի մասին:

Դ Թագ. ԺԳ 17 համարը խոսում է արևելքում եղած ***«Տիրոջ փրկության նետի»*** *մասին:*

Ես. ԻԴ 15 - ***«Փառավորեք Տիրոջն արևելքում»:***

ժ) Հիշատակները մեծ ներգործություն ունեն մարդու սրտի վրա՝ ներառելով նաև հոգևոր ազդեցությունը: Որքան մեծ էր Դանիել մարգարեն, երբ արհամարհելով կռապաշտությունը՝ գնաց իր վերնահարկը՝ աղոթելու: Այնտեղ բացեց պատուհանը, որ նայում էր դեպի Երուսաղեմ, ծնրադրեց ու աղոթեց: Ճշմարիտ է, որ Աստված ամենուր է, սակայն դեպի արևելքում գտնվող Երուսաղեմ նայելն ունի մեծ խորհուրդ և սրտի վրա խոր ազդեցություն է թողնում: Որոշ վայրերի հիշատակներ սուրբ զգացումներ են առաջացնում սրտում:

ժա) Մենք Աստծուն միայն մտքով չէ, որ երկրպագում ենք. մեր մարմնի զգայարանները նույնպես գործում են՝ ազդվելով հոգևոր

[65] Այսպես է ըստ եբրայական բնագրի:

զգացումներից, ինչպես նաև ազդելով նրանց վրա: Օրինակ՝ երբ աղոթում ենք, նայում ենք դեպի վեր, թեև Աստված ամենուր է: Դեպի վեր նայելը մեր սրտում առաջ է բերում հոգևոր զգացումներ, որոնք մեր աղոթքին հատուկ խորություն են տալիս: Տերն Ինքը, բազմաթիվ դիպվածներում, նայում էր դեպի վեր, թեև Հայրը Նրա մեջ էր և Ինքը՝ Հոր: Սակայն դեպի վեր նայելը հատուկ նշանակություն ունի:

Նույնը կարելի է ասել նաև դեպի արևելք նայելու վերաբերյալ:

ժբ) Երբ եկեղեցում նայում ենք դեպի արևելք, իրականում նայում ենք ս. Սեղանին, որն արևելքում է, որովհետև ս. Պատարագն իր հոգևոր նշանակությունն ունի մեր սրտում. Տեր Քրիստոսը՝ մեր Զատիկը, զոհաբերվեց արևելքում:

ժգ) Մկրտության արարողության ժամանակ մկրտվողն ու կնքահայրը նախ կանգնում են նայելով դեպի արևմուտք՝ իբրև նշան սատանայից հրաժարման, ապա շրջվում դեպի արևելք և արտասանում Հավատո խոստովանությունը: Արևմուտքից արևելք շրջվելու այս խորհրդանշական արարքով անձը զգում է, որ խավարից դեպի լույս է շրջվում:

ժդ) Հետևաբար, զարմանում ենք, թե ինչու են բողոքականները պայքարում արևելք նայելու այս գաղափարի դեմ՝ չնայած նրա բոլոր խորհուրդներին ու հոգևոր նշանակություններին, սուրբ խորհրդածություններին ու հիշատակներին, որոնք հիմնված են Աստվածաշնչի վրա, և չնայած որ այստեղ չկա որևէ աստվածաբանական սխալ, որ նրանց մեջ սուրբ նախանձախնդրություն արծարծեր:

ԽԱՉԻ ՀԱՐԳԱՆՔ

Մեր և բողոքականների միջև տարաձայնություններից մեկը վերաբերում է այն մեծ պատվին, որ մենք ընծայում ենք խաչին: Մենք խաչակնքվում ենք, նրանք՝ ոչ: Նրանք չեն խաչակնքվում ո՛չ աղոթելուց և ուտելուց առաջ, ո՛չ հետո, խաչի նշանը չեն գործածում օրհնության համար՝ մարդկանց թե, օրինակ, հագուստի:

Բողոքականները բավարարվում են իրենց ներքին հավատով, առանց խաչի նշանի գործածման: Մինչև վերջին ժամանակները նրանք խաչ չէին դնում իրենց եկեղեցիների վրա, և նրանցից

շատերն այն չեն կրում: Նրանք իրենց ձեռքը խաչ չեն բռնում, ոչ էլ խաչի տոներ նշում: Նրանք խաչի կրմամբ թափոր չեն կազմում եկեղեցու շուրջ՝ երգելով հոգևոր երգեր: Նրանք խաչը չեն համբուրում և նրանից օրհնություն չեն վերցնում:

Բացատրենք, թե ինչու ենք այսքան արժեք տալիս խաչին, և տեսնենք, թե որքան օգտակար է սա և համաձայն Սուրբ Գրքի ուսմունքին:

ա) Տեր Քրիստոսը մեծապես կարևորում էր խաչը:

Իր քարոզչության սկզբից ի վեր, նախքան խաչելությունը, Նա Իր քարոզներում մեծ շեշտ էր դնում խաչի խորհրդի վրա: Նա ասում է. ***«Եվ ով չի վերցնում իր խաչն ու գալիս Իմ հետևից, Ինձ արժանի չէ»*** *(Մատթ. Ժ 38), և՝* ***«Եթե մեկն ուզում է գալ Իմ հետևից, թող ուրանա Իրեն, վերցնի իր խաչն ու հետևի Ինձ»*** *(Մատթ. ԺԶ 24, Մարկ. Ը 34): Հարուստ պատանու հետ խոսելիս Նա ասում է.* ***«Գնա վաճառի՛ր ինչ որ ունես և տուր աղքատներին.... և վերցրու խաչն ու ե՛կ Իմ հետևից»*** *(Մարկ. Ժ 21): Նա նաև ասում է.* ***«Եվ ով չի վերցնում իր խաչն ու գալիս Իմ հետևից, չի կարող Իմ աշակերտը լինել»*** *(Ղուկ. ԺԴ 27):*

բ) Խաչը կարևորվեց հրեշտակի և առաքյալների կողմից:

Որքան գեղեցիկ է Տիրոջ հարությունը յուղաբեր կանանց ավետող հրեշտակի խոսքը. ***«Գիտեմ, որ խաչված Հիսուսին եք փնտրում: Այստեղ չէ, քանզի հարություն առավ, ինչպես ասել էր»*** *(Մատթ. ԻԸ 5-6): Հրեշտակը Տիրոջը* ***«խաչված»*** *է կոչում, թեև Նա հարություն էր առել, և այս անունը շարունակվեց տրվել Նրան:*

Առաքյալները գործածում էին այս անունը և իրենց քարոզության մեջ մեծ շեշտ դնում Տիրոջ խաչելության վրա: Հրեաներին քարոզելիս ս. Պետրոս առաքյալն ասում է. ***«Հիսուսը, ում դուք խաչեցիք»*** *(Գործք Բ 36): Պողոս առաքյալը նույնպես կարևորում է այս հանգամանքը, երբ ասում է.* ***«Մենք կքարոզենք խաչված Քրիստոսին»*** *(Ա Կոր. Ա 23), չնայած նրան, որ Տիրոջ խաչելությունը հրեաների համար գայթակղություն էր, իսկ հույների համար՝ հիմարություն:*

Առաքյալը խաչը համարում է քրիստոնեության էությունը, ուստիև կարևորում այն՝ ասելով. ***«Որովհետև չմտադրվեցի ճանաչել ձեզանում այլ բան, քան միայն Հիսուս Քրիստոսին և Նրան՝ խաչված»*** *(Ա Կոր. Բ 2), այսինքն՝ խաչն էր միակ բանը, որ*

առաքյալը կամենում էր ճանաչել:

գ) Առաքյալները հպարտանում էին խաչով:

Ս. Պողոս առաքյալն ասում է. ***«Քավ լիցի, որ ես հպարտանամ մեկ այլ բանով, քան մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով», ապա բացատրում է սրա պատճառը՝ շարունակելով հետևյալ խոսքով. «որով աշխարհը խաչված է ինձ համար, և ես՝ աշխարհի»*** *(Գաղ. Զ 14):*

դ) Երբ մենք խաչակնքվում ենք, *հիշում ենք խաչին վերաբերող բազմաթիվ աստվածաբանական և հոգևոր նշանակություններ:*

Հիշում ենք Աստծո սերը, ով մեր փրկության համար հանձն առավ մեռնել մեզ համար. ***«Ամենքս իբրև մոլորված ոչխարներ, մարդն իր ճանապարհին մոլորվեց. և Տերը Նրան մատնեց մեր մեղքերի պատճառով»*** (Ես. ԾԳ 6)*: Երբ մենք խաչակնքվում ենք, հիշում ենք* ***«Աստծո Գառին, որն [Իր վրա] է վերցնում աշխարհի մեղքը»*** *(Հովհ. Ա 29, Ա Հովհ. Բ 2):*

ե) Երբ մենք խաչակնքվում ենք, հայտարարում ենք, որ պատկանում ենք Խաչյալին:

Ովքեր հավատում են խաչի հոգևոր խորհրդին միայն իրենց սրտում, առանց արտաքին նշանի, հրապարակայնորեն չեն արտահայտում իրենց պատկանելությունը Քրիստոսին, ինչպես մենք, որ խաչակնքվում ենք, խաչը կրում, բոլորի առաջ համբուրում, մեր դաստակներին դրոշմում[66] *և դնում մեր պաշտամունքային վայրերի գլխին:*

Սրանով մենք հրապարակայնորեն ցույց ենք տալիս մեր հավատքն առանց մարդկանցից ամաչելու: Մենք հպարտանում ենք խաչով, այն ներկայացնում իբրև մեր անունը, նրա համար տոներ նշում և այն մեր ձեռքը բռնում: Առանց անգամ որևէ բառի արտասանության մեր արտաքինն արդեն մատնում է մեր հավատքը:

զ) Մարդ էակը միայն հոգի կամ միտք չէ, այլև ունի մարմնավոր զգայարաններ, որոնք պետք է զգան խաչը, ինչպես վերը ցույց տրվեց:

Ո՛չ բոլոր մարդիկ ունեն նույն հոգևոր մակարդակը, որում կարիքը չունեն մարմնավոր զգայությունների: Զգայարաններն իրենց սնունդը ստանում են վերոհիշյալ գործառույթներով, որոնց ազդեցությունը փոխանցում են մտքին ու հոգուն: Միտքը

66 Ղպտի ժողովրդի մեծամասնությունն իր աջ ձեռքի դաստակի ներսի մասում ունի խաչի դրոշմ, որը խարանվում է ղպտական վանքերում՝ ուխտավորների ձեռքին:

կարող է ինքնուրույնաբար չհիշել կամ սակավ հիշել խաչի խորհուրդը, սակայն զգայարանների միջոցով և խաչն իր առջև տեսնելով՝ նա կհիշի խաչի և Խաչյալի հետ կապված զգացումներն ու բոլոր հոգևոր ու աստվածաբանական խորհուրդները:

Այսպիսով, մենք Աստծուն պաշտում ենք հոգով, մտքով և մարմնով, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին զորացնում է մյուսին:

է) Մենք լռությամբ չենք խաչակնքվում, այլ ասում ենք. «Հանուն Հոր և Որդվո և Հոգվույն Սրբո»:

Սրանով մենք ամեն անգամ արտահայտում ենք մեր հավատը Սուրբ Երրորդության և մեկ Աստվածության հանդեպ: Այսպիսով Սուրբ Երրորդությունը միշտ մեր մտքում է, մինչ այսպես չէ նրանց պարագայում, ովքեր չեն խաչակնքվում, ինչպես մենք:

ը) Խաչի նշանով մենք արտահայտում ենք մեր հավատը նաև Տիրոջ մարդեղության և փրկագործության հանդեպ:

Երբ մենք խաչակնքվում ենք ձեռքն իջեցնելով վերևից ներքև, ապա տանելով ձախից աջ, հիշում ենք, որ Աստված երկնքից երկիր իջավ և մարդկանց ձախից դեպի աջ տարավ՝ խավարից դեպի լույս, մահվանից դեպի կյանք:

Շատ են այն նշանակությունները, որ կարող են անցնել մեր մտքով ու սրտով, երբ մեզ կնքում ենք խաչի նշանով:

թ) Խաչակնքվելով մենք մեր զավակներին և ուրիշներին հոգևոր դաս ենք տալիս:

Ով աղոթելիս, եկեղեցի մտնելիս, ուտելիս, պառկելիս և կամ այլ բան կատարելիս խաչակնքվում է, հիշում է խաչը: Այս հիշողությունը հոգևոր մեծ օգուտ ունի և համաձայն է Աստվածաշնչին: Այն սովորեցնում է մարդկանց, որ Տեր Քրիստոսը խաչվել է, և օգնում է, որ մեր երեխաները խաչին սովորելով մեծանան:

ժ) Խաչակնքվելով մենք հայտարարում ենք Տիրոջ մահը՝ ըստ Իր իսկ պատվերի:

Տիրոջ պատվերն է, որ հայտարարենք Իր մահը մեր փրկության համար, մինչև Ինքը գա (Ա Կոր. ԺԱ 23-26): Երբ մենք խաչակնքվում ենք, հիշում ենք միշտ Տիրոջ մահը, մինչև Նա գա: Մենք հիշում ենք Նրան նաև Հաղորդության խորհրդի կատարման ժամանակ, սակայն սա չի կատարվում ցանկացած ժամանակ, մինչ խաչակնքումը կարող է կատարվել ցանկացած ժամանակ՝ հիշեցնելով մեզ Տիրոջ մահը:

ժա) Խաչակնքվելիս մենք հիշում ենք, որ մեղքի վարձը մահն է:

Եթե մենք մեղք չունենայինք, Տեր Քրիստոսը չէր մեռնի: Մենք ***«մեռած էինք մեղքի մեջ»*** *(Եփես. Բ 5), բայց Տեր Քրիստոսը մեզ համար մեռավ խաչի վրա և մեզ կյանք շնորհեց: Երբ խաչի վրա Նա վճարում էր մեր մեղքի վարձը, ասաց Հորը.* ***«Հա՛յր, նե՛ր նրանց»:***

ժբ) Խաչակնքվելիս հիշում ենք մեր հանդեպ Աստծո սերը:

Մենք հիշում ենք, որ խաչը սիրո զոհաբերության խորհուրդն ունի. ***«Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր Միածին Որդուն տվեց, որպեսզի ով հավատում է Նրան, չկորչի, այլ հավիտենական կյանք ընդունի»*** *(Հովհ. Գ 16): Եվ հիշում ենք, որ* ***«Աստված մեր հանդեպ Իր սերը հայտնեց նրանով, որ մինչ մեղավոր էինք, Քրիստոսը մեզ համար մեռավ»****: Եվ* ***«հաշտվեցինք Աստծո հետ Նրա Որդու մահվամբ»*** *(Հռոմ. Ե 8, 10):*

Խաչի շնորհիվ հիշում ենք Աստծո ունեցած սերը մեր հանդեպ, որովհետև ***«ոչ ոք չունի ավելի մեծ սեր, քան այն, որ մեկն իր անձն է դնում իր բարեկամների համար»*** *(Հովհ. ԺԵ 13):*

ժգ) Մենք խաչակնքվում ենք, որովհետև դա մեզ զորություն է տալիս:

Ս. Պողոս առաքյալը, գիտենալով խաչի զորության մասին, ասում է. ***«....որով աշխարհը խաչված է ինձ համար, և ես՝ աշխարհի»*** *(Գաղ. Զ 14): Նաև՝* ***«Որովհետև խաչի մասին խոսքը հիմարություն է կորուսյալների համար, սակայն մեզ՝ փրկվածներիս համար՝ Աստծո զորություն»*** *(Ա Կոր. Ա 18): Մենք նկատում ենք, որ առաքյալը չի ասում, թե հենց խաչելությունն է Աստծո զորությունը, այլ՝ խաչի մասին միայն խոսքը:*

Հետևաբար, երբ մենք խաչակնքվում ենք և հիշում խաչը, լցվում ենք զորությամբ, որովհետև հիշում ենք, որ Տերը խաչի միջոցով տրորեց մահը և կյանք պարգևեց բոլոր մարդկանց՝ պարտության մատնելով սատանային: Ուստի՝

ժդ) Մենք խաչակնքվում ենք, որովհետև սատանան վախենում է դրանից:

Ադամի ժամանակվանից սկսած մինչև ժամանակների վերջը սատանայի բոլոր ջանքերն ուղղված են խաչի դեմ, որովհետև Տերը,

խաչի վրա թափված Իր արյամբ, Իրեն հավատացող ու հնազանդվող մարդկանց բոլոր մեղքերի վարձը վճարեց՝ մաքրելով դրանցից: Ուստի երբ սատանան տեսնում է խաչը, դողում է՝ հիշելով իր մեծ պարտությունն ու վատնված ջանքերը, և ամաչելով փախչում: Սա է պատճառը, որ Աստծո որդիները միշտ գործածում են խաչի նշանը որպես Աստծո զորության հաղթության նշան: Այս նշանով, մինչ թշնամին արտաքուստ դողում է, մենք ներքուստ լցվում ենք զորությամբ:

Ինչպես Հին Ուխտում պղնձե օձն էր բարձրացվելիս բժշկություն պարգևում ժողովրդին և փրկում մահվանից, այդպես էլ Փառքի Տիրոջ՝ խաչին բարձրանալը (Հովհ. Գ 14): Ուստի խաչի նշանը նույն ներգործությունն ունի:

ժե) Երբ խաչակնքվում ենք, խաչի օրհնությունն ենք ստանում:

Մեղքի պատճառով ամբողջ աշխարհը ենթարկվել էր անեծքի և մահվան: Սակայն խաչի վրա Տերը մեր ամբողջ անեծքն Իր վրա առավ, որպեսզի Աստծո հետ հաշտության օրհնությունը պարգևի (Հռոմ. Ե 10), նոր ու անբիծ կյանքի օրհնությունը, Իր մարմնի հաղորդության օրհնությունը: Նոր Ուխտի բոլոր պարգևները բխում են խաչից:

Հետևաբար օրհնություն տալու համար հոգևորականները խաչ են գործածում, որպեսզի ցույց տան, որ օրհնության աղբյուրն իրենք չեն, այլ Տիրոջ խաչը, որը Նա հանձնեց նրանց՝ գործածելու օրհնության բաշխման համար, և որ իրենց քահանայությունը ծագում է Խաչյալի քահանայությունից:

Փաստորեն, Նոր Ուխտի բոլոր օրհնությունները բխում են խաչից և նրա զորությունից:

ժզ) Խաչը գործածվում է եկեղեցական բոլոր սուրբ խորհուրդներում:

Եկեղեցու բոլոր սուրբ խորհուրդների աղբյուրը խաչի վրա Տիրոջ թափած արյունն է: Առանց խաչի մենք արժանի չէինք լինի մկրտության միջոցով Աստծուն մերձենալու իբրև Նրա որդիներ, կամ Հաղորդությամբ Նրա մարմինն ու արյունը ճաշակելու (Ա Կոր. ԺԱ 26), կամ նույնիսկ այս բոլոր խորհուրդների միայն օրհնությունները վայելելու:

ժէ) Խաչը կարևոր է մեզ համար, որովհետև հիշում ենք մեր հաղորդակից լինելը նրան:

Մենք հիշում ենք ս. Պողոս առաքյալի խոսքերը. ***«Քրիստոսի հետ խաչը ելա, և այսուհետև կենդանի եմ ոչ թե ես, այլ Քրիստոսն է կենդանի իմ մեջ»*** *(Գաղ. Բ 20), և՝* ***«Ճանաչելու Նրան, Նրա հարության զորությունը և Նրա չարչարանքներին հաղորդակցությունը՝ կերպարանակից լինելու Նրա մահվանը»*** *(Փիլիպ. Գ 10):*

Այստեղ հարցնում ենք ինքներս մեզ. իսկ ե՞րբ ենք հաղորդակից լինում Տիրոջ չարչարանքներին: Մենք հիշում ենք այն ավազակին, ով խաչվեց Տիրոջ հետ և արժանացավ դրախտում Նրա հետ լինելու: Հավանաբար Նա այնտեղ երգում է ս. Պողոսի երգը. ***«Քրիստոսի հետ խաչը ելա»****:*

Ամեն անգամ երբ խաչը զգում ենք մեր զգայարանների միջոցով, փափագում ենք Տեր Քրիստոսի հետ խաչը ելնել ու դրա փառքի մեջ մտնել:

ժը) Մենք պատվում ենք խաչը, որովհետև Հայրը հաճեց այն:

Հայրը հաճույքով ընդունեց Քրիստոսին խաչի վրա իբրև մեղքի համար ընծա և ողջակեզ, ***«իբրև անուշաբուրություն Տիրոջ համար»*** *(Ղևտ. Ա 9, 13, 17): Եսայի մարգարեն այս մասին ասում է.* ***«Սակայն Տերը կամեցավ հարվածել Նրան»*** *(Ես. ԾԳ 10)*[67]*:*

Տեր Քրիստոսը երկրի վրա Իր կատարյալ կյանքով Իր Հոր հաճությունը գտավ: Սակայն կատարյալ հաճությունն իրականացավ խաչի վրա, երբ ***«հնազանդվեց մինչև մահվան աստիճան, և խաչի՛ մահվան»*** *(Փիլիպ. Բ 8): Երբ խաչ ենք տեսնում, հիշում ենք այս կատարյալ հնազանդությունն ու հպատակությունը, որպեսզի Տիրոջն իբրև մինչիմահ հնազանդության օրինակ վերցնենք մեզ համար:*

Խաչն ինչպես որ Հոր համար էր հաճություն, այդպես էլ Խաչյալ Որդու, ինչպես ասված է. ***«Առջևում սպասող ուրախության փոխարեն Նա հանձն առավ խաչը, արհամարհեց ամոթը»*** *(Եբր. ԺԲ 2): Ուրեմն Քրիստոսի կատարյալ ուրախությունը խաչի մեջ էր: Կփափագեի, որ սրանում մենք նմանվեինք Նրան:*

ժթ) Խաչի միջոցով մենք գնում ենք դեպի Տերը՝ բանակատեղիից դուրս՝ կրելով Նրա նախատինքը:

Խաչի միջոցով մենք շարունակաբար ապրում ենք Ավագ շաբաթվա զգացումները և հիշում Մովսես մարգարեի մասին ասված

---

67 Դրված է ըստ եբր. բնագրի:

հետևյալ խոսքը. ***«Առավել կարևոր համարեց Քրիստոսի նախատինքը, քան եգիպտացիների բազում գանձերը»*** *(Եբր. ԺԱ 26): Քրիստոսի այս նախատինքը Նրա խաչելությունն ու չարչարանքներն են:*

ի) Մենք կրում ենք Քրիստոսի խաչը՝ հիշելու համար Նրա երկրորդ գալուստը:

Ժամանակների վախճանի և Տիրոջ երկրորդ գալստյան մասին Սուրբ Գրքում գրված է. ***«Ապա կերևա Մարդու Որդու նշանը երկնքում.... և կտեսնեն Մարդու Որդուն եկած երկնքի ամպերի վրայով, զորությամբ և մեծ փառքով»*** *(Մատթ. ԻԴ 30):*

Ուրեմն եկեք երկրի վրա պատվենք Մարդու Որդու այս նշանը, քանի որ սպասում ենք դրան երկնքում՝ Նրա երկրորդ գալստյանը:

ՃՐԱԳՆԵՐ [68] ԵՎ ՄՈՄԵՐ

Ուղղափառ Եկեղեցուն բնորոշ է ճրագների ու մոմերի գործածությունը եկեղեցական ազոթքների, Սուրբ Գրքի ընթերցանության ժամանակ, սրբապատկերների առաջ, ս. Սեղանի վրա և ս. Խորանում [69] ընդհանրապես: Եկեղեցին ամբողջ ժամանակ լուսավորված է մնում: Բողոքականներն այսպիսի ճրագներն ու մոմերը չեն ընդունում՝ չնայած սրանց բոլոր հոգևոր նշանակություններին:

Այս համառոտ հոդվածում մենք կխոսենք եկեղեցում գործածվող ճրագների մասին, դրանք գործածելու պատճառի և հոգևոր նշանակությունների:

ա) Սուրբ Գրքում Եկեղեցուն տրվող անուններից է ***«աշտանակը»****, ինչպես «Հայտնության» գրքում, ուր ս. Հովհաննես Ավետարանիչը տեսնում է Տեր Քրիստոսին յոթ ոսկյա աշտանակների միջև, և Տերը նրան ասում է.* ***«Յոթ աշտանակները յոթ Եկեղեցիներն են»*** *(Հայտ. Ա 20):*

բ) Եկեղեցին նմանեցվում է երկնքին, քանի որ Աստծո տունն է կամ բնակության վայրը, ինչպես երկինքը: Մոտավորապես այսպիսին էր այն անունը, որ գործածվեց Աստծո առաջին տան համար, երբ ս. Հակոբ նահապետն ասաց. ***«Ահարկու է այս վայրը. սա ուրիշ բան չէ, քան Աստծո տուն, և սա երկնքի դուռն է»*** *(Ծննդ. ԻԸ 17):Ուստի երկնքին նմանվելով՝ եկեղեցին պետք է լուսավորվի, ինչպես երկինքն՝ աստղերով:*

գ) Եկեղեցու ճրագները կարող են խորհրդանշել երկնքի հրեշտակներին կամ այն հրեշտակներին, որոնց Բեթելում (նշանակում է՝ ***«Աստծո տուն»****) մեր հայր Հակոբը տեսավ տեսիլքում, ուր նրանք սանդուղքով բարձրանում և իջնում էին:*

Լույս խորհրդանշելու պատճառով հրեշտակները կոչվում են ***«լուսո հրեշտակներ»*** *(Բ Կոր. ԺԱ 14):*

դ) Եկեղեցու ճրագները կարող են խորհրդանշել նաև սրբերին, ում ասում է Տերը. ***«Դուք եք աշխարհի լույսը.... Թող ձեր լույսն այնպես լուսավորի մարդկանց առաջ....»*** *(Մատթ. Ե 14, 16), և միաժամանակ նրանց նմանեցնում է աշտանակների վրա դրված վառ ճրագի (Մատթ. Ե 15):*

Գրված է նաև, որ ***«արդարները պիտի ծագեն ինչպես արեգակը Երկնքի արքայության մեջ»*** *(Մատթ. ԺԳ 43): Իսկ Տերը Հովհաննես Մկրտչի մասին ասաց հրեաներին.* ***«Նա էր վառվող ու լուսավորող ճրագը, որի լույսով դուք կամեցաք միառժամանակ ցնծալ»*** *(Հովհ. Ե 35):*

Ուրեմն՝ եթե եկեղեցին լի է հրեշտակներով ու սրբերով, պիտի լցված լինի նաև լույսերով:

ե) Եկեղեցին պետք է լույսերով լցված լինի, նախևառաջ որովհետև Աստված է բնակվում նրանում և Աստված լույս է (Ա Հովհ. Ա 5), ինչպես Տեր Հիսուսն է Իր մասին ասում. ***«Ես եմ աշխարհի լույսը»*** *(Հովհ. Ը 12):*

զ) Եկեղեցին լուսավորվում է Վկայության խորանի և Երուսաղեմի տաճարի օրինակով, որոնք երկուսն էլ լեցուն էին ճրագներով, որոնք միշտ վառ էին: Տիրոջ հրամանն էր, որ ճրագները ձիթապտ-

---

68 **«Ճրագներ»** բառով նկատի են առնված ձեթով վառվող փոքրիկ ճրագները կամ փոքրիկ կանթեղները, որոնք Ղպտի Եկեղեցում գործածվում են էլեկտրական ջահերի հետ մեկտեղ, քանի որ ունեն հոգևոր նշանակություն, ինչպես ցույց պիտի տա այս գլխի բովանդակությունը: Ղպտի Եկեղեցում ձեթի ճրագները վառվում են որոշ սրբապատկերների առաջ (սովորաբար՝ Տիրամոր և տվյալ եկեղեցու սրբի): Ճրագների այսպիսի գործածությունը հատուկ է նաև Հայ Առաքելական Եկեղեցուն, թեև այժմ, դժբախտաբար, սակավաթիվ եկեղեցիներում կարելի է տեսնել դրանք (կարելի է տեսնել Ս. Էջմիածնի Մայր տաճարում, հատկապես Իջման սեղանի վերևում, ուր դրանք շատ են):

69 Բնագրում՝ **«սրբարանում»:** Ի տարբերություն հայոց եկեղեցու՝ Ղպտի եկեղեցում (ինչպես նաև Արևելյան Օրթոդոքս՝ Հույն, Ռուս ևն, եկեղեցիներում) հայկական եկեղեցիներին բնորոշ բարձրադիր ս. Խորանի փոխարեն գտնվում է «սրբարան» (sanctuary) կոչված մասը, որը եկեղեցու մնացած մասից բաժանվում է սրբապատկերներով զարդարված և «իկոնոստաս» կոչվող պատով:

ղի մաքուր յուղով վառվեին, և իբրև հավիտենական օրենք՝ սրանով զբաղվեին Ահարոնն ու նրա որդիները: Տերն ասում է. ***«Եվ պատվիրիր Իսրայելի որդիներին, որ ձիթենիներից ստանան մաքուր ձեթ՝ լույսի համար, որպեսզի մշտապես ճրագ լինի: Վկայության խորանում՝ Ուխտի վարագույրից դուրս, թող Ահարոնն ու նրա որդիներն այն վառեն երեկոյից մինչև առավոտ: Սա հավիտենական օրենք է ձեր սերունդների համար»*** *(Ելք ԻԷ 20-21):*

Սա Աստծուց տրված հրաման էր, այն Աստծուց, ով արարչության առաջին օրն ասաց. ***«Թող լույս լինի, և լույս եղավ: Եվ Աստված տեսավ լույսը, որ բարի էր»*** *(Ծննդ. Ա 3-4):*

Է) Ձեթով վառվող ճրագները կարևոր են հոգևոր առումով, որովհետև ձեթը Սուրբ Հոգու խորհրդանիշներից է: Այն գործածվում էր այն օծման յուղի համար, որով Տիրոջ Սուրբ Հոգին իջնում էր օծյալի վրա, ինչպես որ Սամվել մարգարեն օծեց Դավիթ թագավորին, և Տիրոջ Հոգին եկավ նրա վրա (Ա Թագ. ԺԶ 13), և ինչպես վկայվում է Սուրբ Գրքում սուրբ օծման մասին (Ա Հովհ. Բ 20, 27):

Եկեղեցում վառվող մոմերը նույնպես ձեթից են պատրաստվում, և եկեղեցու լուսավորության համար գործածվող ջահերում նույնպես ձեթ էր գործածվում: Երկու դեպքում էլ ձեթը գործածվում էր վերոհիշյալ նույն խորհրդով:

Ը) Հիշատակելի է, որ Աստված հրամայում է, որ Իր տանը՝ Վկայության խորանում թե Տաճարում, լինեն աշտանակներ: Ճրագներն ու աշտանակները մաքուր ոսկուց էին պատրաստված (Ելք ԻԵ 31, ԼԷ 17, Բ Մն. Դ 20): Այս ամենը ցույց է տալիս Աստծո հոգածությունը՝ Իր տունը լույսերով ապահովելու համար:

Թ) Համաձայն Աստծո հրամանի՝ ճրագները շարունակ վառ էին պահվում: Ճրագները մարելը կամ դրանք վառելն անտեսելը Տիրոջ կողմից դիտվում էր իբրև հանցանք, որն արժանի էր խիստ պատժի, ինչպես վկայում է Սուրբ Գիրքը. ***«Որովհետև մեր հայրերն ապստամբեցին և չարիք գործեցին Տիրոջ առաջ, թողեցին Նրան.... Փակեցին տաճարի դռներն ու ճրագները հանգցրին, խունկ չծխեցին Նրան.... Եվ Տերը սրտմտությամբ բարկացավ Հուդայի և Երուսաղեմի վրա և մատնեց նրանց հիմարության, ապականության....»*** *(Բ Մն. ԻԹ 6-8):*

Ժ) Ճրագներ վառելն ունի հատուկ և խոր հոգևոր նշանակություն. այն խորհրդանշում է սրտի մշտապես պատրաստ ու զգոն վիճակը և Սուրբ Հոգու ներգործության պահպանումը նրանում: Այս արթնության մասին Տերն ասում է. ***«Թող ձեր գոտին ձեր մեջքին պնդված, և ձեր ճրագը վառված լինի: Եվ դուք նմանվեք այն մարդկանց, ովքեր սպասում են իրենց տիրոջը, թե երբ պիտի վերադառնա հարսանիքից.... Երանի՜ այն ծառաներին, ում տերը գալով արթուն կգտնի»*** *(Ղուկ. ԺԲ 35-37):*

Տերը պատմում է մեզ իմաստուն կույսերի առակը, ուր իմաստուն կույսերի ճրագները վառ էին, մինչ հիմար կույսերինը՝ ոչ (Մատթ. ԻԵ 1-12):

Ճրագներում այրվող ձեթը խորհրդանշում է մեր սրտում Սուրբ Հոգու ներգործությունը, և դրա մշտապես վառվելը խորհրդանշում է շարունակական զգոնությունը՝ սրտում Սուրբ Հոգու ներգործությունը պահպանելու համար:

Ժա) Ինչ որ ասվեց անհատների համար, նույնը վերաբերում է նաև ընդհանուր Եկեղեցուն: Երբ մարդիկ եկեղեցում լույս են տեսնում, հիշում են իրենց պարտքը՝ իրենց ներսում լույս ունենալու և իրենց ճրագները միշտ վառ պահելու: Նրանք հիշում են, որ Եկեղեցին իրենց ճրագները վառ պահող իմաստուն կույսերի շարքում է:

Ժբ) Իսկ ինչ վերաբերում է Ավետարանի ընթերցանության ժամանակ մոմերի գործածությանը, ապա, ինչ խոսք, շատ ավելի լավ է Ավետարանն ընթերցել լույսերի առկայությամբ, քան առանց դրանց: Սա հիշեցնում է մեզ սաղմոսերգուի խոսքը. ***«Քո խոսքերը ճրագ են իմ ոտքերի համար»*** *(Սաղմ. ՃԺԸ 105), և՝* ***«Տիրոջ պատվիրանները լույս են և լույս են տալիս աչքերին»*** *(Սաղմ. ԺԸ 9):*

Ժգ) Առաքելական ժամանակներից ի վեր ճրագները մեծ կարևորություն ու նշանակություն են ունեցել: «Գործք առաքելոց»-ում գրված է, որ այն վերնատանը, ուր ս. Պողոսը քարոզում էր հացի բեկանումից հետո, ***«շատ ճրագներ կային»*** *(Գործք Ի 8):*

Ժդ) Սրբապատկերների առաջ մեր վառած մոմերը հիշեցնում են մեզ նաև, որ պատկերներում եղած սրբերը լույս էին իրենց սերունդների մեջ: Նրանք ասես մոմեր էին, որ հալչում էին, որպեսզի իրենց լույսը փայլեր մարդկանց առաջ:

ԽՈՒՆԿ

Բողոքականները խունկ կամ բուրվառ չեն գործածում: Նրանք սա համարում են Հին Ուխտի պաշտամունքի մաս, որն այլև գոյություն չունի, քանի որ, ըստ նրանց, խունկն ու բուրվառը պարզապես խորհրդանիշներ էին:

Եկեք այստեղ անդրադարձ կատարենք խնկի գործածության անցյալ և ներկա պատմությանը՝ տեսնելու, թե այն իսկապես միայն խորհրդանի՞շ էր, թե ինքնուրույն հոգևոր գործառություն:

ա) Տերն ասաց Մովսեսին. ***«Կպատրաստես խնկակալ սեղան խնկի համար»*** *(Ելք Լ 1):*

Այստեղ Տերը մեզ շատ գեղեցիկ մտածում է տալիս. այն, որ խունկն ինքը համարվում էր զոհաբերություն՝ մատուցված հատուկ սեղանի վրա, որը կոչվում էր «խնկակալ սեղան»:

բ) Տերը մեծ հոգ էր տանում խնկակալ սեղանի համար:

Նա պատվիրում է, որ այն մաքուր ոսկով պատվի բոլոր կողմերից, ունենա ոսկյա եղջյուրներ, կրման համար ունենա ոսկեպատ երկու օղակ և դրվի այն վարագույրի առաջ, որը գտնում էր Վկայության տապանակի առջևում (ուր Աստված պիտի հանդիպեր Մովսեսին) (Ելք Լ 3-6):

գ) Անհրաժեշտ էր, որ խունկն անուշաբույր լիներ:

Տերն այս մասին ասում է. ***«Թող Ահարոնը նրա վրա անուշ խունկ***[70] ***ծխի ամեն առավոտ» (Ելք Լ 7), նույնպես և երեկոյան «Թող մշտապես խունկ ծխի նրա վրա Տիրոջ առաջ իրենց սերունդներում»*** *(Ելք Լ 8):*

Ելք Լ 34 համարում նշված են այն համեմունքները, որոնք անհրաժեշտ են անուշ խունկ պատրաստելու համար: Տերը պատվիրում է, որ այդ խունկը ***«Տիրոջ սրբություն լինի»*** *(Ելք Լ 37) և նույնիսկ* ***«սրբությունների սրբություն»*** *(Ելք Լ 36): Ոչ ոք իրավունք չուներ այն իր համար պատրաստելու:*

«Անուշ խունկ» *արտահայտությունը գործածվում է շատ սուրբգրային համարներում, ինչպես՝ Ելք ԼԵ 28, ԼԷ 29, Ղևտ. ԺԶ 12*[71]*:*

[70] Այսպես է (**«անուշ խունկ»**) ըստ եբրայական բնագրի: Ըստ գրաբար թարգմանության՝ «մանր աղացած՝ պատրաստված խունկ»:

[71] Տես նախորդ ծանոթագրությունը:

Խունկը Տիրոջ առաջ բարձրացող անուշաբուրություն էր:

դ) Շատերը սխալմամբ ասում են, թե խունկը մատուցվում էր ողջակեզների հետ՝ վերջիններիս վատ հոտը ցրելու համար, և քանի որ այժմ չկա անասունների զոհաբերություն, ուստի խնկի կարիք նույնպես չկա:

Սա սխալ տեսակետ է, որովհետև խնկարկությունը պաշտամունքի ուրույն տեսակ էր: Այն ուներ հատուկ սեղան, որը տարբեր էր զոհաբերության սեղանից: Այն ուներ իր հատուկ ծիսական կարգը և համարվում էր աղոթքի մի տեսակ և ո՛չ թե մի ուրիշ բանի խորհրդանիշ, ինչպես պիտի տեսնենք հաջորդիվ:

ե) Մենք տեսնում ենք, որ երբ Աստված սկսեց պատուհասել ժողովրդին, Ահարոն քահանայապետը Մովսեսի հրամանով խունկ ծխեց՝ Աստծո առաջ ժողովրդի համար բարեխոսելու նպատակով: Երբ Ահարոնը վազեց ժողովրդի մեջ և խնկարկեց, պատուհասը դադարեց, և Աստված ընդունեց խունկն իբրև աղոթք (Թվեր ԺԶ 44-48):

Մենք տեսնում ենք, որ այստեղ ոչ մի ողջակեզ էլ չի մատուցվում նրանց համար, այլ միայն խունկ: Դա մատուցվեց ոչ թե ողջակեզի հոտը չեզոքացնելու համար, այլ իբրև ինքնուրույն զոհ՝ ժողովրդի քավության համար (Թվեր ԺԶ 46-47):

զ) Խունկն այնքան կարևոր էր, որ միայն քահանաներն իրավունք ունեին այն մատուցելու[72]*:*

Այսպիսով, խնկարկությունն աղոթքից բարձր է դիտվում, քանի որ ժողովրդի ցանկացած անդամ կարող է աղոթք մատուցել Աստծուն, մինչդեռ երբ Կորխը, Դաթանն ու Աբիրոնը համարձակվեցին խնկարկել, երկիրն իր բերանը բացեց և նրանց իրենց ամբողջ ընտանիքներով ու ինչքով կուլ տվեց (Թվեր ԺԶ 31-32):

Սա պատահեց ո՛չ այն պատճառով, որ նրանք ողջակեզ մատուցեցին, այլ որ խունկ մատուցեցին, թեև Ղևիի ցեղին էին պատկանում:

է) Խունկն այնքան կարևոր էր, որ մատուցվում էր ոսկյա բուրվառներով, ինչպես նշված է նաև Եբր. Թ 4-ում, և ինչպես ասվում է քսանչորս երեցների մասին, թե նրանցից յուրաքանչյուրն ուներ ***«ոսկյա բուրվառ՝ լի խնկով»*** *(Հայտ. Ե 8):*

ը) Մաղաքիա մարգարեի գրքում կա մի մարգարեություն, որը վկայում է խնկարկության շարունակականության և այն մասին, որ այն չի սահմանափակվում հրեական ժամանակաշրջանով:

Տերն ասում է. **«Արևածագից մինչև մայրամուտ փառավորված է Իմ անունն ազգերի մեջ, և բոլոր վայրերում խունկ է մատուցվում Իմ անվանը և սուրբ պատարագ: Որովհետև Իմ անունը մեծ է ժողովուրդների մեջ»** (Մաղ. Ա. 11):

Տիրոջ պաշտամունքը բոլոր ժողովուրդների մեջ անշուշտ սկսվեց միայն քրիստոնեական շրջանում: Ուստի Աստված խնկարկությունը դարձրեց քրիստոնեական պաշտամունքի մաս:

Թ) Նոր Կտակարանում նույնպես Աստված խոսում է խնկի մասին, և «Հայտնության» գիրքն այս մասին երկու օրինակ է բերում:

1) Քսանչորս երեցները, ինչպես նշեցինք, ունեն ոսկյա բուրվառներ՝ լի խնկով, որը սրբերի աղոթքն է (Հայտ. Ե 8):

2) Ս. Հովհաննես ավետարանիչն ասում է. **«Եվ մի ուրիշ հրեշտակ եկավ ու կանգնեց խորանի մոտ. նա ուներ ոսկե բուրվառ, և նրան շատ խունկ տրվեց, որպեսզի բոլոր սրբերի աղոթքները մատուցի ոսկե խորանի վրա, աթոռի առաջ: Եվ սրբերի աղոթքը՝ խնկի ծուխը, հրեշտակների ձեռքերից բարձրացավ Աստծո առաջ»** (Հայտ. Ը 3-4):

ժ) Խորհրդածելով **«սրբերի աղոթքը՝ խնկի ծուխը, հրեշտակների ձեռքերից բարձրացավ Աստծո առաջ»** խոսքի շուրջ՝ կարող ենք ասել, որ Եկեղեցու ամբողջ կյանքը նման է խնկարկության:

Եկեղեցին «Երգ երգոցում» համեմատվում է խնկի հետ:

Աստվածային Ներշնչանքը «Երգ երգոց»-ում ասում է. **«Ո՞վ է սա, որ ելել գալիս է անապատից՝ իբրև բարձրացած ծուխ՝ զմուռսից ու կնդրկից, յուղագործների ամեն տեսակ փոշուց»** (Երգ Գ 6):

ժա) Խնկի պատմության մեջ սրբերի կյանքում տեղ գտած ամենագեղեցիկ դրվագներից մեկը վերաբերում է Զաքարիա քահանային:

Աստծո հրեշտակը պատահում է Զաքարիային խնկի սեղանի աջ կողմում, մինչ նա իր հերթափոխին խնկարկում էր (Ղուկ. Ա 8-11): Սա ցույց է տալիս սեղանի և խնկարկության սրբությունը, որ արժանի եղան մասնակիցը դառնալու աստվածային հայտնությունների:

Զաքարիայի պատմությունից պարզ է դառնում, որ խնկարկությունը առանձին մի գործառույթ էր՝ զոհերի ու ողջակեզների հետ կապ չունեցող:

[72] Սա է պատճառը, որ ի տարբերություն այլ Եկեղեցիների (ինչպես օրինակ՝ Հայ, Հույն Օրթոդոքս ևն)՝ Ղպտի Եկեղեցում միայն քահանաներն իրավունք ունեն խնկարկելու, առավել ցածր աստիճանի սպասավորներին սա չի թույլատրվում:

ժբ) Վկայություն քրիստոնեության մեջ խնկի կարևորության

Կնդրուկը, որից պատրաստվում է խունկը, այն նվերների թվում էր, որոնք մատուցվեցին Տեր Քրիստոսին Արևելքից եկած մոգերի կողմից: Այս նվերը Քրիստոսի քահանայության և նրանց կողմից դրա խոստովանության խորհուրդն ունի, իսկ ոսկին խորհրդանշում է Նրա թագավորությունը, և զմուռսը՝ Նրա չարչարանքները:

ժգ) Խունկը բազում խորհուրդներ ունի, որոնք բավականություն են պատճառում զգայարաններին և սնում հոգին:

Եկեղեցի հաճախող ո՛չ բոլոր մարդիկ ունեն հոգեկանության ու մտածողության բավարար մակարդակ: Օրինակ՝ երեխաները լավ չեն հասկանում, թե ինչ է ասվում քարոզներում կամ այն, ինչ լսում են ընթերցվածներում ու աղոթքներում, ուստի նրանց հոգևոր աշխարհը ներգործության է ենթարկվում, զգայարանների միջոցով, խնկից, մոմերից և սրբապատկերներից, որոնք նրանց համար հոգևոր դասեր են, որ նրանց ներածում են հոգևոր մթնոլորտի մեջ:

Նույնը կարելի է ասել նաև բազմաթիվ հասարակ ու կրթություն չունեցող մեծահասակների մասին, ովքեր չունեն մեծ գիտելիքներ կամ չեն ուսումնասիրել աստվածաբանական գրքեր:

Ի՞նչ հոգևոր իմաստներ կարող են նրանք գտնել խնկի մեջ:

ժդ) Առաջին դասը, որ նրանք կարող են սովորել խնկից, Տիրոջ խոսքն է. **«Ով կորցնում է իր անձն Ինձ համար, կգտնի այն»** (Մատթ. Ժ 39):

Խնկի մի փոքրիկ մասը սրա օրինակն է. այն շարունակ այրվում է, մինչև վերածվում է ծխի անուշաբույր քուլաների: Դու բուրվառի մեջ փնտրում ես այն իբրև խնկի մի մասնիկ, բայց չես գտնում, որովհետև այն իրեն իբրև ողջակեզ ընծայեց Աստծուն:

Հետևաբար, ողջակեզները միայն զոհերը չեն, այլև խունկը: Որովհետև Սուրբ Գիրքն այն համարում է խնկակալ սեղանի վրա մատուցված զոհ, և սա մեզ կարևոր դաս է տալիս: Որքա՜ն գեղեցիկ է, երբ մարդ իրեն ընծայում է Աստծուն իբրև ողջակեզ: Ոչ մի զոհ չի կարող համեմատվել սեփական անձի զոհաբերման հետ: Սա անշուշտ ամենամեծ զոհաբերությունն է: Սեփական անձի զոհաբերումը նման է խնկի մի մասնիկի՝ կրակի վրա դրվելուն: Եվ քանի որ

Աստված այրող կրակ է (Բ Օր. Դ 24), սրբերը խնկի մասնիկներ են, որ դրված են աստվածային բուրվառի մեջ և այրվում են Աստծո սիրով:

ժե) Խնկի մատուցած երկրորդ դասը նրա ծխի շարունակական բարձրացումն է:

Խնկի ծուխն իջնել չի կարող, այն բարձրանում է դեպի երկինք, մեծանում և անդադար տարածվում: Եթե փորձես խնկի ծխին հետևել, ուզես թե չուզես՝ աչքերդ պիտի բարձրացնես դեպի երկինք: Այսպիսով, խնկարկությունը միշտ մարդկանց դեպի վեր է ձգում՝ որպես մի սլաք, որ շարունակ մատնանշում է երկինքը:

ժզ) Խնկի մատուցած երրորդ դասն այն է, որ այն տարածում է անուշաբուրություն:

Սուրբ Գիրքը պահանջում է, որ խունկն անուշաբույր լինի, որպեսզի ով նրա հոտն առնի, հիշի, որ մարդու կյանքը պետք է իբրև անուշաբուրություն լինի Աստծո առաջ: Այդ պատճառով էլ գրված է. **«Որովհետև Քրիստոսի անուշ հոտն ենք Աստծո մոտ». «Իր գիտության հոտն է մեր միջոցով հայտնի դարձնում ամենուր»** (Բ Կոր. Բ 15, 14):

ժէ) Խնկի վերաբերյալ ամենագեղեցիկ խորհրդածություններից մեկն այն է, որ խունկը հիշեցնում է մեզ այն ամպը, որում հայտնվում էր Աստված:

Տերն ասում է. **«Ամպով կհայտնվեմ Քավության վրա»** (Ղևտ. ԺԶ 2): Ղևտ. ԺԶ 13-ում նշված է նաև՝ **«խնկի ամպ»**[73]: Ահարոն քահանայապետի մասին գրված է. **«Եվ թող Տիրոջ առաջ գտնվող սեղանից վերցնի կրակի այրվող ածուխներով լի բուրվառ, ձեռքերը լցնի անուշաբույր խնկով և տանի վարագույրից ներս: Թող խունկը դնի կրակի վրա՝ Տիրոջ առաջ, և խնկի ամպը թող ծածկի Վկայության-ների վրա գտնվող Քավությունը, և չի մեռնի»** (Ղևտ. ԺԶ 12-13):

Հին ժամանակներում երբ Աստված առաջնորդում էր Իր ժողովրդին, Վկայության խորանում թե Սինայի անապատում՝ մարդկանց հայտնվում էր ամպով կամ ծխով: Նա Սինայում ցերեկն առաջնորդում էր ժողովրդին ամպով, և այդ ամպը ներկայացնում էր Աստծուն: Երբ այն շարժվում էր, նրանք գիտեին, որ Աստված կամենում էր, որ իրենք առաջ գնան, և այդպես էլ վարվում էին, իսկ երբ ամպը կանգնում էր, իրենք էլ էին կանգ առնում (Թվեր Թ 17): Ուստի գրված

[73] Այսպես է ըստ եբր. բնագրի:

է. **«Եվ ցերեկը, երբ չվում էին բանակատեղիից, ամպը նրանց վրա հովանի էր լինում»** (Թվեր Ժ 34):

ժը) Երբ Տեր Քրիստոսը Եգիպտոս եկավ, ինչպես նշված է, եկավ ամպի վրա նստած (Ես. ԺԹ 1): Ամպը խորհրդանշում է սուրբ Կույսին, ով անուշ խունկ էր, որը բարձրացավ: Տեր Քրիստոսը երկրորդ անգամ գալու է դարձյալ ամպերով (Մատթ. ԻԴ 30): Նշանակում է՝ ամպը թե՛ Հին և թե՛ Նոր Կտակարաններում Աստծո ներկայության նշան է:

ժթ) Տիրոջ պայծառակերպությունը մի օրինակ է ամպի մեջ Աստծո ներկայության:

Երբ Տեր Քրիստոսը խոսում էր Իր աշակերտների հետ, **«մի ամպ եկավ, հովանի եղավ նրանց վրա, և նրանք վախեցան, երբ ամպի տակ մտան: Ամպից ձայն լսվեց, որն ասաց. «Դա է Իմ ընտրյալ Որդին. դրա՛ն լսեք»** (Ղուկ. Թ 34-35):

ի) Աստված Մովսեսի հետ սովորաբար խոսում էր ամպի միջից, ինչպես գրված է. **«Մովսեսը լեռը ելավ, և ամպը ծածկեց լեռը: Եվ Աստծո փառքն իջավ Սինա լեռան վրա, և ամպը ծածկեց նրան վեց օր: Յոթերորդ օրը Տերն ամպի միջից կանչեց Մովսեսին»** (Ելք ԻԴ 15-16):

Նմանապես էլ, երբ Աստված ժողովրդի հետ խոսում էր Վկայության խորանից, այն ծածկվում էր ամպով կամ ծխով:

իա) Նույնը կարելի է տեսնել նաև Սողոմոնի տաճարի սրբագործման ժամանակ: Գրված է. **«Երբ քահանաները սրբության վայրից ելան, ամպը լցրեց Տիրոջ տունը, և քահանաները չէին կարողանում շարունակել սպասավորել ամպի պատճառով, որովհետև Տիրոջ փառքը լցրեց տունը: Այդ ժամանակ Սողոմոնն ասաց. «Տերն ասաց, որ մեզով հովանի կլինի»** (Գ Թագ. Ը 10-12):

իբ) Խունկը ամպ կամ ծուխ է առաջացնում՝ հիշեցնելով մեզ Աստծո ներկայության կամ փառքի մասին:

Սաղմ. ՂԶ 2 համարում ասվում է. **«Ամպ ու մեգ շրջապատում են Նրան»:**

Այսպիսով, խունկն ունի բազմաթիվ հոգևոր խորհուրդներ նրանց համար, ովքեր կամենում են նրանից օգուտ ստանալ: Նկարկությունը պաշտամունքի առանձին տեսակ է: Դա կապ չունի հինկտակարանյան զոհերի հետ, ուստիև նրա կիրառությունը չի դադարել սրանց վերացումից հետո:

իգ) Վերջապես, մենք ասում ենք, որ չկա նույնիսկ մեկ խոսք Նոր Կտակարանում, որ արգելեր խնկի գործածումը:

«Ով ականջ ունի, թող լսի՝ ինչ է Հոգին ասում Եկեղեցիներին» *(Հայտ. Բ 7):*

ՍՈՒՐԲ ԽՈՐԱՆ (ՍՐԲԱՐԱՆ) ԵՎ ՍՈՒՐԲ ՍԵՂԱՆ

Բողոքական Եկեղեցիները ոչ ս. Խորան ունեն, ոչ էլ ս. Սեղան, այն լուրջ պատճառով, որ չունեն պատարագ (զոհաբերություն):

Սա կքննարկվի, երբ խոսելու լինենք Հաղորդության և Քահանայության մասին, իսկ այստեղ կսահմանափակվենք միայն ս. Սեղանի մասին խոսելով:

ա) Հին Ուխտը ս. Սեղանի մասին շատ է խոսում, բայց բողոքականները մտածում են, որ այդ սեղանը միայն Քրիստոսի՝ խաչի վրա կատարված զոհաբերության խորհրդանիշ էր և այժմ այլևս գոյություն ունենալ չի կարող: Ուստի ստիպված ենք նրանց ներկայացնելու ս. Սեղանի մասին խոսքեր, որոնք վերաբերում են Նոր Ուխտին:

բ) Ս. Պողոս առաքյալն ասում է. ***«Մենք սեղան ունենք, որից ճաշակելու իրավունք չունեն նրանք, ովքեր սպասավորում են խորանին»*** *(Եբր. ԺԳ 10) (**«խորան»** ասելով՝ նկատի ունի Վկայության խորանը կամ հին Տաճարը):*

Ս. Հովհան Ոսկեբերանը, այս համարը մեկնաբանելով, ասում է. «Ս. Պողոսն այս խոսքում խորհրդանիշով ցույց է խորհրդանշվողին: Մենք իրավո՛ւնք ունենք ճաշակելու Արյունից, որի իրավունքը միայն քահանան ուներ»:

գ) Եսայի մարգարեն խոսում է Եգիպտոսում հաստատված Սեղանի մասին՝ ասելով. ***«Այդ օրը Տիրոջ սեղանը կդրվի Եգիպտացիների երկրում.... Տերն Իրեն ճանաչել կտա եգիպտացիներին, և եգիպտացիներն այդ օրը կճանաչեն Տիրոջը և զոհեր ու պատարագներ կմատուցեն»*** *(Ես. ԺԹ 19-21):*

«Սեղան» *բառով այստեղ անշուշտ Նոր Ուխտի՝ քրիստոնեական շրջանի սեղանն է նկատի առնված, քանի որ հրեաները, համաձայն իրենց օրենքի, իրավունք չունեին զոհելու հեթանոսական երկրում, ոչ էլ եգիպտացիները կարող էին նրանց թույլ տալ սա անել իրենց*

երկրում: Դա էր պատճառը, որ Մովսեսի և Ահարոնի օրերին փարավոնին հրամայվեց. ***«Արձակի՛ր Իմ ժողովրդին, որպեսզի ծառայեն Ինձ»*** *(Ելք Ը 20): Սակայն փարավոնն արգելեց նրանց գնալ և Տիրոջը զոհ մատուցել (Ելք Ը 29): Երբ շնաճանճով պատժից հետո փարավոնն իր առաջին խոստումը տվեց, ասաց.* ***«Ես արձակում եմ ձեզ, զոհե՛ք ձեր Տեր Աստծուն անապատում»*** *(Ելք Ը 28): Ուստի այս ամենից պարզ երևում է, որ հրեաները չէին կարող զոհ մատուցել Եգիպտոսում:*

Իսկ եգիպտացիները ե՞րբ ճանաչեցին Տիրոջը, ե՞րբ սկսեցին գործածել ս. Սեղան և Տիրոջը պատարագ մատուցել: Իհարկե՛ քրիստոնեական շրջանում:

Հետևաբար, մարգարեի վերոբերյալ խոսքը նույնպես մի ակնհայտ վկայություն է քրիստոնեության մեջ զոհաբերության նպատակով ս. Սեղանների գոյության:

դ) Աստված, ***«սեղան»*** *բառը մարդկանց մտքում ու սրտում ամրագրելու համար, այդ բառը բազմաթիվ անգամ կրկնում է «Հայտնության» գրքում, որը գրվել է առաջին դարի վերջին՝ Տիրոջ առաքյալների (բացի ս. Հովհաննեսից) ու աշակերտների նահատակությունից հետո:*

Ս. Հովհաննես ավետարանիչն ասում է. ***«Մի ուրիշ հրեշտակ եկավ, կանգնեց սեղանի մոտ և ուներ ոսկե բուրվառ»*** *(Հայտ. Ը 3): Այլև՝* ***«Երբ նա բացեց հինգերորդ կնիքը, սեղանի տակ տեսա այն բոլոր մարդկանց հոգիները, ովքեր զոհվել էին Աստծո խոսքի և Նրա վկայության համար, որը պահում էին»*** *(Հայտ. Զ 9):*

ե) Ս. Սեղանը պիտի գոյություն ունենա այնքան ժամանակ, քանի դեռ կա արյուն՝ ***«Տիրոջ մարմինն ու արյունը»****, ինչպես ասում է Ս. Գիրքը» (Ա Կոր. ԺԱ 27): Քանի սա կա, անհրաժեշտաբար պիտի լինեն նաև ս. Սեղան և այն իր մեջ առնող Խորան (սրբարան):*

Այս մասին առավել մանրամասնաբար կխոսենք, երբ (եթե Տերը կամենա) քննարկելու լինենք ս. Պատարագի և Խորանին սպասավորող քահանայի թեման:

ՍՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐ

Բողոքականները չեն ընդունում Ուղղափառ Եկեղեցում գործածվող սրբապատկերները (և Կաթոլիկ Եկեղեցում գործածվող արձանները): Նրանք համարում են, որ սրանց գոյությունը հակասում է երկրորդ պատվիրանին, որում Տերն ասում է. ***«Քեզ համար կուռքեր մի՛ պատրաստիր որևէ բանի նմանությամբ, որ կա վերը՝ երկնքում, վարը՝ երկրի վրա, և երկրի տակ՝ ջրերում: Նրանց մի՛ երկրպագիր և մի՛ ծառայիր»*** *(Ելք Ի 4-5, Բ Օր. Ե 8-9):*

Ութերորդ դարում՝ 726թ.՝ Լևոն Գ կայսրի օրոք, սրբապատկերների դեմ պայքար է սկսվում, որը տևում է դարեր, ապա լռում և վերսկսվում բողոքականության գալստյամբ՝ 15-16-րդ դարերից՝ ձգվելով մինչ այսօր:

Բողոքական ծայրահեղականները սրբապատկերները դիտում են իբրև հեթանոսության նշան: Նրանք մեզ քննադատում են սրբապատկերները հարգելու, դրանք համբուրելու, դրանց առաջ մոմ վառելու և ծնրադրելու համար:

Այստեղ մենք կքննարկենք այս ամենը և ցույց կտանք, թե ինչու է Եկեղեցին սրբապատկերներ գործածում և որն է սրա հոգևոր օգուտը:

ա) Սրանց պատասխանելու համար նախևառաջ պետք է հաշվի առնենք՝

1) բողոքականների կողմից գործածվող աստվածաշնչյան համարում ամփոփված իմաստությունը՝ թե ինչո՛ւ է այն ասվել, ի՛նչ նպատակով, որովհետև, ինչպես առաքյալն է ասում, ***«դիրը սպանում է»*** *(Բ Կոր. Գ 6):*

2) Որոնք են մյո՛ւս համարները, որոնց սրա կողքին դրվելու դեպքում իմաստն առավել ճշգրիտ պիտի լիներ: Ինչ վերաբերում է Աստծո պատվիրաններին, գլխավորը դրանց հոգին է, ո՛չ թե տառը, և մենք նախապես արդեն խոսել ենք այն վտանգի մասին, որ բխում է աստվածաշնչյան միայն մեկ համարի գործածությունից՝ առանց ուրիշները հաշվի առնելու:

բ) Ո՞րն էր Աստծո նպատակը, երբ արգելում էր պատկերների և արձանների գործածությունը:

Նպատակը հստակ երևում է հենց Նրա խոսքից. ***«Նրանց մի՛ երկրպագիր և մի՛ ծառայիր»:*** *Ուստի եթե դրանք գործածվում են սրանից բոլորովին տարբեր նպատակներով, պատվիրանը չի խախտվում:*

Այս հրաժարական պատվիրանը, անտարակույս, տրվել է այն ժամանակ, երբ հեթանոսությունը գերիշխում էր և վախ կար, թե հավատացյալները կարող են հարել դրան: Այդ պատճառով էլ արգելվում էր փորագրել որևէ քարի վրա, նույնիսկ սովորական շինությունների կամ ս. Սեղանի կառուցման համար:

գ) Ավելին, Աստված, ով արգելել էր Մովսեսին որևէ պատկեր կամ արձան շինել, հենց Ինքը հրամայում է նրան պատրաստել պղնձե օձը (երբ ժողովուրդը խայթվում էր օձերից և մեռնում). ***«Օ՛ձ պատրաստիր և դիր ձողի վրա: Երբ օձ խայթի մեկին, օձահարը կնայի դրան և կապրի»*** *(Թվեր ԻԱ 8): Մովսեսը կատարեց հրամայվածը, սակայն սրանով չխախտեց պատվիրանը:*

Մյուս կողմից՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսը սովորեցնում է մեզ, որ պղնձե օձը Նրա սուրբ խաչն էր խորհրդանշում. ***«Եվ ինչպես Մովսեսը բարձրացրեց օձն անապատում, այդպես էլ Մարդու Որդին պիտի բարձրանա, որպեսզի ով հավատում է Նրան, հավիտենական կյանքն ընդունի»*** *(Հովհ. Գ 14-15):*

դ) Երբ Աստված Մովսեսին հրամայեց պատրաստել Վկայության տապանակը, հրամայեց սարքել ու դրա երկու կողմում դնել ոսկյա քերովբեներ: Աստված ասաց Մովսեսին. ***«Երկու ոսկյա կոկված քերովբեներ պատրաստիր և դիր Քավության երկու կողմում. մի քերովբեն կանես մի կողմում, մյուս քերովբեն՝ մյուսում... Եվ քերովբեները թող տարածեն իրենց թևերը վերևից և իրենց թևերով հովանի լինեն Քավության վրա, և նրանց դեմքերը թող միմյանց դիմաց լինեն... Եվ կհայտնվեմ քեզ այնտեղից և կխոսեմ քեզ հետ Քավության վերևից՝ Վկայության տապանակի վրայի երկու քերովբեների միջից»*** *(Ելք Իե 18-22): Եվ Մովսեսն արեց, ինչպես հրամայվել էր:*

Այս երկու քերովբեների քանդակումը չէր հակասում վերը՝ երկնքում, որևէ բանի նմանությամբ կուռք չպատրաստելու պատվիրանին, որովհետև նպատակը երկու քերովբեների տեսքով ներկայացված հրեշտակների երկրպագությունը չէր: Ընդհակառակը՝ այս երկու քերովբեները քանդակվել էին Աստծո հրամանով, ինչպես որ

աստվածային հրամանով էր պատրաստվել նաև պղնձե օձը:

ե) Նույն կերպ նախագծվեց ու զարդարվեց նաև Տաճարը Սողոմոնի կողմից. ***«Նա պատրաստեց երկու քերովբե՝ ձիթենու*** *(ըստ գրաբարյան թարգմ՝* ***նոճու-*** *թրգմ.)* ***փայտից, յուրաքանչյուրը՝ տասը կանգուն բարձրությամբ: Մի թևը՝ հինգ կանգուն, մյուսը՝ հինգ կանգուն.... Եվ դրեց երկու քերովբեները ներսի տանը և տարածեց նրանց թևերը. մեկի թևը հասնում էր մի պատին, մյուսի թևը՝ մյուս պատին.... Եվ պատեց քերովբեները ոսկով»*** *(Գ Թագ. Զ 23-28):*

զ) Ոչ միայն քերովբեներ պատրաստվեցին, այլև, ինչպես Սուրբ Գիրքը շարունակում է, «տան բոլոր պատերին՝ դրսից ու ներսից, շուրջանակի քանդակեց քերովբեներ, արմավենիներ և բացված ծաղիկներ» (Գ Թագ. Զ 29): Պատրաստեց նաև դռան երկու փեղկերը և ***«դրանց վրա քանդակեց քերովբեներ, արմավենիներ.... և պատեց ոսկով»*** *(Գ Թագ. Զ 32, 35): Այսպիսով, Տիրոջ տունը զարդարված էր նկարներով ու քանդակներով, սակայն մարդիկ շարունակում էին երկրպագել Աստծուն և ոչ թե դրանց: Նրանք չէին մեղանչում երկրորդ պատվիրանի դեմ:*

է) Վկայության տապանակը մեծարվում էր քահանաների, ժողովրդի և թագավորների կողմից, սակայն սա նշան չէր հեթանոսական պաշտամունքի: Աստվածաշնչում գրված է, որ Գայիում հրեաների պարտությունից հետո Նավեի որդի Հեսուն՝ Մովսես մարգարեի հաջորդը, Իսրայելի բոլոր ծերերի հետ երեսի վրա ընկավ Տիրոջ տապանակի առաջ մինչև երեկո և աղոթեց Տիրոջը (Հեսու Է 6): Սակայն Աստված չասաց նրան, թե նա խախտել է երկրորդ պատվիրանը, այլ, ընդհակառակը, խոսեց նրա հետ, հրաշքի միջոցով բացահայտեց Քարմիի որդի Աքարին և Գային տվեց Հեսուի ձեռքը՝ բարձրացնելով նրա գլուխը:

Հեսուն չմեղանչեց Աստծո առաջ, երբ երեսի վրա ընկավ Տիրոջ տապանակի առաջ, որովհետև սա երկրպագություն էր ոչ թե տապանակին, այլ Աստծուն, ով իջավ և երկու քերովբեների միջից խոսեց նրա հետ:

Նույնպես և Դավիթ մարգարեն չմեղանչեց, երբ տապանակի վերադարձը նշեց ամենայն պատվով, ցնծալով ու պարելով դրա առաջ (Բ Թագ. Զ 12-15):

ը) Հետևաբար, մենք հայտարարում ենք, որ մենք չենք երկրպագում նկարներին կամ սրբապատկերներին, այլ պատվում դրանք՝ սրանով պատվելով նրանց, ում պատկանում են դրանք՝ ըստ Տիրոջ խոսքի. ***«Եթե մեկը ծառայի Ինձ, Իմ Հայրը կպատվի նրան»*** *(Հովհ. ԺԲ 26): Եթե Հայրը պատվում է Իր սրբերին, մենք չպիտի՞ դա անենք:*

թ) Նույնը կարելի է ասել խաչի մասին, ինչի մասին ս. Պողոս առաքյալն ասում է գաղատացիներին. ***«....ում աչքերի առաջ նկարագրվեց Հիսուս Քրիստոսը խաչը ելած»*** *(Գաղ. Գ 1):*

ժ) Փա՜ռք Աստծո, որ այժմ մեր բողոքական եղբայրները խաչ են դնում իրենց եկեղեցիների վրա, առանց մտածելու, թե դա կռապաշտություն է:

ժա) Փա՜ռք Աստծո, որ նրանք նաև կիրակնօրյա դպրոցներում իբրև նվեր բաժանում են նկարները Տեր Քրիստոսի, հրեշտակների, մարգարեների, Նոյի տապանի՝ կենդանիներով, Բարի Հովվի՝ ոչխարներով, խաչնարած Դավթի, Եղիայի՝ նրան կերակուր բերող ագռավներով, աղքատ Ղազարոսի և նրա վերքերը լիզող շների, Բաղաամի, և սատանայի, որը փորձության է ենթարկում Տեր Քրիստոսին: Այսպես վարվելիս նրանք խղճի տանջանք չեն ունենում կամ չեն կասկածում, թե խախտել են երկրորդ պատվիրանը՝ պատկերելով այն, ինչ կա վերը՝ երկնքում, և վարը՝ երկրի վրա:

ժբ) Մենք չենք կարող անտեսել նկարների ներգործությունն իբրև դասերի, որոնք սովորեցնում են Սուրբ Գրքի պատմությունները, Սուրբ Գրքում կամ պատմության մեջ եղած հավատքի քաջամարտիկների կյանքը: Մի սրբապատկեր կարող է մարդու վրա ավելի մեծ ազդեցություն գործել, քան քարոզը, ընթերցանությունը կամ լսված խոսքերը:

Սրբապատկերները կապ են հաստատում այս աշխարհում գտնվող հավատացյալների և երկնքում գտնվող հրեշտակների ու արդարների միջև: Նրանք մեզ ներքին հզոր շարժառիթ են տալիս իրականացնելու առաքյալի խոսքը. ***«Հիշե՛ք ձեր առաջնորդներին, ովքեր պատմեցին ձեզ Աստծո խոսքը. նայելով նրանց կյանքի վախճանին՝ հետևե՛ք նրանց հավատքին»*** *(Եբր. ԺԳ 7):*

ժգ) Պատվելով սրբապատկերները՝ մենք պատվում ենք նրանցում պատկերվածներին, և երբ համբուրում ենք Սուրբ Գիրքը, ցույց ենք տալիս մեր սերը Աստծո խոսքի և հենց Աստծո հանդեպ, ով մեզ

*տվեց պատվիրանները՝ դրանցով առաջնորդվելու համար: Այդպես էլ, երբ խաչի առաջ երկրպագում ենք, իրականում երկրպագում ենք Խաչյալին, ինչպես ասել է Եկեղեցու հայրերից մեկը: Այս ամենով մենք չենք երկրպագում կամ պաշտում կուռքերի, ինչն էլ հենց արգելված է Աստծո կողմից, ինչպես նշված է Ելք Ի 4-5-ում և Բ Օր. 8-9-ում. «**Նրանց մի՛ երկրպագիր և մի՛ ծառայիր**»:*

Ժդ) Հայտնի է, որ սրբապատկերների գոյությունը հասնում է մինչև առաքելական ժամանակները: Ինչպես գրված է, Ղուկաս ավետարանիչը նաև նկարիչ էր և նկարել է սուրբ Կույս Մարիամի պատկերը (կամ նրան պատկերող մի քանի նկար):

Այլև, Սրբազան Ավանդությունից գիտենք, որ Տեր Քրիստոսի դեմքը տպվել է թաշկինակի վրա:

Եթե պատմությունն ուսումնասիրենք, կտեսնենք, որ այն ժամանակներում է մարդկանց հավատն ավելի զորեղ եղել, երբ սրբապատկերները տարածված ու հարգված են եղել: Սրբապատկերների պատճառով նրանց հավատը ոչ թե տկարացել է, այլ զորացել:

Ժե) Ինչո՞ւ ուրանալ նկարիչների դերը մարդկանց հոգևոր կյանքի աշխուժացման գործում՝ այն հոգևոր զգացումների շնորհիվ, որոնք նրանց պատկերած սրբապատկերները կամ պատկերված սրբերի կյանքի պատմություններն առաջացնում են մարդկանց մեջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 3
Ներածություն 5
Ա - Բողոքական և ուղղափառ հավատքների միջև ընդհանուր տարբերություններ 9
Բ - Մկրտություն 21
Գ - Սրբազան Ավանդություն 52
Դ - Բարեխոսություն 68
Ե - Սբ Կույս Մարիամ 86
Զ - Պահեցողություն 107
Է - Հազարամյա թագավորություն 115
Ը - Շնորհներ. լեզուների պարգև 125
Թ - Ապաշխարություն 134
Ժ - Եկեղեցու միջնորդությունը 140
ԺԱ - Ծիսական տարբերություններ 148
Դեպի արևելք նայելը 148
Խաչի հարգանք 150
Ճրագներ և մոմեր 157
Խունկ 161
Սբ. խորան և սբ Սեղան 167
Սրբապատկերներ 169

Թարգմանությունը՝ Սեդա Ստամբոլցյանի